

ՄԻՆ


ՅՈՒՂԻՄ

ՕԳՈՍՏՈՍ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻՒՆ 7-8-9

1995



ՄԻՈՆ

ԱՄԱԱԳԻՐ
ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ԿԹ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1995
1995

ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ
JULY - AUGUST - SEPTEMBER

ԹԻՆ. 7-8-9
No. 7-8-9

SION

VOL . 69

A MONTHLY OF RELIGION LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor : His Beatitude The Armenian Patriarch Of Jerusalem



St. James Press , Jerusalem



Գ Ա Ր Ե Գ Ի Ն ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԼ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՈՅ
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ
ԿԱԹՈՂԻԿԵ ԷԶՄԻԱԾՆԻ

*ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ
ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՍԱՅ, ԿԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԽԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՄՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ
ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԵՏՏՕՆԵՅ ԵՒ ՄԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԻՍԱՏՅԵԱԼ
ԺՈՂՈՎՐԿԵԱՆ ՀԱՅՈՑ*

Տ օն է այսօր Կաթողիկէ Եկեղեցոյս Սրբոյ Էջմիածնի, Մայր Տաճարիս Եկեղեցոյս Հայաստանեայ, հաստատեալ ի վերայ հիման սրբոց Սաաբնոց թաղեալիս և Բարթողիմէոսի, յուսան ինքապարտեալ երկնականար տեպեամբն Տօրն մերոյ հաստալ Սրբոյն Գրիգորի Լուսարդի և հոշակեալ որպէս կրօն ազգոս Հայոց հրամանան արքային մերոյ Մեծին Տրիատալ քաջակնի և հաստացեալի:

Ի մաստայից զուգորդութեամբ՝ ընտրեցինք այս տօնը իբրև առիթ և թուական Մեր Հայրապետական անդրանիկ կոնդակին: Այս օրը Կաթողիկէ Ս. Էջմիածնի հիմնադրման հրաշքական դրուագին վերակենդանացման պահն է ողջ հայութեան գիտակցութեան և կենսին մէջ:

Ա աննաբաղորդ սիրով կողոյշունենք թեպ, ժողովուրդ հայոց, ի Մայր Հայրաստան և ի ծագս աշխարհի: Եւ առաջին հսկ վարկանեն կուզենք որ գիտնաա, որ Մեր տկար անձնէ չի բխի ողբոյն այս խօսքը որ կը փոխանցուի թեկ անդրանիկ կոնդակի այս բառերէն: Ան կու գայ Ս. Գրիգոր Լուսարդի ամենալալօր և անկաթիբի հաստարեւ, որուն խոսացեալ անունն է ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ և մակամուտը՝ ՄԱՅՐ ԱԹՈՒ:

Բ ազգ՝ մեր ընկալման հոգեղէն զգայարանքը և պիտի զգար որ այս խօսքը կու գայ մեկ սրբաձանայ այն վայրէն, ուր մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի շնորհածի և հրաշագործ մեղքը ոսկի ուռնակով բարեց և օրհնեց Հայոց հողը, ուր երկնքի և երկրի սուրբ հաւերոյր դրոշմուեցաւ որպէս հիմնախարհիսլոր սուրբ Եկեղեցոյ գոյատեան իբրև անփական Եկեղեցին Հայաստան աշխարհիս, հայրենի պետութեան և հալկայեան ազգոս:

«Նորիւորը մե՞ծ և սքանչելի...»
որ մշտագեաց և տիրական ներգործութեամբ կենցեց և շնչաւորեց ողջ պատմութիւնը հայոց, անցնող տասնեօթ դարերու ընթացքին, և կը դրոշմէ ու կ'ոգեշնչէ այսօր, ու ապահովաբար պիտի կերպաւորէ ու հոգեկարէր ապագային գալիք թողոր դարերը հայ ժողովուրդի յանձնագեաց վեաքերն:

Խ ունարիական ծաղաղութեամբ փառք կու տանք Ամենախնամ Աստուծոյ, որ Սուրբ Էջմիածնը և անոր խորհուրդն ու հոգեմտնող և ազգաշէն ներգործութիւնը կենրանի պահեց հայոց Եկեղեցոյ և հայ ժողովուրդի հոգեկամութեան, բարեպաշտութեան և ազգային գիտակցութեան ու կենսերկն մէջ, մեր հայրենի Հայրաստան աշխարհէն մինչև համայն աշխարհի չլուս ծագելը, ուր հայ մարդիկ ապրեցան ու կ'ապրին:

Ա նցնող տասնեօթ դարերուն, Ս. Էջմիածնի ճայնը հնչեց հայրիք երեսուն Հայրապետներու արօթքով, խօսքով ու գիրով, այցելութեամբ և հանդիպմամբ: Այսօր այդ ճայնը կը հնչէ Մեր

խոնարհ անձին մեքեն, որպէս հարիր երեսուն մէկերորդ այն ատուածահաճոյն և ազգբնտիր Հայրապետներու շրջանին օղակներուն, որոնք սին և գիշեր իրենց կենսը վերածեցին իւր-արցունքի Լուսաւորի կանթերին յոյժ անուար և մշտապարծ ու շողարճակ պահերու համար հայ ժողովուրդի կենարի ճանապարհներուն որպէս ճրագ ուղեցոյց:

Մեր խօսքը կ'որդեցր նախ մեր Ս. Եկեղեցոյ Լուսիւրպետական Արտներուն և անոնց գահակալներուն՝ Մեր սիրեցեալ հոգևոր եղբայրներուն:-

- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր Ս. Աթոռին, որ եղաւ Մեր հոգևոր անուցման և կապմտրման փառ օճակը, որուն Միաբանական Ռիստին սպասաւորը եղանք քառասուն յոյս տարիներ, որուն գահակալը ըլլալու պատիւին Աստուծոյ արժամիք ըլլաւ ՎՄԵՄ տանուտը տարիներ շարունակ, և որուն հանդէպ կը տածենք հոգեկան կապուածութեան ամենաքերմ պզգուններ:

- Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատկառելի պատկառելիներ, քրիստոսակոյն արքայեղեցի աղօթարից պահպանման ու մեր էկեղեցոյ հոգևոր ծառայութեան պարզացման նուիրում և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, որուն հանդէպ միշտ ունեցած ենք խոր սեր և յարգանք ու բարձր գնահատանք:

- Կաստանդուպայոյ Հայոց Պատրիարքութեան պատմական Աթոռին, անոր գահակալին, հոգևորական ցաւուն և Լեզգային-Եկեղեցական ժողովոց, որոնց հանդէպ միշտ օրոգաբերած ենք սիրոյ և համակրանքի քերթ վերաբերուով բարձրորդ արժեքաւորելով անոց կապուածութիւնը Հայաստանեայց Եկեղեցոյ կենտրնի տանուտը:

Կի հաստատեք, որ անցեալին մեր Եկեղեցոյ Լուսիւրպետական Աթոռներուն կատարած մեծ դերը առանկ պտղաբերութեանք պիտի շարունակուի Հայ ժողովուրդի վերածակլի կենսարի ներկայ այս շրջանին, որ այնքան ճակատագրական նշանակութիւն ունի մեր արդի պատմութեան ատրոյ կերտման և ապագայի պարզացման համար: Հարկ ի վերայ մեր կայ, որ Հայ ժողովուրդի պատմական կենսարի մէջ շրջադարձային կարեորութիւն ունեցող այս օրերուն գործեք որպէս մէկ Եկեղեցի, որովհետև ե՛նք մէկ Եկեղեցի, ընդ հոգևոր վերին գլխաւորութեանք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Աննայի Հայոց Կաթողիկոսութեան և ներդարանակ թանկութեանք մեր Լուսիւրպետական Աթոռներուն: Միայն այդ գործելակերպով է որ պիտի տեսաւ պտղաբերութեանք պատկուի մեր Լուսեղեցական Մայր Եկեղեցոյ ընդհանրական առաքելութիւնը և միայն այդ գործընթացով է որ վաղի պիտի շահիք յայս ուղջ քրիստոնէական աշխարհին, բոլոր բոլոր էկեղեցիներուն և համայն մարդկութեան, անոնց ընթացքով մեր Ս. Եկեղեցոյ կենտրնական քաղաք համարքրիտանական միութեան և ընթացութեան վերատեղեցումի՝ Քրիստոսեան հրամայականին ներքև:

Մեր առջև անկենսագիտօրէն որոճած է Հայաստանի մէջ քրիստոնէութեան որպէս պետական կրօն հռչակման կամ մեր էկեղեցոյ կապմտրիքական, պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի տօնակատարութեան համալգական պարտաւորութիւնը:

Մեր նշանակալիտասակ նախորդին՝ հանգուցեալ Վարգէս Ա. Կաթողիկոսի օրով և միտանական որոշումով Հայաստանեայց Եկեղեցոյ Լուսիւրպետական Աթոռներու գահակալներուն, արդէն ժրգարում է որպէս մեր Եկեղեցի անոր արժանակալեց պանծացման համար յատուկ համակարգ, որուն գործարարութեանք պէտք է թուիք անրապաղ: Մեա նսկեղէն ճանապարհ մը մեր

Եկեղեցոյ միութեան զօրացման և մեր Եկեղեցոյ առաքելութեան լիակատար արժևորման, որով միայն կրնանք նոր պայծառութիւն ընծայել մեր նորոգեալ ժողովուրդին և մեր նոր պետականութեան մշտապազ յառաջդիտութեան հենակալով, ի Մայր Հայրաստան և յարուստանս:

Մեր արդի շքով խօսքը ու հայրական սիրոյ ողորդը Մայր Աթոռոյ համայն եպիսկոպոսական ցաւուն, վարդապետաց, քահանայից, սարխաւագաց, ուսուի մանկանց Եկեղեցոյ, բոլոր այն սպասաւորներուն, որոնք Աստուծոյ կոչման և ձեռնադրութեան ու օճան շնորհագործ զօրութեանք կանուած են միասնական Սուրբ Երրորդութեան թարգմանք ըլլալու երկրի վրայ, և հայ ժողովուրդի պատկանմուն Ժօն:

Սիրեիք, հոգևորականներու կենսարք է ձշևարիտ և կենդանի թարգմանութիւնը Քրիստոսի սուրբ Անետարախին, ինչպէս մեր Տէրը Ինք ըսաւ Իրեն համար. «Ե՛ս եմ ձանապարհ, ձշևարտութիւն և կենսարք»: (ՅՈՒՆ. ՏԴ 6), «Որ ետեսն ցիս՝ ետես ՎՃարին»: (ՅՈՒՆ. ՏԴ 9): Քրիստոսի Անետարաք զիր չէ՛, գիրէն ստաց, գիրէն վեր և գիրէն ետք՝ կենսարք է, ապրում թ կենսար մարդոց ապրած կենսարքն մէջ: «Ե՛ս եկի ցի վիշտան ունիցին», և ստանի ևս ունիցին»: (ՅՈՒՆ. ՏԴ 10): Նոգևորականներուն կենսար վաթորով բարտուն և անժողովրդական, ինքնադիտարեական գործով ճնտարարներ՝ ժողովուրդին կողմէ ընկալելի Քրիստոսի հաստատարութեան ամենին հարողորական և սիրոական գրաւակմուն է: Անետարախի բարոյութիւնը կենսարքն կը բխի, Յիսուսի՛ կենսարքն, և կ'անցնի մեր կենսարքերու մէջն, փոխանցողելու համար ժողովուրդի կենսարք: «Անն և ուսուցանել»: Մը է Քրիստոսեան իսկաւորիք ոճը Անետարախի քարոյութեան և քրիստոնէական կենսարի կենսատրման մեր ստորեկ կենսարք մէջ: Տարբեր չի կրնար ըլլալ մեր՝ Քրիստոսի սպասաւորելոյ հոգևորականներու ոճը: Երբեք չմոռնանք մեր Տէրոց խօսքը. «Որ արագեց, և ուսուցի՛ր» նա մեծ կոչեցի յարգաւորութեան երկրից» (ՄԱՄՔ. Թ. 19) Ինչպէս Ս. Առաքելայր կը պատուիրէ. «Օրինակ լինիցի հաստացողը բանիք, գնացիք, սիրով, հաստացով, պրոքեմանք» (Ս. ՏԻՄ. Գ. 12):

Աստութեան վկայութեանք կը հաստատար նաև որ մեր Սուրբ Հայրերուն ընդհանուր և սիրական ոճն այ այդ եղաւ անցնող դարերուն: Այլապէս, մեր ազգին համար քրիստոնէութիւնը չէր կրնար ըլլալ այն կենդանի հաստարք որ լիցքաւորեց և ուղիճ հայրութեան կենսար անցնող շուրջ երկու հազարամեակներուն, և ստանք որուն՝ մատուան փորձութեան և տեսլականայէ յանձնարում խայտութեան կենսարքն ստեղծարարութեանցիւնը շարունակուն անկարելի ու անբացատրելի պիտի ըլլաւ:

Մենք հոգևորականներին պիտի կարենանք ստրկ կանգնելի և անկեթօքին ըսել. «Որ ետես ցեկ՝ ետես ցեկիստոս» և անցնին. «և ետես փառս մեր և վկայու նոցա»: Այլօք, անձական և հասարակաց, հարողորմութեան ընդ Աստուծոյ և գործ ժողովուրդանուր որպէս ընկական ճնտարարութիւնը ստացին: Մեա՛ մեր հիքրութեան և արժանիքին ճշգրիտ աստիանունը: Նոգևորականի կանուիրն է ընդմեջ աղօթքին և գործին, որ հաստացեալները կը տանի «ի իսկարէ ի յոյս, ի մատուան ի կենսան, յայլապետութեան յանապականութեան, յանգիտութեան՝ ի գիտութեան ճնտարարութեան իրոյ» (ՄԱՄԱԳՐԻՆ):

Մարձ ինչպի մեր ինքնութեան հարապատութիւնը: Այլու միայն կրնանք յարողի վերաորոգութեան շունչը ապրիլ՝ ցայն մեր ժողովուրդին մէջ տարածել անոջ և տարածելու համար:

Որքիմ մեր խօսքը կ'որդեցր Մայր Աթոռոյ բոլոր թեմերուն, անոնց Առաջնորդներուն և

ազգային-ենդեցական ժողովականաց, հոգևորական թե՛ աշխարհական: Դ՛ո՛րք էք շատահիղներ Մայր Աթոռին այլևայլ տեղին ի Հայաստան երկիրն մեր հայրենի և ի ծագ աշխարհի, առ ցրունայ մանկունս Եկեղեցույ Հայաստանեայց: Դո՛րք էք այն անձերն ու մարմինները, որոնք ժողովուրդի կամքով և Եկեղեցական իշխանութան տնօրինութեամբ կոչուած են պատասխանատու դերակատարութեամբ յառջ տանիլ մեր Եկեղեցույ փրկարար սպասարկութիւնը կրօնական, դաստիարակական, մշակութային, բարեփոխական, ազգային, քննիչային, և համայնական կենտրոն այլ ընագատներուն մէջ:

Անսահման սիրով և բարձրագոյն աստիճանի արժողութեամբ կը գնահատենք մեր սպասարկութիւնները մեր սուրբ Եկեղեցին և ազգին, որոնք յանձն առնուած են և ի գոյծ կը դրօսին կամաւոր ծառայութեան սրմանից հողով, որ իրենին սիրով և հոգեկան կայստանութեան ամենէն իրական և վաճառական բարացուցիչ արտայայտութիւնն է: Անխտրական հոգով, անփաստի յարատւութեամբ, անսահման ընթացքով, յառաջդիտական նկրտումով շարունակեցէք մեր ծառայութիւնները թեմական վերին մարմիններէն սեպեպ միջին ծիական խորհուրդներու, հոգաբարձութիւններու, կանանց և երեսասարաց կայսերկերպութիւններու, բարեփոխական միութիւններու մակարդակը ի վաղեմուն մեր պաշտօնի ժողովուրդին և ի պայծառութիւն մեր փեւտորեպ Եկեղեցիին:

Կոչ կ'ուղղենք մեր բոլոր աշխարհիկ կայսերկերպութիւններուն և անհաս ազգայններուն, կենտրոն բոլոր սպարեպներուն մէջ, կրթական մշակներուն, մշակութային սպասարկներուն, մտաւորականներուն, գրողներուն, արուեստագէտներուն, մամուլի ծառայողներուն, քաղաքաբնակներուն, շինականներուն, արհեստարտներուն, պաշտօնականներուն, տնտեսագէտներուն, ծարտարարուեստի մասնագէտներուն, վաճառականներուն, փեւտորականներուն, արանց և կանանց, հրախիբով փրկենք աշխատունակ ստեղծագործականութեամբ արժեքներու իրենց կենանքը և իրենց քրտիքը խառնելու նաև Հայաստանեայց Եկեղեցույ, հայ ժողովուրդին, իրենց պարած երկիրներու փետութիւններուն, մեր հայրենիքին, անոր անկան Հանրապետութեան հասարակաց կենսիքին: Թող մասնակցութեան, յանձնառութեան և բարեարտութեան հոգին ծաղիկ մեր բոլորին մէջ, որովհետև անով փտիլ արժողութեամբ ըլլաք Աստուծոյ ձեպի՝ տուած բարիքները:

Ձ աւակներ ի հայոց ազգի, դիտեցէ՛ք մեր յառախօրէն նշմարելի են կրօնական վերարթութեան նշանները, որոնք օրէ օր աւելի յոյս կը պգեկուն և կը դառնան առաւել տարածուն և արդեցի: Բոլորդ այ յա գտեք, որ Հայ ժողովուրդի կենսիքի շարունօճքն մէջ քրիստոնէական կրօնը եղած է այն, ինչ որ է արիւնք մարդկային մարմնին մէջ: Առատացուցէ՛ք այդ առողջ արիւնք որպէսզի մեր ազգային կեանքին մէջ նա դառնայ կենտեսացուցիչ և բարեփոխիչ ոյժ: Հայաստանեայց Եկեղեցույ բարեկարգութիւնը կամ բարեկրթութիւնը իրենքին կենտեսացուցիչ, հոգևոր վերնախիղման և քրիստոնէացի գործօտութեան հետ է առընդադէմ և անով պարմանատր և իրականանալի: Ան կենտեսացուցիչ է մեր արարուններուն և վերաբրուններուն երեքին վաւերականութեան, աստուածասիր պատկերի վերականգնման հետ քան արդարքին մերուն և մետորմներու փոփոխութեան հետ:

Անք որպէս Եպիսկոպոսներու, թե՛ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռի լիապ Մայր Տաճարին մէջ Մեր կաթողիկոսական օժիման առիթով և թե՛ որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս Մեր ընտրութեան և գաւազակութեան առիթով ի Ս. Էջմիածին, ոչխտ կատարեցինք առաջի

Աստուծոյ և առաջի հաւատացեալ ժողովրդեան «յանձն առնուլ պաշտօնուս պարս նախկնդարաստնութեան Հայաստանեայց Եկեղեցույ, և բոլորպատուր նուիրմամբ ընծայել պանձն իմ կանխօրար կատարման աստուածատիր օրինակ և կաթողիկոսական պարտոց, և առաջնորդել ազգես Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան քրիստոնական կրօնից. ըստ մերոյն Եկեղեցույ դաւանութեան և ըստ Հայրապետական կարգաց և կանոնաց Աստուածպաշտութեան, անտուրիր և անխտոր ընթանալով յանձնային ընդ յուսաշարի հետս գնացից արժանածառանց յարցուրաց արից առաքելոցն Թաղեոսի և Բարթողիմէոսի և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորիչի:

Հայաստանեայց Եկեղեցույ և հայ ազգի անխտրութեան և ստեղծագործական կենտրոնութեան մայր արքիբոր մեր դարաշունք սուրբ անանկութիւնն է, Քրիստոսն ծառայեցուած և հայրութեան կենտրոն վերապարտութեամբ, մեկնաբանութեամբ և գունատութեամբ: Այդ առաջնորդը փեւք է անուր և անխախտ պահել Թողոս Առաջնայի այնքան յոսակ և պարտաւորիչ ցուցումներուն համաձայն Ք. ԹՅՈՒ. Բ. 14), Ա. ԿՈՒՐՔ. ԺԲ. II, Բ. ՏԻՄ. Բ. 2):

Բնականօրէն անախտութիւնը քարացած ստիգորութիւններու ընդարմացած ձևակերպութիւնն որումարը չէ, այլ վառ պարունով մշտանորոգ և կենտեսակ ընդառաջուր Աստուծոյ կարքին և Քրիստոսի պատգամին, որ մեր հայրերու շունչով է կենտարդուած և պատմութեան մէքէն է անձած ըսաց պատմութեամբ չէ սահմանափակուած: Մեր եկեղեցույ և ազգի տոնումութեան ամբալուռ խարխելու և մշտանորի ախջ ընծայող ենթահողն է ան, որ կը կայսմ մեր ինքնութեան պահպանման գրասկանքը, մտնանալ այս ծանանակներուն երբ մարդկային ընդհարուր կենտիցն մէջ կը տեսնենք այնքան անմարդկայնացող, մակերեսացող, ապակրօնականացող և ապապագայնացող բարքեր և կենցաղակերպիք, որոնք ստտեր կը բերեն մեր քրիստոնէական հաւատքով և հայկական հոգով բրծուած ազգային ինքնութեան շինջ ու պայծառ պատկերին վրայ:

Հայաստանեայց Եկեղեցույ ներքին վերականգնութեան և հոգեկոմ և ազգային վերապարթօնքն ու վերածաղկումի հրամայական մեր առջև կայ որպէս առաջնահերթ պարտաւորութիւն: Անտարանի ճշմարտութեանց, հոգևոր արժեքներուն, կենսիք բարոյական վերնութիւններուն քարոզութեան աշխուժացում, Հայաստանեայց Եկեղեցույ ծիսական այնքան հարուստ անախտութեան ժողովուրդները դառնալու անխտագիտի անխտեցնութիւնը, գրականութեան և հայորդակցութեան այլ միջոցներով քրիստոնէական հաւատքի և հայ եկեղեցական անտնութեանց քարով վերաշնչանալու և տարածումը, բարեկրթական և գործունէական աշխատանքի պպուր միջոցներու ստեղծումը և այլ յարկից բազում ընագատներուն և գործունէութեան ուղիներ և երանակներ կարիքն ունին պատրաստուած տնր հոգևորական սպասարկութիւնը ընտրի հոյկերու, որոնք փեւք է ըլլան ձտտապարբարակումը երկնային Լույսին և մեր հայրերու շունչին: Մայր Աթոռի առաքելութեան այգպան և իրերպացուցիչ ընագատներ, որոնք անխտագիտի պարտաւորութեանց առջև կը ընեն մեր Սուրբ Եկեղեցին: Կոչ կ'ուղղենք մեր երիտասարդ սերունդի պանակները որ բացուի գիտնական հոգևոր սարուններուն և հաղորդ ըլլան հոգեկան արժեքներուն, որպէսզի պզգայն և տասկ դառնան աստուածային կոչումին որ Ս. Հոգւոյն ներգործութեամբ կը լաժծ մեր շուրջ և մեր մէջ: Գիտնաք պարս լսել և խնայախարար ու արքաբան անոր ընդատացել:

Վերածննդեան և վերապարծնորի համազգայական շարժումի այս օրերուն, մեր աղօթքին ու մտածումին պարբ կ'ողողենք ու կը սենեկենք մեր հայրենիքին վրայ, որ ահա չորս տարիներ է վեր Սասունով օրհնութեամբ և հայ ժողովուրդի տրեխաբաթաւ, տածանագին և հերոսական ջանքերով մտած է նոր ճամբը մէջ, որ պատուութեան և անկախութեան ճամբան է ժողովուրդի հիքնիշխան կամքով որոշելի և ընթանալի: Երջարիկ ենք որ կաթողիկոս ընտրութեամբ մեր պատու ու անկախ Հայաստանի նոր Հանրապետութեան օրով: Անհուն սիրով և անասանան նուիրումի և ինքնընծայական փոխաբերութեամբ ու խոր յարգանքի զգացումներով կ'ողջունենք մեր այս նոր ու պայծառ թուականն հայոց արդի պատմութեան և կը մնանք ամբողջակամօրէն զօրավիգ անոր ամբացման և վարզացման:

Հայրախնամ սիրով կ'ողջունենք մեր պետութեան բոլոր պատասխանողները ազգութի և վեճանշուք Նահապետին սկսեալ մինչև Գորգոյնի խորհուրդի անդամները, կառավարական կազմը, բանակն ու բոլոր պաշտօնեաները զառահատեղով իրենց նուիրումը այս անանյաժամարին և ճակատագրական օրերու պայմաններուն տակ, և ազաներով որ կրուակ, ազգասիրութեան ու հայրենաշինութեան յայնախոի, անշահունակչի և անմատչիական զգացումներով ու վերաբերումով ստանել և արմատատարուի և անկասկածելիօրէն պարմանայ ձեռք բերուած անկախութիւնը և ժողովուրդին կենսքը վարզանայ բնականուն կենսի պայմաններու տեսիծումով հայրենիքին մէջ, որչ հայրութեան լիաւուրդ ու անվերապահ մասնակցութեանը:

Չմոռանք երբեք, որ մահապիտ զեղապատութեան կրակէն ենք դուրս եկած և ութսուն տարիներու վերապարծնոր կամքով ենք վրահուած: Չմոռանք, որ այսօր Արցախի հայրութեան արդար զոյապայաբար մեր բոլորի նահանախներութեան և զօրակցութեան կարիքն ունի: Չմոռանք, որ մեր ժողովուրդի արդար իրատեսներնու հետապնդումը կը մնայ մեր նահատակներու անմահանցելի կտակ: Եւ այս բոլորին սիրոյն մեր ազգային ինքնութեան արժանապատուութեան վորացումը մեր հասարակաց և նուիրական պարտքն է:

Ի դարու այս վերջին տարիներուն առաւել ևս շեշտ կարևորութիւն է ստացած քրիստոնէական եկեղեցւոյ միութեան որոնումի և համայն եկեղեցիներու կենսերին մէջ անոր վերանկենսաւորման կարիքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը կրուած է նոր և ուժգին քափ տալու միջ-եկեղեցական յարաբերութեանց այն բոլոր բանքերուն, որոնցմով կարելի պիտի ըլլայ կենսանքի հարողրակցութեան մէջ ըլլալ քրիստոնէական միւս եկեղեցիներուն հետ և անել յայն ու գործնական դերակատարութեան մասնակցից դառնալ քրիստոնէական միութեան համար աշխատող միջ-եկեղեցական շարժումներու և կազմակերպութիւններու ու հաստատարութիւններու գործունէութեանց: Արագ հարողրակցութեան միջոցներով յատկանշուած ներկայ ժամանակներուն՝ մեկուսացում և կրկնացում կրնան յաճել միայն լճացումի հնչ որ իրարս կը բանայ ճամբան որ կը տանի դէպի աղբատագում, ուժալքում, ընդալքացում: Մեր սուրբ եկեղեցին իր հնարարեան ճոխ անանյութեամբ մաս կը կապէ այն կենսքին որ Ջրիատարի խորհրդական մարմնոյն՝ ներգործութիւնն է և ի մէջ ժամանակի և ի վերայ երկրի: Մեր սուրբ եկեղեցին կարիք ունի այլ եկեղեցիներու հետ սերտ յարաբերութեամբ անկէ փորձառութեանց իրարման կողմերը առնելու որպէս զրգիւռ և մղում, և՛ փոխադարձաբար՝ իրեն

յատուկ հոգեկոր, ծիսակա, աստուածաբանական և եկեղեցական ու մշակութային ժառանգորհինները բաժնելու այլ քրիստոնէական եկեղեցիներուն հետ:

Ահա կանգնած երկրորդ հապարանակի վերջապայի և երրորդ հապարանակի արշալոյսի մահախոնտան հանգրայանն, Հայրապետական այսու կողմապաւ կը իրաւիքներ ձեռք բոլորող անխորի, հայ ժողովուրդի վաւակներ, որ պատրաստէք ձեր անձերը որպէս ընդունարան շնորհաց Հոգւոյն Սրբոյ: Վերստին ու մշտանորոգ ծննդեան պէտք ունիք բոլոր: Այլ վերածնունդը Սուրբ Հոգւոյն ներգործութեամբ տեղի կ'ունենայ: «Պարտ է ձեզ ծանակ վերապին: Չի հոլով ուր կամի շնչէ, և զմայն նորա յան, այլ ոչ գիտես ուստի՝ գալ կամ յո՞ երթայ, սոյնպէս և ամենայն ծննալն ի Հոգւոյն» (ՅՄԿՎ. Գ. 8): Այլ, մենք չենք գիտեր, չենք կրնար գիտնալ ո՞ր կ'երթանք որպէս վերածննդի մարդ: Դա Սասունով գործն է: Մերիկը՝ ընդառաջման պարտքն է: Բայց քաջ գիտենք որ Սասունով գիտցած և ըրածը մեր բարիքն է միայն, թէ՛ անհատական և թէ՛ հասարակական մեր գոյութեան բարօրութիւնը, որ երկնից արքայութեան է՝ ի ներքէ ի մեզ՝: զերբագոյն և անզերբայացելի երջանկութեան սպասարարիքը:

Այլ գոյալիճակը, ապրելու եղանակը Սասունում Բ՛արց ցոյց տուած է մեզի Իր Միածին Որդւոյն մարդեղութեամբը, Ս. Հոգւոյն յարաշարժ ներգործութեամբը, Անեսարանին և Ս. Եկեղեցւոյ Սանայութեան անընդմէջ կենսագործմամբը: Այլ գոյալիճակին փոխը ունենցէ մեզի փոխանցած՝ մեր հայրենքը անցնող երկու հապար տարիներու հետևողական հաստատարմութեան սխրագործութեամբը: Այլ գոյալիճակը Ս. Պօղոս Առաքելի կեղաբանած կենսից այն պատկերն է, պոր կը զոնենք Գաղատացաց ուղղած իր թուրքին մէջ, կենսալիճակ՝ որուն մէջ Ս. Հոգւոյն պտուղները կը տեսնուին ջիբք յատկութեան և կը վայելուին լիազոյն գոնուենակութեամբ: Միայն ոսկի շարքը Ս. Հոգւոյն պտուղներն են: «Ար, ուրախութիւն, հարապոլութիւն, համբերութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հասարք, հեղուրիցի, ժովճայութիւն» (ԳՄԵ. Ե. 22-23): Երբ այս առաքիլագործ ոյժերը կենսքի վերածնունդին՝ կենսքը կ'ըլլայ իմաստալի, բերկրալի, յարթանակ ի վերայ մահուան և ճանապարհ յախտնակամութեան: Երբ այս հոգեկան ոյժերը տիրեն մեր կենսերին մէջ՝ այն ատեն մեր գոյութիւնը որպէս մարդ, որպէս ազգ, որպէս եկեղեցի և որպէս պետութիւն՝ կը դառնայ ճշմարիտ և պէճճաօսու վկայութիւն Սասունով փառացի, բարիք՝ մարդկութեան և պակս վարձուցից հայրենեաց մեղոց Հայաստանեան:

Շնորհ Տեսնու Սասունով, Հօր և Որդւոյ և Սրբոյն Հոգւոյ և օրհնութիւն Սրբոյ Առջն Տօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և յայն ի տեղուրէ իջնան Որդւոյն միածին եղիցին յոյն ձեռք ընդ աննենական. ամէն:

Զարմեկ

ԳԼԿԵԳՈՒ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆՈՍԵՍ
ՀԱՅՈՑ

Տեսու կողմակա ի 18-և Յունիսի, Յակի Տեսու 1995 և ի թուին Հայոց ՌՆԻՊ ի Մարտական Սրբոյ Էջմիածին ի Տօնի կաթողիկէ Սրբոյ Էջմիածին Հեր. 1 Ա 11

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱՏՐՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍՍԱՐՆ



ST. SIEGE D'ETCHMIADZINE
CATHOLICOSSAT

ՔԱՐՈՋ

ԿԱԹՈՂԻԿՈՍՍԱԿԱՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

"Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեցի"

/ՍԱՂՄՈՍ/

Փառք և գոհութիւն քեզ Տէր, Հայր երկնաւոր, որ մարմնաւոր և հոգևոր ծննդեանս առաջին օրերէն արևու լոյսին պէս ընծայեցիր Քու ամենալոյս ներկայութիւնը հոգիիս մէջ և Քու ամենագոր ոյժը ողջ կեանքիս մէջ: Եւ սհա այսօր կոչեցիր զիս, նուաստ ծառայս, Քու հայ ժողովուրդիդ զաւակներուն ընտրութեան մէջէն հոգևոր սպասաւորութեան այս բարձրագոյն և սրբազնագոյն հանգրուանին, որուն մէջ եղած պատիւը՝ որպէս բուն շնորհիդ նառագայթումը՝ ծանրագոյն պարտով միայն վճարելի և արժևորելի պատիւ մըն է: Ունէ մարդ էակի նման, ինծի համար ևս անկարելի պարտք մըն է այդ, սոսկ մարդկային սահմանաւոր կարողութիւններով և միջոցներով իրագործելի: Առանց Քու զօրութեանդ ներգործութեան, ինչպէս ոչինչ կրցած եմ ընել անցնող քառասնամեայ հոգևորական սպասաւորութեանս ընթացքին, այսօր ևս կը զգամ որ ոչինչ պիտի կրնամ ընել Քու ճշմարտարարքառ խօսքերուդ համաձայն որով ըսիր. "Առանց իմ ոչինչ կարէք առնել" /ՅՈՒՎ. ԺԵ :5/:

Ահա քառասուն երեք տարիներ շարունակ, արեղայական ձեռնադրութեանս ասդին կրեցի Քու լուծը, առի խաչիդ ուսերուս և քալեցի բուն ետևէդ: Լուծդ ծանր եղաւ իմ կեանքին մէջ. ուսերս տկար էին, բայց խաչիդ զօրութիւնը, որ երկուս անուն ունի սէր և զոհողութիւն, թեթևացոց բեռը, զայն դարձնելով "հաղոր" և "փոքրոցի" /ՄԱՏԹ. ԺԱ: 30/: Եթէ մնացած ըլլայի առանձին՝ պիտի տարուէի ըսելու Քու Միածին Որդուդ քառերով. "Տէր, անցոյ յինէն զբաժակս զայս": Բայց պիտի չվարանէի անմիջապէս աւելցնելու. "բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու կամիս" /ՄԱՐԿ. ԺԳ: 36/: Քու կամիդ կամքիս առաջնորդ՝ անցայ արեղայութեան, վարդապետութեան,

Եպիսկոպոսութեան հանգրուաններէն. հասցուցիր զիս մինչև Կաթողիկոսութեան լիագոյն և գերագոյն աստիճանը: Տասնըութ տարիներ Կաթողիկոսութեան այդ լուծը շակեցի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահին վրայ. և այժմ առաւել բարձր պատասխանատուութեամբ զայն պիտի կրեմ Լուսաւորչակառոյց այս սրբազնագոյն Գահին վրայ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռին ի Ս. Էջմիածին:

Հոգևոր սպասաւորութեան այս ճանապարհորդութեանս ծայրագոյն այս հանգրուանին, այս սրբազնասուրբ խորանին վրայ հայցեմ ի քէն Տէր Աստուած իմ. "տուր զօրութիւն ծառայի բո, կեցո զորդի աղախնոյ բո և արա առ իս նշան բարութեան" /ՍԱՂՄ. ԺԵ:16/: Քու զօրութիւնդ իմ մէջս հեղ մը ևս զգալով Գահակալութեան այս նուիրական պահուն, կը կրկնեմ բառերը Սաղմոսերգու արքային. "Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցի" /Սաղմ. ԻԳ: 1/:

**

Մտաշուրթեան այս ընդարձակագոյն դաշտին մէջ մտնելու սա վճռական պահուն, սրտի պարտք կը զգամ հեղ մը ևս ձայնս վերառաքել առ Բարձրեալն Աստուած և խնդրել իրմէ որ ի լոյս փառաց իւրոց և երկնաւէտ երանական խաղաղութեան մէջ հանգչեցնէ իմ նախորդին՝ անմոռանալի Վազգէն Ա. Կաթողիկոսի բարի հոգին և ի հանոյս իւր ընդունի անոր բազմաբեղուն վաստակը Իր Հայաստանեան այգւոյն մէջ:

**

Սիրելիք,

Վստահաբար բոլորդ կ'անդրադառնամ որ Ազգային Եկեղեցական Ժողովով կատարուած Կաթողիկոսական այս ընտրութիւնը իւրաշատուկ, բացառիկ կարգի նշանակութիւն ունի: Ի. դարու մէջ առաջին անգամ ըլլալով է որ ան կատարուեցաւ - և այժմ Գահակալութեան այս հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ - մեր վերանկախացեալ հայրենիքի նոր Հանրապետութեան օրով: Եօթանասուն տարիներու բռնատիրական կարգերէն ազատագրուած Հայաստանի անկախ պայմաններու, ժողովրդավարական նորահաստատ կարգերու ներքև կ'ապրի մեր ժողովուրդը: Մեր արդի պատմութեան այս վճռադրոշմ, շրջադարձային նշանակութիւն ունեցող հանգրուանին, մեր Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, որուն առաջին

սպասաւորի պաշտօնը վստահեցաք ինձի, կոչուած է հրամայական և փրկաւէտ կարևորութիւն ունեցող դերակատարութեան: Իր աստուածատուր և քրիստոսաւանդ առաքելութեան ու պատմական ժառանգութեան հիմնական տուեալներէն առաջնորդուած՝ ան կոչուած է Ս. Աւետարանին և մեր հայրերու սրբազան աւանդութեան աղբիւրէն նոր, մաքուր և առատ ջուր հոսեցնելու մեր ժողովուրդի կեանքին մէջ: Քրիստոսով ապրուած և Աւետարանով աւանդուած ճշմարտութիւնները, կեանքի բարոյական սկզբունքները, հոգևոր արժէքները հարկ է որ առուակուին մեր հայրենիքի և ողջ հայութեան կեանքի անդաստանին մէջ, ռոգումի, հոգևոր մշակութեան բարիքները ընծայելով մեր ժողովուրդին: Առանց Աւետարանին՝ տկար է մեր ազգը: Առանց մեր հայրերու սուրբ ժառանգին վերակենսաւորման՝ տժգոյն կը դառնայ մեր ժողովուրդի դիմագիծն ու նկարագիրը:

Ա՛յս է պատմութեան դասը: Ա՛յս են մեր ժողովուրդի կարիքն ու պահանջը: Կը հաւատամ նաև որ ա՛յս է մեր պետութեան սպասումը: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, աստուածակառոյց և քրիստոսահաստատ այս հոգետունը, Աստուծոյ օգնութեամբ և ձեր բոլորի նուիրաբերմամբ, պէտք է դառնայ քրիստոնէական հոգեւնուցումի առատահոս և կենդանարար աղբիւր:

Մեզի ընծայուած սփանչելի առիթ մը ունինք - Քրիստոնէութեան որպէս պետական կրօն հռչակման կամ մեր եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700 ամեակը: Ինչպէս այլուրեք ըսած եմ, հարկ է որ ան հրաշակերպուի որպէս Նոր Հոգեգալաւստ մեր ժողովուրդի կեանքին մէջ ի Մայր Հայրենիք և յարտասահման: Վերանորոգման հոսանքի մը պէտք է վերածուի ան, որով առաւել ևս պիտի ծաղկի ողջ հայութեան կեանքը ի սպաս Աստուծոյ և համայն մարդկութեան:

Մեր եկեղեցին է՛ նաև շաղախ ազգային միութեան և սնուցիչ ու ամրապնդիչ ոյժ՝ մեր գորութեանակաճութեան: Եթէ արթուն ենք և խորահայեաց՝ չենք կրնար չտեսնել որ "ժամանակի ճշմանները" միութեան և միասնականութեան, համեղբայրութեան և համերաշխ ու ներդաշնակ համագործակցութեան հրամայականին առջև կը դնեն մեզ բոլորս անխտիր: Մեր եկեղեցին կը դառնայ ներքնապէս աւելի կենսալից և իր գործունէութեամբը աւելի բարերար երբ կը գործէ որպէս մէկ եկեղեցի, ընդ գլխաւորութեամբ և հովանաւորութեամբ Ամենայն Հայոց Ընդհանրական

Կաթողիկոսութեան, զոր ողջ հայ ժողովուրդը կը դաւանի որպէս Մայր Աթոռ: Ներկայ աշխարհի նոր դրուածքը և հայութեան կեանքի այժմեան կացութիւնը ուրիշ բան չեն թելադրեր մեզի բայց միայն ամրապնդում Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ միութեան: Նոր էլ բացուած է մարդկութեան կեանքին մէջ: Նոր էլ բացուած է հայութեան կեանքին մէջ: Նոր էլ չի կրնար չբացուիլ Հայց. Եկեղեցւոյ կեանքին մէջ: Հակադրութեանց և հակամարտութեանց էջը փակուած պէտք է նկատել: Միութեան էջն է այժմ բացուած և մեր բոլորի հասարակաց պարտաւորութիւնն է այդ էջը լիցնել Խորենացիի բացատրութեամբ՝ "գործով արութեան", այսինքն՝ այնպիսի միասնական և մեծարժեք արարքներով որոնց մէջէն Հայց. Եկեղեցւոյ միութիւնը և զօրութիւնը շողան անստուեր, արևուն լոյսին պէս պայծառ:

**

Սիրելի՛ք,

Քսաներորդ դարը մեր պատմութեան մէջ բացուեցաւ սև թուականով մը՝ 1915ի Ապրիլեան Եղեռնով, որ մահուան ստուերը տարածեց մեր երկրին ու ժողովուրդին վրայ: Եւ այս տարի համազգային տարողութեամբ ու դրուատելի հաւատարմութեամբ և միասնականութեան դրոշին տակ ահա կը նշենք, այս նոյն Ապրիլ ամսուն, հայութեան դէմ գործուած ցեղասպանութեան 80-ամեակը, թէ՛ պետական, թէ՛ եկեղեցական և թէ ժողովրդական մակարդակներու վրայ: Վստահաբար այդ ոգեկոչումը պիտի դառնայ վերածնութեան նոր ազգակ մը ողջ հայութեան համար:

Փառք, հազար փառք, որ այս նոյն քսաներորդ դարը մեր պատմութեան մէջ կը փակուի շքեղագոյն և պայծառագոյն դրուագով մը, որուն անունն է Ազատ Անկախ Հայաստան, ինքնիշխան ու գերիշխան պետութիւն: Դարերու երազն էր որ ահա կեանք առաւ, մարմին զգեցաւ: Դարերու հորիզոնին վրայ դիտուած՝ առաջին անգամն է որ հայոց անկախ պետութեան մը նախագահը իր պետական աւագանիով ներկայ կը գտնուի Կաթողիկոսական Գահակալութեան մը արարողութեան: Կը հաւատամ որ օրէ օր հաստատունութիւն և զարգացում արձանագրող մեր պետութիւնը առաւել ևս զօրացեալ ու ժականութեամբ պիտի մուտք գործէ երրորդ հազարամեակին մէջ, շարունակելու համար իր ստեղծագործ երթը դէպի ապագայ:

Այս հիմնական և սխալի իրողութիւնը մեզ հարկադրաբար նոր մտածողութեան և նոր վերաբերումներու կ'առաջնորդէ: Այլևս կոչուած ենք որպէս պետական ազգ մտածելու և ըստ այնմ ապրելու և գործելու: Այլևս չենք - և չենք կրնար ըլլալ- այն ինչ որ էինք երէկ: Օտար լուծի և ոյժի տուրք տուող ժողովուրդ էինք, մեր իսկ սեփական հայրենի հողի վրայ: Համայնքներ էինք աշխարհի չորս ծագերուն վրայ տարածուած, արտասահմանեան կեանքի պայմաններու ներքև: Այժմ անկախացեալ հայրենիք ենք և պետականացեալ ժողովուրդ ինքնակամ, ինքնիշխան և ժողովրդավար: Ժամանակն է որ փոխուի՞նք, բարեփոխուի՞նք, գիտնանք արժէք հայրենիքին և հայրենի պետութեան: Այլևս Սփիւռք չենք: Այո՛, Սփիւռք ունի՞նք, և՛ պիտի ունենանք: Արտասահմանի հայութիւնը մեծ կարևորութիւն ունի ողջ հայութեան և Մայր Հայրենիքին համար: Միլիոնաւոր հայեր կ'ապրին հայրենիքէն արտասահմանեալ իրավիճակի մէջ: Անոնք հաւատարիմ և շինարար քաղաքացիներն են իրենց ապրած երկրներուն և այնպէս ալ պիտի մնան: Իրենց կեանքի յատուկ պայմաններն ու կարիքները ունին, որոնց համար հերոսական ջանք կը թափեն առոյգ և կենսունակ պահելու իրենց ինքնութիւնը: Բայց անոնք չեն մոռնար երբեք որ իրենց հայրենի տունը Հայաստանն է և չեն կրնար մասնակից չդառնալ հայրենիքի վերականգնումի և վերաշինութեան սրբազան գործին: Աշխարհագրական հեռաւորութիւնները, քաղաքական տարբերութիւնները, մշակութային և կենցաղային այլազանութիւնները չեն կրնար վնաս բերել, սրտի, մտքի, հոգիի, ճակատագրի միութեան, եթէ հաղորդութիւնը ըլլայ շարունակական և խոհական, միշտ փոխադարձ հասկացողութեան ոգիով զսպանակուած:

Ես, այսպէս ասած սփիւռքի զաւակ եմ: Ես հայրենիքի մէջ չեմ ծնած: Բայց հայրենիքը իմ մէջս է ծնած: Մնած է այն օրէն երբ հայոց լեզուն հնչած է ականջներուս մօրս օրօրոցի երգերով, երբ Ա. Բ. Գ. ը բացուած է աչքերուս դիմաց դպրոցական գրատախտակներուն վրայէն, երբ հայոց մտտեանները դարձած են յարաբուխ կենսաւիշ ու մտններուս հետ խառնուած մեղան...: Ահա այսօր եկած եմ հայրենիք որպէս հարազատ տուն, ուր կը զգամ այնպէս որ կարծես երբեք անկէ բաժնուած չէի...:

Այո՛, եղբայրներ և քոյրեր, պէտք է ոսկեկամուրջ նետել ընդմէջ հայրենիքին և արտասահմանին: Մենք պէտք է մնանք մէկ մեր հօգևոր աշխարհագրութեան որպէս բնակիչ, ազգային մէկ պատկանելիութեան ներքին զգացումովը տոգորուած: Ահա այս

գիտակցութեամբ պէտք է բոլորս մասնակից դառնանք մեր հայրենիքի պետութեան ամրացման ու զօրացման և մեր ժողովուրդին կենսի պայմաններու զարգացման:

Այդ նոյն ըմբռնողութեամբ է որ Հայց. Եկեղեցին պիտի կատարէ իր ազգային դերը, որովհետև ան անփակելիօրէն շաղախուած է ողջ հայոց պատմութեան և նկատագրին հետ:

Այդ նոյն հասկացողութեամբ է որ մեր եկեղեցին պիտի շարունակէ զօրավիգ կանգնիլ Արցախի մեր հարազատ եղբայրներուն և բոյրերուն, անոնց հերոսական մահառումին մէջ, ի պաշտպանութիւն անոնց արդար իրաւունքներուն: Արցախի հարցը ոչ մէկ կրօնական նկարագիր և տարողութիւն ունի: Մենք մեր երջանկայիշատակ նախորդին նման ջատագովը եղած ենք, և կը մնանք, այն գաղափարին որ խաղաղ միջոցներով և անկեղծ խորհրդակցութեան ու բանակցութեան եղանակներով պէտք է լուծուի Արցախի ժողովուրդին դատը մարդկային իրաւանց և ինքնորոշման արդար սկզբունքներու հիման վրայ:

* *

Մեր խօսքի աւարտին պարտք կը զգանք մեր խոր շնորհակալութիւնները և գնահատանքը յայտնել իրիստոնէական բոյր եկեղեցիներու և միջ-եկեղեցական կազմակերպութիւններու պետերուն և ներկայացուցիչներուն, որոնք Մեր Գահակալութեան արարողութիւնը հարստացուցին իրենց ներկայութեամբը, աղօթքներովը, և գրաւոր թէ բանաւոր բարեմաղթութիւններովը:

Մեր գնահատանքի խօսքը բոլոր պետութիւններու ներկայացուցիչներուն և դիւանագէտներուն, որոնք իրենց ներկայութեամբը պատուեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և մեր հայրենի պետութիւնը:

Ջերմօրէն կ'ողջունենք մեր Ս. Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռները՝

- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որուն Միաբանութեան անդամը եղած ենք Մեր ձեռնադրութեան օրէն մինչև այսօր և Մեր ամբողջանուէր մասնակցութիւնը բերած անոր հոգևոր և ազգային սպասաւորութեանը:

- Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Աթոռը իր Գահակալով և զինուորեալ Միաբանութեամբ և պատմական առաջնութեամբ:

~ Կոստանդնուպոլսյա Պատրիարքութիւնը իր Գահակալով, հոգևորական դասով և հաւատացեալ ժողովուրդով:

Մեր Հայրական սիրոյ ողջոյնները մեր Մայր Աթոռի Միաբան բոլոր եպիսկոպոսներուն, Թեմերու Առաջնորդներուն, հոգևորական դասուն՝ վարդապետաց և քահանայից և սարկաւազաց, Թեմական Ազգային ժողովականներուն և համայն հաւատացեալ ժողովրդեան, ի մայր հայրենիք և ի սփիւռս աշխարհի:

Սիրոյ, շնորհակալութեան և գնահատանքի Մեր խօսքը կ'ուղղենք մեր Հայրենի Հանրապետութեան Վսեմաշուք Նախագահին՝ Մեծ. Լևոն Տէր-Պետրոսեանին և պետական անագանիին, խորհրդարանին, կառավարութեանը, նախարարական կազմին և պետական ամբողջ համակարգին: Բարձրօրէն կը գնահատենք իրենց սէրն ու յարգանքը հանդէպ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ:

Թող Աստուծոյ ամենատես Աչքն ու ամենազօր Աջը հովանի և պահապան ըլլան մեր համայն հայ հաւատացեալ ժողովրդեան վրայ ի Մայր Հայրենիք և յարտասահման:

"Տէր հովուեսցէ զիս և ինձ ոչ պակասեսցի"

Աղօթեցէք որ Աստուած հովուէ Ձիս, որպէսզի ես ալ կարենամ հովուել ձեզ *"ի վայրի դալարւոջ և առ ջուրս հանգստեան"* վասն փառացն Աստուծոյ, վասն խաղաղութեան և բարօրութեան աշխարհի, վասն պայծառութեան Ս. Եկեղեցւոյս և վասն շինութեան և բարեկարգութեան ազգիս հայոց. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

9 Ապրիլ 1995

Ս. Էջմիածին

ՁԵԿՈՅՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԲ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ
3 ԱՊՐԻԼ 1995

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ՋԵԿՈՅՑԸ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ
3 ԱՊՐԻԼ 1995, ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆ**

**ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹԻՒՆ,
ԱՄԵՆԱՊԱՏԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՂԲԱՅՐ
ԳԵՐԱՇՆՈՐՀ, ՀՈԳԵՇՆՈՐՀ ԵՒ ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԵՐ
ԵՒ ՅԱՐԳԵԼԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ**

Ամենայն Հայոց Հայրապետին Տ. Տ. Վազգէն Սրբազնագոյն Կաթողիկոսին վախճանումով /18 Օգոստոս 1994-ին/, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայրապետական գահը սգոյ շղարշն զգեցաւ:

Կամօքն Աստուծոյ, Օգոստոս 25-ին գումարուած Եպիսկոպոսաց ժողովը, Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներուն հետ միասին, կատարեց ընտրութիւնը Կաթողիկոսական Տեղապահի: Մենք ստանձնեցինք Տեղապահի պաշտօնը, մեր գլխաւոր պարտականութիւնը նկատելով Գերագոյն Հոգևոր Խորհուրդին հետ միասին Ազգային Եկեղեցական ժողովի գումարումը, ակնկալուած վեց ամիսներու ընթացքին ընտրելու համար Գահակալը Ամենայն Հայոց Հայրապետութեան Գահին:

Նոյն ժամանակ ջանացինք հետևիլ և հսկել Մայր Աթոռի կազմակերպական բաժանմունքներուն պատասխանատուութեանց և գործունէութեանց, ներքին և արտաքին յարաբերութեանց, անմիջական և անհրաժեշտ կարգադրութիւններ ևս կատարելով:

Միևնոյն ատեն, իբրև Հայ Պատրիարք Երուսաղէմի, պարտաւոր էինք մեր կապը պահել Սրբոց Յակոբեանց Միաբանութեան և Պատրիարքարանի գործունէութեանց հետ: Եւ այդ կարելի եղաւ՝ Երուսաղէմ երկու անգամ այցելելով: Առաջինը՝ 1994 Հոկտեմբեր 15-Նոյեմբեր 9, և երկրորդը՝ 1995 Յունուար 12էն Փետրուար 22, Երուսաղէմի յատուկ Նոր Տարուան, այսինքն Յունուար 13ին, և Բեթղեհէմի մէջ Հայկական Մունդրին, այսինքն Յունուար 18ին առիթով: Նաև այդ շրջանին կատարեցինք Երուսաղէմի միաբանութեան, և Իսրայէլի և Յորդանանի հայ համայնքներու անուևով ընտրութիւնները Ազգային Եկեղեցական ժողովին մասնակցող պատգամաւորներուն /Փետրուար 11ին/:

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1994 Օգոստոս 30-էն մինչև Մարտ 30 ունեցանք Գերագոյն Հոգևոր Խորհուրդի եօթը նիստեր, առաջին նիստէն իսկ կազմելով ուղեցոյցը Ազգային Եկեղեցական ժողովի գումարման, և հաստատելով առանձին մի գրասենեակ, գրադելու համար միայն Ազգային Եկեղեցական ժողովի կարգադրութիւններով: Գրասենեակի վարիչ նշանակեցինք Գերաշնորհ Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանը, որ արդիւնաւորապէս և բժախնդրօրէն կատարեց իրեն վստահուած պարտականութիւնը: Ինք և իրեն

օժանդակող բոլոր անձերը արժանի են մեր բոլորին շնորհակալութեան և գնահատանքին:

Այս աշխատանքներու և կարգադրութիւններու առիթով ի յայտ եկաւ, որ 35 և աւելի կազմակերպուած և կազմակերպուելիք թեմերէն շատերը չունին թեմական կառոյց, կանոնակարգ և կանոնադրութիւն, ուր բացայայտուած լինեն թեմական և Միական մակարդակներու վրայ գործող մարմիններու և պաշտօնեաներու պարտականութիւնները և փոխ-յարաբերութիւնները: Նաև հարցակնի առջև դրուեցան կարգ մը թեմերու իրաւասութեան աշխարհագրական սահմանները իւրաքանչիւր շրջանի մէջ, և հայութեան ընդհանուր թիւը, ըստ այնմ ճշտելու համար ընտրելի պատգամաւորներու թիւը: Նոյնչափ անյստակ էր պատկերը ժողովականներուն, որոնք պիտի հրաւիրուէին իբրև օրինաւոր մարմին, ընտրելու համար թեմին ներկայացուցիչ պատգամաւորները:

Իսկ եկեղեցական ընդհանուր կանոնակարգի և Սահմանադրութեան պակասը աւելի բացայայտ եղաւ:

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Գերագոյն Հոգևոր Խորհրդի առաջին նիստին /1994 Օգոստոս 30ին/ նշանակեցիք հինգ անձերէն բաղկացած յանձնախումբ մը, որ բանալով հանգուցեալ Հայրապետի կնիւած աշխատասենեակը, ցուցակագրումը կատարեց, գայն գործածելու համար որպէս Տեղապահի գրասենեակ: Իսկ անոր կից սրահը՝ իբրև ժողովատեղի և հիւրասրահ:

Տեղապահը շարունակեց վանատան մէջ բնակիլ:

Վեհաբանի առաջին յարկի վրայ Վեհախուսի ննջաւեցեակը և հիւրասենեակը, և երկրորդ յարկի հարաւային թևի պատկերասրահի բաժինը, ցարդ կը մնան կնիւած: Ննջարանի սէյֆի բովանդակութիւնը միայն, թանկարժէք իրերով, ցուցակագրուած է, և սէյֆի արտաքին և ներքին երկու բանալիները կը գտնուին, մէկը՝ Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեանի, և միւրը՝ պրն. Գրիգոր Խանջեանի մօտ, յանձնուելու համար նորընտիր Կաթողիկոսին:

Պահեստանոցներու բանալիները, մասնաւոր կնիքով միասին, աշխատասենեակին մէջ կը պահուին: Իւրաքանչիւր գրատուր խնդրագիր, տեղապահի ստորագրութեամբ, կը յանձնուի պատասխանատու անձերուն, որոնք յանձնումը կատարելէն յետոյ, գուրը նորէն կը կնիքեն, և բանալին ու կնիքը կը վերադարձնեն աշխատասենեակ:

Մայր Աթոռը ունի հետևեալ գործօն բաժանմունքները ներքին և արտաքին բոլոր գործառնութեանց և յարաբերութեանց համար, որոնք սակայն պէտք ունին հսկողութեան և քաջալերանքի, որպէսզի կարեանան աւելի արդիւնաւէտ գործունէութիւն արձանագրելու

Մայր Տանար և թանգարան

Հոգևոր ձեմարան

Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզչութեան Կեդրոն

Դիւանատուն

Հրատարակչութիւն /"Էջմիածին", "Բեմ եկեղեցւոյ"/

Տպարան

"Վանք" դուստր ձեռնարկություն
 Մոմածուլարան
 Գանձատուն-թանգարան
 Վանքեր
 Վանատուն
 Հաշուապահություն
 Սեղանատուն /մատակարարություն/
 Եինարարական
 Գիւղատնտեսական
 Ելեկտրաջերմային տնտեսություն
 Տնտեսական
 Ավտոնոմապահային /փոխադրամիջոցներ/
 Պահակային ծառայություն
 Բարեսիրական սպասարկություն
 Ֆինանսատնտեսական Ցանձնաժողով

1994 Սեպտեմբերէն սկսեալ, ջանացիմք մօտէն հետաքրքրուիլ այս քաժանմունցներու կացութեամբ և պաշտօնեաներու գործունէութեամբ:

Գերագոյն Հոգևոր Խորհուրդի նիստերուն մեր գրաւոր տեղեկագիրները մասամբ գաղափար կուտան մտահոգիչ կացութեանց և հարցերու մասին: Զաննք և ուրիշ տեղեկագիրներ կը կցենք մեր այս տեղեկատուութեան, իբր Ցաւելուած-

1. 1994 Հոկտեմբեր Յի նիստին Տեղեկատուութիւն
2. 1994 Նոյեմբեր 18ի նիստին Տեղեկատուութիւն
3. 1995 Մարտ 11-13 Տեղապահի այցը Սիւնեաց թեմ
4. Տեղեկատուութիւն Սիւնեաց թեմում կատարուած աշխատանքների /Հայր Աբրահամ Վարդապետ Մկրտչեան/
 5. Կանոնադրութիւն Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնի
 6. Կանոնակարգ Դաստիարակութեան և Քարոզչութեան Կեդրոնի Խորհուրդի
 7. "Վանք" դուստր Ձեռնարկութեան Կանոնադրութիւն
 8. "Վանք" դուստր Ձեռնարկութիւնը Տնօրէնի յանձնելու Ցանձնաժողով
 9. "Վանք" դուստր Ձեռնարկութեան Ֆոնտերի Վերագնահատման Հրաման
 10. "Վանք" դուստր Ձեռնարկութեան Տնօրէնի հետ կոնդրակտ
 11. Ֆինանսատնտեսական Ցանձնախումբի Կանոններ
 12. Ֆինանսատնտեսական Ցանձնախումբի Կանոնակարգ
 13. Ֆինանսատնտեսական Ցանձնախումբի Կարգ
 14. Ֆինանսատնտեսական Ցանձնախումբի Կանոնակարգ ընդհանուր դրոյթներ
 15. Ֆինանսատնտեսական Ցանձնախումբի 1995 թուականի Սոցիալ-Տնտեսական Զարգացման Ծրագիր
 16. Եինարարական
 17. Ֆինանսատնտեսական Համակարգի կառուցուածքը

Մասնավոր ուշադրության կը կարօտի Հոգևոր ձեմարանը, ուր կ'ակնկալենք որ պատրաստուին հայ ժողովուրդին հոգևոր կարիքները յանձնաձող հոգևորական մշակները և Հայ Եկեղեցու ուսուցումը աւանդող դաստիարակները, մանաւանդ ներկայ շրջանիս համար, երբ Անկախ Հայաստանի տարածքին ազատ մուտք են գործեր կրօնքի և բարեգործութեան գառան մորթով փարոզիչներ:

Հանգուցեալ Հայրապետի փառալուծութեամբ սկսուած Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզչութեան աշխատանքները կարգաւորելու համար, պատրաստուեցան Կանոնադրութիւնը Կեդրոնին, նշանակուեցան Կեդրոնի Խորհուրդի անդամները և Գրասենեակի տնօրէնը: Աշխատանքները յառաջ պիտի տարուին գլխաւորաբար երեք մարզերու մէջ՝ Քարոզչութեան, Կիրակնօրեայ և հանրային վարժարաններու մէջ քրիստոնէական դաստիարակութեան համար ուսուցիչներու պատրաստութեան, և դասագիրքերու հայթայթման: Կեդրոնի Գրասենեակը հաստատուած է Ս. Գայանէի վանքին մէջ:

Մայր Աթոռէն ներս միաբանութեան կազմը կը բաղկանայ երկու Արքեպիսկոպոսներէ, երկու Եպիսկոպոսներէ, հինգ Վարդապետներէ, վեց ֆահանգներէ և վեց շրջանաւարտ Սարկաւազներէ: Իսկ Մայր Աթոռի հոգատարութեան ենթակայ վեց վանքերու և եկեղեցիներու մէջ կը ծառայեն ֆանըծօք ֆահանայ հայրեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆ

Կրկին անգամ, Մայր Աթոռի անունով մեր շնորհակալութիւնը և երախտագիտութիւնը կը յայտնենք Անկախ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան և անոր Մեծարգոյ Նախագահ Տիար Լևոն Տէր Պետրոսեանին, թէ՛ հանգուցեալ Հայրապետին յուղարկաւորութեան առիթով և թէ ներկայ Ազգային Եկեղեցական ժողովի կազմակերպման աշխատանքներուն մէջ իրենց ցուցաբերած նախանձախնդրութեան և ներդրումներուն և պետական մակարդակով վայելող կարգադրութեանց համար:

1994 Սեպտեմբեր 17 և 18ին մասնակցեցանք Հայաստանի Հանրապետութեան Հիմնադրամի Հոգաբարձուներու ժողովին, Ատենապետութեամբ Փոխ Նախագահ Գագիկ Յարութիւնեանի և ներկայութեամբ Տիար Նախագահին, Վարչապետին, Խորհրդարանի Նախագահին և բազում երկրներէ եկած Հոգաբարձու անդամներու:

Ակնարկութիւններ եղան դրամահաւաքի անբաւարարութեան և եկեղեցական կարգ մը շրջանակներու մէջ աւելի գործօն մասնակցութեան անհրաժեշտութեան:

1994 Սեպտեմբերին, Հայաստանի Հանրապետութեան Մեծարգոյ Նախագահը, պատշաճ գտած էր՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Նիւ Եօրքի շէնքին մէջ զետեղելու համար, ՄԱԿ-ի անդամ Հայաստանի անունով յուշակոթող մը նուիրել: Ընդառաջելով Տիար Նախագահի թելադրութեան, Գերագոյն Հոգևոր Խորհուրդի հետ խորհրդակցելով Հին Վեհարանի պատի տակ դրուած խաչքարերէն Աղջոց վանքի ԺԳ դարի պատկանող խաչքարը յանձնուեցաւ Տիար Նախագահին, որ անձնապէս նուիրեց

գայն Միացեալ Ազգաց Կազմակերպութեան:

Հայաստանի Մշակոյթի Նախարարութիւնը Գերմանիոյ Պոխում քաղաքի Քանգարանի վարչութեան հետ կազմակերպած էր "Հայաստան"ի նուիրուած ցուցահանդէս մը: 1994 Նոյեմբրին, ընդառաջելով դիմումին, Մայր Աթոռի Գանձատունէն տրամադրուեցան եօթը կրօնական առարկաներ, ցուցադրութեան նպատակով և ապահով վերադարձուելու կարգադրութեամբ:

Պետական Ռեզիստրի և Վերլուծութեան Պետական Վարչութիւնը, 1994 Յունիս 30ի գրանցումով և 1994 Յուլիս 27 թուակիր պաշտօնագրով Զօպանքարայի շինարարական գործարանը փոխանցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, "Վանք" դուստր ձեռնարկութիւն անունով:

Հաստատուած է կանոնադրութիւնը և ստորագրուած է համաձայնագիրը "Վանք" դուստր ձեռնարկութեան տնօրէնի հետ: Մայր Աթոռի ֆինանսատնտեսական Յանձնախումբի հսկողութեան ներքև յուսալից ենք որ այս ձեռնարկութիւնը օգտակար ծառայութիւն պիտի մատուցանէ Մայր Աթոռի շինարարական ծրագիրներու իրագործման մէջ:

Յուշարձաններու Պահպանութեան Վարչութեան 1995 Փետրուար 18ի հրամանագրով, Սիւնեաց թեմի Առաջնորդական Տեղապահ Տ. Աբրահամ Վարդապետ Մկրտչեանի դիմումին ընդառաջելով, և Կրօնից Խորհուրդի Պաշտօնակատար Պրն Լազար Սիւտչեանի հետամտութեամբ, Եղեգնաձորի պատմական Նորավանք եկեղեցին և Սուրբ Փոկաս մատուռը իրենց շրջակայ տարածքներով վերադարձուեցան Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Մոմիկ ճարտարապետի /1307 թ./ գլուխ գործոց Նորավանք եկեղեցւոյ կաթողիկէի և ծածֆի նորոգութիւնը աւարտած է և աշխատանք կը տարուի ներքին ընդհանուր նորոգութիւնը ևս ամբողջացնելու:

Վրաստանի Թբիլիսի քաղաքի Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցին, նախորդ իրաւակարգի և իշխանութեան տասնամեակներուն, գործածուած է որպէս գրադարան:

1994 Դեկտեմբրին գրադարանը փոխադրելու առիթով, կարգ մը վրացի նախանձայոյցներ Հայ եկեղեցւոյ խորանը քանդելու են, վրացական պաշտամունքին յարմարեցնելու դիտումով, և Նաղաշ Յովնաթանեան որմնակարներէն ոմանք ևս փչացուցեցին: Հայ ժողովուրդին ընդվզումին և Վիրահայոց թեմի Առաջնորդ Տ. Գեորգ Եպիսկոպոս Սէրայտարեանի բողոքագրի հիման վրայ, մեր հայրենի երկրի նախագահին օժանդակութեան ևս դիմելով, հեռագիրներ ուղարկեցինք Վրաստանի պետութեան ղեկավար Եղուարդ Շևարնաձէին, Վրաստանի Կաթողիկոս Իլիա Երկրորդին: Իսկ Գեորգոյն Հոգևոր Խորհրդի երեք անդամներ /Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բուհիաթյանը, Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեանը և Պրն. Ռաֆայէլ Պապայեանը/ գործուղեցինք անձնապէս կացութիւնը քննելու և վրաց Կաթողիկոս Իլիա Երկրորդին նկատումով յանձնելու:

Առ այժմ, եկեղեցւոյ դռները փակ են և վրաց կաթողիկոսի հոգատարութեան յանձնուած:

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Մայր Աթոռի դրամական գումարները որոնք պահուած են ժընևի Ջուիցերական պանքի մէջ, Վեհափառ Հայրապետի վախճանումով կը մնան անձեռնմխելի, մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը:

Ուստի, ընթացիկ ծախքերը հոգալու համար տրամադրութեան տակ ունէինք և ունինք միայն կանխիկ գումարները, որոնք կը գտնուին հաշուապահի գրասենեակին և Հայաստանի դրամատանց մէջ:

Եկամուտի աղբիւրներն են՝ անհատական նուէրներ, Մայր Տաճարի պաշտամունքային նուէրներ, Մայր Աթոռէն թեմերուն և եկեղեցիներուն հայթաթուած մովերու, գիրքերու և յուշանուէրներու գումարներ, և թեմերէն ստացուած "Լուսաւորչի Լուճայի" նուէրներ:

Բարիքի մէջ, Հայրապետական Պատուիրակ Գերաշնորհ Տ. Գիւտ Արքեպիսկոպոս Նագաշեանի անունով հաշիւ կայ դրամատան մէջ բացուած, որուն մասին հանգուցեալ Հայրապետին պարբերաբար հաշուետուութիւն կատարուած է մինչև 8 Յունիս 1994:

Երկիցս հաշուետուութիւն խնդրած ենք, և գրաւոր պատասխան չենք ստացած:

Այս հակիրճ և մասնակի տեղեկութիւնները՝ Մայր Աթոռի ընդարձակածաւալ գործունէութեան, և աշխարհացրիւ Հայաստանեայց եկեղեցւոյ թեմերու կարիքները յանձնձնելու և զանոնք կազմակերպելու պատասխանատուութեան, կը շեշտեն աներաժեշտութիւնը Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ եկեղեցին օժտելու Ամենայն Հայոց Ընդհանրական Կաթողիկոսով:

Ընտրեալ Հայրապետը պիտի լինի "Ծառայ Յիսուսի Քրիստոսի ողորմութեամբն Աստուծոյ, և կամօքն Ազգի Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, և Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի":

Սրտագին մեր շնորհակալութիւնը կը յայտնենք Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներուն, մեր հոգևորական եղբայրներուն և աշխատակիցներուն Մայր Աթոռէն ներս, մեր Թեմակալ Առաջնորդներուն և Թեմական Խորհուրդներուն, որոնք իրենց կարգ մը հարցերու կարգադրութեանց համար պարտաւոր էին սպասել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան:

Մեր շնորհակալութիւնը երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան և Տնօրէն Ժողովի անդամներուն, որոնք Հոգևոր ծառայութեան գիտակցութեամբ ըմբռնեցին և ընդունեցին Կաթողիկոսական Տեղապահի պաշտօնին ժամանակաւոր և յաւելեալ պարտականութեանց մեր ստանձնումը, որու աւարտին մենք պիտի վերադառնանք երուսաղէմի Պատրիարքութեան և Սուրբ Տեղեաց պահպանութեան մեր նուիրական պարտականութիւններուն, Հայաստանեայց եկեղեցւոյ և Հայ Ազգի անունով:

Կը մաղթենք որ Տիրոջ օրհնութեամբ և Սուրբ Հոգւոյն շնորհաբաշխութեամբ, պատմական և պատկանելի Ազգային Եկեղեցական այս համագումարը, Հայաստանեայց Եկեղեցւոյ կոչումին և առաքելութեան վայել լրջութեամբ, աւարտէ իր խորհրդակցութիւններն ու որոշումները, ընտրէ Ամենայն Հայոց Հայրապետը, և Հայ երգչախումբերը հնչեցնեն Հայրապետական մաղթերգը, ոգևորութեամբ կոչելով. "Տէ՛ր, անսասան պահիր Դու միշտ, Քո իսկ հիմնած Մայր Աթոռ": Ամէն:

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

Հաշվետվություն

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարադրամի /ամերիկյան դոլլար/ օգտագործման մասին
1994 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1995 թ. մարտի 20-ը ժամանակաշրջանում

Ստացված եկամուտներ և մուտքեր	Գումարը
1. Պետքանկից	201 500
2. Նվիրատվություններ այդ թվում.	12 300
ա) եկեղեցիների շինարարության համար	10 000
բ) օժանդակություններ վճարելու համար	300
գ) ընդհանուր /առանց կոնկրետ նպատակի /	1 000
դ) Այունաց Թեմի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության գրասենյակի համար	1 000
3. Մատուցված ծառայություններից /հոգեհանգիստ և այլն/	2 763
4. Գանձանակներից այդ թվում.	1 248
ա) Մայր Տաճար	921
բ) Թանգարաններ	261
գ) Ս. Հռիփսիմե վանք	66
5. Այլ եկամուտներ այդ թվում	383
ա) Տպարան	183
բ) Մոմի վաճառք	180
գ) Գրականության վաճառք	20
Ընդամենը	218 194

Կատարված ծախսեր	Գումարը
1. Կապիտալ շինարարություն այդ թվում՝	73 889
ա) Սպիտակի եկեղեցի	51 326
բ) Տաթևի վանք	21 063
գ) Եղեգնաձորի եկեղեցի	1 500

2. Կաթսայատան և դիզելատան համար վառելանյութի ձեռք բերում այդ թվում՝	36 903
ա) սայարայուղ / 76604 լիտր /	18 883
բ) մազութ / 381 տոննա /	18 020
3. Ավտոտնտեսության համար վառելանյութի, յուղի և պահեստամասերի ձեռք բերում այդ թվում՝	29 594
ա) բենզին / 47 500 լիտր /	19 625
բ) ավտոյուղ / 4836 լիտր /	9 818
գ) պահեստամասեր և այլն	6 151
4. Գույքի ձեռք բերում այդ թվում՝	32 275
ա) մարդատար ավտոմեքենա 3 հատ	28 440
բ) էլեկտրական ջրատաքացուցիչներ 5 հատ	800
գ) կահույք Քրիստոնեական Դաստիարակության կենտրոնի	3 000
դ) բոր մեքենա / ոսկերչական /	35
5. Տպարանի նյութերի ձեռք բերման համար այդ թվում՝	2 955
ա) թուղթ	2 220
բ) այլ նյութեր	735
6. Մոմի արտադրության նյութերի ձեռք բերման համար այդ թվում՝	10 727
ա) պարաֆին / 15600 կգ /	7 720
բ) ցերեզին / 4292 կգ /	3 007
7. Եկեղեցիական մոմեր / 14070 կգ /	11 999
8. Աշխատավարձի վճարման համար այդ թվում՝	5 960
ա) Մայր Աթոռի աշխատակիցներ	3 800
բ) ֆինանսատնտեսական հանձնախումբ	1 890
գ) տեղեկատու դիվան	270
9. Գործուղումներ այդ թվում՝	6 593
ա) Պատրիարք սրբազան	3 316
բ) Ներսես սրբազան	1 150
գ) Միքայել ծ. վարդապետ	670
դ) Սերովբե վարդապետ	407
ե) Վարուժան և Վազգեն սարկավազներ	700
զ) Թադևոս արեղա	350
10. Նվերների համար	7 400

այդ թվում՝		
ա) վեհափառին ապաստարկող բժիշկներ		5 200
բ) վարազդատ Հարությունյան		1 000
գ) Հակոբ Փափազյան		500
դ) բժշկական անձնակազմ/լրացուցիչ /		700
11. Օժանդակություններ		1 400
այդ թվում՝		
ա) Սպորտային կենտրոն, Կիլիկիա		300
բ) Մինաս Կարապետյան		250
գ) Բաֆֆի սարկուվազ		850
12. Մայր Տաճարի թանգարանի նորոգման համար		1 570
13. Այլ ծախսեր		1 114
այդ թվում՝		
ա) փոխանցված է աշխատավարձի վճարման համար		493
բ) բազմացնող մեքենայի նորոգում		95
գ) կոմպյուտերի նորոգում / տիկին Սիլվա /		50
դ) Canon մեքենայի նորոգում		90
ե) քարտեզներ 10 հատ		100
զ) ձայնագրիչների կասետներ 6 հատ		180
է) Քրիստոնեական Դաստիարակության կենտրոն		100
ը) ֆաքսի վարձ		6
Ընդամենը		222 379

Ամփոփագիր

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դրամարկղում տարադրամի /ամերիկյան դոլլար/ գործառնության մասին 1994 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1995 թ. մարտի 20-ը ժամանակաշրջանում.

Դրամարկղի մնացորդը	
առ 1.09. 94 թ.	10 737
Դրամարկղի մուտքը	
1.09.94 թ.-20.03.95 թ.	218 194
<hr/>	
Ընդամենը	228 931
Դրամարկղի ելքը	
1.09.94 թ. - 20.03. 95 թ.	222 379
Դրամարկղի մնացորդ	
առ 20. 03. 95 թ.	6 552
Գլխավոր հաշվապահ՝	Հ. Մելյան



Հաշվետվություն

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարադրամի /ամերիկյան դոլլար/ բանկային գործառնության մասին 1994 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 1995 թվականի մարտի 20-ը ժամանակաշրջանում

Բանկի մնացորդը առ 23. 08. 94 թ. 78-95
 Բանկի մուտք 28.08. 94 թ. /Եվեցարիա/ 300 000


Ընդամենը 300 078-95
 Բանկային դեպոզիտներ 922-03

Ամբողջը 301 000-98
 Ելքեր բանկից /կանխիկ/ 23.09.94 թ. 11 500
 30.09.94 թ. 30 000
 22.11. 94 թ. 30 000
 10. 12.94 թ. 30 000
 23.12. 94 թ. 20 000
 11. 01.95 թ. 20 000
 25.01.95 թ. 60 000

ընդամենը 201 500
 Հեռախոսի և ֆաքսի վարձ /փոխանցում/ 4 271-37

ընդամենը 205 771-37
 Բանկի մնացորդը առ 20.03.95 թ. 95 229-61

/ իննսուն հինգ հազար երկու հարյուր քսանինը դոլլար 61 սենտ /

Գլխավոր հաշվապահ՝  Հ. Մելլան

Հաշվետվություն

Մայր Աթոռի Ս. Ըջմիածնի 1994 թ. եկամուտների և Մայր Աթոռի ծախսերի

Եկամուտներ	Գումար, դրամ	Մախսեր	Գումար, դրամ
Մայր Տաճար	8 287 751	Աշխատավարձ	2 413 632
Արարատյան Թեմ	11 230 186	Տրանսպորտի	10 286 681
Ս. Գեղարդ	1 887 978	Կոմունալ	17 066 894
Ս. Խոր Վիրապ	844 789	Միաբանական սեղանատան	3 318 844
Ս. Գայանե	428 297	Դիվանատան	8 430 909
Ս. Աստվածածին	226 403	Շինարարական	39 512 600
Ս. Հոփսիմե	235 114	Վեհարանի	458 635
Ս. Շողակաթ	65 281	Նոր գույք	8 615 687
Վրացահայ Թեմ	69 510	Ծաշարանի	116 523
Մոմի արտադրություն	451 985		
Հրակտարակչություն	4 460 608	Ընդամենը	90 202 405
Այլ եկամուտներ	1 203 122		
		Հոգևոր մեմարանի	7 943 023
		Հրակտարակչության	3 962 649
		Այլ ծախսեր/թեմեր և այլն/	3 302 686
Ընդամենը	29 391 024		
		Ընդամենը	15 208 358
		Ամբողջը	105 410 763

Աթոյունքում. 1994 թ. ծախսերը գերազանցել են եկամուտներին և նվազուր-
դը կազմել է 76 019 739 դրամ, կամ 304 078 ամերիկյան դոլլարին համարժեք:
Այս նվազուրդը փակվել է արտասահմանյան միջոցների հաշվին:


Գլխավոր հաշվապահ՝  Լ. Մելյան

Հաշվետվություն

1994 թվականին շինարարական աշխատանքների համար վճարված տարադրամի /ամերիկյան դոլլար/ մասին

Գն. Շինարարական օբյեկտի անվանումը ը/հ	Գումարը, դոլլար	Գումարը, դրամ
1. Օշականի եկեղեցի	17 360	5 208 000
2. Սպիտակի եկեղեցի	87 326	26 197 800
3. Ս. Խոր Վիրապ	392	117 600
4. Օիրակի Թեմի առաջնորդարան	10 000	3 000 000
5. Տաթևի վանք	13 000	3 900 000
6. Եղեգնաձորի եկեղեցի	1 500	450 000
7. Մայր Տաճարի թանգարան	1 570	640 000
Ընդամենը	131 148	39 512 600

Գլխավոր հաշվապահ՝  Հ. Մեյլան



Բյուջե
Մայր Աթոռ Ս. Ըջմիածնի 1995 թվականի

1. Եկամուտներ

հազար դրամ

Թ/Թ Անվանումը	Վանքերից	Թեմերից	Ընդամենը
1.1 Մոմի արտադրություն	30 000	75 000	105 000
1.2 Տպարան			22 000
1.3 «Վանք» դուստր ձեռնարկություն			5 000
Ընդամենը	30 000	75 000	132 000

2. Ծախսեր

ա) Ընդացիկ ծախսեր

2.1 Աշխատանքի վճարման	20 000
2.2 Մայր Աթոռի պահպանման ծախսեր /առանց թեմերի/	35 000
2.3 Կենսաթոշակային ֆոնդի և սոցալ հատկացումներ	7 400
2.4 Նյութատեխնիկական մատակարարման	15 000
2.5 Միաբանական սեղանատան և աշխատավորական ճաշարանի	16 000
2.6 Վարչա-կառավարչական	10 000
2.7 Կրոնա-եկեղեցիական	25 000
2.8 Չնախատեսված ծախսեր	3 600
Ընդամենը	132 000

բ) Ավանսային կարգով շրջանառու միջոցների հատկացումներ

2.9 «Վանք» դուստր ձեռնարկության	15 000
2.10 Մոմի արտադրության	2 000
2.11 Տպարանին	10 000
Ընդամենը	27 000

գ) Կապիտալ ներդրումներ

3.1 Մոմի արտադրության վերազինման համար	3 600
3.2 Տպարանի վերազինման համար	10 000

3.3 Սպիտակի նորակառույց եկեղեցու շինարարություն	42 000
3.4 Օշականի թանգարանի վերակառուցման	15 000
3.5 Տաթևի վանքի վերակառուցման	2 000

Ընդամենը 72 800

Ամբողջ ծախսերը 231 000

Ց.Մախաերի գերազանցումը եկամուտների մկատմամբ 99 000

4. Բյուջեի նվազուրդի լրացման աղբյուրները

— Ներքին թեմերի նվիրատվություններ	15 000
— Արտասահմանի նվիրատվություններ	80 000
— Գանձակների եկամուտներ	5 000
— Այլ աղբյուրներ	2 000

Ընդամենը 102 000

5. Բյուջեի Ռազվեկչիոը ակտիվ 3 000

Հանձնախմբի ատենապետ՝
Վահե Ստեփանյան



Handwritten signature

Արձանագրություն

Ս.Հշմիածին

23. մարտի 1995թ.

1995 թ. մարտի 23-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ Ամենապատիվ Ս. Թորգոմ արք. Մանուկյանի ներկայությամբ, Մայր Աթոռի ֆինանսատնտեսական Հանձնախմբի ատենապետ Վահե Ստեփանյանի և գլխավոր հաշվապահ Հարություն Մելլյանի մասնակցությամբ, բացվեց Մայր Աթոռի գլխավոր հաշվապահի դրամարկղի 2-րդ հարկաբաժինը, որտեղ ի պահ էր տրված երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի դրամարկղից տեղափոխված տարադրամային գումարները:

Այդ գումարները ըստ առաջին և երկրորդ արձանագրությունների կազմում էին.

- 1. Ամերիկյան դոլլար 67 887 /վաթսույնոթ հազար ութ հարյուր ութանասուն յոթ /:
- 2. Գերմանական մարկ 28 020 /քսանութ հազար քսան /:
- 3. Շվեյցարական ֆրանկ 6 010 /վեց հազար տաս /:
- 4. Ֆրանսիական ֆրանկ 61 150 /վաթսուն մեկ հազար հարյուր հիսուն /:
- 5. Ավստրիական դոլլար 620 /վեց հարյուր քսան /:

- Որոշվեց. 1. Դրամարկղի 2-րդ հարկաբաժնի արձանագրված գումարները հանձնել Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ Հ. Մելլյանին այն մուտքագրելու համար:
2. Թույլատրել վերահիշյալ գումարներից օգտագործել Ազգային Եկեղեցիական Ժողովի կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերի համար:
3. Սահմանված կարգով կոնվերտացիայի ենթարկել գերմանական մարկը, շվեյցարական և ֆրանսիական ֆրանկը, ավստրիական դոլլարը:
4. Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ Հ. Մելլյանին հանձնել այդ դրամարկղի 2-րդ հարկաբաժնի բանային:

Հանձնախմբի ատենապետ *Վ. Ստեփանյան* Վ. Ստեփանյան

Գլխավոր հաշվապահ *Հ. Մելլյան* Հ. Մելլյան

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1994 ՆԻՍՏԻՆ

- 1994 Սեպտեմբեր 1-էն սկսեալ Մայր Աթոռոյ պաշտօնէից և ամէնօրեայ այցելուներու հետ հանդիպումներ ունենալէ բացի, հաւաքական հանդիպումներ ունեցանք Մայր Աթոռոյ միաբանական անդամներուն (հոգևորական հայրերուն, վարդապետներուն և ֆահանգներուն) հետ, նաև սարկաւազաց դասին հետ, ծանօթանալով իւրաքանչիւրին պարապմունքին և ստանձնած պաշտօններուն:

- Սեպտեմբեր 14-ին կատարուեցաւ պաշտօնական բացումը Հոգևոր ձեմարանի 1994-95 տարեշրջանի դասընթացքին, բացման մասնաւոր արարողութեամբ և յայտագիրով:

- Պաշտօնական այցելութիւններ ընդունեցինք պետական անձնաւորութեանց և օտար երկրներու հիւպատոսներու: Անձնապէս այցելեցինք Հայաստանի Հանրապետութեան նախագահին, կարգ մը նախարարներու և հիւպատոսներու:

Մասնակցեցանք Հայաստանի Հանրապետութեան Հիմնադրամի Հոգաբարձուներու ժողովին, Սեպտեմբեր 17 և 18-ին, Ատենապետութեամբ փոխնախագահ Գագիկ Յարութիւնեանի, մասնակցութեամբ նախագահին, վարչապետին, խորհրդարանի նախագահին, և բազում երկրներէ եկած Հոգաբարձու անդամներու:

Ակնարկութիւններ եղան դրամահաւաքի անբաւարարութեան, և կարգ մը բեմերու մէջ եկեղեցւոյ մասնակցութեան և ֆաշլաբրումին պակասութեան: Ամբողջ Հոգաբարձուները, նախագահին գլխաւորութեամբ, Պետական Պատկերասրահին մէջ դիտեցին ցուցադրութիւնը հայ արուեստագէտներու գործերուն, որոնք նուիրուած էին Հայաստանի Հիմնադրամին:

- Երկու անգամ հանդիպումներ ունեցանք Տնտեսաֆինանսական Յանձնախումբին հետ (Գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեան, Մինաս Կարապետեան, Պորիս Կարապետեան, Բարսեղ Բերլոզեան), որու ընթացքին պրն. Գրիգոր Խանջյան կրկնեց թէ անձնական պատճառներով ինք կը հրաժարէր, և կը ջանանք Յանձնախումբին գործունէութիւնը, իրաւունքներն ու պարտականութիւնները յստակել գրաւոր ուղեցոյցին մէջ:

- Համաձայն պետութեան պաշտօնակագրին (27 Յուլիս 1994) Զօպանկարայի գործարանի Վանք Մէկ Դուստր Զեռնարկութիւնը փոխանցուած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Գոյից ցուցակագրութիւնը տակաւին ամբողջացած չէ: Կը ջանանք յստակացնել կանոնները որով պիտի կառավարուին պատասխանատու անձերը (Յանձնախումբ, Տնօրէն, պաշտօնէութիւն) որոնք պարտին կազմակերպել արդիւնաւետութիւնը գործարանին նախաձեռնութեանց: Պայմանագիր պէտք է ստորագրուի ներկայ Տնօրէն պրն. Ալիկ Աթաբեանին հետ:

- Հանդիպումներ ունեցանք ձարտարապետական և Շինարարական Յանձնա-

խումբի անդամներուն հետ, և նկատի առինք Տաթևի վանքին, Նորավանքին, Սպիտակի նոր կառուցուելիք եկեղեցիին, Օշական Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցւոյ կողքին գտնուող դպրոցի շէնքին նորոգութեան, և Երևանի մէջ 1700 ամեակի առիթով կառուցուելիք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ հետ առնչուած հարցեր:

Լոկոնմանակ պրն. Ճօրն Քյուրքնեան, հանգուցեալ Վեհափառ Հայրապետի նախապէս ստորագրած նամակի հիման վրայ, կարողացաւ 300.000 (երեք հարիւր հազար Ամերիկեան տոլար) փոխանցել ժընէի դրամատունէն Երևանի Հայաստանի Պետական դրամատունին Մայր Աթոռոյ հաշուին: Մասնակի յատկացումներ եղան վերոյիշեալ նախաձեռնութեանց:

Տակաւին վերջնական պայմանագրութիւններ չեն յստակուած և ստորագրուած նախաձեռնութեանց շինարարական ընկերութեանց հետ:

- Սեպտեմբեր 10 և 11, Շարաք և Կիրակի օրերը այցելեցին Սիւնեաց թեմը: Ճամբու վրայ հանդիպեցանք, շարաք յետ միջօրէին, Եղեգնաձոր, Գլաձոր, Ս. Խաչ, Գորիսի վերնաշէնի մատուռը (որուն բարձունքէն ցոյց տրուեցան Հինգերորդ դարէն մնացած եկեղեցւոյ մը անխմամ մնացորդը), Գորիսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին որուն նորոգութիւնը առաջ կը տարուի ժողովուրդին ջանքերով, և երկյարկանի Առաջնորդարանի շէնքը, որ նոյնպէս նորոգութեան կը կարօտի:

Շարաք գիշեր Գորիսէն անցանք Որոտանի Սատանայի Կամուրջը որուն մտտիկն է Հին Տարեցներու Շէնքը, որ այժմ կը գործածուի որպէս բուժարան պատերազմէն վիրաւոր զինուորիկներու:

Այսնեղ գիշերեցինք մեզի ընկերացողներու հետ (Սիւնեաց թեմի Առաջնորդ Հայր Աբրահամ, մեր գաւազանակիր Հայր Միխայէլ Աջապահեան, Արծուին սարկաւազ՝ Ճեմարանէն, և Միաբեալ Նահանգաց Արևելեան թեմի ջանքերով կառուցուող Մանուկներու համարի վերահսկիչ Տէր և Տիպիհ Թոյ Քելեքեան):

Կիրակի առաւօտ բարձրացանք Տաթևի վանք ուր կարն պաշտամունք մը կատարեցինք, և սուգեցինք շէնքերուն կացութիւնը: Կէսօրին դէպի Մանուկներու ճամբար համբուն վրայ (Մարտունիի ուղղութեամբ) հանդիպեցանք Սիսեանի Ս. Յովհաննէս եկեղեցին: Պատարագը աւարտած էր, բայց պակուելիք երիտասարդ զոյգ մը և ժողովուրդը խոնուած էին եկեղեցւոյ մէջ: Երիտասարդ քահանան (Ջևրի) տասներկու մանուկներէ կազմուած երգչախումբ մը ունէր, որ "բարի գալուստի" համար "Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ" երգեց: Եւ մենք մեր օրհնութեան և քաջալերանքի խօսքը տուինք:

Մանուկներու ճամբարը Մմբատայ Դղեակի լեռան ստորոտը կը գտնուի, կարելիութիւններով լեցուն, վազող գետակով և անտառով օժտուած:

Դէպի Էջմիածին վերադարձի ճամբուն վրայ, ուշ երեկոյին հանդիպեցանք Նորավանքի հրաշակեքտ եկեղեցին, որ նոյնպէս կարիքն ունի անհրաժեշտ նորոգութեան:

- Սեպտեմբեր 20, երեքշաբթի կէսօրին, ընկերակցութեամբ Շիրակի թեմի Առաջնորդ, Գերաշնորհ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բունիաթեանի և գաւազանակիր Հայր Միխայէլի, մեկնեցանք դէպի Սպիտակ, օրհնելու համար կառուցուելիք եկեղեց-

ւոյ հողը:

Ճանապարհին մեզ դիմաւորեցին նահանգային և քաղաքային իշխանութեանց ներկայացուցիչներ, և առաջնորդեցին բարձունք մը ուր կառուցած են շատ տպաւորիչ յուշարձան մը յանուն Ս. Երրորդութեան՝ երեք խաչերով բարձրացած: Դէպի յուշարձան բարձրացող նահապարհին երկու կողմերը տեղաւորած են մարմարէ տապանաքարերը, իւրաքանչիւրին վրայ արձանագրելով՝ գիւղին անունը և այդ գիւղէն զոհուած մարտիկներու թիւը: Այդ Յուշարձանը շրջակայքին ուխտատեղին է դարձեր: Հոգեհանգստեան մեր աղօթքը ըրինք, և անցանք դէպի Սպիտակ:

Բազմութիւնը հաւաքուած էր բացասաւանին վրայ, մատաղի պատրաստութիւններով, դպրոցական աշակերտներով և գեղջկական նուագարաններով, որոնք հողի օրհնութեան և ներկայացուցիչներու քաջակերամնիքի խօսքերէն յետոյ երգեցին և պարեցին:

Սպիտակի եկեղեցւոյ հողի օրհնութենէն յետոյ, այցելեցինք բլուրին ստորոտը կառուցուած վարժարանը ուր երեք-չորս հարիւր ուսանողներ մօտակայ գիւղերէն կուգան, և մասնաւորաբար կազմակերպուած մրցոյթներու կը մասնակցին: Երգի և նուագի կոկիկ յայտագիր մը ներկայացուցին:

Գիւղատնտեսական հիմնարկի մը նաշարանին մէջ տրուած ընթրիքէն յետոյ, գիշերը վերադարձանք Մայր Աթոռ:

- Սեպտեմբեր 21, Չորեքշաբթի առաւօտ ժամը 10-ին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան երրորդ տարեդարձին առիթով, Երևանի անկախութեան հրապարակի վրայ, նախագահին և պետական պաշտօնատարներուն հետ ներկայ եղանք Ջինուորական Շէնքիին: Մեզի կ'ընկերակցէին Արարատեան թեմի Հայրապետական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեանը, Գիււնապետ Գերաշնորհ Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պօգապալեանը, "Էջմիածին" ամսագրի խմբագիր Գերաշնորհ Տ. Ասողիկ Եպիսկոպոս Արիստակէսեանը, Հայր Միխայէլ և Հայր Առաքել:

Մէկ ժամ տևող շէնքէն, օդանւերու և ուղղաթիւներու հրապարակին վերևէն անցէն յետոյ, ճամբուն վրայ գացինք Ետարուր, ուր պետութիւնը կառուցած է պատերազմի գոհներու գերեզմաններու շիրմաքարերը: Ջինուորներու առաջնորդութեամբ, իրենց բերած ծաղկեպսակը գետեղուեցաւ նշանակուած տեղը, ուր նաև կատարեցինք հոգեհանգստեան կարգը:

- Նոյն երեկոյին, ժամը 7-ին, Մարզական համալիրին մէջ դարձեալ հոգևոր հայրերու ընկերակցութեամբ, մասնակցեցանք Հայաստանի նախագահի հրաւերով կազմակերպուած հրապարակային հիւրասիրութեան՝ մտիկ ընելէ յետոյ նախագահին ճառը, անկախութեան երրորդ տարեդարձին առիթով:

- Հայաստանի նախագահին փափաքին ընդառաջելով, Հին Վեհարանի շրջափակի խաչքարերէն մին յանձնեցինք պետութեան, որ նախագահին Միացեալ Ազգաց ժողովին մասնակցելուն առիթով պիտի ներկայացուէր որպէս Հայաստանի նուէրը, գետեղելու համար Միացեալ Ազգաց շէնքին մէջ:

- Հայաստանի մշակույթի նախարարը ներկայացուց խնդրանքը Պոխումի (Գերմանիա) Բանգարանի Տնօրենության, Հայ մշակույթի ցուցահանդես կազմակերպելու իրենց Բանգարանի մէջ: Մայր Աթոռէն ևս կարգ մը առարկաներ խնդրած են: Գանձատան պատասխանատուին (Անդրանիկին) ցանկ մը կազմել տուի՞նք առարկաներու որոնք թերևս կարելի է տրամադրել, այսպիսի խնդրանքներու եթէ որոշենք ընդառաջել:

- Հանգուցեալ Հայրապետի գրասենեակի ցուցակագրումը ամբողջացաւ, սէյֆի մէջի գոյժը փոխադրուեցաւ Վեհի ննջասենեակի սէյֆին մէջ, ուր կը պահուին մնացեալ բոլոր սէյֆերուն բանալիները: Եւ ննջասենեակի սէյֆին երկու բանալիները կը գտնուին Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեանի և պրն. Գրիգոր Խանջեանի մօտ, ըստ հանգուցեալ Վեհի փափաքին:

- Համակարգիչներ (կոմպյուտերներ) հաստատուեցան Վեհարանի այն գրասենեակին մէջ որ, Գերաշնորհ Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանի պատասխանատուութեամբ, յառաջիկայ Ազգային Եկեղեցական ժողովին հետ կապուած, գրասենեակային աշխատանքները պիտի կատարէ: Նաև Հոգևոր ձեմարանի մէջ, ուր շրջանաւարտ սարկաւազներուն համակարգիչի դասեր պիտի տրուին:

- Օգոստոս 29, երկուշաբթի յետ միջօրէին, ներկայ գտնուեցանք Հանգուցեալ Հայրապետի յիշատակին նուիրուած համերգին, նախաձեռնութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի ֆիլիարմոնիկ նուագախումբի, ղեկավարութեամբ Լորիս Ճզգաւորեանի: Ասումնքով էր Վլադիմիր Արաչեան: Հովանաւորութեամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան:

- Սեպտեմբեր 28, երկուշաբթի ցերեկին մասնակցեցանք Ակադեմիայի կազմակերպած "Հրաչեայ Աճառեանի" յիշատակին նուիրուած գիտաժողովին, որուն բացումը կատարուեցաւ Օփերայի սրահին մէջ, ուր նաև ներկայացուեցաւ Պողիկոս Բատրգուփունը:

- Հաշուապահի տեղեկատուութիւն-
առ 1: Հոկտեմբեր 1994

- Առկախ մնացած հարցեր-

Մէկ մասը առկախ մնացած հարցերուն հետևեալն է-

. Տպարանի կացութիւնը և Հրատարակչական Յանձնախումբի մը կազմութիւնը և ասոնց գործունէութեան ուղեցոյցը.

. Քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի կազմութիւնը.

- Գրասենեակ, կանոնադրութիւն, պիտոնէ, պաշտօնէութիւն.
Պահեստներու և գնումներու վերահսկողութիւնը.

- . Միաբանութեան բժշկական հոգատարութիւնը.
 - . Միաբանութեան զգեստագինը.
 - . Ամսականներու վերանայում.
 - . Թեմերու օժանդակութիւն:
- Հոկտեմբերի երկրորդ շաբթուն կը ծրագրենք Երուսաղէմ երթալ:
Հարկ եղած կարգադրութիւններ կ'ընենք և ձեզ տեղեակ կը պահենք:
- Մայր Աթոռի կազմակերպական ցուցատախտակը պատրաստուած է:
Գազափար մը կուտայ Մայր Աթոռին բաժանմունքներու թուին և ըստ այնմ
անհրաժեշտ կազմակերպական յարաբերութիւններուն:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՌԻ ԽՈՐՀՈՒՐԳԻ 18-19 ՆՈՅԵՄԲԵՐ 1994 ՆԻՍՏԻՆ

- Նախքան դեպի Երուսաղեմ մեր մեկնելը Հոկտեմբեր 12-ին, Սպիտակի կառուցուելիք եկեղեցւոյ հիմքերու և 16 հիմնաքարերու օրհնութեան արարողութիւնը կատարեցիմք Հոկտեմբեր 9, Կիրակի յետ միջօրէին, առընթերակից ունենալով Շիրակի Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բուհիաթեանը, Բագմիկ Վարդապետ Պօղոսեանը (Երուսաղեմի միաբաններէն) և շրջանի հոգևորական հայրերը:

Դեպի Սպիտակ մեր ճամբուն վրայ հանդիպեցանք Օշական, Ս. Մեսրոպի գերբզմանին, մասնակցեցանք Պ. Պատարպին, տեսանք մանուկներու և դպրոցական պատանիներու խումբեր որոնք շրջափակին մէջ իրենց ուսուցիչներու շուրջ հաւաքուած, նուազի և արտասանութեան իրենց յայտագիրները կը կատարէին: Տեսանք նաև անաւարտ քանգարանին անխնամ թողուած շինարարութիւնը, որուն տանիքը տարի մը առաջ պէտք էր ծածկուած և աւարտած ըլլար:

Այցելեցիմք ոչ շատ հեռուն, բլրան վրայ գտնուող հին և աւերակ երկրորդ մատուռ մը, և ապա Այարանի պաղիլիֆատիպ եկեղեցին որ փակ էր, և վերանորոգման շինարարական ընթացքի մէջ:

Անակնկալ էր, երբ նախքան Սպիտակի եկեղեցւոյ հիմնաքէի օրհնութիւնը, առաջնորդութեամբ ընդարձակ հրատարակ մը, սր շրջակայ քան ցիւղերէն, իւրաճանցիւր խումբ իր քերտի և արտադրութեան նմայշները մէկտեղուած, ինչ ինչի տեղաւորուած, բերքի տօնահանգև կազմակերպած էին, իրախնամքի, երգի, պարի, սամունքի յայտագիրներով:

Այստեղ ևս, հոգևորական հայրերով կատարեցիմք "Անդաստանի" արարողութիւնը, և քաղաքային դեկապտեմբրու կարգին, մեր քաղաքային և օրհնութեան մաղջարիները տուիմք:

- Հոգևոր շեմարանի արտիք մէջ, Հոկտեմբեր 4-ին, Կումիտաս վարդապետի ծննդեան 125 ամեակին առթիւ, Ս. Հռիփսիմէ Կիրակցօրեայ վարժարանի մօտ 50 աշակերտներ համերգով և Պարոյր Սևակի "Անլուելի Զահակատուն"էն հատուածներ արտասանելով, մէկ ժամ տևող կոմիտասեան երգեր երգեցին զնահատելի նրբութեամբ և զգացումով:

- Հոկտեմբեր 10 և 11-ին, Ռուստամի Գաշնութեան խորհրդարանի նախագահ Վլադիմիր Շումեյքօ, Հայաստան իր այցելութեան առթիւ, այցելեց էջմիածնի Մայր Տաճար, և Գանձատուն. և վեհարանի մէջ տրուած ընդունելութեան ընթացքին իրեն նուէր տրուեցաւ էջմիածնի Գանձի հատուցը: Պարոն Շումեյքօ Երևանի մէջ ներկայ եղաւ Պետական Համալսարանի 75 ամեակի հանդիսութեան, Օփերայի դահլիճին մէջ: Իսկ իր կողմէ տրուած պաշտօնական ընդունելութեան, իր խօսքին մէջ, իր հիացումները յայտնեց հայ ժողովուրդի պատմութեան, մշակոյթին, և հոգևոր ժառանգութեան, որ կը մարմնանար ներկայութեամբը էջմիածնի Մայր Տաճարին և հոգևոր գանձարուն:

- Վեհարանին մէջ հանդիպում ունեցանք Գիւմրիէն քերուած մօտ 30 ուսանողներու, որոնք Գրիգորիս Սրբազանի և ուսուցիչներու հոգածութեամբ կը

հետևին Հոգևոր ձեմարանի դասընթացներուն:

- Հոկտեմբեր 12-15 գտնուեցանք Փարիզ, Երևանէն Երուսաղէմ ճամբու վրայ: Հանդիպումներ ունեցանք Հայրապետական Պատուիրակ և Փարիզի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ Արքեպիսկոպոս Նագգաշեանի, Գերմանիոյ թեմին Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրեգին Եպիսկոպոս Պէֆենանի, Լիոնի շրջանի Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նորվան Եպիսկոպոս Զաքարեանի և հոգևոր հայրերուն և աշխարհական ներկայացուցիչներու հետ, անդրադառնալով Ազգային Եկեղեցական Ժողովի կապակցութեամբ Գերագոյն Հոգևոր Խորհուրդի ժողովի մէջ կատարուած աշխատանքներուն:

- Հոկտեմբեր 16-Նոյեմբեր 8, Երուսաղէմի մէջ, Տնօրէն ժողովի նիստերուն և միաբանական հաւաքոյթներուն ընթացքին, անդրադարձանք հանգուցեալ Վեհափառ Հայրապետի թաղման առիթով եղած պատշաճ կարգադրութեանց և պետական հովանաւորութեան, քառասունքի արարողութեանց, Եպիսկոպոսաց ժողովին, Կաթողիկոսական Տեղապահի ընտրութեան, և Գերագոյն Հոգևոր Խորհրդի նիստերուն մէջ Ազգային Եկեղեցական Ժողովի գումարման կապակցութեամբ տրուած որոշումներուն:

Երուսաղէմի վանական կեանքը, Սուրբ Տեղեաց մէջ ծառայութիւնը և պաշտամունքները, կրթական և այլ բաժանմունքներու գործունէութիւնը կը շարունակուին կարելի կանոնաւորութեամբ: Ծինարարական ծրագիրները առաջ կը տարուին Սուրբ Աթոռին համար նպաստաւոր պայմաններով:

- Հոկտեմբեր 26-ին տեղի ունեցաւ Իսրայէլի և Յորդանանի միջև կնճուած դաշինքին և համաձայնագրին ստորագրութեան արարողութիւնը, էլաթին մօտ, անապատ շրջապատի մը կիզիչ արևուն ներքև, մօտ վեց հազար հրաւիրեալ անձերու ներկայութեան: Համաձայնագիրը ստորագրեցին Իսրայէլի և Յորդանանի վարչապետները, և նոյն վաւերագրերուն իբրև վկայ ստորագրեցին Յորդանանէի Հիւսէյն թագաւորը և Միացեալ Նահանգաց Էսխազահ Էլի Քլինթընը:

- Ժառանգաւորաց վարժարանը, մօտ հարիւր աշակերտներով, ուսուցիչներով և պաշտօնեաներով, կ'ընթանայ կարելի կանոնաւորութեամբ: Ներկայ եղանք աշակերտներէ կազմուած նուագախումբին ներկայացուցած երգի, ասումնքի և գուարթաբանութեան հրապարակային յայտագրին: Ժառանգաւորաց վարժարանի արահին մէջ ներկայացուեցաւ նաև Փարաշանովի "Նաան գոյնը" շարժանկարին առաջին ժապաւէնը, որ պաշտօնապէս արգելուած էր ցուցադրելու: Հրաշնայ Գրիգորեանի որդին Սարգիս Գրիգորեան որ աշխատակիցը եղած է Փարաշանովին, մի կերպ ազատագրած էր ժապաւէնը, և ցուցադրեց հետաքրքրական և լուսարանիչ բացատրութիւններ տալով Սայաթ Նովայի կեանքին հետ կապուած "Խորհրդանշական" պատկերացումներու մասին:

- Նոյեմբեր 9-ին Երուսաղէմէն Երևան ճամբուն վրայ, Սօչի հանդիպեցանք: Հոգեշնորհ Տ. Եզնիկ Մ. Վարդապետ Պետրոսեանը, իբրև Հիւսիսային Կովկասի մէջ Առաջնորդի Փոխանորդ, շրջանի հոգևոր հայրերուն հետ կարգադրութիւններ կատարած էին տեսնելու մեր կառուցուող և մատուռ-եկեղեցիներէն ոմանք, պաշտամունքի համար հաւաքուած ժողովուրդին հետ լինելու և խօսելու: Հանդիպումներ ունեցանք Ատլեր քաղաքի Հայ Քաղաքացուիքին հետ, և ճաշկերոյթի հրաւիրուած հայկական Միութիւններու ներկայացուցիչներու և

եկեղեցաշէն բարերարներու և Ռուս հոգևոր առաջնորդին հետ: Բազմացեղ շքշան մըն է Սօչի (110 տարբեր ցեղերէ) և յայտնապէս հայերը իրենց ազգային ինքնութիւնը, մշակոյթը, և գործունէութիւնը պահելու պայքարի մէջ են:

- Նոյեմբեր 11-ին Սօչիէն ժամանեցին Մայր Աթոռ:

Մայր Աթոռի բաժանմունքներէն ոմանք զնահատելի աշխատանք են կատարած:

- Քրիստոնէական դաստիարակութեան յանձնախումբ մը ունինք գլխաւորութեամբ Հոգեշնորհ Տ. Վազգէն Արեղայ Միրզախանեանի, որ հաւատակ անբաւարար միջոցներու, կը ջանան օժանդակել մեր բժմերու զանազան քաղաքներու մէջ սկսուած Կիրակնօրեայ Դպրոցներուն, և ծրագրած են ուսուցիչներ պատրաստել այդ դասընթացներուն համար: Վերջերս, Գայեանէի վանքին մէջ գրասենեակ մը կարողացան ապահովել, զոր կահաւորեցին: Իսկ նոյն տեղը օգտագործող Երիտասարդաց խումբը փոխադրուած է Ս. Հրիփսիմէի վանքին մէջ:

- Հոգևոր ձեմարանի աշակերտներուն համար ձմեռային զգեստներ հայթայթուած են պահեստի ապրանքներէն տրամադրելով:

- Շէնքերու և սենեակներու շնուցման համար կաթսայատունը նորոգուած է, և շնուցման գործիքները վերահաստատուած և կարգաւորուած են: Ապստոլուած են ձմեռնային մթերքներ թէ՛ շնուցման և թէ՛ ուտեստեղէնի համար:

- Շնորհակալութիւն կը յայտնենք Կ. Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարք Գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գազանեանի, որ բժշկական խնամքի և գործողութեան կարօտ սեր երեք միաբաններուն համար Պոլսոյ Ս. Փրկիչ Երանդանոցին մէջ ընդունուելու կարգադրութիւններ կատարած է: Տ. Թադէոս Վարդապետը և երկու սարկաւազներ՝ Վարուժան և Վազգէն, ստամոքսի խոցի ցաւերէն բուժուած պիտի վերադառնան Մայր Աթոռ:

- Ֆինանսատնտեսական Յանձնախումբի համար պատրաստուած կանոնադրութիւնը դեռ հրէկ վերջին սրբագրութեան ենթարկուեցաւ: Եւ յոյսով ենք որ պատասխանատու ահմելու նշանակումով Յանձնախումբը իր գործունէութեան պիտի ձեռնարկէ:

- Զօպանարայի գործարանի փոխանցման գործողութիւնները տակաւին չեն ամբողջացած: Գերմանական ընկերութիւնը, երկու հարիւր հազար գերմանական մարքի պահանջէ մը ներկայացուցած է: Իսկ Տնօրէնի և պաշտօնեաներու յարաբերութիւնները և պատասխանատուութիւնները ճշտող կանոնադրութիւնը նոյնպէս պէտք ունի յստակացման:

- Իսկ վանքին տպարանը կը մնայ զուրկ տպագրական ամբողջական գործիքներու օգտագործումէն: Նայնպէս հրատարակութեանց կայսրութիւնը, հրատարակչական յանձնախումբի մը չգոյութեան պատճառաւ:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկյանի այցը Սյունյաց թեմ

1995 թ, Մարտի 11-13-ը Սյունյաց թեմ այցելեց Ամենայն Հայոց Կաթողիկոսական տեղապահ, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տեր Թորգոմ Արքեպս. Մանուկյանը:

Եղեգնածորի շրջանում Պատրիարք Հորը դիմաորեցին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Աբրահամ վրդ. Մկրտչյանը, շրջանի ղեկավար անձիք: Այնուհետև Նորավանքի վերականգնողական աշխատանքներին ծանոթանալուց հետո, Սրբապան Հայրը և նրան ուղեկցողները այցելեցին Եղեգնածոր ավանում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին, ծանոթացան եկեղեցում կատարվող և կատարվելիք գործերին, իրենց հարգանքի տուրքը մատուցեցին եկեղեցու մոտ գտնվող բլրին կանգնեցված երկրաշարժի պոհերի հուշարձան—խաչքարին: Հուշարձան—խաչքարի հարևանության ներքո մայր հողին են հանձնված Արցախյան հերոսամարտում նահատակված մի քանի Եղեգնածորցի ապատամարտիկներ: Այստեղ Պատրիարք Հայրը հոգեհանգստյան պաշտոն կատարելուց հետո ուղևորվեց Վայք, ուր տեղի շրջանային խորհրդի նախագահ պրն. Թովմայանի հետ միասին շոշափեցին մի շարք հարցեր Վայքում կառուցվելիք Ս. Տրդատ եկեղեցու շինարարության ինդիկներին շուրջ: Վայքից Պատրիարք Հայրը ճանապարհվեց Սիսիան, որտեղ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում դիմավորեցին շրջանի հոգևոր հովիվ Տեր Նարեկ քին., քաղաքային իշխանության ներկայացուցիչները և հավատացյալների մեծ խումբ: Եկեղեցու երգչախմբում ընդգրկված 6 - 13 տարեկան երեխաների կատարմամբ հնչեցին մի շարք հոգևոր երգեր, որից հետո Պատրիարք Հայրը իր օրհնության խոսքն հղեց եկեղեցում հավաքված ժողովրդին, այնուհետև այցելեց պոհված ապատամարտիկների գերեզմանները, ուր կրկին կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: Միաժամանակ Պատրիարք Հայրը այցելեց Որոտնավանք՝ երբեմնի Հայ դպրության խոշոր կենտրոններից մեկը:

Պատրիարք Հայրը եղավ նաև Տաթևում, ծանոթացավ վերականգնողական աշխատանքներին և հույս հայտնեց, որ մոտ ապագայում նման աշխատանքի շնորհիվ կարող ենք տեսնել վանքը վերանորոգված: Տաթևում օթևանելուց հետո, հաջորդ օրը Պատրիարք Հայրը այցելեց Գորիս, հանդիպեց քաղաքային իշխանության ներկայացուցիչներին, եղավ մի շարք կրթօջախներում, ծանոթացավ Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերանորոգման և գմբեթի կառուցման աշխատանքներին, այցելեց Սյունյաց թեմի առաջնորդարանում գտնվող նորաբաց Ս. Գրիգոր Լուսավորիչ բարեգործական ճաշարանը, որը գործում է ԱՄՆ-ի Հայ Առաքելական Եկեղեցու Արևելյան թեմի հովանավորությամբ: Առաջնորդարանում հանդիպում ունեցավ

կիրականորա դպրոցի սաների, դասատուների, վերաստեղծ հոգևոր երգչախմբի հետ: Մարտի 12-ի կեստրին Պատրիարք Հայրը ճանապարհվեց Մեղրի: Աննկարագրելի էր մեղրեցիների ոգևորությունը, քանպի նրանք չէին հիշում մի ժամանակ, երբ ապգի հոգևոր առաջնորդը այցելությանն արժանացրած լիներ Մեղրին: Մեղրիում Պատրիարք Հորը ծանոթացրին Մեծ և Փոքր թաղերի եկեղեցիների վերանորոգման աշխատանքներին, ինչպես նաև Արաքս գետի վրա կառուցվող Հայաստանը Պարսկաստանին կապող կամուրջի շինարարական գործերին:

Մեղրիից հետ ճանապարհվեցին Կապան՝ Սյունիքի ամենախոշոր քաղաքը, որտեղ Սրբապան Հորը դիմավորեցին քաղաքային և շրջանային խորհուրդի իշխանության ներկայացուցիչները: Մարտի 13-ի առավոտյան Պատրիարք Հայրը եղավ Կապանի մշակույթի պալատում, որն պատերազմական գործողություններից բավականին տուժել էր, ծանոթացավ վերանորոգչական աշխատանքներին, այցելեց տրիկոտաժի ֆաբրիկայի հովանավորության ներքո գործող մանկապարտեպներից մեկը, որի սաները Սրբապանի այցելության կապակցությամբ տվեցին մի փոքրիկ համերգ:

Տրիկոտաժի ֆաբրիկայի տնօրենի հրավերքով տեղի ունեցավ հանդիպում ֆաբրիկայի աշխատավորության և Սրբապան Հոր միջև, որի վերջում Պատրիարք Հայրը իր Հայրական օրհնությունը հղեց ներկաներին: Այնուհետև այցելեց Գեղանուշ գյուղի Ս. Հռիփսիմե եկեղեցին ուր նրան դիմավորեց շրջանի հոգևոր հովիվ Տեր Եսայի քին., ծանոթացավ եկեղեցում կատարվող որմնանկարչական աշխատանքներին:

Կապանից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադառնալու ճանապարհին Ամենապատավ Հայրը կանգ առավ Սյունյաց թեմի հովանավորության ներքո վերակառուցվող Ս. Վարդան ճամբարում:

Նույն օրը երեկոյան Ամենապատիվ Տեր Թորգոմ Արքեպս. Մանուկյանը վերադարձավ Մայր Աթոռ:

Այս ուղևորության ընթացքում Պատրիարք Հորը ընկերակցում էր ԱՄՆ Արևելյան թեմի ՀՕՏ-ի Երևանյան գրասենյակի տնօրեն Ռոյ Քելեքյանը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1994 ԹՎԱԿԱՆՆԻՆ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Եկեղեցաշինական. - Գերաշնորհ Ս. Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանի հովանավորությամբ և աջակցությամբ վերանորոգվեց Գորիսի Վերիշենի Ս. Նորակունց եկեղեցին: Օծումը կատարեց Հովնան Սրբազանը՝ 1994 թվականի Օգոստոսի 28-ին:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Ս. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանի որոշումով 17.000 (տասնյոթ հազար) ամերիկյան դոլլարի աշխատանքներ կատարվեցին Տաթևում և ավարտվեցին Ս. Պետրոս Պողոս եկեղեցու ծածկասլիբը: Հատկացված է ևս 1.060 (մեկ հազար վաթսուներկու) դոլլար՝ նույն եկեղեցու սեղանի նախապատրաստական աշխատանքների համար:

Ավարտվեց Եղեգնաձորի Նորավաճի Բուրբուլաշեն Ս. Աստվածածին եկեղեցու ժամանակավոր տանիքը: Ս. Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանի հովանավորությամբ սկսվել է և շուտով կավարտվի Սիսիանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու սեղանի շինարարությունը:

Գերաշնորհ Ս. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանի հետ նախնական համաձայնությունից հետո սկսվել է Եղեգնաձորի Ս. Աստվածածին եկեղեցու սեղանի շինարարությունը:

Գորիսի տեղական ուժերի հետ համագործակցված ընթացում են Գորիսի Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի, ծածկասլիբի, սեղանի և ներսի աշխատանքները:

Ավարտվեցին Վալխի Մարտիրոս գյուղի Ս. Հակոբ եկեղեցու վերանորոգման աշխատանքները:

Հիմնովին վերանորոգվեց և որմնակարներով զարդարվեց Ղափանի Գեղանուշ գյուղի եկեղեցին:

Ընթացքի մեջ է Մեղրիի փոքր թաղի Ս. Աստվածածին եկեղեցու վերականգնումը:

1995 թ. Փետրվարի 18-ի հրամանագրով Սյունյաց թեմին վերադարձվեց Եղեգնաձորի Նորավաճը և Ս. Փոկաս մատուռը՝ իրենց շրջակա տարածքներով:

Շինարարական. - Նյու Յորքից Օրիորդ Անուշ Մաթևոսյանի բարերարությամբ ավարտվեց Սյունյաց թեմին հատկացված՝ զոհված ազատամարտիկների երեխաների Եղեգնաձորի նամբարի առաջին մասնաշենքը: Այս տարի կկառուցվեն երկրորդ և երրորդ մասնաշենքերը:

Գերաշնորհ Ս. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամյանի հովանավորությամբ ավարտվեց Գորիսում Սյունյաց առաջնորդարանի եռահարկ շենքի նորոգությունը, և գնվեց մեկ մեքենա՝ առաջնորդարանի համար:

Տեղապահ Սրբազան Հոր համաձայնությամբ և Խաժակ սրբազանի հովանավորությամբ սկսվել է Սյունյաց թեմի երկու/մեզավատ հզորությամբ

հիդրոկայանի շինարարությունը: Արդեն ձեռք է բերվել 560.000 (հինգ հարյուր վաթսուց հազար) ամերիկյան դոլլար արժողությամբ անհրաժեշտ խողովակաշարը, իսկ ՀՀ Կառավարության կողմից տրվել է արտոնագիր (լեցեցնելիս):

Գրիստոնեական դաստիարակություն և կրթություն. - Գորիսում և Սիսիանում գործում են Կիրակնօրյա դպրոցներ՝ 2000 (երկու հազար) աշակերտներով:

Ղափանում, Գորիսում, Սիսիանում և Եղեգնաձորում կազմակերպվել են եկեղեցական երգչախմբեր:

Սիսիանում կազմակերպված է ամենշաբաթյա կրոնական ուղիւ ժամ:

Գորիսի "Ջանգեղուր" բերբը պարբերաբար սպազորում է առաջնորդարանի կողմից պատրաստված կրոնական հոդվածներ:

Առաջնորդարանը հովանավորում է "Տաթև" բերբի հրատարակությունը, ուր տպվում են պատմաբանասիրական և կրոնական հոդվածներ:

Պարբերաբար լինում են հեռուստատեսային հաղորդումներ, հարցազրույցներ և այլն՝ տեղական հեռուստատեսությամբ:

Թեմի հոգևորականները ակտիվորեն մասնակցում են տարածքում կազմակերպվող բոլոր միջոցառումներին:

Թեմում գործում են 14 եկեղեցիներ:

Եկեղեցիների մեծ մասին կից կան կալվածքներ, ընդհանուր՝ 200 հեկտար տարածությամբ: Միայն Նորավանքի և ճամբարի մոտ վերցված է 160 հեկտար:

Բարեգործական. - Թեմը սերտ համագործակցության մեջ է Հայ Օգնության Ֆոնդի (ՀՕՖ) գրասենյակի հետ: Տ. Խաժակ Արքեպիսկոպոս-Պարսամյանի կարգադրությամբ բացվել է ՀՕՖ-ի Սյունիքի բաժանմունքը, որը Սյունիքի առաջնորդարանի միջոցով օգնում է տարածքի բնակչությանը: Բացվել է բարեգործական ճաշարան Գորիսում, ընթացքի մեջ է Եղեգնաձորի, Վայքի և Սիսիանի բարեգործական ճաշարանների շինարարությունները:

Տ. Արրահամ Վարդապետ Մկրտչյան
Առաջնորդական Տեղապահ Սյունյաց Թեմի

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈՋՁՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
(ՔԴՔԿ)

Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնը ստեղծելու գաղափարը ծնունդ է առել Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա նախագահությամբ գումարված Եպիսկոպոսաց ժողովի ընթացքին 1992 թվականի Սեպտեմբերի 29-ին Ս. Էջմիածնում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայ Եկեղեցու Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնը (հետագայում՝ Կենտրոն) հիմնադրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով:

1.2 Կենտրոնն առաջնորդվում է Հայ Եկեղեցու Կանոնագրությամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանագրերով, ներկա Կանոնագրությամբ ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ:

1.3 Կենտրոնն ունի իր անվանումով կնիք, դրոշմակնիք, տիտղոսաթերթ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ենթահաշվարկային հաշիվ:

1.4 Կենտրոնի լրիվ անվանումն է.

Հայերեն- ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ
ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ
ՔԱՐՈՋՁՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անգլերեն- CENTRE FOR CHRISTIAN EDUCATION AND MISSIONS OF
THE ARMENIAN APOSTOLIC ORTHODOX CHURCH

Ռուսերեն- ЦЕНТР ПРОПОВЕДНИЧЕСТВА И ХРИСТИАНСКОГО ВОСПИТАНИЯ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ПРАВОСЛАВНОЙ СВЯТОЙ ЦЕРКВИ

1.5 Կենտրոնի հասցեն է. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստանի Հանրապետություն:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Համակարգված կերպով ծրագրել և Հայ Եկեղեցու դավանանքի և ոգու համաձայն կյանքի կոչել Ավետարանի, Աստվածաբանական, կրոնական, ծիսական, եկեղեցագիտական գիտելիքների ու դրույթների տարածումը:

2.2 Քրիստոնեության հետագա տարածման և ամրապնդման նպատակով կազմակերպել Քրիստոնեական ֆարոզչություն և իրագործել դրանց ծրագրային խնդիրներն ու նպատակները:

2.3 Ազգաբնակչության լայն շրջանակներին ու խավերին հասցնել Հայ Եկեղեցու պատմությունը:

2.4 Հանրությանը հասցնել աղանդավորական, և այլ կրոնական գաղափարախոսությունների ակունքներն ու նպատակները և դրանց անհամատեղելիությունը Հայ Եկեղեցու առաքելության հետ:

2.5 Կազմակերպել ազգաբնակչության, այդ թվում մանուկների, պատանիների և երիտասարդության կրոնական կրթության ու դաստիարակության համակարգված աշխատանք:

2.6 Հատուկ ուշադրությամբ հետևել աշխատողների որակավորման և մասնագետների պատրաստման ծրագրերի իրականացմանը:

2.7 Սատարել Հայ Եկեղեցու տարբեր թեմերում գործող տեղական ուժերի ու կառույցների զարգացմանը:

2.8 Օժանդակել նաև թեմական Քրիստոնեական Դաստիարակության հանձնախմբերի տեղական բնույթով ծրագրերի իրագործմանը:

2.9 Հաստատել աղբյուրագիտական-հետազոտական գրասենյակ, որն զբաղվելու է զանազան կրոնա-եկեղեցական թեմաների մշակմամբ և ուսումնասիրությամբ, վիճակագրական տվյալների հավաքմամբ և վերլուծմամբ, մատենագիտական ցուցակագրմամբ:

2.10 Հեռանկարային և համապարփակ վերլուծության ենթարկել աշխարհասփյուռ Հայ եկեղեցու ներկայի և ապագայի կարևորագույն հոգևոր կարիքները: Ըստ այդմ մշակել համակարգված ծրագրեր՝ ոչ միայն ֆարոզական-դաստիարակչական աշխատանքների ի խնդիր, այլ և հաստատելու և ամրապնդելու այն կառույցները և զարկ տալու այն գործընթացներին, որոնք ապագային պիտի սատարեն Հայաստանյայց եկեղեցու ծաղկմանը և հզորացմանը:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Իրականացնում է ֆարոզություն համաձայն Հայ եկեղեցու վարդապետության: Այդ նպատակով.

3.1 Կազմակերպում է Ս. Գրոց ուսուցում հրատարակությունների և կենդանի ֆարոզության միջոցով:

3.2 Մշակում և կազմակերպում է լսարանային հազորդուժներ, հազորդաշարեր, դասախոսություններ, ուղիռչի, հեռուստատեսության և այլ լրատվական միջոցներով:

3.3 Կիրակնօրյա վարժարանների, նախադպրոցական հիմնարկները, հանրակրթական դպրոցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների համար պատրաստում և վերապատրաստում է կրոնի ուսուցիչներ:

3.4 Մշակում և կազմակերպում է հոգևորականների համար դասընթացներ:

3.5 Մշակում և պատրաստում է կրթական ծրագրեր ու դասագրքեր:

3.6 Իր նպատակների իրագործման համար հարաբերություններ է հաստատում ու մշակում Քույր եկեղեցիների, կրոնական կազմակերպությունների, պետական և ոչ-պետական, հաստատությունների հետ:

3.7 Կազմակերպում է համագործակցված և համատեղ աշխատանք Հայ եկեղեցու թեմերի Քրիստոնեական դաստիարակության և Քարոզչության Գրասենյակների հետ:

3.8 Հովանավորում, կազմակերպում և կառավարում է էջմիածին ֆալաֆի Կիրակնօրյա վարժարանները:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1 Կենտրոնի գործունեությունը ղեկավարում է Կենտրոնի Խորհուրդը, որ, ենթակա է Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

4.2 Կենտրոնի Գործադիր ղեկավարը Կենտրոնի Գործադիր տնօրենն է:

4.3 Կենտրոնի Խորհրդի և Գործադիր տնօրենի գործունեությունները իրականացվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված առանձին Կանոնակարգի համապատասխան:

4.4 Կենտրոնի կազմակերպչական կառուցվածքը նախատեսում է հետևյալ ստորաբաժանումները.

- Քարոզչության բաժին
- Ուսումնակրթական բաժին՝ երեք ենթաբաժիններով.
 - ա. Ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման
 - բ. Հոգևորականների դասընթացների.
 - գ. Կրթական ծրագրերի և դասագրքերի պատրաստման
- Կապերի և հարաբերությունների բաժին՝ չորս ենթաբաժիններով.
 - ա. Թեմերի Քրիստոնեական Դաստիարակության Գրասենյակների հետ
 - բ. Քույր եկեղեցիների հետ
 - գ. Պետական և ոչ պետական հաստատությունների հետ
 - դ. Մամուլի և լրատվության միջոցների հետ
- Հետազոտական Գրասենյակ.
- Կենտրոնի գրասենյակ.

4.5 Կենտրոնի Խորհրդի նախագահը, Խորհրդի անդամները և գործադիր տնօրենը նշանակվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանագրով:

4.6 Կենտրոնի ստորաբաժանումների պաշտոնյաները աշխատանքի են նշանակվում և ազատվում Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանագրով՝ Կենտրոնի Խորհրդի ներկայացմամբ: Կենտրոնի հոգևորական պաշտոնյաները չեն վարձատրվում բացի այն պարագայից երբ հոգևորականը միայն այս մեկ պաշտոնն է կատարում:

4.7 Խորհուրդը նշանակում է ուսուցիչները որակավորող Հանձնախումբ ֆննչու. և վկայելու համար ուսուցիչների արժանավորությունը:

4.8 Թեմերի Քրիստոնեական դաստիարակության և Քարոզչության գրասենյակների գործունեությունը իրականացվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված առանձին Կանոնակարգի համապատասխան:

5. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1 Կենտրոնի գույքը և միջոցները հանդիսանում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սեփականությունը:

5.2 Կենտրոնի գույքը և միջոցները առաջանում են.

- Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հատկացումներից.

- Հայ Եկեղեցու Թեմերի ֆինանսական աջակցություններից.

- Անհատների բարեգործական և այլ կազմակերպությունների նվիրատվություններից և իրավաբանական անձանց կողմից կատարվող մուտքներից:

6. ԿԵՆՏՐՈՆԻ ԼՈՒՄԱՐՈՒՄԸ

6.1 Կենտրոնի լուծարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանագրով:

6.2 Կենտրոնի լուծարումից հետո, Կենտրոնի գույքը և միջոցները, ինչպես նաև գործունեության փաստաթղթերը հանձնվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին կամ նրա կողմից լիազորված մարմինին:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԿԱՔՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
 " _____ " _____ 1995 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱԹԱՍՏԱՆԹԱԹՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՎ ԲԱՐՈՋՉՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ (ՔԴՔԿ) ԽՈՐՀՐԴԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու / հետագայում՝ Հայ Եկեղեցի / Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի Խորհուրդը (հետ այսու՝ Խորհուրդ) հանդիսանում է Կարգադրիչ և Վերահսկիչ մարմին և հաշվետու է Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

1.2 Խորհուրդը բաղկացած է նախագահից և յոթ անդամներից, առավել՝ Կենտրոնի Գործադիր Տնօրենը՝ ի պաշտոնե:

1.3 Խորհրդի նախագահը, փոխնախագահը և անդամները նշանակվում և ազատվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանագրով:

1.4 Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան երկու շաբաթը մեկ անգամ: Խորհրդի նիստերը համարվում են իրավասու, եթե ներկա են Խորհրդի անդամների կեսից ավելին:

1.5 Խորհուրդը ընտրում է ատենադպիր և գանձապահ:

ա. Ատենադպիրը գրում և նախագահի հետ համատեղ ստորագրում է ատենագրությունները: Ցուրաբանչյուր ժողովի սկզբում ընթերցվում, ֆինսարկվում, սրբագրվում ու վավերացվում է նախորդ ժողովի ատենագրությունը, որից հետո նախագահը և ատենադպիրը ստորագրում են այն: Ատենագրությունները գրասենյակում պահում է ատենադպիրը, որը վարում է նաև թղթակցությունները և գրում է տարեկան զեկուցագիրը, որը Խորհրդի կողմից վավերացվելուց հետո ստորագրվում է նախագահի կողմից: Այն ներկայացվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

բ. Գանձապահը հսկում է ֆինանսա-տնտեսական գործարկներն ու

գործունեությունը և հաշվետու է Խորհրդին, ինչպես նաև Մայր Աթոռի Գլխավոր հաշվապահին: Գանձապահը պատրաստում է տարեկան ֆինանսա-տնտեսական տեղեկագիր, որը Խորհրդի կողմից վավերացվելուց հետո՝ ստորագրում են նախագահը, գանձապահը և Մայր Աթոռի գլխավոր հաշվապահը: Այն ներկայացվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

1.6 Խորհրդի կողմից որոշումներն ընդունվում են բաց փոխարկությամբ՝ Խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեների հավասար բաժանման դեպքում տեղի է ունենում երկրորդ փոխարկություն: Նույն արդյունքի հասնելու դեպքում նախագահի փվեն վճռական փվեն է համարվում:

1.7 Խորհրդի որոշումները չեղյալ կարող է հայտարարել միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

2. Խորհրդի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Ճշտել Կենտրոնի գործունեության հիմնական ընդհանուր ուղղությունները և դրանց հիման վրա մշակել ամենամյա հեռանկարային ծրագրեր ու միջոցառումներ: Վերահսկել Կենտրոնի գործունեության ղեկավարման ու կազմակերպման գործին, ծրագրերի և առաջադրանքների ժամանակին կատարմանը:

2.2 Սահմանել Կենտրոնի կազմակերպչական կառուցվածքը և կառավարման ընդհանուր համակարգը:

2.3 Սահմանել Կենտրոնի ստորաբաժանումների Կանոնակարգերը ինչպես նաև դրանց աշխատողների պաշտոնական հրահանգները:

2.4 Մշակել և ներկայացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատմանը Կենտրոնի ծախսերի նախահաշիվները, ինչպես նաև Կենտրոնի պաշտոնյաների հաստիքային ցուցակները:

2.5 Մշակել և հետապնդել Կենտրոնին ֆինանսական աջակցություն ապահովելու և նրա գործունեությունը ամուր հիմքերի վրա դնելու աշխատանքները:

2.6 Առաջարկություններ ներկայացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին Կենտրոնի գործունեությանը վերաբերվող կարևորագույն խնդիրների ֆննդության և լուծման համար:

2.7 Վերլուծել և գնահատել Կենտրոնի, համապատասխան թեմական Հանձնախմբերի կամ գրասենյակների, ինչպես և նրանց համագործակցության և հարաբերությանը վերաբերող հարցերն ու խնդիրները, իրագործումներն ու հաջողությունները: Ի պահանջել հարկին առաջարկություն ներկայացնել թեմական առաջնորդներին և Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

3. Խորհրդի գործունեության ժամկետը

3.1 Խորհրդի գործունեության ժամկետը սահմանվում է չորս տարի:

3.2 Խորհրդի մեկ/երկրորդը երկու տարին մեկ համալրվում է նոր անդամներով. պահպանելով Խորհրդի յուրաքանչյուր անդամի գործունեության չորսամյա ժամկետը:

3.3 Խորհրդի գործունեության առաջին երկու տարվա ավարտից հետո Խորհրդի անդամների կեսը վիճակով փոխարինվում է նոր անդամներով:

3.4 Խորհրդի կազմի հետագա համալրումը կատարվում է ինֆնաբերաբար ամեն երկու տարին մեկ. Խորհրդում չորսամյա գործունեություն լրացրած անդամների հաջորդ կեսի փոխարեն:

3.5 Խորհրդի նախագահը, փոխնախագահը և անդամները կարող են ազատվել պարտականություններից վաղաժամկետ՝ իրենց ցանկությանը. ինչպես նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի որոշմամբ:

4. Խորհրդի նախագահ

4.1 Խորհրդի նախագահը (հետ այսու՝ նախագահ) նշանակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից՝ հատուկ հրամանագրով:

4.2 Նախագահը ընդհանուր վերահսկիչն է Կենտրոնի կառույցի և գործունեության:

4.3 Նախագահը հրավիրում և վարում է Խորհրդի ժողովները, նախապես պատրաստում է օրակարգը՝ նկատի առնելով Խորհրդի անդամների առաջարկները: Օրակարգը գրավոր կերպով (նախագահի թելադրությամբ և Խորհրդի ատենադպիրի պատրաստությամբ) ներկայցվում է Խորհրդի բոլոր անդամներին, նախընտրաբար՝ ժողովից շուտ:

4.4 Նախագահը (Խորհրդի ատենադպիրի հետ համատեղ) ստորագրում է ժողովների ատենագրությունները հետ վավերացման: Յուրաքանչյուր ժողովի սկզբում կարդացվում, ֆննարկվում և սրբագրվում է նախորդ ժողովի ատենագրությունը՝ պատրաստված՝ ատենադպիրի կողմից, և միայն հետ վավերացման նախագահը ստորագրում է այն:

4.5 Ժողովի ավարտին նախագահը ժողովի որոշումների լույսի տակ քանակապես է գործնական այն ֆայլերը, որոնք իրականացվելու են Գործադիր տնօրենի միջոցով և Կենտրոնի պաշտոնության կողմից: Այս հանձնարարությունները քանակոր կամ ի պահանջել հարկին՝ գրավոր կերպով

ներկայացվում են Գործադիր տնօրենին (նախագահի նախաձեռնությամբ և ատենադպիրի պատրաստությամբ)՝ առ ի գործադրում:

4.6 Նախագահը մշտապես խորհրդակցում է Գործադիր տնօրենի հետ Կենտրոնի Գործունեության ընթացքի մասին, ինչպես նաև աշխատանքային-գործնական դժվարությունների, կարիքների և հարցերի մասին: Կենտրոնի բաժանմունքների հետ նախագահի կապը Գործադիր տնօրենն է:

4.7 Խորհրդի նախագահի և Գործադիր տնօրենի իրավասությունների տրամաբանական սահմանների ճշտման անհրաժեշտության պարագային ճշտումը կատարվում է Խորհրդի նիստում, նախագահի և Գործադիր տնօրենի ներկայությամբ և հավանությամբ: Անել կացության ստեղծման պարագային հարցը վճռում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

4.8 Նախագահը Ամենայն Հայոց Կաթողիկոսին է ներկայացնում Խորհրդի տարեկան տեղեկագիր-զեկույցը: Այն պատրաստում են նախագահը և ատենադպիրը և հետ նրա ֆենարկման և վավերացման՝ Խորհրդի կողմից ստորագրում է նախագահը: Ջեկույցին նաև կցվում են Խորհրդի ֆինանսատնտեսական տարեկան տեղեկագիրը՝ նույնպես վավերացված Խորհրդի կողմից և ստորագրված՝ նախագահի, Խորհրդի գանձապահի և Մայր Աթոռի գլխավոր հաշվապահի կողմից, ինչպես և Գործադիր տնօրենի տարեկան զեկույցը:

4.9 Խորհրդի անդամները կարող են ուղղակիորեն դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, խնդրելով հանդիպում, գրավոր կերպով նման դիմում ներկայացնելով, որը կը կրի առնվազն չորս անդամների ստորագրությունը:

4.10 Նախագահի բացակայության, փոխնախագահը կատարում է նախագահի պաշտոնը:

4.11 Բոլոր այն հարցերը որոնք չեն ֆենարկված այս և հարակից Կանոնադրությանց մեջ՝ վճռվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

5. Գործադիր տնօրեն

5.1 Կենտրոնի Գործադիր տնօրենը (հետ այսու՝ տնօրեն) նշանակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

5.2 Տնօրենը պատասխանատվություն ունի գործադրելու և իրականացնելու Խորհրդի ծրագրերն ու նպատակները: Նա վարիչն ու ղեկավարն է Կենտրոնի բոլոր բաժանմունքների, հանձնախմբերի, պաշտոնեության և անձնակազմի աշխատանքների:

5.3 Տնօրենը գործնական աշխատանքների պատկերն ու զարգացումը, ինչպես

և դրանցից բխող բոլոր հարցերն ու խնդիրները ներկայացնում է Խորհրդին, և փոխադարձաբար Խորհրդի որոշումները փոխանցում է Կենտրոնի քաժամումունքներին, որտեղ և հետամուտ է լինում դրանց գործադրման կամ իրականացմանը: Տնօրենը հետևաբար հանդիսանում է Խորհրդի և Կենտրոնի քաժամումունքների մշտական ու միակ կապն ու միջնորդը:

5.4 Տնօրենը նախագահի հետ խորհրդակցաբար Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղյակ է պահում Կենտրոնի աշխատանքների մասին, ըստ անհրաժեշտության:

5.5 Տնօրենը համարատու է Խորհրդի կազմին: Նա ի պաշտօնն անդամ է Խորհրդին, փյփյ իրավունքով, ի բաց առյալ այն պարագայից երբ տնօրենի անձին կամ գործունեության ուղղակի ֆննարկմամբ զբաղվի Խորհուրդը: Նման դեպքում տնօրենը՝ որպես Խորհրդի անդամ իրավունք չունի մասնակցելու փննարկությանը:

5.6 Տնօրենը տարեկան հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին՝ իր ստորագրությամբ: Այս զեկույցը կցվում է Խորհրդի տարեկան զեկույցին և ենթակա չէ ֆննարկման կամ վավերացման: Խորհրդի, Գործադիր տնօրենի և ֆինանսա-տնտեսական զեկույցները ներկայացվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

5.7 Բոլոր այն հարցերը որոնք չեն ֆննարկված այս և հարակից Կանոնադրությանց մեջ՝ վնուվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

42

Հաստատում եմ

Գրանցված է

[Handwritten signature]
1994թ.
 Կանոնադրույ Ամենայն Հայոց
 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
19 96

[Circular stamp with Armenian text]
1994թ.
4

5/VII-1994 - 2
P.4

Կանոնադրություն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
"Վանք" դուստր ձեռնարկության

1994
Էջմիածին

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնադրությունը մշակված է Հայաստանի Հանրապետության «Ձեռնարկությունների ու ձեռնարկատիրական գործունեության մասին օրենքի» գործող կանոնադրական և նորմատիվ ակտերի հիման վրա:

1.2. «Իլանք» դուստր ձեռնարկությունը, հետագայում՝ «Ձեռնարկություն» հիմնադրվել է Մայր Աթոռ Ս. Լ.: ջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի 1994թ. ապրիլի 26/2 = 679 որոշմամբ:

1.3. «Ձեռնարկության» հիմնադիրը հանդիսանում է Մայր Աթոռ Ս. Լ.: ջմիածինը, հետագա անվանումը՝ «Հիմնադիր»:

1.4. «Ձեռնարկությունը» հանդիսանում է Հայաստանի Հանրապետության շինարարության նախարարության Չորանքարայի փայտամշակման կոմբինատի իրավահաջորդը:

1.5. Ֆիրմային անվանումը՝ Մայր Աթոռ Ս. Լ.: ջմիածնի «Իլանք» դուստր ձեռնարկություն:

1.6. «Ձեռնարկության» անվանումն է հայերեն «Իլանք» դուստր ձեռնարկություն, անգլերեն՝ «Vank» Daughter Company:

1.7. «Ձեռնարկության» իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Լ.: ջմիածնի շրջանի Չորանքարա ավան, հեռ. 5-56-85, 28-04-28:

2. Գործունեության նպատակը և խնդիրները

2.1. Հայ առաքելական եկեղեցու թեմերում տարվող շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ արտադրանքի և ծառայությունների պահանջարկի և կարիքների բավարարումը:

2.2. Արտադրվող ապրանքների օգտագործումը Հայ առաքելական եկեղեցու բարեգործական խնդիրների կատարման համար:

2.3. Էկոլոգիական սպառման ապրանքների արտադրությունը և իրացումը:

()րենքով չարգելված. սույն կանոնադրությանը չհակասող “Ձեռնարկության” արտադրության գարգացմանը ուղղված ցանկացած տնտեսական գործունեության իրականացումը և ծառայությունների մատուցումը:

3. Իրավաբանական կարգավիճակը

3.1. “Ձեռնարկությունը” իր իրավակազմակերպչական կարգավիճակով հանդիսանում է դուստր ձեռնարկություն, որի ամբողջ գույքը սեփականության իրավունքով պատկանում է “Հիմնադրին”:

3.2. “Ձեռնարկությունը” ունի իրավաբանական անձի կարգավիճակ. ինքնուրույն հաշվեկշիռ. հաշվարկային. ինչպես նաև տարալրամասյին հաշիվ բանկում. կոր կնիք հայերեն և անգլերեն մակագրությամբ. դրոշմ. համապատասխան տիտղոսաթերթ և օժտված է սրանցից բխող համապատասխան պարտականություններով և իրավունքներով:

3.3. “Ձեռնարկությունը” գործում է լրիվ տնտեսական հաշվարկի սկզբունքով. պատասխանատու է իր տնտեսական գործունեության արդյունքների. պայմանագրային պարտավորությունների կատարման համար: “Ձեռնարկությունը” միաժամանակ պատասխանատու է պետական բյուջեի. բանկերի, ինչպես նաև աշխատանքային կոլեկտիվի առջև:

3.4. “Ձեռնարկությունը” իրավասու է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ. լինել հայցվոր և պատասխանող դատարանում:

3.5. “Ձեռնարկությունը” օժտված է իրեն տրամադրված գույքը ինքնուրույն տնօրինելու և օգտագործելու իրավունքով:

3.6. “Հիմնադիրը” “Ձեռնարկության” պարտավորությունների դիմաց պատասխանատվություն է կրում միայն իր կողմից նրան տրամադրված գույքի սահմաններում:

4. Գույք և միջոցները

4.1. “Ձեռնարկության” սեփական միջոցները ձևավորվում են կանոնադիր և պահուստային ֆոնդերից, շահույթից ձևավորված ձեռնարկության զարգացման, սպառման, նյութական խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդերից:

4.2. “Ձեռնարկության” կանոնադիր ֆոնդը ձևավորվում է “Հիմնադրի” կողմից տրամադրված գույքի և դրամական միջոցների հաշվին: “Ձեռնարկության” կանոնադիր ֆոնդը կազմում է է 146910 դրամ:

4.3. “Ձեռնարկությունը” պարտավոր է ստեղծել պահուստային ֆոնդ, որը կազմում է կանոնադրական ֆոնդի 15%-ը և ձևավորվում է տարեկան շահույթից ոչ պակաս, քան 5% մասհանումների հաշվին մինչև սույն կանոնադրությամբ սահմանված չափը:

Պահուստային ֆոնդը կարող է օգտագործվել չնախատեսված ծախսերի և կրորդ անձանց հետ հաշվարկների կատարման համար. բայց ամենակարգ լիարժեքում այն վերականգնելու պայմանով:

4.4. Ֆոնդերի ձևավորման և օգտագործման կարգը որոշվում է “Հիմնադրի” կողմից:

“Ձեռնարկությունը” ունի “Հիմնադրի” համաձայնությամբ գույք զննելու և վարձակալելու իրավունք:

5. Պլանավորում

5.1. “Ձեռնարկությունը” իր գործունեությունը իրագործում է ինքնուրույն մշակված տարեկան(ընթացիկ) արտադրական, ֆինանսական և այլ պլանների հիման վրա, հաշվի առնելով արտադրանքի սպառման պահանջարկը:

5.2. “Ձեռնարկության” տնտեսական գործունեության տարեկան պլանները հաստատվում են “Հիմնադրի” կողմից:

6. Աշխատանքի կազմակերպումը, կարգապահությունը և վարձատրությունը

6.1. “Ձեռնարկության” աշխատողների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում գործող աշխատանքային օրենսդրությամբ:

6.2. “Ձեռնարկության” բոլոր աշխատանքները իրականացվում են անվտանգության տեխնիկայի, սահմանված արտադրական սանիտարական նորմերի և օրենքների պարտադիր պահպանմամբ:

6.3. “Ձեռնարկության” աշխատողների սոցիալական և բժշկական ապահովագրությունը կատարվում է գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Լեյն անձինք, որոնց պատճառով “Ձեռնարկությանը” հասցվել է նյութական վնաս, պատասխանատվություն են կրում բանվոր-ծառայողների առջև օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:

7. Հաշվառումը, հաշվետվությունը և վերահսկումը

7.1. “Ձեռնարկությունը” իր արտադրատնտեսական գործունեության հաշվառումը, հաշվապահական, վիճակագրական հաշվետվությունները իրականացնում է գործող օրենքներով սահմանված կարգով և պատասխանատվություն է կրում դրանց ճշտության համար:

7.2. “Ձեռնարկության” տարեկան հաշվեկշիռը, ինչպես նաև օգուտների և վնասների հաշիվները հաստատում է “Հիմնադիրը”:

7.3. “Ձեռնարկության” ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը իրականացնում է “Հիմնադիրը”:

7.4. “Ձեռնարկության” գործունեության ստուգումը “Հիմնադիր” կամ “Ձեռնարկության” պահանջով կարող է իրականացվել անկախ աուդիտորական կազմակերպության կողմից:

7.5. “Ձեռնարկության” ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից գործող օրենսդրության համապատասխան տարեկան մեկ անգամ, բացառությամբ առանձին դեպքերի:

8. Ծափույթի բաշխումը

Ըստ գործող օրենքի հարկերը և պարտադիր մուծումները վճարելուց հետո գոյացած շահույթը բաշխվում է “Հիմնադրի” որոշմամբ:

9. Կառավարումը

9.1. “Ձեռնարկության” գործունեությունը ղեկավարում է “Ձեռնարկության” վարչությունը, որը բաղկացած է առնվազն երեք անդամներից:

9.2. “Ձեռնարկության” վարչության անդամներին նշանակում է “Հիմնադիրը”:

9.3. Վարչությունը նիստ է գումարում ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ:

9.4. “Ձեռնարկության” օպերատիվ կառավարումը իրագործում է “Ձեռնարկության” տնօրենը:

9.5. “Ձեռնարկության” ղեկավարությունը (տնօրեն, փոխտնօրեն, գլխավոր ինժեներ, գլխավոր հաշվապահ) նշանակվում է “Հիմնադրի” կողմից:

9.6. “Ձեռնարկության” ղեկավարությունը իր գործունեության համար հաշվետու է “Ձեռնարկության” վարչությանը:

9.7. Տնօրենը առանց երաշխավորագրի “Ձեռնարկությունը” ներկայացնում է բոլոր հանրապետական և արտասահմանյան ձեռնարկություններում, տնօրինում է “Ձեռնարկության” ունեցվածքը և միջոցները, կնքում է պայմանագրեր, տալիս լիազորագրեր (այդ թվում վերալիազորման իրավունքով), բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ, հաստատում է հաստիքացուցակը, աշխատանքի ընդունում և ազատում աշխատողներին, տալիս հրամաններ, լիովին պատասխանատվություն կրում “Հիմնադրի” և աշխատանքային կոլեկտիվի առաջ գործող օրենսդրությունը և սույն կանոնադրությունը խախտելու դեպքում:

10. Գործունեության դադարեցումը

10.1. “Ձեռնարկության” գործունեությունը դադարեցվում է

- “Հիմնադրի” որոշմամբ.

- դատարանի որոշմամբ՝ անվճարունակության, սույն կանոնադրությունը խախտելու, կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

10.2. “Ձեռնարկության” գործունեությունը դադարեցվում է լուծարման կամ վերակազմավորման միջոցով:

10.3. “Ձեռնարկությունը” լուծարելու դեպքում նշանակվում է լուծարման հանձնաժողով: Կերպից ձևավորվում է այն մարմնի կողմից, որի որոշմամբ լուծարքի է ենթարկվել “Ձեռնարկությունը”:

10.4. Սահմանված կարգով պարտքերը մարելուց հետո լուծարքի ենթարկված “Ձեռնարկության” միջոցները տնօրինում է “Հիմնադիրը”:

11. Այլ դրույթներ

11.1. Ինչպես կանոնադրությունը ենթակա է գրանցման Լ:քմիածնի ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի գործադիր կոմիտեում: Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են “Հիմնադրի” կողմից և հաստատվում նույն կարգով:

11.2. “Ձեռնարկությունը” գործում է անժամկետ՝ պետական ռեզիստրում նրա գրանցման պահից սկսած, եթե այդ ընթացքում չեն առաջանում հարցեր պայմանավորված ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրության 10-րդ գլխի համապատասխան կետերով:

Հրաման հմբ. 154

Ս. Էջմիածին

30 Նոյեմբեր 1994

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի "Վանք" դուստր ձեռնարկության հանձնման մասին

Համաձայն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և "Վանք" դուստր ձեռնարկության տնօրենի միջև կնքված Կոնտրակտի

Հրամայում եմ

1. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի "Վանք" դուստր ձեռնարկությունը նրա տնօրեն Ալիկ Աթայանին հանձնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ստեփանյան Վահե — Ֆինանսա-տնտեսական և արտադրության գծով հանձնախմբի ատենապետ—Հանձնաժողովի նախագահ

Կարապետյան Մինաս—Ֆինանսա-տնտեսական և արտադրության գծով հանձնախմբի անդամ—Հանձնաժողովի անդամ

Կարապետյան Բորիս — " — " — " — "

Չիտչյան Ռաֆայել — " — " — " — "

Պեպլոպյան Բարսեղ — " — " — " — "

Մելյան Հարություն — Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավոր հաշվապահ — " — "

Բաբախանյան Հակոբ — Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետա-շինարարական բաժնի պետի տեղակալ — " — "

Խոջամիրյան Լևոն — Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ավտոտնտեսության պետ — " — "

2. Վերոհիշյալ հանձնաժողովը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի "Վանք" դուստր ձեռնարկությունը հանձնում է և այն ընդունում է "Վանք" դուստր ձեռնարկության տնօրեն Ալիկ Աթայանը:

3. Հանձնաժողովի նախագահ Վահե Ստեփանյանին.

3.1 Ձեռնարկության հանձնումը կատարել սահմանված կարգով այն

ձևակերպելով ընդունման և հանձնման ակտով:

3.2 Ձեռնարկության ընդունման և հանձնման ակտում արտացոլել.

- Տեխնիկա-տնտեսական և ֆինանսական հիմնական ցուցանիշների կատարումը,
- Բանվորների, ծառայողների և մասնագետների քանակը, որակական կապը,
- Աշխատանքի վճարման համակարգը, աշխատավարձի օգտագործման և վճարման վիճակը,
- Ձեռնարկության ֆինանսական վիճակը, Դեկտեմբերի 1-ի դրությամբ հաշվեկշռային տվյալների հիման վրա,
- Հաշվապահական և գործարար հաշվառման ու հաշվետվության վիճակը,
- Ձեռնարկության դրամարկղի վիճակը, այն ձևակերպելով առանձին ակտով,
- Կնքված տնտեսական պայմանագրերի քանակը, բնույթը, գործարքի ծավալները, ինչպես նաև այդ պայմանագրերի խախտումները,
- Հումքի, կիսաֆաբրիկատների, վառելիքի և այլ էներգակիրների, արտադրության համար անօգտագործելի ապրանքների ու նյութերի պահուստները,
- Ծենքերի, շինությունների, տեխնոլոգիական և այլ մեքենա-սարքավորումների ցուցակային կապը և դրանց տեխնիկական վիճակի բնութագրերը:

3.3 Ձեռնարկության ընդունումն ու հանձնումը ավարտել 10-օրյա ժամկետում և ակտը ներկայացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահի հաստատմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ
 Ամենայն Հայոց Կաթողիկոսի
 Տ. Թորգոմ արքեպիսկոպոս



Հրաման հմր.153

Ս. Էջմիածին

23 Նոյեմբեր 1994

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի "Վանք" դուստր ձեռնարկության հիմնական ֆոնդերի և շրջանառու միջոցների վերագնահատման մասին

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի "Վանք" դուստր ձեռնարկության հիմնական ֆոնդերի և շրջանառու միջոցների հաշվեկշռային արժեքները դրանց վերարտադրման գործող պայմաններին համապատասխանեցնելու նպատակով

Հրամայում եմ

1. 1994 թվականի Դեկտեմբերի 1-ի դրությամբ վերագնահատել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի "Վանք" դուստր ձեռնարկության հաշվեկշռում արտահայտված հիմնական ֆոնդերի և անավարտ շինարարության և շրջանառու միջոցների արժեքները:

2: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի "Վանք" դուստր ձեռնարկության հիմնական ֆոնդերի և շրջանառու միջոցների վերագնահատման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Սերովբե վարդապետ Իսախանյան

Մելյան Հարություն— Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Գլխավոր հաշվապահ— Հանձնաժողովի նախագահ

Բաբախանյան Հակոբ— Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ճարտարապետա-

շինարարական բաժնի

պետի տեղակալ— Հանձնաժողովի անդամ

Աթայան Ալիկ— "Վանք" դուստր

ձեռնարկության տնօրեն— —"

Եղիապարյան Սոնյա— "Վանք" դուստր

ձեռնարկության

գլխավոր հաշվապահ —"

Զիտչյան Ռաֆայել— Հրավիրված մասնագետ —"

Պողոսյան Հենրիկ— Հրավիրված մասնագետ —"

Խաչատրյան Խաչատուր— Հրավիրված մասնագետ —"

3. Հանձնաժողովի նախագահ Հարություն Մելլանին.

3.1 Ձեռնարկության հիմնական ֆոնդերի և շրջանառու միջոցների վերազնահատման համար ղեկավարվել հիմնական ֆոնդերի վերազնահատման մասին «Կառավարության 1994 թվականի Հուլիսի 29-ի հմր. 394 որոշմամբ հաստատված կարգով:

3.2 Հիմնական ֆոնդերի վերազնահատման աշխատանքները ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահի հաստատմանը:

4. Սահմանել, որ ներկա հրամանի համաձայն վերազնահատված հիմնական ֆոնդերի և անավարտ շինարարության և շրջանառու միջոցների արժեքները չեն կարող հիմք հանդիսանալ դրանց օտարման կամ ձեռնարկության վաճառքի մեկնարկային գների որոշման համար:

5. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավոր հաշվապահ Հարություն Սելլանին և "Վանք" դուստր ձեռնարկության տնօրեն Ալիկ Աթայանին՝ եռնարկության հիմնական ֆոնդերի և շրջանառու միջոցների վերազնահատման հաստատված արդյունքները արտացոլել 1994 թվականի տարեկան հաշվապահական և վիճակագրական հաշվետվություններում:

Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան
 Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ
 Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան



ԿՈՆՏՐԱԿՏ

16/ՄՈ - 1994-420
Գ.Կ

ՄԱՅՐ ԱՅՈՒ ԱՌՈՒՄԻ ԷԶՄԻԱՍԵՆԻ "ՎԱՆՔ" ԴՈՒՍՏՐ

ՉԵՌՆԱՐԿԱԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ

"28" Գոյրիս 1994թ

ԷԶՄԻԱՍԵՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, հանձին Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ Տ. Թորգոմ Արք. Մանուկյանի (հետագայում՝ Մայր Աթոռ) և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի "Վանք" դուստր ձեռնարկության տնօրեն Ալիկ Սերգեյի Աթայանը (հետագայում՝ Տնօրեն) կնքեցին ներկա Կոնտրակտը հետևյալի մասին.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Կոնտրակտը կնքվում է "Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին" ՀՀ օրենքի համապատասխան և հաղիսանում է աշխատանքային պայմանագրի հստակ ձև:

1.2 Կոնտրակտը կարգավորում է Մայր Աթոռի և Տնօրենի միջև աշխատանքային և այլ հարաբերություններ:

2. ԿՈՆՏՐԱԿՏԻ ԱՌԱՐԿԱՆ.-

Ա. Տնօրենը պարտավորվում է.

2.1 Մայր Աթոռից սահմանված կարգով ընդունել

Ձեռնարկությունը:

2.2 Իրականացնել Ձեռնարկության գործունեության կազմակերպումն ու ղեկավարումը համաձայն ՀՀ օրենսդրության, Ձեռնարկության կանոնադրության՝ ներկա Կոնտրակտի գործադրության ժամկետի սահմաններում:

2.3 Ապահովել.

- Ձեռնարկության արդյունավետ գործունեությունը.
- Ձեռնարկության սոցիալ-տնտեսական կարգացման ծրագրերի իրականացումը.
- Մայր Աթոռի կողմից Ձեռնարկությանը սահմանված տեխնիկա-տնտեսական և ֆինանսական ցուցանիշների կատարումը.
- Մայր Աթոռի պատվերների, Ձեռնարկության պայմանագրային պարտավորությունների կատարումը.
- Ձեռնարկության կոլեկտիվ պայմանագրի կատարումը
- Ձեռնարկության տնօրինությանը հանձնված Մայր Աթոռի գույքի արդյունավետ օգտագործումը և

անձեռնմխելիությունը (չօտարելը),

- Մայր Աթոռի, Հայ Եկեղեցու ազգային, կրոնական, սոցիալ և հատուկ ծրագրերի կատարումը,
- ՀՀ հարկային կարգապահությունը ըստ սահմանված կարգի:
Մշակել և իրականացնել.
- արտակարգ իրավիճակներում Ձեռնարկության գործունեության ծրագրեր,
- հումքի, հիմնական և օժանդակ նյութերի, վառելիքա-
էներգետիկ պաշարների խնայողությանն ուղղված
միջոցառումներ

2.4 Մայր Աթոռին սահմանված կարգով ժամանակին փոխանցել Ձեռնարկության հաշվեկշռային շահույթը:

2.5 Ստեղծել ապահովագրական, պահուստային (ոեզերվային) ֆոնդ ոչ պակաս Կանոնադիր Հիմնադրամի 15 տոկոսի չափով:

2.6 Իրականացնել նաև Ձեռնարկության Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ, ինչպես նաև Մայր Աթոռի կողմից տրվող այլ լիազորություններ ու իրավունքներ:

2.7 Ձեռնարկության ֆինանսա-տնտեսական, արտադրական և այլ գործունեության համար պատասխանատվություն կրել ՀՀ օրենսդրության և Մայր Աթոռի առջև:

Բ. Մայր Աթոռը պարտավորվում է

2.8 Տնօրենին սահմանված կարգով հանձնել Ձեռնարկությունը:

2.9 Ապահովել Ձեռնարկության ՀՀ օրենսդրությամբ և Ձեռնարկության Կանոնադրությամբ նախատեսված տնտեսական ինքնուրույնությունը:

2.10 Նպաստել Ձեռնարկության տնտեսական արդյունավետ գործունեությանը:

2.11 Ներկայացնել և պահպանել Ձեռնարկության շահերը պետական կառավարման և այլ մարմիններում:

3. ՏՆՕՐԵՆԻ ՎԱՐՉԱՏՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԸ

3.1 Սահմանել տնօրենի ամենամսյա պաշտոնային աշխատավարձ 60.000 (վաթսուն հազար) դրամ:

3.2 Տնօրենի ամսական աշխատավարձի վճարումը կատարվում է Ձեռնարկության սպառման ֆոնդից:

3.3 Տնօրենին լրացուցիչ սահմանել հետևյալ հավելավճարներ.

- Շահույթի առաջադրանքի կատարման համար հաշվարկային շահույթի 10 (տաս) տոկոսի չափով,
- Շահույթի առաջադրանքի կատարման դեպքում հավելավճար չի սահմանվում:

3.4 Հավելավճարի չափը որոշվում է Ձեռնարկության գործունեության եռամսյակային արդյունքերով (աճողական) և հավելավճարը վճարվում է Ձեռնարկության եռամսյակային հաշվիկշիւի սահմանված կարգով Մայր Աթոռի կողմից ընդունելուց հետո:

4. ԿՈՆՏՐԱԿՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱՎԱՆՅՈՒՄԸ:

4.1 Կոնտրակտի գործողության ժամկետը սահմանվում է կրկու տարի:

4.2 Կոնտրակտը կարող է վաղաժամկետ լուծվել.

- կողմերից մեկի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը չի կատարել կոնտրակտի պայմանները.
- տնօրենի նախաձեռնությամբ, երբ նա ի վիճակի չէ, կատարելու իր վրա դրված պարտականությունները հիվանդության, հաշմանդամության, ընտրովի ապստամբության պաշտոնի անցնելու և այլ հարգելի դեպքերում.
- կողմերի համաձայնությամբ՝ կապված տնօրենի այլ աշխատանքի անցնելու հետ
- Կոնտրակտը միակողմանի կարող է լուծվել Մայր Աթոռի կողմից << աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև տնօրենի կողմից Մայր Աթոռին հասցրած նկատելի նյութական և բարոյական վնասի և << օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

4.3 Կոնտրակտի ժամկետը լրանալու դեպքում կողմերի համաձայնությամբ այն կարող է երկարացվել կամ կնքվել նոր ժամկետով:

4.4 Մայր Աթոռի նախաձեռնությամբ Կոնտրակտի դադարեցման դեպքում Տնօրենին վճարվում է միանվագ նպաստ՝ երկու ամսվա աշխատավարձի չափով բացի << Օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

4.5 Կոնտրակտում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ներկա Կոնտրակտին կցվող լրացուցիչ համաձայնագրերով, որոնք հանդիսանում են Կոնտրակտի անբաժանելի մասը:

4.6 Ներկա Կոնտրակտի վերաբերյալ կողմերի վեճերը լուծվում են << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Ներկա Կոնտրակտով ստանձնած պարտականությունների ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն, համաձայն << օրենսդրության:

5.2 Տնօրենին սահմանվում է ամենամյա արձակուրդը 24 աշխատանքային օր տևողությամբ:

Տնօրենը արձակուրդ գնալուց ստանում է մեկ ամսվա աշխատավարձ և ձեռնարկության հաշվին իր համար Հայաստանի Հանրապետության առողջարանների ուղեգիր:

5.3 Տնօրենին իրավունք է վերապահվում օգտվելու նյութական, սոցիալական, բարոյական արտոնություններից, որոնք նախատեսված են Ձեռնարկության կոլեկտիվի անդամների համար:

5.4 Տնօրենին թույլատրվում է կատարել ներկայացուցչական ծախսեր Մայր Աթոռ հետ համաձայնեցված գումարի չափով:

5.5 Չեղարկությունը իր հաշվին ապահովագրում է տնօրենի կլանքը տարեկան աշխատավարձի չափով:

Կողմերի հասցեները.

Մայր Աթոռ

Տնօրեն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Վալաստանի Հանրապետություն

Մայր Աթոռ Ս.Էջմիածնի՝Վանք՝
դուստր Չեղարկություն
Հալաստանի Հանրապետություն
Էջմիածնի շրջան, Չոբանքանրա
ավան



Իմ ենայն Հայոց Կաթողիկոսի
Տեղապահ Տ. Թորգոմ Արք.
Մանուկյան

Չեղարկության Տնօրեն



Արքեպիսկոպոսի Աթոլան


Հաստատված է
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ֆինանսատնտեսական և
արտադրության գծով Հանձ-
նախմբի 1994 թ. դեկտեմբե-
րի 24-ի նիստի որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգի
աշխատողների ներքին աշխատակարգի

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊՐՈՅԵԿՏ

1.1 Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ֆինանսատնտեսական և արտադրական Համա-
կարգի աշխատողների ներքին աշխատակարգի կանոնները ուղղված են աշխա-
տանքային կարգապահության հետագա ամրացմանը, աշխատանքի կազմակերպ-
մանը, աշխատաժամանակի արդյունավետ օգտագործմանը, աշխատանքի բարձր
որակի ապահովմանը:

1.2 Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ֆինանսատնտեսական և արտադրության գծով
Հանձնախումբը ներքին աշխատակարգի կանոնների հարցում ղեկավարվում է ՀՀ
աշխատանքային օրենսդրությամբ և սույն կանոններով:

2. Աշխատանքի ընդունման և ազատման կարգը

2.1 Աշխատողները աշխատանքի նկատմամբ իրենց իրավունքները իրականաց-
նում են կնքելով պայմանագիր Մայր Աթոռում աշխատելու մասին:

2.2 Աշխատանքի ընդունման ժամանակ ընդունվողը ներկայացնում է.

- ա) աշխատանքային գրքույկ, իսկ եթե անձը առաջին անգամ է ընդունվում
աշխատանքի, ապա տեղեկանք բնակավայրից վերջին զբաղմունքի մա-
սին, իսկ բանակից զորացրվածները՝ զինվորական գրքույկ,
- բ) անձնագիր և երեք լուսանկար 3 4 չափերի:

Եթե աշխատանքի ընդունման համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ, տն-
օրինությունը ընդունվող անձից պահանջում է նաև դիպլոմ կամ կրթության, մաս-
նագիտական պատրաստվածության մասին այլ փաստաթուղթ:

2.3 Աշխատանքի ընդունումը ձևակերպվում է Մայր Աթոռի հրամանով /կար-
գադրությամբ /, որը հայտարարվում է աշխատողին այն ստորագրությամբ հանձ-
նելով: Հրամանում /կարգադրությունում / պետք է նշվի աշխատանքների և մասնա-
գիտությունների դրույքա-որակավորման տեղեկագրի կամ հաստիքային ցուցակի
համաձայն աշխատանքի /պաշտոնի / անվանումը և աշխատանքի վճարման պայ-
մանները:

Աշխատանքի փաստացի անցնելը համարվում է աշխատանքային պայմանագրի
կնքմամբ, անկախ այն բանից, թե աշխատանքի ընդունումը ձևակերպվել է անհրա-
ժեշտ ձևով, թե ոչ:

2.4 Աշխատանքի ընդունման ժամանակ կամ աշխատողին սահմանված կարգով այլ աշխատանքի տեղափոխելիս տնօրինությունը պարտավոր է.

- ա) ծանոթացնել ընդունվողին /կամ այլ աշխատանքի տեղափոխվողին / հանձնարարվող աշխատանքին, աշխատանքի վարձատրման պայմաններին, բացատրել իր իրավունքներն ու պարտականությունները,
- բ) ծանոթացնել նրան ներքին աշխատակարգի կանոններին և կոլեկտիվ պայմանագրին,
- գ) հրահանգավորել անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի, աշխատանքի հիգիենիայի, հակահրդեհային անվտանգության և աշխատանքի պաշտպանության այլ կանոնները:

2.5 Հինգ օրից ավել աշխատած բոլոր աշխատողների համար տարվում են աշխատանքային գրքույկներ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բոլոր բանվորներին, ինչպես նաև այն մասնագետներին և ծառայողներին, որոնց աշխատանքը վարձատրվում է գործարքային, տնօրինությունը աշխատանքի ընդհնվելուց 5 օրվա ընթացքում պարտավոր է նրանց տալ հաշվարկային գրքույկներ, կամ աշխատավարձի վճարման ժամանակ տալ հաշվարկային թերթիկներ:

2.6 Աշխատանքային պայմանագրի դադարեցումը կարող է տեղի ունենալ միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով:

Աշխատողները անժամկետ կնքված աշխատանքային պայմանագրերը իրավունք ունեն լուծելու երկու ամիս առաջ այդ մասին տնօրինությանը գրավոր նախազգուշացնելով: ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարգելի պատճառների դեպքում աշխատանքային պայմանագրի լուծման ժամանակ աշխատողները մեկ ամիս առաջ այդ մասին տնօրինությանը գրավոր նախազգուշացնում են:

Աշխատանքային կարգապահության խախտման համար աշխատողին այլ աշխատանքի տեղափոխման ժամանակը աշխատանքից ազատման մասին նախազգուշողական ժամկետի մեջ չի հաշվարկվում:

Նախազգուշողական ժամկետը վերջանալուց աշխատողը իրավասու է դադարեցնել աշխատանքը, իսկ տնօրինությունը պարտավոր է աշխատողին տալ աշխատանքային գրքույկը և նրա հետ կատարել վերջնահաշվարկ:

Աշխատողի և տնօրինության համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել մինչև ազատման համար նախազգուշողական ժամկետի վերջանալը:

Ժամկետային աշխատանքային պայմանագիրը աշխատողի պահանջով ենթակա է վաղաժամկետ լուծման նրա հիվանդության կամ հաշմանդամության, որը խանգարում է ըստ պայմանագրի աշխատանքների կատարմանը, տնօրինության կողմից աշխատանքային օրենսդրության, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերի խախտման և այլ հարգելի պատճառների դեպքերում:

Տնօրինության նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրերի լուծումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատանքային պայմանագրի դադարեցումը ձևակերպվում է Մայր Աթոռի հրամանով /կարգադրությամբ/:

2.7 Աշխատողի աշխատանքից ազատման օրը տնօրինությունը պարտավոր է աշխատողին հանձնել նրա աշխատանքային գրքույկը, նրանում նշելով ազատման մասին գրառումը և նրա հետ կատարել վերջնական հաշվարկ:

Աշխատանքային գրքույկում աշխատանքից ազատման պատճառի մասին գրառումը կատարվում է ՀՀ օրենսդրության ձևակերպումներին ճիշտ համապատասխան և հիմնված օրենքի համապատասխան հոդվածին և կետերին:

Աշխատանքից ազատման օրը հանդիսանում է աշխատանքի վերջին օրը:

3. Աշխատողների հիմնական պարտականությունները

Աշխատողները պարտավոր են.

3.1 Աշխատել ազնիվ և բարեխիղճ, պահպանել աշխատանքային կարգապահությունը, Մայր Աթոռի կարգ ու կանոնը:

3.2 Ժամանակին և ճշտորեն կատարել տնօրինության կարգադրություններն ու հրամանները, օգտագործել աշխատանքային ողջ ժամանակը աշխատանքների կատարման համար և չխանգարել մյուս աշխատողներին կատարելու իրենց աշխատանքային պարտականությունները:

3.3 Բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը, ժամանակին և որակով կատարել արտադրական և աշխատանքային առաջադրանքները:

3.4 Պահպանել աշխատանքի պաշտպանության պահանջները, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հսկահրդեհային պաշտպանության կանոնները և հրահանգները:

3.5 Ձեռնարկել միջոցներ նորմալ աշխատանքը խանգարող կամ դժվարացնող պատճառների և պսոսմանների անհապաղ վերացման համար և կատարվածի մասին արագ տեղյակ պահել տնօրինությանը:

3.6 Պահել իր աշխատանքի տեղը, սարքերն ու սարքավորումները կարգին, մաքուր և սարքին վիճակում, ինչպես նաև պահպանել մաքրություն բաժնեկցիություն, արտադրամասերում և Մայր Աթոռի տարածքում:

3.7 Պահպանել նյութական արժեքների և փաստաթղթերի պահպանման սահմանված կարգը:

3.8 Պահպանել և հզորացնել Մայր Աթոռի սեփականությունը, արդյունավետ օգտագործել մեքենա-սարքավորումները, հոգատարությամբ վերաբերվել գործիքներին, սարքերին և այլ առարկաներին, որոնք տրված են աշխատողին օգտվելու:

3.9 Խնայողաբար և նպատակահարմար կերպով ծախսել հումքը, նյութերը, էներգիան, վստելիքը և այլ նյութական պաշարները:

3.10 Պահել իրենց արժանավայել կերպով, պահպանել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու համակեցության կանոնները:

Յուրաքանչյուր աշխատողի պարտականությունների /աշխատանքի/ շրջանակը, որոնք կատարում են ըստ մասնագիտության, որակավորման կամ մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի, որոշվում է բանվորների մասնա-

գիտության և աշխատանքների միասնական դրույքաորակավորման Տեղեկագրով, ծառայողների և մասնագետների պաշտոնների որակավորման Տեղեկագրով, ինչպես նաև տեխնիկական կանոններով, պաշտոնային հրահանգներով և կանոնակարգերով:

4. Տնօրինության հիմնական պարտականությունները

4.1 Միշտ կազմակերպել աշխատողների աշխատանքը, այնպես որ յուրաքանչյուրը աշխատի ըստ իր մասնագիտության և որակավորման, ունենա իրեն կցված որոշակի աշխատատեղ:

4.2 Ապահովել աշխատանքի առողջ և անվտանգ պայմաններ, մեքենաների, հաստոցների և այլ սարքավորումների սարքին վիճակ, ինչպես նաև հույժի, նյութերի և այլ միջոցների նորմատիվային պաշարներ:

4.3 Ապահովել աշխատողներին ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքով, ստեղծել պայմաններ աշխատանքի արտադրողականության աճի, իրականացնել միջոցառումներ աշխատանքի արդյունավետության և որակի բարձրացման համար:

4.4 Ժամանակին Համակարգի ստորաբաժանումներին հասցնել պլանային առաջադրանքները:

4.5 Մշտապես կատարելագործել աշխատանքի վարձատրման կազմակերպումը, ապահովել աշխատողների նյութական շահագրգռվածությունը՝ կախված նրանց անձնական և ընդհանուր աշխատանքի վերջնական արդյունքներից:

4.6 Աշխատողների աշխատավարձը տալ սահմանված ժամկետներում:

4.7 Ապահովել աշխատանքային և արտադրական կարգապահության խտտագույն պահպանում, ձեռնարկել աշխատանքային կարգապահության խախտողներին ներազդելու միջոցներ:

4.8 Անվերապահորեն պահպանել աշխատանքի մասին ՀՀ օրենսդրությունը և աշխատանքի պաշտպանության կանոնները:

4.9 Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ աշխատողների արտադրական տրավմատիզմի, պրոֆեսիոնալ և այլ հիվանդությունների նախապահպանության համար, օրենսդրությամբ սահմանված դեպքերում ժամանակին տրամադրել արտոնություն և փոխհատուցում կապված վտանգավոր պայմաններով աշխատանքի հետ /կրճատված բանվորական օր, լրացուցիչ արձակուրդ, բուժախապահական և սնունդ և այլն/, ապահովել գործող նորմաներով և հրահանգներով, հատուկ արտահագուստով, հատուկ կոշիկով և անհատական պաշտպանական այլ միջոցներով:

4.10 Մշտապես հսկել աշխատողների կողմից անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և աշխատանքի հիգիենայի, հակահրդեհային պաշտպանության հրահանգների պահանջների կատարումը:

4.11 Ժամանակին նայել և ներդնել գյուտերը և նորարարական առաջարկությունները, աջակցել և խրախուսել նորարարներին:

4.12 Ապահովել աշխատողների գործնական որակավորման, նրանց տնտե-

սագիտական և իրավական գիտելիքների մակարդակի բարձրացումը, ստեղծել աշխատանքի և ուսման համատեղման անհրաժեշտ պայմաններ:

4.13 Ժամանակին նայել աշխատողների կողմից արված քննադատական դիտողությունները և ձեռնարկված միջոցների մասին տեղյակ պահել նրանց:

4.14 Ռիշտոյի վերաբերվել աշխատողների կարիքներին և պահանջներին, հնարավորության սահմաններում օգնել նրանց բնակարանային, կուլտ-կենցաղային պայմանների բարելավմանը, իրագործել բնակելի տների, հանրակացարանների, մանկապարտեզների, ինչպես նաև առևտրակենցաղային սպասարկման ձեռնարկությունների և աշխատավորական ճաշարանների շինարարություն, վերանորոգման և պահպանման աշխատանքներ, օգնություն ցույց տալ անհատական բնակարանային շինարարությանը:

5. Աշխատանքային ժամանակը և նրա օգտագործումը

5.1 Աշխատանքի սկզբի և վերջի, հանգստի համար ընդմիջման և սննդի ընդունման ժամանակը սահմանվում է հետևյալը.

Աշխատանքի սկիզբը	- 9.00
Ընդմիջում	- 12.00-12.30
Աշխատանքի վերջը	- 16.00

Սահմանվում է վեց օրյա աշխատանքային շաբաթ:

Հերթափոխային աշխատողների համար ստորաբաժանումների ղեկավարների կողմից կազմվում են հերթափոխի ժամկետացանկեր, պահպանելով աշխատանքի տևողության սահմանված ժամանակը:

Հերթափոխային ժամանակացանկերը հաստատվում են տնօրինության կողմից:

Աշխատողների հերթափոխումը կատարվում է ըստ հերթափոխերի համաչափորեն: Ե՛նչ հերթափոխից մյուսին անցնելը որպես կարգ կատարվում է ամեն շաբաթ հերթափոխության ժամկետացանկերով սահմանված ժամերին:

5.2 Ամեն աշխատող մինչև աշխատանքի սկսելը պարտավոր է նշել իր աշխատանքի գալը, իսկ աշխատանքային օրվա ավարտից հետո՝ աշխատանքից հեռանալը սահմանված կարգով:

5.3 Համակարգի տնօրինությունը պարտավոր է կազմակերպել աշխատողների աշխատանքի ներկայանալու և աշխատանքից հեռանալու հաշվառումը:

Անզգաստ /հարբած/ վիճակում աշխատանքի ներկայացած աշխատողին տնօրինությունը այդ օրը արգելում է աշխատանքի /հերթափոխի/ անցնել:

5.4 Հերթափոխային աշխատողին արգելվում է թողնել աշխատատեղը, մինչև հերթափոխային մյուս աշխատողը չնդունի այն:

Հերթափոխային աշխատողի աշխատանքի չներկայանալու դեպքում հայտնվում է ծառայության պատասխանատուին, որը և անհապաղ ձեռնարկում է միջոցներ հերթափոխը սյլ աշխատողով փոխարինելու համար:

5.5 Այն աշխատանքներում, որտեղ աշխատանքային /արտադրության/ պայմաններից նշելով հնարավոր չի սահմանել ընդմիջում հանգստի և սննդի ընդունման համար, աշխատողին տրվում է հնարավորություն սնունդը ընդունել աշխատածամի ընթացքում:

- 6 -

Այդպիսի աշխատանքների ցանկը, սննդի ընդունման կարգը և տեղը սահմանվում է տնօրինության կողմից:

5.6 Արտաժամ աշխատանքներ որպես կարգ չի թույլատրվում: Արտաժամ աշխատանքներ տնօրինությունը կարող է իրականացնել բացառիկ դեպքերում և օրենսդրությամբ նախատեսված սահմաններում:

5.7 Աշխատողների ամենամյա արձակուրդների հերթականությունը սահմանվում է տնօրինության կողմից, հաշվի առնելով աշխատանքի նորմալ ընթացքի ապահովման անհրաժեշտությունը և աշխատողների նպաստավոր հանգստի հնարավորությունը:

Արձակուրդների ժամկետացանկերը կազմվում է յուրաքանչյուր օրացույցային տարվա համար ոչ ուշ քան ընթացիկ տարվա հունվարի 15-ը ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ և այն հասցվում է յուրաքանչյուր աշխատողի գիտությանը:

6. Աշխատանքային հաշողությունների համար խրախուսելը

6.1 Աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման, երկարատև և անբասիր աշխատանքի և աշխատանքային այլ հաշողությունների համար իրագործվում են հետևյալ խրախուսման միջոցները.

- ա) շնորհակալության հայտնում,
- բ) դրամական պարգևատրում,
- գ) արժեքավոր նվերով պարգևատրում:

Տնօրինության կողմից կարող են սահմանվել նաև այլ խրախուսման միջոցներ:

Խրախուսումները հայտարարվում են հրամանով կամ կարգադրությամբ, տեղյակ է պահվում աշխատավորական կոլեկտիվին և գրանցվում է աշխատողի աշխատանքային գրքույկում:

7. Աշխատանքային կարգապահության խախտումների համար պատասխանատվությունը

7.1 Աշխատանքային կարգապահության խախտման /աշխատողի վրա դրված աշխատանքային պարտականությունների չկատարման կամ անհրաժեշտ ձևով չկատարման և այլն/ համար կիրառվում են կարգապահական ազդեցություն, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցներ:

7.2 Աշխատանքային կարգապահության խախտումների համար իրագործվում են հետևյալ կարգապահական տույժերը.

- ա) դիտողության հայտարարում,
- բ) նկատողության հայտարարում,
- գ) խիստ նկատողության հայտարարում,

դ) ցածր վարձատրվող աշխատանքի փոխադրում մինչև երեք ամիս ժամանակով կամ այլ ցածր պաշտոնի տեղափոխում նույն ժամկետով:

Աշխատանքային կարգապահության սխտեմատիկ խախտելու, գործալքման կամ անզգաստ /հարբած/ վիճակում աշխատանքի ներկայանալու համար

աշխատողը կարող է փոխադրվել ցածր վարձատրվող աշխատանքի կամ տեղափոխվել ցածր պաշտոնի «դ» կետում սահմանված ժամանակով:

ե) աշխատանքից ազատում

Աշխատանքից ազատումը որպես կարգապահական տույժ կարող է կիրառվել աշխատողի կողմից անհարգելի պատճառով իր վրա դրված պարտականությունները կամ աշխատանքային ներքին կանոնները սխտեմատիկ չկատարելու համար, եթե աշխատողի նկատմամբ նախկինում կիրառվել է կարգապահական տույժեր, գործալքման, ինչպես նաև անզգաստ /հարբած/ վիճակում աշխատանքի ներկայանալու համար:

Գործալքում է համարվում ինչպես աշխատանքային ամբողջ օրվա, այնպես էլ աշխատանքային օրվա ընթացքում երեք ժամ անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը կամ բացակայելը:

7.3 Աշխատանքային կարգապահության խախտումների համար տնօրինության կողմից կարող են սահմանվել այլ պատժամիջոցներ /արտադրական պառզևից լրիվ կամ մասնակի զրկում, երկարամյա աշխատանքի լրավճարի չափի իջեցում կամ զրկում երեք ամիս ժամանակով, անենամյա արձակուրդների օրերի կրճատում և այլն/:

7.4 Կարգապահական տույժերը կիրառվում են Մայր Աթոռի ղեկավարի կողմից Մայր Աթոռի ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ:

Ի՞նչևէ տույժի կիրառումը աշխատանքային կարգապահության խախտողից պահանջվում է գրավոր բացատրություն: Աշխատողի մերժումը ներկայացնելու բացատրագիր չի կարող խանգարել տույժի կիրառմանը:

Կարգապահության տույժը տնօրինության կողմից կիրառվում է զանցանքի անմիջապես հայտնաբերման ժամանակ, բայց ոչ ուշ քան մեկ ամիս դրա հայտնաբերման օրից /չհաշված աշխատողի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակը/:

Կարգապահական տույժը չի կարող կիրառվել զանցանքը թույլ տալու օրվանից ոչ ուշ քան վեց ամսվա ընթացքում: Այս ժամկետի մեջ չի մտնում քրեական գործի ընթացքի ժամանակը:

7.5 Աշխատանքային կարգապահության խախտման ամեն դեպքի համար կարող է կիրառվել մեկ կարգապահական տույժ:

7.6 Կարգապահական տույժի հրամանը կամ կարգադրությունը հաստատված երեք օրվա ընթացքում հայտնվում է տույժի ենթարկվող աշխատողի գիտությանը:

Անհրաժեշտության դեպքում հրամանը /կարգադրությունը / հայտնվում է աշխատանքային կուլեկտիվ աշխատողների գիտությանը:

7.7 Կարգապահական տույժի ենթարկվելուց հետո, եթե աշխատողը տարվա ընթացքում չի ենթարկվում նոր տույժերի, ապա աշխատողը համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

Տնօրինության նախաձեռնությամբ կամ աշխատողի կուլեկտիվի միջնորդությամբ, կարող է հրաման արձակվել աշխատողի տույժի հաճման մասին, եթե աշխատողը թույլ չի տվել աշխատանքային կարգապահության նոր խախտում

և իրեն դրսևորել է որպես կարգապահ և պարտանճանաչ աշխատող:

7.8 Աշխատանքային ներկա ներքին կանոնները ամրացվում են ստորաբաժանումներում /բաժիններում, արտադրամասերում, ծառայություններում /տեսանելի տեղերում և ծանոթացվում են աշխատողներին:

Handwritten signature

Հաստատում եմ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ
Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան
29 նոյեմբեր 1994թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ֆինանսա-տնտեսական և արտադրության
գծով Հանձնախմբի

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսա-տնտեսական և արտադրության
գծով Հանձնախումբը (հետագայում՝ Հանձնախումբ) մշտական գործող մարմին է,
որը ենթակա է Ամենայն Հայոց Կաթողիկոսին և հաշվետու է նրան:

1.2. Հանձնախումբը իրականացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ֆինանսա-
տնտեսական և արտադրական համակարգի (հետագայում՝ Համակարգ)
գործունեության կազմակերպումն ու ղեկավարումը:

1.3 Հանձնախմբի ատենապետը գլխավորում է Հանձնախումբը և ուղղված է
է տալիս նրա գործունեությանը:

1.4. Ներկա կանոնակարգի բարեփոխումները կատարվում են Ամենայն Հայոց
Կաթողիկոսի կողմից:

Բ. ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Իրագործել ծրագրեր և միջոցառումներ ուղղված.

- Հայ Եկեղեցու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ֆինանսական, սոցիալական
խնդիրների ու նպատակների իրականացմանը:

- Համակարգի ֆինանսա-տնտեսական և արտադրական գործունեության
արդյունավետության ապահովմանը:

2.2. Կազմակերպել Համակարգի ստորաբաժանումների կանոնավոր և
արդունավետ համագործակցված աշխատանքը:

Գ. ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1 Հանձնախումբը բաղկացած է Հանձնախմբի ատենապետից,
փոխատենապետից և Հանձնախմբի անդամներից:

3.2 Հանձնախմբի ատենապետը, փոխատենապետը և Հանձնախմբի

անդամները-նշանակվում և ազատվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

3.3. Համակարգի գործունեությունը ամենօրյա գործարար կազմակերպման, ղեկավարման, ինչպես նաև Հանձնախմբի ընթացիկ գործունեությունը իրականացնելու համար, Հանձնախմբի ատենապետի ներկայացմամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակվում է Հանձնախմբի ատենապետի աշխատակազմ:

3.4. Հանձնախմբի ատենապետի աշխատակազմը բաղկացած է մինչև երեք Հոգուց և իր գործունեությունը իրականացնում է Հանձնախմբի կողմից սահմանված առանձին կանոնադրի համապատասխան:

3.5. Հանձնախումբը իր իրավասությունները սահմաններում ընդունում է որոշումներ, կարգադրություններ, որոնք պարտադիր են Համակարգի ստորաբաժանումների ու ծառայությունների համար և կարող են չեղյալ համարվել կամ փոխվել Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

3.6. Հանձնախմբի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ: Նիստերը համարվում են իրավասու Հանձնախմբի անդամների երկու երրորդի մասնակցությամբ, որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Հանձնախմբի ատենապետն ունի վճռորոշ ձայնի իրավունք:

Գ. ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՏԵՆԱՊԵՏԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. Հանձնախմբի ատենապետի՝

4.1. Տնօրինել և օգտագործել Համակարգի գույքը, այդ թվում ֆինանսական ռեսուրսները (բացի դուստր ձեռնարկությունների), կնքել պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, տալ իրազորագրեր, արձակել հրամաններ և կարգադրություններ, աշխատողին տալ կատարման համար պարտադիր ցուցումներ, իրականացնել գործատուի ֆունկցիաներ:

4.2. Իր իրավասության սահմաններում սուսնց իրազորագրի գործել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անունից, ներկայացնել նրա շահերը, ձեռք բերել գույքային և անձնական ոչ-գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, լինել Հայցվոր ու պատասխանող, դատարանում և միջնորդ դատարանում:

4.3. Վերահսկել Համակարգի ստորաբաժանումների և ծառայությունների (բացի դուստր ձեռնարկությունների) աշխատանքային, ներքին կանոնակարգի պահանջների կատարումը և իրականացնել միջոցներ, աշխատանքային, արտադրական ու կարգապահությունը պահպանելու համար:

4.4. Լուծել Համակարգի (բացի դուստր ձեռնարկությունների) ստորաբաժանումների և ծառայությունների կադրային ապահովման հարցերը:

4.5. Իրականացնել նաև ՀՀ օրենսդրությանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շահերը չհակասող այլ գործողություններ և Ամենայն Հայոց Կաթողիկոսի,

Հանձնախմբի կողմից տրվող այլ լիազորություններ և իրավունքներ:

բ. ՀԱՆՁՆԱԽՄԻՒՄ

4.6. Իրականացնել Համակարգի ֆինանսա-տնտեսական և արտադրական գործունեություն վերահսկում: Հսկողություն սահմանել Համակարգի նյութական և ֆինանսական արժեքների ու բանկային հաշիվների վրա, տեղեկություններ ստանալ նրանց շարժի և փոփոխությունների մասին:

4.7. Սահմանել Համակարգի ներքին կազմակերպչական կառուցվածքը և կառավարման համակարգը, ինչպես նաև ստորաբաժանումների իրավունքներն ու պարտականությունները, աշխատողների վարձակալման և վարձատրման կանոնակարգը:

4.8. Հաստատել Համակարգի աշխատողների հաստիքները, նրանց պաշտոնային թունկները և տարիֆային գրույքները, սեփական արտադրության արտադրանքի իրացման, իրականացվող աշխատանքների (ծառայությունների), առևտրային գործունեությամբ ձեռք բերված ապրանքների, պայմանագրային սակագները:

4.9. Իրականացնել Համակարգի արտաքին առևտրա-տնտեսական, գիտատեխնիկական գործունեություն:

4.10 Ստեղծել անցողիկ Հանձնաժողովներ Համակարգի գործունեության և այլ հարցերի հետ կապված ստուգումների, ուսումնասիրությունների համար: Քննարկել դրանց արդյունքները, ընդունել որոշումներ ու եզրակացություններ:

4.11. Ներկայացնել առաջարկություններ Ամենայն Հայոց Կաթողիկոսին Համակարգի ստորաբաժանումների և ծառայությունների, ձեռնարկությունների ղեկավարների (տնօրենների) թեկնածությունները աշխատանքի նշանակելու կամ աշխատանքից ազատելու մասին:

4.12. Իրականացնել նաև գործողություններ ուղղված Հանձնախմբի նպատակների ու խնդիրների կատարմանը, ինչպես նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից տրվող այլ լիազորություններ ու իրավունքներ:

4.13. Մշակել և իրականացնել Համակարգի տնտեսական սոցիալական զարգացման, տեխնիկական վերազինման, նոր տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրման, նոր արտադրանքների (հատկապես եկեղեցական նշանակության) ստեղծման ամենամյա և հեռանկարային ծրագրեր ու միջոցառումներ:

4.14. Կազմել և ներկայացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ամենամյա բյուջեներ (ծախսերի և եկամուտների նախահաշիվ): Հետևել բյուջեի կատարմանը և այդ մասին Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ:

4.15. Սահմանել Համակարգի ստորաբաժանումների ամենամյա տեխնիկա-տնտեսական և ֆինանսական հիմնական ցուցանիշներ ըստ ամիսների և եռամսյակների, ինչպես նաև շահույթի (եկամուտի) օգտագործման կարգը, տնտեսական խրախուսման ֆոնդերի և դրանց ձեռավորման նորմատիվների վերաբերյալ պարտադիր պահանջները:

4.16. Քննություն առնել Համակարգի ստորաբաժանումների ամսական,

եռամսյակային և տարեկան ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքները, այդ մասին ընդունել որոշումներ և Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացնել հաշվետվություններ:

4.17. Ձեռնարկել և իրականացնել միջոցներ ուղղված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սոցիալական, կոմունալ-կենցաղային խնդիրների (ջեռուցում, ջրամատակարարում, բժշկական սպասարկում, սննդի կազմակերպում և այլն) լուծմանը, կարգավորմանն ու բարելավմանը, ինչպես նաև կենսաապահովման օբյեկտների ու ծառայությունների կանոնավոր աշխատանքի ապահովման:

4.18. Ձեռնարկել միջոցներ լուծելու և կարգավորելու Համակարգի գործունեությանը վերաբերող Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հանձնարարված հարցերն ու խնդիրները:

4.19. Առաջարկություններ ներկայացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին Համակարգի գործունեությանը վերաբերվող կարևորագույն հարցերի և խնդիրների քննարկման ու լուծման համար:

Ե. ՀԱՆՁՆԱԽՄԻԻ ԳՈՐԾՄԻՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ

ԹՎԱՔԱՆԱԿԸ

5.1. Հանձնախմբի յուրաքանչյուր անդամի գործունեության ժամկետը սահմանվում է չորս տարի:

5.2 Հանձնախմբի անդամների թվաքանակը սահմանվում է մինչև հինգ հոգի:

5.3 Հանձնախմբի կազմի մեկ երկրորդը երկու տարին մեկ համալրվում է նոր անդամներով, պահպանելով Հանձնախմբի յուրաքանչյուր անդամի գործունեության չորսամյա ժամկետը:

5.4 Հանձնախմբի գործունեության առաջին երկու տարվա ավարտից հետո ներկա կանոնակարգի 4.2 կետի պահանջով վիճակով որոշվում է Հանձնախմբի այն անդամների անվանացանկը, որոնք պետք է դադարեցնեն իրենց երկամյա գործունեությունը:

5.5 Հանձնախմբի կազմի հետագա համալրումը կատարվում է ինքնաբերաբար, ամեն երկու տարին մեկ Հանձնախմբում չորսամյա գործունեությունը լրացրած անդամների հաջորդ կեսի փոխարեն:

5.6. Ներկա կանոնակարգի 5.3 և 5.4 կետերը չեն վերաբերվում Հանձնախմբի ատենապետին:

Հանձնախմբի ատենապետի գործունեության չորսամյա ժամկետը լրանալու դեպքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը այն կարող է երկարաձգել կամ որոշել գործունեության նոր ժամկետ:

5.7 Հանձնախմբի ատենապետը, փոխատենապետը և անդամները կարող են ազատվել իրենց պարտականություններից վաղաժամկետ իրենց ցանկությանը, ինչպես նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի որոշմամբ:

5.8 Հանձնախմբում իրենց գործունեության ժամկետը ավարտած անդամները երկու տարի անց նորից կարող են Ամենայն Հայոց Կաթողիկոսի որոշմամբ ընդգրկվել Հանձնախմբի կազմում:

Ջ.ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

6.1. Հանձնախմբի գործունեությունը դադարեցվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

6.2 Հանձնախմբի գործունեության դադարելու դեպքում, Հանձնախմբի գործավարության բոլոր փաստաթղթերը (որոշումներ, կարգադրություններ, արձանագրություններ, ծրագրեր, միջոցառումներ և այլն), Հանձնախմբի գրասենյակին պատկանող ապրանքա-նյութական արժեքները, հանձնվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին կամ նրա կողմից լիազորված մարմին:



Հաստատված է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ֆինանսա-տնտեսական և արտադրության գծով Հանձնախմբի 1994 թ. դեկտեմբերի 17-ի նիստի որոշմամբ

Կանոնակարգ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ֆինանսա-տնտեսական և արտադրական Համակարգի (բացի դուստր ձեռնարկությունից) նյութատեխնիկական միջոցների ձեռք բերման (գնումների) մասին

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ֆինանսա-տնտեսական Համակարգի (հետագայում Համակարգ) ստորաբաժանումները սահմանված ձևով մինչև ընթացիկ տարվա հունվարի 25-ը կապմուն և ստորաբաժանումների ղեկավարների ստորագրությամբ ներկայացնում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ֆինանսա-տնտեսական և արտադրության գծով Հանձնախմբի աշխատակազմին նյութատեխնիկական միջոցների տարեկան (ըստ եռամսյակների) պահանջագրերը:

2. Հանձնախմբի աշխատակազմը ներկայացված պահանջագրերը խմբավորում, մշակում և մինչև ընթացիկ տարվա հունվարի 30-ը ներկայացնում է Հանձնախմբի հաստատմանը:

3. Պահանջագրերի հաստատումից հետո դրանք վերադարձվում են համապատասխան ստորաբաժանումներին:

4. Հաստատված պահանջագրերի հիման վրա Հանձնախմբի ատենապետի գրավոր թույլտվությամբ նյութատեխնիկական միջոցների ձեռք բերման (գնումների համար) տվյալ ժամանակահատվածում նախատեսված գումարները Մայր Աթոռի գլխավոր հաշվապահի կողմից դուրս են գրվում համակարգի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների անվամբ, որպես առհաշիվ գումարներ:

5. Դուրս գրված (առհաշիվ) գումարների ծախսի նյութատեխնիկական միջոցների ձեռք բերման ամբողջ պատասխանատվությունը դրվում է Համակարգի ստորաբաժանումների ղեկավարների վրա:

6. Համակարգի ստորաբաժանումների կողմից ձեռք բերված (գնված) նյութատեխնիկական միջոցները սահմանված կարգով մուտքագրվում են համապատասխան պահեստները, ապահովելով նյութական արժեքների կենտրոնացված հաշվառումն ու հաշվետվությունը:

7. Համակարգի ստորաբաժանումների ղեկավարները յուրաքանչյուր ամիսը վերջանալուց հետո, մինչև հաջորդ ամսվա 5-ը, Հանձնախմբին ներկայացնում են նյութատեխնիկական միջոցների ձեռքբերումների

(գնումների) մասին հաշվետվություն:

8. Հանձնախմբի կողմից հաշվետվությունները հաստատվելուց հետո, այն ստորաբաժանումների ղեկավարները ներկայացնում են Մայր Աթոռի գլխավոր հաշվապահին սահմանված կարգով ձևակերպելու համար:

9. Համակարգի ստորաբաժանումների ղեկավարները և նյութատեխնիկական միջոցների ձեռք բերումներով (գնումներով) պբաղվող պաշտոնյաները բարեխիղճ աշխատանք ցուցաբերելու համար կարող են Հանձնախմբի որոշմամբ ստանալ դրամական պարգևներ աշխատավարձի 30 տոկոսի չափով:

Ֆինանսա-տնտեսական
և արտադրության գծով Հանձնախումբ



Հաստատված է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ֆինանսա-
տնտեսական և արտադրության գծով
Հասնմախմբի 1994 թ. դեկտեմբերի 24-ի
պիստի որոշմամբ

Կարգ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ավտոտնտեսության ավտոմեքենաներից
օգտվելու մասին

1. Մայր Աթոռի ստորաբաժանումներին ծառայական նպատակներով ավտոմեքենաներ տրամադրելու համար
- 1.1. Մայր Աթոռի ստորաբաժանումների ղեկավարները ավտոմեքենայի պահանջից մեկ կամ երկու օր առաջ Մայր Աթոռի Ավտոտնտեսության գործակարգավորին (ղիսպետչերին) են ներկայացնում սահմանված ձևի պահանջագիր, նշելով ավտոմեքենայի տեսակը, օգտագործման նպատակը և ժամանակը, գնալու ժամը և վայրը, ինչպես նաև ավտոմեքենան օգտագործողի պաշտոնը, անունը և ազգանունը:
- 1.2. Ավտոմեքենայի պահանջագիրը ստանալուց հետո նույն օրը Մայր Աթոռի Ավտոտնտեսության պետը որոշում է ավտոմեքենայի տրամադրման օրը և ժամանակը և այդ մասին տեղյակ է պահում պահանջագրի տիրոջը:
- 1.3. Ավտոմեքենաները Մայր Աթոռի ստորաբաժանումներին տրամադրվելու ավտոմեքենայի ուղեգրում Ավտոտնտեսության կողմից լրացվում է ավտոմեքենան օգտագործողի անուն, ազգանունը, տրված բնակիչի քանակը և երթուղին:
- 1.4. Ավտոմեքենաները օգտագործելուց հետո, ավտոմեքենան օգտագործողը (ստորաբաժանման ղեկավարը, ստորաբաժանման այլ պաշտոնյան) ավտոմեքենայի ուղեգրում կատարում է նշում ավտոմեքենայի օգտագործման ժամանակ կատարված վազքի (կիրումետր) չափի և ավտոմեքենայի օգտագործման ժամանակի վերջի մասին, հաստատելով այն իր ստորագրությամբ:
2. Ամենայն հայոց Կաթողիկոսի կարգադրությամբ ծառայական նպատակների համար կատարվում են առանձին պաշտոնյաներին մարդատար ավտոմեքենաների անհատական կցումներ:
3. Մայր Աթոռի ստորաբաժանումները, երկար ժամանակով ավտոմեքենաների օգտագործման դեպքում Մայր Աթոռի Ավտոտնտեսություն են ներկայացնում երկարաժամկետ պահանջագրեր:
4. Մայր Աթոռի Ավտոտնտեսության ավտոբուսների ամենօրյա

աշխատանքը կարգավորվում է հաստատված ժամկետացանկերով (գրաֆիկներով):

5. Առանձնահատուկ (չնախատեսված) դեպքում նույն օրվա ընթացքում ավտոմեքենայի տրամադրման համար Մայր Աթոռի ստորաբաժանումների ղեկավարները կարող են այդ օրը Մայր Աթոռի Ավտոտնտեսության գործակարգավորին (դիսպետչերին) ներկայացնել ներկա կարգի 1-ին կետով նախատեսված պահանջագիր և Ավտոտնտեսության պետի որոշմամբ օգտագործել պահանջվող ավտոմեքենան:
6. Հաշվետու ամիսը վերջնապուց հետո Ավտոտնտեսության պետը մինչև հաջորդ ամսվա 5-ը Մայր Աթոռի հաշվապահություն է ներկայացնում հաշվետու ամսվա ուղեգրերը՝ ավտոմեքենաների օգտագործման համար տրված պահանջագրերի հետ միասին:

Ծանոթություն. Մայր Աթոռի ավտոմեքենաներից օգտվելու պահանջագրերի ձևերը տրվում են Ավտոտնտեսությունում:

Ֆինանսա-տնտեսական և
արտադրության գծով հանձնախումբ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյան

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
1995 թ.

1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Վերջին տարիներին Մայր Աթոռի տնտեսությունը գործել է ծանր, անկայուն ֆինանսատնտեսական պայմաններում:

Մայր Աթոռի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգի արտադրական ստորաբաժանումները աշխատում են իրենց հնարավորություններից շատ ցածր և անարդյունավետ: Այսպես, Մայր Աթոռի տպարանում օգտագործվում է արտադրական հզորությունների միայն 10-15 %-ը: Սա նշանակում է, որ տպարանը տարեկան չի թողարկում 180-200 միլիոն դրամի արտադրանք և Մայր Աթոռը տարեկան չի ստանում 50-60 միլիոն դրամի շահույթ: Առայսօր ունենալով 117,8 միլիոն դրամի արտադրական հզորություններ, "Վանգ" դուստր ձեռնարկությունը չի տվել անկախվող արդյունք: Վիճակը բավարար չի նաև մոմի արտադրությունում, որը ունենալով սահմանափակ հզորություն լիարժեք չի օգտագործել տարեկան աշխատաժամանակի ֆոնդը, աշխատել է մեկ հերթափոխ և արտադրել մոմի ամբողջ պահանջի միայն 10%-ը: 1994 թվականին Մայր Աթոռում արտադրվել է ընդամենը 8,5 միլիոն դրամի արտադրանք կամ հեարավոր թողարկվող արտադրանքի սուկ 2,8 %: Արտադրանքի ծավալի ցածր մակարդակը արդյունք է արտադրության կազմակերպման և կառավարման անտարբեր մոտեցման:

Մայր Աթոռի արտադրության ծավալների մեծացման, արտադրական հզորությունների արդյունավետ օգտագործման նպատակով ձեռնարկված միջոցները արդեն տվել են իրենց արդյունքը: 1995 թվականի Մարտի վերջին շահագործման հանձնվեցին մոմի արտադրության երկու հոսքային գծեր, որոնք մինչև տարվա վերջը կարողարեն շուրջ 100 տոննա մոմ: Տպարանը մինչև տարեվերջը կթողարկի ավելի քան 100 միլիոն դրամի, իսկ "Վանգ" դուստր ձեռնարկությունը՝ 72,0 միլիոն դրամի արտադրանք:

Մայր Աթոռի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգը հետագա լուրջ բարեփոխումների կարիք ունի: Առաջ է եկել նոր տնտեսական մոտեցումների ժամանակը, որի նպատակն է ստեղծել Մայր Աթոռի եկամտների ստացման հստակ ձևավորված կայուն համակարգեր և միջոցներ:

Անցած Սեպտեմբերից էական փոփոխություններ են արվել Մայր Աթոռի տնտեսական համակարգի կառուցվածքային բարեփոխման և տնտեսական ու ֆինանսական կայունացման ուղղությամբ: Խոսք է համակարգային կարևոր փոփոխությունների մասին է, հատկապես արտադրական ստորաբաժանումների (տպարանի, մոմի արտադրության և այլն) ընդհանուր տնտեսական հաշվարկի անցնելը, Մայր Աթոռի էլեկտրաջերմային (կաթսայատուն, դիզելատուն) համակարգի կազմավորումը, նյութատեխնիկական մատակարարման ապակենտրոնացված ժամանակավոր ենթակառուցվածքի հաստատումը, պահեստային տնտեսությունների տարանջատումը և այլն:

Նշված է մյուս միջոցների հետևողական իրականացման արդյունքում 1994 թվականի Սեպտեմբեր - 1995 թվականի Մարտ ամիսների ժամանակահատվածում առկա է Մայր Աթոռի ֆինանսատնտեսական գործունեության կայունացման և

բարեկամման միտում, որը պայմանավորված է Մայր Աթոռի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգում կշռադատված միջոցառումների հետևողական իրականացման հետ:

Մայր Աթոռի տնտեսական կայունացման և նրա հետագա աճի ապահովման կարևոր նախապայման պետք է հանդիսանան վճարային խիստ կարգապահությամբ հաստատումը:

Հատկապես նկատելի է աշխատունիք անցած Սեպտեմբերից-Դեկտեմբեր Մայր Աթոռի կենսաապահովման ստորաբաժանումների և ծառայությունների կայուն գործունեության ապահովման ուղղությամբ, որոնք և շարունակվում են այսօր: Առաջին հերթին այն վերաբերվում է Մայր Աթոռի ջերմամատակարարման և էլեկտրասնուցման անկախ և երաշխավորված համակարգի ստեղծմանը: Նախկինում Մայր Աթոռի ջեռուցման համար օգտագործվել են նավթավառեր, էլեկտրասնուցման ջեռուցման ժամանակաշրջանում ծախսվել է ավելի քան 200 հազար լիտր սալյարայուղ և 40.000 լիտր նավթ: Եվ միայն 1994 թվականի Սեպտեմբերին ձեռնարկված կոնկրետ և կտրուկ միջոցներով վերականգնվեց և վերակառուցվեց Մայր Աթոռի կաթսայատունը, այն տեղափոխելով մագուրով աշխատելու համակարգի, ստեղծեց մագուրի ավելի քան 90 տոննա տարողությամբ պահեստարաններ: Սրանով և ապահովեց սալյարայուղի ծախսի կրճատում 2-2,5 անգամ, իսկ նավթ ընդհանրապես այդ նպատակների համար չօգտագործվեց: Շնորհիվ կատարվածի, անցած ձմռան ժամանակաշրջանում Մայր Աթոռը ապահովվեց ինչպես ջեռուցմամբ, այնպես էլ տաք ջրի մատակարարմամբ: Հիշյալ ժամանակում հնարավոր եղավ նաև ավարտել նախկինում սկսած դիզելատան շինարարական և մոնտաժային աշխատանքները:

Մայր Աթոռի անխափան էլեկտրասնուցման ապահովման նպատակով կառուցվել է 500 մետր նոր կաբելային գիծ և ձեռնարկված միջոցների շնորհիվ այս տարվա Հունվարից սկսած Մայր Աթոռը հիմնականում ապահովվել է շուրջօրյա էլեկտրասնուցմամբ, որը թույլ է տվել անցյալ տարվա նույն ժամանակի համեմատ կրճատել դիզելատան կողմից ծախսվող սալյարայուղը ավելի քան 2 անգամ:

Աշխատանքներ են կատարվել Մայր Աթոռ Ս. Էլմիածնի հոգևոր միաբանների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար: Կապիտալ նորոգման է ենթարկվել Երեմյան խուցերի բնակարանները, վերանորոգվել և վերականգնվել է դրանց ջերմամատակարարման գծերն ու մարտկոցները: Ընթացիկ վերանորոգման են ենթարկվել Վանատան սենյակների մի մասը, դրանց սանիտարատեխնիկական և էլեկտրական սարքերն ու սարքավորումները, կապիտալ նորոգման են ենթարկվել լվացատան մեխանասարքավորումները, ավտոտրանսպորտային միջոցները և այլն:

Ահերածեշտ է ճշել, որ Մայր Աթոռի հոգևոր միաբանների և աշխարհական աշխատողների կենսամակարդակի բարձրացմանը ուղղված միջոցները բավարար չօգտվեցին (կապված ֆինանսական միջոցների սահմանափակ լինելու հետ): Ձնայած 1994 թվականի Դեկտեմբերին Մայր Աթոռի աշխատողների ամսական աշխատավարձը կրկնապատկվել է, սակայն նրանց կենսամակարդակը այսօր մնում է շատ ցածր աստիճանի վրա:

Մայր Աթոռի կապիտալ շինարարության ծավալը 1994 թվականին կազմել է 39,5 միլիոն դրամ: 1995 թվականի Հունվար-Մարտ ամիսներին կատարված կապիտալ ներդրումները կազմել են 6,4 միլիոն դրամ կամ տարեկան ծավալի 9,3%-ը: Կապիտալ ներդրումները հիմնականում կատարվել են Մպիտակի նոր եկեղեցու շինարարության, Տաթևի վանքի և Օշականի թանգարանի վերակառուցման համար:

Անցած ժամանակաշրջանում պարզվեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգի կազմակերպչական կառուցվածքը, կառավարման համակարգը, հաշվապահական հաշվառման և հաշվետվության գործող կարգը, ինչպես նաև վերոհիշյալ համակարգի ֆինանսատնտեսական ֆաղափականությունը չեն համապատասխանում ներկա խնդիրներին ու պահանջներին: Այս առումով դեռևս 1994 թվականի Մայիս ամսից ստեղծվել էր ֆինանսատնտեսական Հանձնախումբ:

Հաշվի առնելով անհրաժեշտությունը, 1994 թվականի Դեկտեմբերին այդ Հանձնախումբի հիմքի վրա այն վերակազմավորվեց և համալրվեց Հանձնախումբի նոր երկու անդամով:

Հանձնախումբը անցած ժամանակում (1994 Դեկտեմբեր-1995 Մարտ ամիսներ) նախապատրաստել և ֆննդության է ենթարկել ֆինանսատնտեսական և արտադրական գործունեության վերաբերյալ ավելի քան 50 հարց: Այդ հարցերն ու խնդիրներն եղել են խիստ կենսական ու անհրաժեշտ և որոնց նկատմամբ ընդունված որոշումների մի նկատելի մասը իրագործվել և տվել են դրական արդյունքներ: Այսպես, հաստատվել է տնտեսական գործունեության մի շարք քնազավառների կանոնակարգեր, մշակվել և իրականացվել են աշխատանքների կազմակերպման և դրանց նկատմամբ հսկողության իրականացման կանոններ: Ընդհանուր տնտեսական հաշվարկի են անցկացվել մոմի արտադրությունը, տպարանը և այլն: Արդյունքում Մայր Աթոռի արտադրությունից ստացված օգուտները ընթացիկ տարում կանեն 8-10 անգամ, իսկ արտադրության ոլորտում աշխատողների մեծուր եկամուտը կբարձրանա 3-3,5 անգամ:

Այսօր անհրաժեշտ է շարունակել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգի կառավարման հետագա կատարելագործման գործընթացը: Այստեղ անշուշտ կան որոշակի կազմակերպչական խնդիրներ, որոնք անհրաժեշտ են անհապաղ լուծել:

Մշակվել և իրագործվում են նաև ներկա ծրագրի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1995 թվականի բյուջեի կատարման համար հստակ միջոցառումներ և մոտեցումներ:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

1995 թվականի տնտեսական բարեփոխումների ծրագրի գլխավոր նպատակը Մայր Աթոռի տնտեսական աճի և նրա կալույն տնտեսական պայմանների և նախադրյալների ապահովումն է:

1995 թվականի ֆինանսատնտեսական ֆաղափականությունը պետք է ուղղված լինի Մայր Աթոռի ֆինանսական դրության ամրապնդմանը, բյուջեի նվազուրդի և

արտասահմանյան միջոցներից ամենօրյա և ընթացիկ ծախսերի կրճատմանը և դրանց տնտեսական ծրագրերի նպատակներին ու խնդիրներին խիստ համապատասխանեցմանը:

1995 թվականի Հայաստանյայց թեմերում, Մայր Աթոռի վանքերում և եկեղեցիներում կրոնա-եկեղեցական ապրանքների (մոմ, գրականություն, հուշանվերներ և այլն) վանառժից ստացվող եկամուտներից Մայր Աթոռի մասնահանումները պետք է կրեն հաստատագրված բնույթ:

Հաստատագրված եկամուտները պետք է կազմեն նրանց կողմից ստացած եկամուտների 70 %-ից ոչ պակաս:

Մայր Աթոռի բյուջեի հաշվին իրականացվող կապիտալ ներդրումները կկրճատվեն կամ կվերակազմավորվեն արտաֆին ֆինանսավորման հաշվին իրականացվող նախաձեռնության ծավալների հետ համադրված կարգով: Դրանք կուղղվեն առաջին հերթին Մայր Աթոռի տնտեսության վերականգնման և վերակառուցման ծրագրերի իրականացմանը, մասնավորապես էլեկտրաջեղմային և կենսական ապահովության այլ օբեկտների, կրթական հաստատությունների, եկեղեցիների և վանքերի ու դրանց տնտեսությունների վերանորոգման և վերականգնման աշխատանքներին:

Մայր Աթոռի ֆինանսատնտեսական և արտադրական համակարգի, ինչպես նաև Մայր Աթոռի մյուս ստորաբաժանումների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով 1995 թվականին կվերանայվեն ստորաբաժանումների կազմակերպչական կառուցվածքները, հաստիքային ցուցակները, կնայվեն նաև մի շարք ստորաբաժանումների և ծառայությունների կրճատման, դրանց վերամիավորման և գործունեությունների վերափոխման անհրաժեշտությունները:

Առաջնահերթ ուշադրություն կդարձվի արտաֆին աղբյուրներից ֆինանսավորող ծրագրերի իրագործման, ինչպես նաև մարդասիրական օգնության կարգով ստացվող ապրանքների բաշխման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը:

Կիրականացվեն Մայր Աթոռի հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը համընդհանուր սկզբունքներին ու կարգերին համապատասխանեցման աշխատանքներ:

1995 թվականին նախատեսվում է իրականացնել կրոնա-եկեղեցական ապրանքների և ծառայությունների գների ու սակագների կարգավորման և վերահսկման միջոցառումներ: Անհրաժեշտության դեպքում, տարվա ընթացքում պարբերաբար կվերանայվեն դրանց գներն ու սակագները:

1995 թվականին նախատեսվում է իրականացնել հոգևորական պաշտոնյաների և Մայր Աթոռի ոչ արտադրական ոլորտի աշխատողների աշխատավարձի պարբերական բարձրացում: Դրա հետ մեկտեղ նախատեսվում է 1995 թվականին Մայր Աթոռի բոլոր աշխատողներին անցկացնել վարձատրման նոր համակարգի, որը նախատեսում է աշխատանքի լրացուցիչ վարձատրումը անմիջական կապի մեջ դնել աշխատանքի որակի, աշխատողի պատասխանատվության հետ, էականորեն տարբերակելով դրանք պաշտոնային ռոնիկներից և դրույթաչափերից: Այս միջոցառումները 1995 թվականին կապահովեն Մայր Աթոռի աշխատողների միջին

ամսական աշխատավարձի 50 %-ի ան:

1995 թվականին նախատեսվում է մշակել և ընդունել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևորականների կենսաթոշակային ապահովման նոր կանոնակարգ, որը կնախատեսի այդ բնագավառի նկատելի բարեփոխումներ: Այս կանոնակարգով կնախատեսվի նաև պետական կենսաթոշակի անցած աշխարհական աշխատողներին Մայր Աթոռի կողմից լրացուցիչ կենսաթոշակներ կամ նպաստներ նշանակելու համակարգեր:

1995 թվականին նախատեսվում է ստեղծել նաև բնակչության խիստ կարիքավոր և սոցիալապես անպաշտպան խավերի առանձին մարդկանց մարդասիրական օգնության ծրագրեր ու ֆոնդեր: Նախատեսվում է մշակել և իրագործել միջոցառումներ ուղղված Մայր Աթոռի հոգևոր միաբանության և մյուս աշխատողների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավմանը:

1995 թվականին կշարունակվի ՀՀ օրենքին համաձայն դուստր ձեռնարկությունների հիմնադրման գործընթացը: Այդ նպատակով անհրաժեշտ է Մայր Աթոռի արտադրական ստորաբաժանումները և սպասարկման ծառայությունները ամրապնդել տնտեսապես, ֆինանսապես և կազմակերպչորեն, դրանց անցկացնելով ընդհանուր տնտեսական հաշվարկի: Ելնելով շուկայի պահանջներից կիրականացվեն "Վանք" դուստր ձեռնարկության գործունեության ճյուղ, ինչպես նաև վերամասնագիտացման առանձին ծրագրեր:

Հաշվի առնելով 1995 թվականին Մայր Աթոռի կողմից կառուցվելիք օբեկտների առաջնայնությունը, ձևավորվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բյուջեի հաշվին կառուցվող հետևյալ օբեկտների ցանկը.

- Մոմի արտադրության ընդլայնում և տեխնիկական վերազինում - 2.94 միլիոն դրամ
- Տպարանի վերանորոգում և տեխնիկական վերազինում - 1.2 միլիոն դրամ
- Սպիտակի նոր եկիդեցու շինարարություն - 42 միլիոն դրամ
- Օշականի թանգարանի վերակառուցում - 2.6 միլիոն դրամ
- Տաքևի վանքի վերակառուցում - 1.68 միլիոն դրամ
- Ս. Հռիփսիմե վանքի վերանորոգում - 1.26 միլիոն դրամ

Էլեկտրաշերմային համակարգի պահպանման համար հատկացումները կկազմեն 6,3 միլիոն դրամ՝ սարքավորումների ձեռք բերման, համակարգի վերանորոգման ու վերակառուցման նպատակով:

Ջրամատակարարման, այդ թվում տաք ջրամատակարարման, ոռոգման ցանցի և բակային տնտեսության վերանորոգման աշխատանքների համար նախատեսվում է հատկացնել 1.7 միլիոն դրամ:

1995 թվականին մշակվելու և հաստատվելու է արտասահմանյան օգնության օգտագործման առանձին ծրագրի՝ ուղղված Մայր Աթոռի տեխնիկական օգնության և զարգացման ծրագրերի իրականացմանը:

1995 թվականին նախատեսվում է Մայր Աթոռի ընդհանուր օգտագործման ավտոբուսներով իրականացնել փորձական ուղևորափոխադրումներ Երևան-Մայր Տանար երթուղով, ինչպես նաև պայմանագրային գներով ավտոտրանսպորտային

ազատ միջոցների տրամադրում ազգաբնակչությանը՝ կրոնա-եկեղեցական ընտանեկան միջոցառումների կազմակերպման համար:

1995 թվականին նախատեսվում է Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի և Քրիստոնեական Դաստիարակության կենտրոնի գործունեության ֆինանսավորման համար տրամադրել 42,5 միլիոն դրամ:

1995 թվականին անհրաժեշտ միջոցներ կտրամադրվեն սոցիալական բնագավառի հոգևոր և մշակութային արժեքների ժառանգության պահպանման, նորի ստեղծման, կրթության և հոգևոր կադրերի պատրաստման համար, որոնք կարժանանան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորությանը:


Հաստատված է

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ֆինանսատնտեսական և


արտադրության գծով Հանձնախմբի

1995 թ. Մարտի 25-ի որոշմամբ



ՄԱՅՐ ԱՓՈՒ ՍՈՒՐԸ ԷԿՏՐՈՑՄԻ
 ՖԻՆԱՆՍ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
 ՀԱՄԱՐԱԿՐԻՎ ԿԱՌԱՅՈՒՄԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄՈՒՄԻ ԲԵՐՈՒՄ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՒ
 ՄԵՆԵՆԵՆ ՎՃԱՐՈՒ ԿԱՌՈՒՄՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ
 ՔՈՒՐՈՍ ՄԻՋԵՊ-ՊԻՍՏՈՒՄ ՄԻՆՈՒՄԻՆԵՆ
 17 ՇԱԿԱՆՈՒՄԻ 1994 Ք.
 Բորիս Ա. Իրանյան



ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԺ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
Ս. ԷՋՄԻԱՄԻՆ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1994-ի Սեպտեմբեր ամսից սկսել են մասնակցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից կատարվող շինարարության մի քանի ծրագրերին՝ որպես խորհրդատու:

Այդ ծրագրերից մեկը Տաթև վանքի համալիրի վերականգնումն էր: Առաջին աշխատանքներից մեկը այդ ծրագրում Տաթև վանքի Ս. Պողոս-Պետրոս եկեղցու տանիքների վերակառուցման համար 43.000 ամերիկյան դոլլար արժեքով ներկայացված հաշվի ստուգումն էր: Հաշվարկը ստուգելուց պարզվեց, որ այն կազմվել էր որոշ սխալներով: Սյունյաց բեմի առաջնորդ Տ. Աբրահամ Վարդապետ Մկրտչյանից իմանալով տեղում բնեղենների ձեռք բերման հնարավոր տարբերակները և բանվորական ուժի մասին՝ կազմվեց 17.191 ամերիկյան դոլլարի արժեքով նոր հաշվարկ: Այդ հաշվարկի հիման վրա Սյունյաց բեմի հետ կնքվեց շինարարության իրականացման պայմանագիր:

Երկու անգամ լինելով Տաթև վանքում նախ ուսումնասիրվեց տանիքների վերակառուցման աշխատանքների ընթացքը և ապա կատարվեց համալիրի մնացորդային շին-մոնտաժային աշխատանքների հետազոտություն: Այդ հետազոտությունների և նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո կազմվեց Տաթև վանքի մնացորդային շին-մոնտաժային աշխատանքների հաշվարկ 489.520 ամերիկյան դոլլար ընդհանուր արժեքով:

Սյունյաց բեմի կողմից շինարարության կազմակերպման, տանիքների վերակառուցման աշխատանքի ավարտի և Տաթև վանքի նարտարապետական համալիրի վերակառուցման անհրաժեշտության փաստերը ի նկատի ունենալով՝ կազմվեց պայմանագրային փոփոխության արձանագրության կապ 82.500 ամերիկյան դոլլար արժեքի հավելումով:

Երկրորդ ծրագիրը՝ Մեղրի քաղաքի "Մեծ Թաղի" եկեղցու համալիրի վերակառուցումն էր: Մնացորդային շին-մոնտաժային աշխատանքները տեղում ճշտելուց հետո կազմվեց այդ աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ ծախսի հաշվարկ 144.600 ամերիկյան դոլլարի արժեքով:

Յրրորդ ծրագիրը՝ Սպիտակ քաղաքում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղցու շինարարությունն էր: Նախքան այդ ծրագրի կատարման մանրամասնությունների անցնելը, ցանկանում են համառոտ կերպով ներկայացնել խորհրդատու կամ վերահսկող կազմակերպությունների դերը շինարարության կատարման ընթացքում:

Խորհրդատու կազմակերպության ֆունկցիան է շինության համար ապահովել նախագծային, ուսումնասիրական, ինչպես նաև շինարարական աշխատանքների հեղինակային և տեխնիկական վերահսկողության ծառայություններ:

Վերահսկող կազմակերպության ստանձնած պարտականությունները պետք է լինեն հստակ և ամրող չափանիշներով, և պետք է պարունակեն ստորև նշված փուլերից մեկը կամ մի քանիսը:

Առաջին փուլը /նախագծային փուլ/ ընդգրկում է ընդհանուր ծանոթություն և նախնական ուսումնասիրություններ, նախագծի ընդհանրական դրույթների հիմնավորող գեկուցում և նախագծային գծագրերի, հաշվարկների և նախահաշվի, ինչպես նաև երկրորդ փուլի աշխատանքային գծագրերի և ժամանակացույցի պատրաստում:

Երկրորդ փուլը /աշխատանքային փաստաթղթերի փուլ/ ընդգրկում է առաջին փուլի վավերացված նախագծի հիման վրա աշխատանքային գծագրերի, նրանց համապատասխան տեխնիկական հաշվարկների և վերջնական մանրամասն նախահաշվի պատրաստում, ինչպես նաև մրցույթի փաստաթղթերի կազմում: Այս փուլը նաև պարունակում է երկրորդ փուլի գեկուցումը և երրորդ փուլի իրականացման ֆինանսական և աշխատանքային ժամանակացույց ծրագիրը:

Երրորդ փուլը /վերահսկողության փուլ/ ընդգրկում է կապալառուի ընտրության մրցույթի կազմակերպում, շինարարական աշխատանքների վերահսկում,

կապալառուների հետ հավանական վեճերի դեպքում կարծիքների դրսևորում, մանրամասը և սպառիչ գեկուցում, արդեն իսկ կատարված աշխատանքների մանրամասն հաշվարկների և գծագրերի պատրաստում:

Անդրադառնալով Սպիտակի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարության իրավանգության ծրագրի ընթացքի բնագրավանդ կարող եմ ասել, որ մինչև Սեպտեմբեր ամիսը արդեն կատարվել էր կապալառու կազմակերպությունների մրցույթը և ընտրվել էր Ախուրյանի թիվ 4 ՀԳԶ:

Պայմանագիր կնքելու համար բարձրացվեց պայմանագրային արժեքը նշտելու հարցը, քանի որ չկար մրցույթային հանձնաժողովի կողմից վավերացված արձանագրություն պայմանագրային արժեքի չափի և մանրամասնությունների մասին:

Եինարարական պայմանագրի կնքումից շուտ կապալառուի կողմից աշխատանքների սկսելը ավելի բարդացրեցին իրավիճակը:

Ընդհանրապես նախան շինարարական աշխատանքների սկսելը վերահսկող կազմակերպությունը կապալառուի համագործակցությամբ պետք է կատարված տեղանքի գեոդեզիական հանույթը մանրամասնորեն համեմատելով գծագրերում նշված իրավիճակը ներկայացնող համապատասխան դրույթների հետ և դրա հիման վրա կազմվեր արձանագրություն: Այդ փաստաթղթերը պետք է հաստատելու կապալառու և վերահսկող բաժինը:

Վերահսկող բաժնի պարտականությունն է կազմակերպել տեղում կատարվելիք վերահսկողությունը շինարարական մշտապես հաստատված հսկիչի միջոցով:

Վերը նշված երկու հանգամանքների բացակայությունը էլ ավելի բարդացրեցին հետագայում պայմանագիրը կնքելուց առաջ կատարված աշխատանքների առև արժեքը վճարելու խնդիրը: Այդ աշխատանքների թվին է պատկանում հիմնականում սև հողի կտրման, տեղագրուման և հարթեցման աշխատանքները /այդ խնդրին վերաբերող հարցերին բնարկման և ընթացքի մասին իմ կողմից մանրամասն գրված է 1995 թվականի Մարտի 28-ի գեկուցագրի մեջ /:

Անդրադառնալով ժամանակագրական ընթացքին կարելի է նշել, որ 1994 թվականի Հոկտեմբերի 8-ին մինչև պայմանագրի կնքելը Ախուրյանի թիվ 4 ՀԳԶ-ի կողմից ուղարկված նամակով առաջարկվեց պայմանագրային գործակցի արժեքի չափը ընդունել 1984 թվականի 1,0 ոււրլին = 1,46 ամերիկյան դոլար /նամակին կից ներկայացնելով չորս թերթից բաղկացած հաշվարկ /:

Մի շարք բանակցություններից հետո նշտվեց պայմանագրի պայմանները և անցումային գործակիցը ընդունելով 1984 թվականի 1,0 ոււրլին = 1,0 ամերիկյան դոլար՝ 1994 թվականի Հոկտեմբերի 18-ին կնքվեց Սպիտակի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գրոյական ցիկլի շինարարության իրականացման պայմանագիրը 103.476 ամերիկյան դոլար արժեքով:

Պայմանագիրը կնքելուց հետո տեղում մշտական հսկիչ նշանակվեց կառն Տիգրանի Հովսեփյանը, որը մինչև այսօր կատարում է այդ պարտականությունը:

Աշխատանքների ընթացքում կատարվել է հեղինակային հսկողություն նախարարատ Պալոն Արզումանյանի և կոնստրուկտոր Պարոն Մելոյանի կողմից:

1994 թվականի Հոկտեմբերի 5-ի դրությամբ վավերացված կատարողականի վճարման դիմումագրի հիման վրա կատարվում կազմակերպության կատարողականը կազմում է 48.659 ամերիկյան դոլար:

Ձեռնային պայմանների դադարից հետո կապալառու կազմակերպությունը շարունակում է գրոյական ցիկլի աշխատանքները:

Հոկտեմբեր, նոյեմբեր և Մարտ ամիսներին շինարարության ընթացքը ցույց տվեց, որ պատվիրատուի շինարարական բաժնի, հեղինակային և տեխնիկական վերահսկողության աշխատանքները ընդանում են չհամագործակցված կարգով, որը խանգարում է շինարարության հսկողությունը ճիշտ կատարել և կորչիցանցել, քացի այդ ինչ որ տեղ չի երևում ամեն մի բաժնի կատարած աշխատանքը և պատասխանատվության չափը մվազում է:

Վերը նշվածը ի նկատի ունենալով, խնդրում եմ Ձեզ անդրադառնալ հսկողությունը կորդինացնելու և համագործակցված աշխատանք կազմակերպելու խնդրին:

Խորհրդատու՝  Մարտիկ Ավետիսյան

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ Ա ՆԻՍՏԻ

/3 ապրիլ, 1995/

1995 թվականի ապրիլի 3-ին ամենայն հայոց հավատքի կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց սուրբ և անմահ Պատարագ: Պատարագեց ու քարոզեց ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ աշխարհական պատգամավորների երդման արարողություն՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի երդմնեցուցչությամբ: Երդման արարողությունից հետո բոլոր պատգամավորները Ա. Հաղորդություն ստացան: Հավարտ Սուրբ Պատարագի երջանկահիշատակ Տ. Տ. Վաչգեն Ա կաթողիկոսի շիրմի մոտ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն:

Ժամը 11-ին Վեհարանում սկսվեց Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորների գրանցումը: Գրանցվեցին 398 պատգամավորներ:

Ժամը 14.30-ին Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Ժողովի բացումը: Ժողովը աղոթքով բացեց Կ. Պլյատ պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արք. Գապանձյանը, ապա տեղեկացրեց, որ, մինչև ժողովի դիվանի ընտրությունը, դիվանի աշխատանքները ժամանակավորապես կատարելու են Գերագույն Հոգևոր Խորհրդի Ատենապետն ու ատենադպիրը:

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի բարի գալուստ մաղթելով պատգամավորներին, սրբապան պատրիարքը խոսքը տվեց Ժողովի գրասենյակի տնօրեն Տ. Վաչե արք. Հովսեփյանին: Սրբապան հայրը Ժողովին տեղեկություն տվեց գրասենյակի կատարած աշխատանքների մասին և, հանուն ժողովականների, շնորհակալություն հայտնեց Ժողովի հրավիրման աշխատանքներին մասնակցած բոլոր անձանց /խոսքի տեքստը կցված է սույն արձանագրությանը/:

Ստուգիչ հանձնախմբի ատենապետ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը հանձնախմբի անունից ներկայացրեց արձանագրության արդյունքները, որի համաձայն ընտրված 421 պատգամավորներից ներկա են 398-ը: Ապա Տ. Վաչե արքեպիսկոպոսը կատարեց պատգամավորների ստուգումը:

Ստուգումից հետո ժողովասրահ մուտք գործեցին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արք. Մանուկյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ա. Օ. Տ. Տ. Գարեգին Բ հայրապետը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ Գերագույն Խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ վարչապետ Հրանտ Բազրատյանը, ԼՂՀ Գերագույն Խորհրդի նախագահ Կարեն Բաբոլյանը, ՀՀ Ներքին գործոց նախարար Վանո Սիրադեղյանը, ՀՀ Կառավարությանն առընթեր կրոնից գործերի

խորհրդի նախագահի պաշտոնակատար Լապար Սուջյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանը:

Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսն իր ողջունի խոսքից հետո ձայն տվեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին /ուղերձի տեքստը կցված է սույն արձանագրությանը/: Դիվանի քարտուղարությանը հանձնվեցին ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ԼՂՀ Գերագույն Խորհրդի նախագահ Կարեն Բաբոյանի և ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանի շնորհավորագրերը, որոնք կցված են սույն արձանագրությանը:

Այնուհետև ձայնը տրվեց Մեծի Տանն Կիլիկոն Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ին /Վեհափառի պատգամը կցված է սույն արձանագրությանը/:

Ժողովի կանոնակարգի քննարկման համար խոսքը տրվեց Տ. Խաժակ արք. Պարսամյանին: Սրբապանը կետ առ կետ ընթերցեց կանոնակարգի նախագիծը, որի շուրջ տեղի ունեցավ մտքերի փոխանակում: Վերջին հոդվածի շուրջ, որի համաձայն «Ազգային-Եկեղեցական Ժողովը նորընտիր կաթողիկոսին առաջարկում է նշանակել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին՝ մինչև Սահմանադրության ընդունումը», ծավալվեց բուռն բանավեճ: Մի շարք պատգամավորներ առաջարկեցին կանոնակարգի այդ կետը փոխարինել այն բանաձևով, որ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները ընտրվում են Ազգային-Եկեղեցական Ժողովի կողմից: Ի վերջո որոշվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր անդամների ընտրությունը կատարել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունից հետո:

Ստուգիչ հանձնախմբի թվակազմին վերաբերող հոդվածի շուրջ ծավալված մտքերի փոխանակումից հետո առաջարկվեց նախապես 7 հոգուց բաղկացած հանձնախմբի կազմը համալրել ևս 4 անդամով: Ժողովը 242 ձայնով ընդունեց այդ առաջարկը: Ստուգիչ հանձնախմբի նորընտիր անդամներ դարձան Աբրահամ վարդապետ Մկրտչյանը, տիարք Վանուշ Կարապետյանը, Մարտին Թաղևոսյանը և Սուրեն Սահակյանը:

Ապա, որոշ բարեփոխություններից հետո, ամբողջապես ընդունվեց Ազգային-Եկեղեցական Ժողովի կանոնակարգը: Պատգամավոր Խաչիկ Պապիկյանը առաջարկեց կատարել Դիվանի ընտրություն: Առաջարկը երկրորդվեց: Չայների մեծամասնությամբ առաջարկն ընդունվեց: Ներկայացվեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի առաջարկած թեկնածուների անունները.

Ա ատենապետ՝ Տարիել Բարսեղյան, Բաֆֆի Հովհաննիսյան

Բ ատենապետ՝ Ներսես արք. Պոպապալյան, Վլադիմիր Հովհաննիսյան

Ա ատենադպիր՝ Հայկապոն Ծ. վրդ. Նաչարյան, Սասուն վրդ. Զմրուխտյան

Բ ատենադպիր՝ Անանիա եպս. Արաբաջյան, Արծրուն Սահակյան:

Ապա տեղի ունեցավ քվեարկություն: Քվեարկությունից հետո ձայները բաշխվեցին հետևյալ կերպ՝

Տարիել Բարսեղյան՝ 237, Բաֆֆի Հովհաննիսյան՝ 92 ձայն,

Ներսես արք. Պոպապալյան՝ 177, Վլադիմիր Հովհաննիսյան՝ 165 ձայն
Հայկապուն ծ. վրդ. Նաջարյան՝ 229, Սասուն վրդ. Չմբուխտյան՝ 101 ձայն,
Անանիա եպս. Արաբաջյան՝ 220, Արծրուն Սահակյան՝ 115 ձայն:

Այսպիսով Ա ատենապետ ընտրվեց Տարիել Բարսեղյանը, Ա
ատենադպիր՝ Հայկապուն Ծ. վրդ. Նաջարյանը, Բ ատենապետ՝ Ներսես արք.
Պոպապալյանը, իսկ Բ ատենադպիր՝ Անանիա եպս. Արաբաջյանը:

Նորակազմ դիվանը փոխարինեց առժամյա դիվանին և անցավ իր
պարտականությունների կատարմանը:

Նորակազմ դիվանը որոշեց Ազգային-Եկեղեցական Ժողովի Բ նիստը
սկսել հաջորդ օրը առավոտյան ժամը 9.30-ին:

Երեկոյան ժամը 18.30-ին Ազգային-Եկեղեցական Ժողովի Ա նիստը
եկրափակիչ աղոթքով ավարտեց իր աշխատանքները:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԺԱՄՅԱ ԴԻՎԱՆԻ

ՆԱԽԱԳԱՀ՝




ԹՈՐԳՈՍ ՊԱՏՐԻԱՐԷ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Կաթողիկոսական Տեղապահ

ԱՏԵՆԱՊԵՏ՝



ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆ
Պատրիարք Հայոց Կ. Պոլսո

ԱՏԵՆԱԴՊԻՐ՝



ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Բ ՆԻՍ

Երեքշաբթի, 4 ապրիլի, 1995թ.

Ազգային-Եկեղեցական Ժողովի Բ նիստը սկսվեց առավոտյան ժամը 9.00-ին: Նիստը բացվեց Ժողովի նախագահ Կաթողիկոսական Տեղապահ, Ամենապատիվ Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի աղոթքով: Այնուհետև տեղի ունեցավ պատգամավորների հաշվառում: Ներկա էին 400 պատգամավորներ, որոնցով և հաստատվեց ժողովի քվորումը:

Ապա Ժողովի ատենապետը ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսական ընտրության թեկնածու ութ բարձրաստիճան հոգևորականների անունները: (Նախորդ երեկոյան, երկու Ամենապատիվ Պատրիարքներ՝ Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, Պատրիարք Հայոց Երուսաղեմի, և Ս. Գարեգին արքեպիսկոպոս Գապանձյանը, Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսի, արդեն տեղեկացրել էին, որ դուրս են հանում իրենց անունները թեկնածուների ցանկից):

Այսպիսով՝ կաթողիկոսական թեկնածուներ դարձան.

- ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ
- բ) Ս. Չավեն արքեպիսկոպոս Չինչինյան
- գ) Ս. Արիս եպիսկոպոս Շիրվանյան
- դ) Ս. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան
- ե) Ս. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյան
- զ) Ս. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան
- է) Ս. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան
- ը) Ս. Պարզև եպիսկոպոս Մարտիրոսյան:

Այնուհետև կազմվեցին մի շարք աշխատանքային հանձնախմբեր՝ հետևյալ աշխատակազմով.

- ա) Օրինական Հարցերի Հանձնախումբ – Մեթր Խաչիկ Պապիկյան (Լիբանան), Տիարք Վոլոդյա Հովհաննիսյան (Հայաստան) և Վինսենթ Կյուրահյան (ԱՄՆ)
- բ) Կարգապահության Հանձնախումբ – Տիարք Միշա Բաղիրյան (Հայաստան), Գևորգ Գուլքանյան (Հայաստան), Գերաշնորհ Ս. Տարոն եպիսկոպոս Ճերեձյան (Ֆրանսիա) և Արժանապատիվ Ս. Սարգիս քին. Սարգսյան (Իտալիա)

- գ) Գնահատանքի Հանձնախումբ – Գերաշնորհ Ս. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյան (Բաղդադ, Իրաք), Տիարք Արթուր Բասմաջյան (Կանադա) և Ռաֆայել Պապսյան (Հայաստան)

դ) Բանասմների Հանձնախումբ – Տիարք Պիոն Հակոբյան, Հայկ Բարիկյան և Մերուժան Տեր-Գուլանյան (երեքն էլ Հայաստանից):

Հանձնախմբերի անդամների ընտրությունից հետո Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները լսեցին Կաթողիկոսական Տեղապահ, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հաշվետու պեկուցումը՝ Կաթողիկոսական Տեղապահության իր վեցամսյա գործունեության վերաբերյալ, հավարտ որի գնահատանքի հետևյալ առաջարկը ներկայացրեց Գերաշնորհ Տ. Բաբկեն եպիսկոպոս Վարժապետյանը.

«Այս խղճամիտ, ճշգրիտ ու լրիվ տեղեկագրի համար խորին շնորհակալություն: Առաջարկում եմ, որ Ազգային-Եկեղեցական այս սրբագումար և պատկառելի Ժողովը երախտագիտական զգացումով և շնորհակալությամբ ընդունի սույն տեղեկագիրը»: Ժողովը միաձայնությամբ ընդունեց այս առաջարկը:

Տեղապահի պեկույցից հետո Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները դիմեցին դեպի Մայր Տաճար, ուր պետք է տեղի ունենային (գաղտնի քվեարկությամբ) կաթողիկոսական ընտրությունները:

Կեսօրվա ժամը 12-ին, պատգամավորների հաշվառումից հետո, տեղի ունեցավ առաջին քվեարկությունը:

Առաջին քվեարկության արդյունքներն էին.

- ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ – 111 ձայն
- բ) Տ. Չավեն արքեպիսկոպոս Չինչինյան – 9 ձայն
- գ) Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյան – 3 ձայն
- դ) Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան – 2 ձայն
- ե) Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյան – 37 ձայն
- զ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան – 123 ձայն
- է) Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան – 42 ձայն
- ը) Տ. Պարզև եպիսկոպոս Մարտիրոսյան – 61 ձայն:

Կաթողիկոսական ընտրության երկրորդ քվեարկության համար, համաձայն հաստատված կանոնի, երեք առավելագույն քվե ստացողներն էին հետևյալները.

- ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը
- բ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը
- գ) Տ. Պարզև եպիսկոպոս Մարտիրոսյանը:

Գ ՆԻՍՏ

Ընդմիջումից հետո, կեսօրվա ժամը 15-ին, Ազգային-Եկեղեցական Համագումարի Գ նիստով սկսվեց ընտրության երկրորդ փուլը, հավարտ որի ընտրողների ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ — 186 ձայն

բ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան — 145 ձայն

գ) Տ. Պարզև եպիսկոպոս Մարտիրոսյան — 61 ձայն:

Երկրորդ ընտրության ժամանակ անվավեր համարվեցին 5 քվեներ: Ըստ ընտրական կանոնակարգի՝ հետագա ընտրություն տեղի պիտի ունենար Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի միջև: Վերջինս, սակայն, ցուցաբերելով որդիական ակնածանք Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսի անձի նկատմամբ, պնդվորեն հրաժարվեց հետագա ընտրապայքարից՝ հայտարարելով ինքնաբացարկ:

Այսպիսով, առանց հետագա քվեարկության, ներկա պատգամավորների ցնծության և ծափահարությունների ներքո ազգիս 131-րդ Կաթողիկոս ընտրվեց Մեծի Տանն Կիլիկիո և այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն: (Հետայսու՝ Գարեգին Ա):

Ընդունելով Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր դասի և Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորների շնորհավորանքները, նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսը տվեց նրանց իր առաջին օրհնությունը և հայրական պատգամները: Այսպիսով Գ նիստը իր ավարտը գտավ:

Այնուհետև, Մայր Տաճարի Կանգերի ղողանջի ներքո, եկեղեցական թափորը ուղղվեց դեպի Վեհարան, ուր և հոգևորական դասը աջահամբույրով ստացավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Գարեգին Ա-ի շնորհաբեր օրհնությունը:

Ուշ երեկոյան, նորընտիր Հայրապետին շնորհավորելու համար Ս. Էջմիածին ժամանեցին ՀՀ մեծարգո նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ խորհրդարանի նախագահ Տիար Բաբկեն Արարքցյանը, ՀՀ Ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանը և պաշտոնական այլ անձինք: Վեհարանում կայացած ընդունելության ժամանակ Նորին Սուրբ

Օծություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Հայաստանի Հանրապետության նախագահը փոխանակեցին ողջույնի խոսքեր:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՎԱՆ

ՆԱԽԱԳԱՀ՝


ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԷ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Կաթողիկոսական Տեղապահ


Ա ԱՏԵՆԱԳԵՏ՝


ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ


Բ ԱՏԵՆԱԳԵՏ՝

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ 

Ա ԱՏԵՆԱԴՊԻՐ՝


ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԶԱՐՅԱՆ

Բ ԱՏԵՆԱԴՊԻՐ


ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱԶՅԱՆ

Դ ՆԻՍ

Չորեքշաբթի, 5 ապրիլի, 1995 թ.

Այսօր առավոտյան ժամը 10-ին Ազգային-Եկեղեցական Ժողովը սկսեց իր չորրորդ և վերջին նիստը՝ նախագահությամբ՝ Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի: Ամենայն Հայոց Հայրապետը համագումարի բացման իր աղոթքից հետո ընթերցեց մի հատված Մատթեոսի Ավետարանից (Մատթ. ԻԵ 31-46) և, մեկնաբանելով Սուրբ Գրքի այդ հատվածը, ներկաներին տվեց իր հայրական հորդորները: Ապա, Ս. Անանիա եպիսկոպոս Արաբաշյանը կարդաց ապրիլի 4-ի նիստի արձանագրությունը, որը, բարեփոխության որոշ առաջարկություններից հետո, ընդունվեց միաձայն: Հավարտ ընթերցման Նորին Սուրբ Օծությունը արեց հավուր պատշաճի որոշ խորհրդածություններ:

Խոսելով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների ընտրության մասին՝ Ս. Տ. Գարեգին Ա-ն ասաց, որ տարիների ընթացքում Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը ղեկավարելու իր փորձը ցույց է տվել, որ որևէ հանձնախմբի կամ խորհրդի ընտրություն կատարելուց առաջ հարկ է նշանակել նախ նշանակման կոմիտե (nomination committee), այն պատճառով, որ մենք դեռևս չենք ճանաչում այն անձանց, որոնք ընտրվելու են որպես Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր անդամներ: Նրանց արժանիքները, ընդունակությունները իմանալու համար է անհրաժեշտ ժամանակ: Ուստի, ինչպես վեհափառ Հայրապետը հայտնեց, խորհրդակցելու է Ամենապատիվ Պատրիարք հայրերի հետ, նշանակելու համար Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմը մինչև նոր Ազգային-Եկեղեցական Ժողովի Գումարումը, որ տեղի է ունենալու երկու տարի հետո:

Ս. Տ. Գարեգին Ա-ի սույն մտածումը առաջարկի ձևով Ժողովին ներկայացրեց Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը: Այն երկրորդվեց Ս. Ոսկան եպիսկոպոս Գալիսկյանի կողմից: Առաջարկն անցավ միաձայն:

Խոսելով Հայ Եկեղեցու ապագա գործունեության մասին, Նորին Սուրբ Օծությունն ասաց, որ մեր առաջին նպատակը պիտի լինի Հայաստանում որպես պետական կրոն Քրիստոնեության հաստատման 1700-ամյակին նախապատրաստվելը: Աշխարհում ոչ մի պետություն, ոչ մի Եկեղեցի դեռևս այսպիսի մարտահրավեր չի ուղղել: Դա մեծ պատիվ և պատասխանատվություն է մեր Եկեղեցու համար: Շատ Եկեղեցիներ ու կազմակերպություններ այսօր՝ 2000-ամյակի ավարտին և 3000-ամյակի շեմին, տևապես մտածում են, թե ինչպես թարմացնեն, բարոյապես առողջացնեն իրենց ներքին կյանքը: Մենք նույնպես պարտավորություն ունենք ամենայն լրջությամբ վբարվելու այդ աշխատանքներով:

Տ. Տ. Գարեգին Ա-ն հայտնեց, որ անցած տարի, 1994-ին, ինքը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Ամենապատիվ Պատրիարքները, հանգուցյալ Հայրապետի հետ, ծրագրել են կապել մի հանձնախումբ, որը պիտի զբաղվեր 1700-ամյակին նվիրված աշխատանքներով: Այս առթիվ կառավարության կողմից նույնպես նշանակվել է 24 հոգուց բաղկացած մի հանձնախումբ:

Փոքր Ասիայի այս տարածքում հայ ժողովրդի կողմից քրիստոնեական իր հավատքի և մշակույթի պահպանումը համապոր է մի հրաշքի, ասաց Նորին Սուրբ Օծությունը: Տ. Տ. Գարեգին Ա-ն միաժամանակ չափապանց կարևոր համարեց Հայ Եկեղեցին ուժեղացնել ներքնապես՝ հայ հավատացյալներին հաղորդ դարձնելու համար քրիստոնեական ճշմարտությանը, Ավետարանի պատգամներին, բավարարելու նրանց հոգևոր պահանջները:

Մեր եկեղեցին, ըստ Հայոց Հայրապետի, պիտի վերստին այնքան կենսունակություն ստանա, որ շթույլատրի օտար քարոզիչներին գալ այստեղ ու լցնել մեր հոգևոր դատարկությունը: Պետք չէ այս առիթով մեղադրել որևէ մեկին, այլ՝ լծվել աշխատանքի: Եվ այս գործում շատ անելիքներ ունի Ս. Էջիածնի հոգևոր ձեռնարանը: Նոր սերնդի պատրաստության հարցը, ըստ Նորին Սուրբ Օծության ամենակարևոր հարցերից մեկն է: Հոգևոր ձեռնարանը սիրուն է հայ եկեղեցու հոգևոր հաստատությունների: Նախկինում Գևորգյան ձեռնարանը հիացմունքի առարկա էր մեզ համար: Այսօր, հարց է տալիս Վեհափառ Հայրապետը, ինչպե՞ս պիտի ճանաչենք հոգևոր ձեռնարանը, եթե ոչ այն մարդկանցով, ովքեր իրենց կրթությամբ, պատրաստակամությամբ և հոգևոր պորությամբ պիտի ծառայեն այնտեղ:

Նորին Սուրբ Օծությունը ոչ պակաս կարևոր է համարում նաև հայրենիքի պորացման համար ծառայելու մեր պատրաստակամության հարցը: Մինչ օտար Եկեղեցիները քարոզում են, որ Եկեղեցին և ազգը տարբեր բաներ են, Հայ Եկեղեցու պարագային Եկեղեցին և ազգը անբաժան են: «Ես չեմ մոռանա, — ասում է Վեհափառը, — երբ փոքր ժամանակ մեր հայրենի գյուղի դաշտերի մեջ պարվում էի իմ փոքրիկ արիերը և արտասանում. «Ապտոն Աստված այն օրից...» Այժմ եկել է այդ պատությունը: Այսօր ունենք մեր անկախ ու ազատ պետությունը: Ունենք մեր Եկեղեցին: Ամուր պահենք այն: Դրա լավագույն առիավատչյան այսօր Համահայկական Հիմնադրամի առկայությունն է, և մեր պարտականությունը պետք է լինի պորավիզ կանգնել դրան, այն արժեվորել հայրենաշինությամբ»:

Վերջին հարցը, որին անդրադարձավ Վեհափառ Հայրապետը՝ տնտեսական հարցն էր: Նախկին Ազգային-Եկեղեցական Ժողովները միշտ էլ մտահոգ են եղել Եկեղեցու տնտեսական կացությանը: Տ. Տ. Գարեգին Ա նախ իր շնորհակալություններն է հայտնում Ամենապատիվ Տ. Թորգոմ

Պատրիարքին իր հաշվետու Վեկույցի համար և ասում, որ Եկեղեցին այժմ պարտավոր է անցնել տնտեսական նոր քաղաքականության: Կամավոր նվիրատվությունները Նորին Սրբությունը համարում է գեղեցիկ մի երևույթ, որը սակայն չի կարող տնտեսական քաղաքականության հիմք դառնալ: Եկեղեցին պիտի հիմնվի մնայուն ֆոնդերի հաստատման վրա, ֆոնդեր, որոնք հնարավորություն կտան տոկոս կովաններ ունենալու: Եկեղեցուն այլևս բավարար չեն լուծմաները, ինչպես «Լուսավորչի լուծան» և այլ նվիրատվություններ: Դրանք շատ օգտակար են, սակայն Եկեղեցին, թեմերը պետք է գտնեն այնպիսի հավելյալ միջոցներ, որոնք հպարտության զգացում կտան մեզ՝ մեր կատարած աշխատանքների դիմաց:

Հայաստանյայց Եկեղեցու բարեկարգությունը, ըստ Վեհափառի, պետք է լինի մեր մտածողության սևեռակետը: Պետք է այնպես բարեկարգել Եկեղեցին, որ այն դառնա մի ուժ, հայ ազգի շենության և բարեկարգության ճանապարհին:

Հավարտ Հայ Եկեղեցու այսօրվա վիճակին վերաբերող իր մտածումների, Վեհափառ Հայրապետը ներկա պատգամավորներին հրավիրեց հանդես գալ իրենց առաջարկներով և դիտողություններով՝ իր հերթին խոստանալով ժամանակի ընթացքում հնարավորին չափով լուծելու դրանք:

Եղան բազմաթիվ թելադրանքներ, որոնցից ամենակարևորները ներկայացնում ենք ստորև.

ա) Ծիրակի թեմ – Թելադրում ենք, որ այս Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները մինչև Եկեղեցական նոր Սահմանադրության ընդունումը (երկու տարի հետո) պահեն իրենց պատգամավորի հանգամանքը:

բ) Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյան – Հայ Եկեղեցուց ներս կատարել ծեսի բարեկարգություն և այժմեականացնել այն:

գ) Տ. Արիս եպիսկոպոս Ծիրվանյանի թելադրությունները.

1) Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները այցելեն Ծիծեռնակաբերդ՝ Մեծ Եղեռնի 80-րդ տարեդարձի առթիվ կոնվածներին հարգանքի տուրք մատուցելու.

2) Դրականորեն լուծել Հայ Եկեղեցու միության հարցը.

3) Հաստատել Սահմանադրություն և մոտ ժամանակներս հրավիրել Եպիսկոպոսաց Ժողով:

դ) Գուգարաց թեմի պատգամավորները թելադրեցին.

1) Կաթողիկոսական ընտրությունների ժամանակ պատգամավորների միջև ստեղծել հավասարապորություն՝ անկախ թեմի մեծ կամ փոքր լինելուց:

2) Յուրաքանչյուր երկու-երեք տարին մեկ հրավիրել Ազգային-Եկեղեցական Ժողով.

3) Կաթողիկոսության կառավարման տարիք համարել 75-ը.

4) Ժողովրդի աչքին հոգևորականի վարկը բարձրացնելու նպատակով Մայր Աթոռի տարածքում մի հուշակոթող կանգնեցնել բռնատիրության տարիներին զոհված հայ հոգևորականների հիշատակին:

ե) Գերաշնորհ Ս. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիսթյան –

1) Ստեղծել առաջարկներ բերող հանձնախումբ.

2) Դադարեցնել Ազգային-Եկեղեցական Ժողով հրավիրելու նախկին կանոնակարգը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատել նոր կանոնակարգ.

3) Ինքնաբուխ նվիրատվության կոչ հղել՝ աշխարհի հայությանը և Ազգային-Եկեղեցական Ժողովին.

4) Վերանայել, անհրաժեշտության դեպքում, բոլոր ուղերձները և արձանագրությունները, որոնք տարբեր առիթներով ուղղվել են տարբեր մարդկանց:

զ) Գերաշնորհ Ս. Աղան արքեպիսկոպոս Պալեոպյան – Սրբացնել 1915 թվականի Եղեռնի բոլոր զոհերին:

է) Ռուսաստանի թեմ – Քրիստոնեության հաստատման 1700-ամյակի առթիվ ստեղծել դրամական ֆոնդ:

ը) Գերաշնորհ Ս. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյան – Կազմակերպել հավաքական և առանձին հանդիպումներ Վեհափառ Հայրապետի և թեմակալ առաջնորդների միջև:

թ) Գերաշնորհ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյան –

1) Կատարել որոշ բարեփոխություններ կուսակրոնության ասպարեկում.

2) Հանգիստ թողնել 1915 թ. հայ նահատակների հիշատակը և չսրբացնել նրանց: Եվ, ընդհակառակը, քաղաքական նպատակներից էլնելով, հեռագրեր ուղարկել աշխարհի շատ երկրներ՝ ճանաչել տալու համար ցեղասպանությունը:

ժ) Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Տիար Հակոբ Փափապյան – Բարձրացնել Հոգևոր Ճեմարանի ուսման մակարդակը՝ հասցնելով այն գիտական աստիճանի:

ժա) Ս. Հայկապոն Օ. վրդ. Նաջարյանը թելադրեց – Մայր Աթոռին վերադարձնել վանքապատկան և բռնագրավված բոլոր հողերը.

2) Բարելավել Մայր Աթոռի միաբանների տնտեսական վիճակը:

ժբ) Արթուր Պասաճյան (Կանադա) — Սրբաջնել Տ. Կոմիտաս վարդապետին:

ժգ) Տիար Սարգիս Պետոյան (Ֆրանսիա) — Ստեղծել Ա. Էջմիածնի ֆոնդ:

ժդ) Տ. Մամբրե ավագ քին. Կուլույանը խնդրանքով դիմեց նորընտիր Վեհափառ Հայրապետին՝ կիսելու իր մտածումները Եկեղեցու միասնության վերաբերյալ:

ժե) ԱՄՆ-ի Արևելյան թեմից Դին Շահինյանը արեց հետևյալ թելադրությունները.

1) Ամուսնացյալ քահանաները կարողանան դառնալ կամ ընտրվել թեմակալ առաջնորդներ.

2) Ամուսնացյալ քահանաները կարողանան դառնալ եպիսկոպոս.

3) Արժանավոր ամուրի անձերը առանց կուսակրոնության ուխտ կատարելու դառնան քահանա՝ հետագայում ամուսնանալու թույլտվությամբ.

4) Կանանց սարկաւագ լինելու թույլտվության ստացում:

ժզ) Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյան — Հանդիսավորապես նշել Հոգևոր ձեռարանի վերաբացման 50-ամյակը:

ժէ) Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյան — Տ. Խորեն Ա Մուրադբեկյան երջանկահիշատակ Կաթողիկոսի աճյունը Ա. Գայանե վանքից տեղափոխել Մայրավանք:

ժը) Տիար Ժուլեֆ Ավետիսյան (Արարատյան թեմ) — Ստեղծել հայ եկեղեցիների կառուցման և վերանորոգման ֆոնդ՝ արդեն այդ առիթով գոյություն ունեցող հիմնադրամի վրա:

ժթ) Տիկին Ավետյանա Պետրոսյան (Արարատյան թեմ) —

1) Լուսավորության նախարարության հետ համաձայնեցնելով՝ հանրակրթական դպրոցներում պարտադիր դարձնել կրոնական առարկաների դասավանդումը:

2) Ամուսնական ակտեր կատարել միայն Եկեղեցու միջոցով:

Այս և ուրիշ առաջարկներից հետո ղեկուցումով հանդես եկավ Գնահատանքի հանձնախմբի անդամ Տիար Ռաֆայել Պապայանը: Հավարտ նրա ղեկուցման Ա. Պետերբուրգի հայ համայնքի պատգամավորները 131-րդ Կաթողիկոսի ընտրության առիթով Նորին Սուրբ Օծությանը նվիրեցին իրենց պատվերով պատրաստված 131 արծաթե հուշամեդալներ: Նրանք հրավիրեցին Նորին Սուրբ Օծությանը այցելել Ա. Պետերբուրգ:

Իր պատասխան խոսքում Ս. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը խոստացավ գրավոր կերպով պատասխանել բոլոր այն հարցերին և թելադրություններին, որ արվել էին պատգամավորների կողմից:

Ապա Վեհափառ Հայրապետը շեշտեց Հայ Եկեղեցու կողմից Համաշխարհային Էկումենիկ շարժմանը ակտիվորեն մասնակցելու կարևորությունը և անցավ իր շնորհավորական խոսքին:

Նորին Սուրբ Օծությունը Ենօրեակալություն հայտնեց նախ՝ Ամենապատիվ երկու Պատրիարք հայրերին, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին, Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանին և Մայր Աթոռի Դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոպապայլանին՝ Ազգային-Եկեղեցական Ժողովը բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար, հայրենի պետության ներկայացուցիչներին, Էջմիածնի քաղաքապետարանին, հանրության ներկայացուցիչներին, մամուլին, Մայր Աթոռի մատակարարման բաժնին, Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորներին և Ժողովի Դիվանին:

Ազգային-Եկեղեցական Ժողովը փակվեց Ս. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնությամբ և աղոթքով:

Ազգային-Եկեղեցական Ժողովի Դիվանը ևս շնորհավորեց Ամենայն Հայոց Նորրնտիր Կաթողիկոս Գարեգին Ա-ին և ցանկացավ հաջողություններ իր սուրբ առաքելության ճանապարհին:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՎԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
Նորրնտիր Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ա ԱՏԵՆԱԳԵՏ՝

ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Բ ԱՏԵՆԱԳԵՏ՝

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

Ա ԱՏԵՆԱԴՊԻՐ՝

ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ԿԱՐԴԱԳԵՏ ՆԱԶԱՐՅԱՆ

Բ ԱՏԵՆԱԴՊԻՐ
ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇԽԱԶՅԱՆ

ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ
ՎԱՉԷ ԱՐՔ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, հայ ժողովուրդի և Հայաստանի Հանրապետութեան համար չափազանց կենսական նշանակութիւն ունեցող սոյն Ազգային-Եկեղեցական Ժողովին յանուն Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի բարի գալուստ կը մաղթեմ ձեր բոլորին:

Որպէս պատասխանատու Ազգային-Եկեղեցական Ժողովի կազմակերպման աշխատանքների կ'ուզեմ իմ գնահատությունս յայտնել մեր թեմակալ բոլոր առաջնորդներուն և համայնքներու ներկայացուցիչներին բոլորի օրինակելի գործակցութեան համար:

Ազգային-Եկեղեցական Ժողովի կազմակերպչական աշխատանքները սկսեցինք հանգուցեալ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա-ի վախճանումից անմիջապէս յետո: Պետք է խոստովանենք, որ մեր աշխատանքը ծանր էր և հարցերով լեցուն: Փառք Աստուծոյ, որ կարողացանք կարելի եղած չափով այս կարճ ժամանակամիջոցին մեր աշխատանքը ամբողջացնել: Չեմ հավակնում ասելու, որ անթերի եղավ մեր աշխատանքը, սակայն նկատի առնելով պայմանները և Մայր Աթոռի գրասենեակների միջոցներու սահմանափակութիւնը և հայ ժողովրդի ահավոր տարտղնածութիւնը, կը խորհինք, որ Մայր Աթոռի և ապագա պատմիչների համար խիստ հետաքրքրական արխիվներ ունեցանք: Իւրաքանչիւր թեմի, իւրաքանչիւր պատգամավորի մասին ունեցանք խիստ հետաքրքրական տուեալներ նկարներով միասին: Ամենայն պարտաճանաչութեամբ մեր ունեցած արխիվները փոխանցում եմ ընտրվելիք նոր կաթողիկոսին:

Սոյն հսկայական գործը կարողացանք իրականացնել մեզի օգնական Արտակ սարկավագի օժանդակութեամբ, և նամանավանդ Հիւսիսային Ամերիկայի Արևմտեան թեմի գրասենեակի պաշտոնեաներու միջոցով տիկին Աննա Մովսիսեանի և յատկապէս Տ. Սիփան քին. Միսեանի և Մարի Կիվլաճեանի: Բոլոր տպագրութիւնները եղան Արևմտեան թեմի գրասենեակի մէջ և պանոնք փոխադրեցինք Ս. Էջմիածին:

Խորապէս կը գնահատենք մեր տիկնաց հանճաժողովի աշխատանքները ատենապետութեամբ Հերմինե Չանոեանի և օժանդակութեամբ Գլորիա Համբարի, Մարգրիտ Լյուլաճեանի, Ժիժի Բիլամճեանի, Թալին Գազանճեանի և հատկապէս տիկին Ֆլորա

Տունայեանցի, որ հիվանդութեան պատճառով չկարողացաւ ներկա գտնվիլ: Մեր անկեղծ գնահատութիւնը և շնորհակալութիւնը կը յայտնենք Տեր և տիկին Սուրեն Մելքոնեանի և իրենց զավակաց, որոնք նուիրեցին չորացուած մրգերը և Սունար Չուչեանի, որ նուիրեց արմաները, որոնք ապասարկուեցան տիկնանց յանձնաժողովին կողմէ ժողովներու դադարների ընթացքին:

Ի արտէ յաջողութիւն կը մաղթենք սոյն պատմական մեծ նշանակութիւն ունեցող Ազգային-Եկեղեցական Ժողովին:

ԿԱՅՈՒԿՆՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ



LOCUM TENENS OF CATHOLICATE OF ALL ARMENIANS ARCHBISHOP TORKOM MANOOGIAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՑ Մ. ԷՋՄԻԱՍՏԻՆ
Տելեքս: 243326 KREST SU
Ֆաքս: (78852) 151077
Հեռ. (78852) 288666
37-07 Կառ.

REPUBLIC OF ARMENIA
HOLY SEE OF ST. ETCHMIADZIN
Telex: 243326 KREST SU
Fax: (78852) 151077
Tel: (78852) 288666
37-07 Govern.

Թիւ 175

5 Ապրիլ 1995

ԳԵՐԱՇՆՈՐՀ

**Տ. ԳԱԻԹ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՒ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
ԵՐՈՒՍԱՂԷՄ**

Սիրելի Սրբազան,

Այսու կը յայտնենք Ձեզի, որ երէկ Ապրիլի 4-ին, Ս. Էջմիածնի մէջ գումարուած Ազգային Եկեղեցական Ժողովը Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը ընտրեց Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մայրագոյն Գատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Այրարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ:



Handwritten signature of Archbishop Torghom Manoogian

**ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԿԱՅՈՒԿՆՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ**

**SPEECH
HIS BEATITUDE PATRIARCH TORKOM MANOUKIAN
LOCUM TENENS CATHOLICOS OF ALL ARMENIANS
NATIONAL ECCLESIASTICAL ASSEMBLY
APRIL 3, 1995
HOLY ETCHMIADZIN**

**YOUR HOLINESS,
YOUR BEATITUDE,
YOUR EMINENCES,
YOUR GRACES AND VERY REVEREND FATHERS,
HONORABLE DELEGATES**

With the death of His Holiness Vazgen, Catholicos of All Armenians, on August 18, 1994, the patriarchal throne of the Holy See of Holy Etchmiadzin was in mourning.

By the will of God, the Assembly of Bishops, along with the members of the Supreme Spiritual Council, elected the Locum Tenens, on August 25. We were charged with the functions of Locum Tenens. We considered that our main obligation was the convocation of the National Ecclesiastical Assembly with the membership of the Supreme Spiritual Council, to elect, within the expected six month period, the heir to the throne of the Patriarch of All Armenians.

At the same time we tried to watch over and supervise the activities of the organizational divisions of the Holy See, its internal and external relations, and to implement indispensable and urgent arrangements.

Concurrently, as Armenian Patriarch of Jerusalem, we were obliged to maintain our ties with the Holy Order of St. James and the activities of the Patriarchate. This was made possible through two visits to Jerusalem: the first one from October 15 to November 9, 1994, and the second one from January 12 to February 22, 1995. The occasion was the Jerusalem (old calendar) New Year on January 14 and the Armenian Christmas at Bethlehem on January 18. We also carried out, on February 11, the elections of delegates to the National Ecclesiastical Assembly of the Jerusalem Order, and of the Armenian communities of Israel and Jordan.

NATIONAL ECCLESIASTICAL ASSEMBLY

From August 30, 1994, to March 30, we organized seven sessions of the Supreme Spiritual Council. At the very first session, we formulated the guide to the convocation of the National Ecclesiastical Assembly and established an

individual office that would only take care of the arrangements necessary to convene the National Ecclesiastical Assembly. We appointed His Grace Archbishop Vatche Hovsepian as manager of the office, and he effectively and meticulously accomplished the obligation assigned to him. He and all who helped him deserve the thanks and appreciation of us all.

As a result of all this work and these arrangements, it appeared that many of the more than 35 organized and as yet to be organized dioceses do not have a diocesan structure. They have neither regulations nor charter to explain the duties of officials and organs acting at diocesan and parish levels as well as the relationships between them. The geographical borders of jurisdiction of some dioceses and the total number of Armenians were re-examined to set the appropriate number of delegates to be elected. The number of delegates who may be invited as authorized representatives of organizations to elect the delegates of the diocese was also unclear.

The absence of general clerical regulations and of a Constitution was obvious.

THE PRESENT CONDITION OF THE HOLY SEE

At the first session of the Supreme Spiritual Council (August 30, 1994) we appointed a five-member commission to open the sealed office of the late Catholicos. An inventory was established to make the room usable as an office for the Locum Tenens. The hall next to it was to be a conference and reception room. The Locum Tenens continues to live in the monastery.

On the first floor of the Catholicos' apartments, the bedroom and guest room as well as the art gallery on the south wing of the second floor remain sealed. Only the contents of the bedroom's safe, containing precious objects, are inventoried. Of the two keys that open the inner and outer safe doors, one is with Garegin Archbishop Nersessian and the other is with Mr. Grigor Khanjian. Both are to be given to the Catholicos-elect.

The keys to the storage rooms, the Great Seal, are kept in the office. Each written application carrying the signature of the Locum Tenens, is given to the officials, who seal the door after delivery and return the key and the Great Seal to the office.

The Holy See has the following acting divisions for all internal and external activities and relations. These divisions, however need encouragement and supervision to be able to develop more effective activities.

Central Cathedral and museum
Seminary (Spiritual Academy)
Center for Christian Education and Propaganda

Chancery
 Publication: Editing house (Etchmiadzin, Bem Yekeghetsvo)
 Printing House
 "Vank" affiliated enterprise
 Candle factory
 Treasury-museum
 Churches
 Monastery
 Accounting office
 Supply office
 Construction
 Agricultural
 Electro-thermal plant
 Economic affairs
 Transportation
 Guard and security service
 Charity service
 Economic-financial commission

Starting in September 1994, we tried to carefully scrutinize the conditions of these divisions and the activities of their employees. Our written reports to the Supreme Spiritual Council give some idea of the most worrying problems and situations. These reports, as well as others, are attached as appendices.

Report presented to the October 3, 1994 session
 Report presented to the November 18, 1994 session
 The visit of the Locum Tenens to the diocese of Sunik, 1995 March 11-13
 Report on the work accomplished and the activities of the diocese of Sunik (Father Abraham Mkrтчian)
 Constitution of the Center for Christian Education
 Constitution of the Council of the Center for Education and Propagation of the Faith
 Charter of "Vank" affiliated enterprise
 Commission to place the "Vank" affiliated enterprise in the hands of the Director
 Order to re-estimate the funds for the "Vank" affiliated enterprise
 Contract with the director of the "Vank" affiliated enterprise
 Rules of the economic-financial commission
 Regulations of the economic-financial commission
 Laws of the economic-financial commission
 Regulations of the economic-financial commission: General Theses
 1995 Socio-economic development program of the economic-financial commission
 Construction
 Structure of the economic-financial commission

The Spiritual Academy (Seminary) needs special attention. This is the academy where, we assume, clergymen will be prepared. They will take care of the spiritual needs of the Armenian people, and be the teachers of the instructions of the Armenian Church, specially at the present, when preachers wearing the cloak of charity and religion have free access to Independent Armenia.

To arrange the activities of the Center for Christian Education and Propagation of the Faith that started with the encouragement of the late Catholicos, the Center's constitution was prepared, and the members of the Center's Council and the Office's director were appointed. Its activities will be carried out mainly in three departments. These are: Propagation of the Faith, Preparation of Teachers of Christian Education for public and Sunday schools, and the supply of textbooks. The office of the Center is located in St. Gayane monastery.

Within the Holy See, the Order consists of two archbishops, two bishops, five priests, six married clergymen, and six graduate deacons. The six churches under the care of the Holy See are served by twenty-seven married clergymen.

RELATIONS WITH THE STATE OF ARMENIA

Once more, in the name of the Holy See, we express our thanks and appreciation to the Government of the Independent Republic of Armenia and to its President, Mr. Levon Ter Petrossian. The Government has shown both zeal and interest in making the arrangements both for the funeral of the late Catholicos and the organization of the present National Ecclesiastical Assembly.

On September 17-19, 1994, we participated in the meeting of the Trustees of the Republic of Armenia Fund. It was presided by the vice-president Gagik Haroutyounian. The President, the Prime Minister, the President of Parliament and Trustee members from several countries were present. Allusions were made to the deficiency of fund-raising efforts and the necessity for a more active participation of some clerical circles.

On September 1994, the President of the Republic of Armenia requested that a gift be given to the United Nations by Armenia to be placed in the Headquarters at New York. Accordingly, after deliberations within the Supreme Spiritual Council, one of the stone-crosses that was under the wall of the old apartments of the Catholicos, (the 13th century stone-cross from the convent of Aghdj) was given to the President, who personally offered it to the United Nations Organization.

The Ministry of Culture of Armenia had organized, with the administration of the museum of Bochum (Germany), an exhibition dedicated to Armenia. In November 1994, following a request, seven religious items from the Treasury of

the Holy See were handed over, for the exhibition. Arrangements were made for the safe return of these items.

The State Committee for State Registration and Analysis, by its registration dated June 30, 1994, and its letter of July 27, 1994, transferred the construction factory of Tchopanakar to the Holy See of St. Etchmiadzin, under the name of "Vank" affiliated enterprise. The charter is established and a contract is signed with the director of this enterprise. We are hopeful that, under the supervision of the economic-financial Commission of the Holy See, this plant will render good assistance in the realization of the construction plans of the Holy See.

On February 18, 1995, the Order of the State Committee for the Protection of Monuments, based on the request of the Locum Tenens Prelate of the Diocese of Sunik Father Abraham Mkrtchian, and with the successful collaboration of Mr. Lazar Syutdjian, an official of the Religious Council, the historical church of Noravank and the Saint Pokas Chapel, in Yeghegnadzor, with their surrounding lands, were returned to the Holy See of St. Etchmiadzin.

The renovations of the basilica and the cover of the Noravank Church, the masterpiece of architect Momik are over, and every effort has been made to finish the general renovations of the interior.

The Holy Virgin Church of Norashen, in the Georgian town of Tbilissi had been used, during the previous regime's decades, as a library. In December 1994, while vacating the library, some people ruined the altar of the Armenian Church and adapted it to the Georgian worship service. They also destroyed the frescos by Naghash Hovnatanian. Following protestations by Armenians, and that of the Primate of the Armenians in Georgia, Bishop Gevorg Seraytarian, and on appealing for the assistance of the President of Armenia, we sent telegrams to the leader of the Georgian State, Edward Shevardnadze, as well as to the Catholicos of Georgia, Illia the Second. Three members of the Supreme Spiritual Council, (Archbishop Grigoris Bounyatian, Archbishop Garegine Nersessian and Mr. Raphael Babayan) were sent to examine the situation in situ and ask for the intervention of the Catholicos of Georgia in this situation. The doors of the church are now closed and the church is under the care of the Georgian Catholicos.

ACCOUNTING OF THE HOLY SEE

The financial amounts of the Holy See, that are kept in the Swiss Bank in Geneva, remain inviolate since the decease of the Catholicos and will remain so until the new Catholicos is elected. For current expenses, therefor, we have had at our disposal only those cash amounts in the office of the accountant and in Armenian banks.

Sources of income include personal donations, gifts of worship to the Holy See, amounts received for candles, books and souvenirs as supplied by the Holy See to the Dioceses, and gifts received from the Dioceses as "the Penny of the Illuminator."

A bank account is opened in Paris, under the name of the Patriarchal Delegate His Grace Archbishop Gyut Nakkashian. Statements of this account had periodically been presented to the late Catholicos till June 8, 1994. We have asked for a financial report on two occasions but have received no written reply.

This brief and incomplete information on the general activity of the Holy See, and the responsibility of organizing and taking charge of the world-wide needs of the Armenian Church's Dioceses, emphasizes the need for the Armenian Apostolic Church to be blessed with a Universal Catholicos of All Armenians.

The elected Catholicos will be "the servant of Jesus Christ, by the mercy of God, and with the will of the Nation Catholicos of All Armenians, and Patriarch of the National Senior Araratian Apostolic See of the Holy Church of St. Etchmiadzin."

We express our cordial thanks to the members of the Supreme Spiritual Council, to our spiritual brothers and colleagues in the Holy See, to our Diocesan Leaders and Diocesan Councils, who, to solve some of their problems, were obliged to wait for the elections of the Catholicos of All Armenians. Our thanks to the Holy Order of St. James and the members of the Directors, who accepted with understanding this spiritual service of being charged with the position of Locum Tenens and of additional obligations, at the end of which, we will return to the Patriarchate of Jerusalem and to our holy obligations of the protection of the Promised Land and the Holy Sites in the name of the Armenian Church and the Armenian nation.

We wish that, with the blessing of the Lord and the presence of the Holy Spirit, this historical and venerable National Ecclesiastical meeting, will, with proper and due seriousness of purpose, describe the mission of the Armenian Church, conclude its deliberations and decisions, elect the Catholicos of All Armenians, and the Armenian choirs will sound the Patriarchal oratorio: "Lord, steadfastly hold the Holy See established by Yourself." Amen.

Patriarch Torkom Manoukian
Locum Tenens Catholicos

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Ց. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅԵՆ ՀԱՅՈՑ ԿԱՔՈՂԻԿՈՍԻ

Նորին Ա. Օծոթին Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, աւագանի անձնով նշան Արարիքեան, ծնան է Քեսապ, Ատրիա, 27 Օգոստոս, 1932-ին: Հայրենի գիւղի Ռումմասիրաց Միացեալ վարժարանին մէջ Տախսիկոսական ուսումը ստանալէ ետք, պատանի նշան, 1946-ի Հոկտեմբերին կ'ընդունի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Դպրեվանքէն Ճերա որպէս ուսանող: Ասորկաւագ կը ձեռնադրուի 29, Մայիս, 1949-ին: Դպրեվանքը կ'աւարտէ 1952-ի Յունիսին:

Կուսակրօն ջախնայ կը ձեռնադրուի 1952 Մեպտեմբեր 28-ին, վերակոչուելով Տ. Գարեգին Արեղայ, ի յիշատակ նորոգ վախճանալ Գարեգին Ա. Յովսէփեան Կաթողիկոսի: Վարդապետական աստիճան կը ստանայ 1955 Յունիս 5-ին, պատրաստելէ ետք իր վարդապետական աստիճանաւոր, "Հայոց Եկեղեցոյ Աստուածաբանութիւնը ըստ Հայ Ժարակամներուն" խորագրին տակ: Գարեգին Վարդապետ կը պաշտօնավարէ Դպրեվանքէն Ճերա որպէս ուսուցիչ եւ հսկիչ: 1956-ին կը կոչուի Դպրեվանքի Տեսչի պաշտօնին:

1957-59 Գարեգին Վարդապետ Անգլիոյ Օքսֆորտ համալսարանին մէջ կը ձեռնուի աստուածաբանական բարձրագոյն ուսմանը: Երկամենայ ուսումնական եւ ուսումնասիրական շրջանէ մը ետք կը վկայուի B. Litt. OXON աստիճանով, ներկայացնելէ ետք իր աստիճանաւոր, "Քաղկեդոնի Ժողովը եւ Հայ Եկեղեցին" խորագրին տակ, որ 1965-ին կը հրատարակուի Լոնտոնի S.P.C.K. հրատարակատան կողմէ, իսկ 1976-ին կը վերահրատարակուի Նիւ Եորքի մէջ:

Օքսֆորտէն վերադարձին, 1960-ի Յունուարին, Գարեգին Վարդապետ կը վերստանանէ իր պատասխանատուութիւնը Դպրեվանքէն Ճերա, վարելով Տեսուչի պաշտօնը: Ընդհին իր գործունեայ եւ նախանձախնդիր ձեռնուողական աշխատանքին, Կիլիկիոյ Միաբանութեան շարքը կը խտանայ կուսակրօն ճոր ջախնամներու ձեռնադրութեամբ:

Գարեգին Վարդապետ ճոյն շրջանին գործօն մասնակցութիւն բերած է կարգ մը միջ-եկեղեցական համագումարներու եւ ժողովներու՝ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ: Երջանկաշիշտակ Տ. Տ. Նորն Վեհափառի ընտրութենէն ետք, 5, Մայիս, 1969, ան կը կազմակերպէ Եորքնոյի Կաթողիկոսի պաշտօնական այցելութիւնները Աթէնք, Յունաստանի Արքեպիսկոպոսին, վաստիկամ՝ Գոռոս Բ. Գապին, Լիպոն՝ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան, Լոնտոն՝ Քէմբրիջըրիի Արքեպիսկոպոսին, Փրննի՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին եւ Վենետիկի ու Վիեննայ, Միխայրեան Միաբանութեան:

Հայոց Եկեղեցոյ կենտրին եւ գործունէութեան ժիրէն Ճերա միջ-եկեղեցական շարժումի նախաձեռնողներէն եւ զարգացողներէն մէկը եղաւ ան վերջին ջատաւոր տարիներու ընթացքին: 1955-էն ի վեր ան անդամ եղած է միջ-եկեղեցական կազմակերպութիւններու եւ կառուցներու եւ կանոնաւոր կերպով ներկայ գտնուած միջ-եկեղեցական համատնողներու: Գլխաւորաբար շնորհիւ իր ջանքերուն եւ Երջանկաշիշտակ Տ. Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսի իմաստուն տնօրինումներուն, 1962-ի Օգոստոսին Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը անդամ կը դառնայ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին: Ան ներկայ եղած է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ձեռնուելու համագումարներուն. 1961-ին, Նիւ Յելքի, Հոկտեմբեր, 1968-ին, Ռոստաւա, Յունի, 1975-ին, Նայրոպի, Քենիա (Ափրիկէ), եւ 1983-ին, Վենետիկը, Գամատա:

Որպէս դիտորդ, մասնակցած է նաեւ Վատիկանի Երկրորդ ժողովի երեք լաբորատորական փուտներուն, 1963-65, եւ Անգլիքան Եկեղեցւոյ Լամպէրի համատնողութիւն, 1968-ին: Ռոփաւայի մէջ ան անդամ կ'ընտրուի Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական եւ Գործադիր Տնննչախումբներուն, իսկ Նայրոպիի համագումարին կ'ընտրուի Խորհուրդի Փոխ-Անձնապետ (1976-1983): Ան կարեւոր դեր կատարած է նաեւ Ատիս Ապպայի մէջ Արեւելեան Ռոլոպախո Ուսումնակից ջոր Եկեղեցիներու Հոգեւոր Գետերու համագումարի կազմակերպման մասը:

1963-ի Յունիս 16-ին, առ ի գնահատութիւն իր ներդրմանը աստիճանաց, Տ. Տ. Նորն Ա. Կաթողիկոսի տնօրինութեամբ կը բարձրանայ Մայրապոյն Վարդապետութեան աստիճանին, իր օծակից եղբոր՝ Արտաւագ Վարդապետին հետ միասին: Եպիսկոպոս կը ձեռնադրուի 1964 Յունուար 19-ին, եւ Արքեպիսկոպոսի տնօրնող կը ստանայ 1978 Ապրիլ 29-ին: Խորապէս հաւատաւոր երկրասարդութեան կարեւոր դերին ազգի մը ղեկավարութեան մէջ, եւ անոր մասնակցութեան կարեւորութեան կրօնական եւ մշակութային կենտրին մէջ, 1968-ին կը հրատէ Հայաստանեայց Եկեղեցոյ Համալսարանական Ռումնողներու Միութիւնը (ՀԵՀՄՄ), որ անաւ առիթ ջան կերտում տարիներէ ի վեր կը շարունակէ իր գործունէութիւնը:

Աստուածաբանութեան, գրականութեան, պատմութեան ու մշակոյթի միջերկր շտաբ դասախօս եղան է Հ.Բ.Լ.Մ.ի Դարձի Յակոբեան Երկրորդական Վարժարանին, Պէլքրոթի Համազգայինի Նշան Փայանձեան Ճեմարանի, Beirut College for Women-ի (այժմ Beirut University College) ու Պէլքրոթի Ամերիկեան Համալսարանին մէջ (A.U.B.): Դասախօսութիւններու շարքեր տուան է այլազան երկիրներու մէջ, յատկապէս Թուսանիոյ մէջ, Քրաւէրովը Թուսանիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Պատրիարքին:

1971-ի Փետրուար 24-ին, Գարեգին Եպիսկոպոս կ'ընտրուի Առաջնորդ Իրանա-Հնդկաստանի Թեմին, Նոր Ջուղա, Իսֆահան (Պարսկաստան): Իրանա-Հնդկաստանի Առաջնորդութեան շրջանին կը ծաղկի Թեմի հոգևոր ու մշակութային կեանքը, որուն մէջ երիտասարդութիւնը կ'ունենայ գործո՞մ մասնակցութիւն: Կը հիմնուի Թանգարան, կը կազմակերպուի Մատենադարանը, կեանքի կը կոչուին երիտասարդական միութիւններ, կը հաստատուին հայագիտական դասընթացքներ:

1973-ի Յունիս 21-ին, Գարեգին Եպիսկոպոս Հայրապետեան Պատրիարկ կը նշանակուի Հիսուսային Ամերիկայի Թեմին (Նիւ Եորք), ու տարի մը ետք Առաջնորդ կ'ընտրուի: Իր իմաստուն ղեկավարութեամբ զարկ կու տայ Ամերիկայի ու Գանատայի ազգային-եկեղեցական, կրթական-մշակութային կեանքի զարգացման, դարձեալ շեշտելով երիտասարդ տարրին գործո՞մ մասնակցութիւնը այս մարզերէն ներս: Արեւելեան Թեմի իր առաջնորդութեան շրջանին կը ծագի Լիբանանի ներքին պատերազմը: 1976-1977-ին ան կարելո՞ր դէր կ'ունենայ Լիբանանահայութեան օժանդակութեան կենսական գործին համար, կատարելով հանգանակութիւններ ու նոյնիսկ անձամբ այելելով պատերազմի մէջ բռնուած Լիբանան ու տեղւոյն վրայ ուսումնասիրելով կարիքները:

1977-ի Մայիս 22-ին կ'ընտրուի Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ ու կը ծառայէ Աթոսակն Կաթողիկոս տիտղոսին սուրբ, Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի կենդանութեան շրջանին: Իսկ 1983-ին, Խորէն Ա. Կաթողիկոսի վախճանումէն ետք, Փետրուար 1983, որպէս գահակալը Մեծի Տանն Կիլիկիոյ կը դառնայ Հովուապետը այդ Աթոսին:

Իր գահակալութեան տասնութ տարիներու ընթացքին առաւել փայլք ստացաւ Կիլիկեան Աթոռը: Ան զարկ տուաւ ազգային-կրօնական, մշակութային ու շինարարական մարզերուն մէջ տարուած աշխատանքներուն: Ան հաստատեց Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը, ծրագրեալ ու Ռեսուրսական աշխատանքով վարելու քրիստոնէական առողջ դաստիարակութեան աշխատանքը:

Գարեգին Կաթողիկոսի յատուկ ուշադրութեան անարկայ դարձաւ Դպրեկանքը, զոր 1977-ին Անթիլիասէն փոխադրեց Պիքֆայա, նոր շէնքերով ընդարձակեց ու արդիականացուց զայն, նպաստելով աստուածաբանական կազմաւորման բարելաման ու յառաջդիմութեան:

Վեճափառի իմաստուն տնօրինումներուն շնորհիւ նոր փայլք ստացաւ Կաթողիկոսութեան ծառայութիւնը հայ մշակոյթի մարզէն ներս, որուն մէջ լայն տեղ ունեցաւ հրատարակչական աշխատանքը: Ասոր համար անհրաժեշտ էր տպարանը օժտել արդիական սարքաւորումներով, ինչ որ իրագործեցաւ շնորհիւ Վեճափառ Հայրապետի ջանքերուն, ու որուն պերճառայ վկայութիւնը կը հանդիսանայ Կաթողիկոսարանի տպարանի առատ արտադրութիւնը: Վերջին տասնութ տարիներուն աւելի ջան 350 հատորներ լոյս տեսան են տպարանէն:

Այժմ գրեթէ իր ամբողջ հասած է Թանգարան-Մատենադարանի շէնքին շինութիւնը, որ պիտի դառնայ, ինչպէս Վեճափառը կը սիրէ զայն կոչել, "լոյսի նոր օճախ" մը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգևոր կենդանին մէջ:

Միջ-եկեղեցական գործունէութիւնը յառաջ կը տարուի Վեճափառի շարունակական աւելցութիւններով, ու Կաթողիկոսութեան եկեղեցական թէ աշխարհական ներկայացուցիչներու գործո՞մ մասնակցութեամբ յատկապէս Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ու Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի գործունէութեան զանազան մարզերուն մէջ: Գարեգին Կաթողիկոս, որուն գահակալութեան առաջին շտաբ տասնհինգ տարիները կը զուգարկային Լիբանանեան պատերազմի դժուարին տարիներուն, բաժնեց Լիբանանահայութեան ստանապանքը, նիւթական թէ բարոյական միջոցներով զօրակից հանդիսացաւ անոր, ու թոյլ չտուաւ երբեք որ ան լուսալքուի մատուռի:

Վերջին քանի մը տարիներում ան ձեռնարկեց Ռուսաստանում անցելու փուլերում կիլիկեան Աթոսի թեմերում՝ Լիբանանի, Սուրիոյ, Պարսկաստանի, Կիպրոսի, Ամերիկայի Միացեալ Նահանգներու և Գամատայի մէջ։ Միջ-եկեղեցական ծիրին մէջ ան անցելու փուլերում տուա Տոմասմէ-Պողոս Բ. Պապին՝ Վատիկան, Անգլիկան Եկեղեցոյ պետ՝ Քեմբրիջի Արքեպիսկոպոս Տոքո. Ռապըրթ Բոննիին, Լոմոսի մէջ, Ջոնիցերիոյ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան, Դամիոյ և Գերմանիոյ Լուտերական Եկեղեցիներում, Աւստրալիոյ Եկեղեցիներու Խորհուրդին, գլխաւորեալ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին պատիրարութիւնը, Լատի եկեղեցոյ պետ՝ Լորին Սքրոթին Օնոտա Պատրիարքին, Եգիպտոս, ՄԱԵՆ-ի Գործադիր Ճամբարախմբի ժողովին առջիւ։

Աւարտելով իր շրջանը, որպէս ՄԱԵՆ-ի երեք մախազաններէն մէկը, ան ընտրուեցաւ Խորհուրդի Պատուոյ Նախագահը։

Գարեգին Կաթողիկոս Ա. Էջմիածին, Մայր Աթոս այցելած է թէ՛ Սովետական Միութեան իշխանութեան շրջանին և թէ՛ Հայաստանի անկախ պետութեան հռչակումէն ետք։ 1988 Դեկտեմբեր 7-ի երկրաշարժէն ետք ան յաճախ եղաւ Երջանկայիշատակ Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին, արտայայտելով իր եղբայրական սէրն ու զօրակցութիւնը։


Գարեգին Կաթողիկոս անդամ է Հայաստանի համարպետութեան կողմէ հաստատուած Հայաստան Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդին։

Գրական-աստուածաբանական մարզէն ներս անկախ իր ստորագրած հայերէն, անգլիերէն, ֆրանսերէն մեծ թիւով յօդուածներէն, որոնք լոյս տեսած են Կաթողիկոսարանի ամսագիր պաշտօնաթիթի «Հասկ»ի Հայագիտական «ՀԱՍԿ»-ի, և շատ մեծ թիւով հայ թէ՛ օտար թերթերու և հանդէսներու մէջ, ան ունի մեծ թիւով հասարակ, որոնց ցանկը կու տանք կցուած այս գրութեան։

Գարեգին Կաթողիկոս Ռեստմուտ է շարունակական զարգացման և յառաջդիմութեան, որում իրագործման համար ան զարկ կու տայ թէ՛ երիտասարդութեան ձեռնարկներում և թէ՛ այն քողոր գործունէութեանց, որոնք միշտ թարմ և կենդանի կը պահեն Աստուծոյ շունչին ներկայութիւնը հայ եկեղեցոյ և հայ ժողովուրդի ներկայ կեանքին մէջ՝ տալով անոնց իրաւաստուկ դիմագիծ աշխարհի եկեղեցիներու և ազգերու մեծ ընտանիքին մէջ։

1991-ին Գարեգին Կաթողիկոս Երջանկայիշատակ Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ Մ.՝ Էջմիածնի մէջ կատարուած Միոնոթիմէն մասնակցեցաւ և արտասաստեց իր սրտի խօսքը։ Իսկ 1994-ի Օգոստոս 28-ին գլխաւորեց Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաղման արարողութիւններում։

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMÉNIENS

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՕՍՔ

ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Սիրելի՛ հոգեւոր եղբայրներ
Եւ զաւակներ Հայ Եկեղեցւոյ,
Որդիք հայկազեանք
որ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի

Ահաւասիկ շուրջ երկու ամիսներ անցան այն օրէն ասդին, երբ Աստուծոյ կամքով ու հայ ժողովուրդի ընտրութեամբ կոչուեցանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի նուիրական եւ բարձրագոյն ու ծանրագոյն պարտադրութեան:

Մեր ընտրութեան եւ զահակաւութեան օրէն (4-9 Մայիս) ասդին զգացինք եւ տեսանք մեր նուիրապետական Աթոռներու՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր թեմերու Առաջնորդներուն, ազգային-եկեղեցական բոլոր իշխանութիւններուն, ծխական եկեղեցիներուն եւ եկեղեցական կազմակերպչութիւններուն սերն ու յարգանքը, աղօթքն ու մաղթանքը մեր նոր առաքելութեան բեղմնառատ պտղաբերման համար ի հաճոյս Աստուծոյ, եւ ի վայելումն հայ հաւատացեալ ժողովրդեան:

Այստեղ, մայր հայրենիքի՛ն Հայաստանի մէջ եւ Արցախի տարածքին անձամբ վկան եղանք մեր հայրենի պետութեան՝ Հայաստանի Հանրապետութեան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան բոլոր պատասխանատուներու եւ սպասաւորներու սիրալիւր վերաբերումին եւ անմիջական ու անվերապահ աջակցութեան բոլոր մակարդակներու վրայ անխտիր:

Մեր ժողովուրդի բարեսիրական, մշակութային, կրթական, ընկերային, ազգային-քաղաքական, երիտասարդական, հայրենակցական եւ այլ կարգի կազմակերպութիւններ ու միութիւններ, ընկերութիւններ, հաստատութիւններ, անհատ՝ ազգայիններ, բարերարներ, մամուլի ներկայացուցիչներ արտայայտեցին իրենց բարեմաղթութիւնները այցելութիւններով, հեռագիրներով, նամակներով, հեռաձայնային խօսակցութեամբ, յօդուածներով եւ նաեւ որոշ նուիրատուութիւններով վասն բարգաւաճման Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, վասն պայծառութեան Եկեղեցւոյս Հայաստանեայց եւ վսպմ ամրացման եւ զօրացման հայրենեաց մերոց:

Հայաստանէն եւ աշխարհի չորս ծագերէն՝ Ռուսաստանի Դաշնութեան Հանրապետութենէն, Վրաստանէն, Ուկրաինանէն, ԱՊՀ-ի աս հանդուստեութիւններէն ու

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUTS LES ARMÉNIENS

Իրանէն, Թուրքիայէն, Պալթեան երկիրներէն մինչեւ Արեւելեան եւ Արեւմտեան Եւրոպայի բոլոր երկիրները, Միջին Արեւելքէն մինչեւ Մայրագոյն Արեւելք, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներէն մինչեւ Ափրիկեան երկիրները հայ ժողովուրդի զաւակներ առանց խտրութեան իրենց գոհունակութիւնը, ուրախութիւնը, բարի ցանկութիւններն ու շնորհատրութիւնները յայտնելով՝ զգացուցին Մեզի մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ հայ ազգի ու հայրենիքի անքակտելի միութեան անսասանելի զօրութիւնը եւ գօտեպնդեցին Մեզ մեր առաքելութեան մէջ մանաւանդ մեր ժողովուրդի եւ հայրենիքի ու պետութեան այս ամենադժուարին կեանքի պայմաններուն ներքեւ:

Բնականօրէն կարելի չէ անձամբ ու առանձինն պատասխանել բոլոր շնորհատրական եւ բարեմաղթական նամակներուն եւ հեռագիրներուն: Այսու գրով եւ հայ մամուլի միջոցաւ կ'ուզենք յայտնել բոլորին Մեր սիրալիք շնորհակալութիւնները եւ հայրապետական բարձրագոյն աստիճանի գնահատանքը համակեղեցական եւ համազգային միասնութեան արտայայտման այս սքանչելի ոգիին եւ քաջալերական երեւոյթին համար:

Բոլոր արտայայտութեանց մէջ Մենք խորագոյն ուրախութեամբ ու անսահման հրճուանքով կը տեսնենք ու կը հաստատենք ձեր բոլորի սէրն ու կապուածութիւնը հանդէպ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան Հայ Ազգին ու Մայր Հայրենիքին հանդէպ:

Միածնաւէջ այս սրբավայրին մէջ կ'աղօթենք առ Բարձրեայն Աստուած, որ ձեր բոլորին անխտիր պարգեւէ Իր երկնածիր շնորհն ու օրհնութիւնը, զօրացնէ ձեզ բոլորդ, առաւել եւս ամրացնէ ձեր բոլորին մէջ սիրոյ, միութեան, եղբայրութեան, միասնականութեան ու զոհողութեան ոգին, որ գերագոյն հարստութիւնը կը կազմէ մեր ազգին ու Եկեղեցւոյ եւ միանգամայն գաղտնի ոյժը՝ մեր յաղթանակին: Թող Սուրբ Լուսաւորչի կանթեղին լոյսը սրբութիւն ճառագայթէ եւ երջանկութիւն ցանէ ձեր բոլորի կեանքներուն մէջ, ո՛րք ալ ըլլաք, ի՛նչ պայմաններու տակ ալ որ ապրեք:

*
* *

Սիրելիք,

Բոլորդ ալ կը գիտակցիք որ անկիւնադարձային նշանակութիւն եւ պատմակերտական կարեւորութիւն ունեցող օրերու մէջ է որ կոչուեցանք Հայրապետական այս ամենադժուարին պարտաւորութեան: Հայրենիքի անկախացման ու առ անկախութեան ամոհատմի եւ օրհատմի հոսանքներին լուսնի կը զօրութիւնը

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԽԸ
ԿԱՌՈՂՎՈՒԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMÉNIENS

բոլորս: Հայոց Եկեղեցին այս օրերուն որպէս հոգեւոր սնուցման մայրը այդ ազգին՝ պէ՛տքն ունի ներքնապէս բիրեղանալու, եւ ուժեղանալու, որպէսզի կարենայ արտաքնապէս ճառագայթել եւ Աւետարանի, քրիստոնէական հաւատքի եւ մեր սուրբ հայրերու ազգային առողջ աւանդութեանց շունչը տարածելու մեր ժողովրդի կեանքին մէջ այդ ժողովրդին բարոյական ուժականութիւնը լիցքաւորելու համար:

Խորհրդային բռնակալ իշխանութեան եօթնամասուն տարիները հոգեւոր ու բարոյական անբ գործեցին մեր ժողովրդի ներքին կառոյցին, նկարագրին ու կեանքին մէջ՝ Քրիստոնէական հաւատքի ճշմարտութիւններու եւ բարոյական արժէքներու ուսուցումը վերականգնումի ամենէն էական եւ ազդու եղանակն է: Ինչպէս Գարեգին Ա Յովսէփեան Կաթողիկոս ըսած է այնքան խոր եւ ճշմարիտ հայեցողութեամբ. «Ազգերու վերակենդանութեան ճանապարհը կրօնական վերագարթօնքի ճանապարհն է»:

— Հոգեւորական-եկեղեցական նոր սերունդի պատրաստութիւն արդի աշխարհի կեանքի տունեւերու շրջագծին մէջ դիտուած:

— Հին եւ վնասեալ եկեղեցիներու վերանորոգում եւ նոր ծխական եկեղեցիներու կառուցում քաղաքներու եւ գիւղերու մէջ:

— Կրօնական առողջ դաստիարակութեան կազմակերպում եւ տարածում Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդութեան ոգիին կենդանի պահպանումով:

— Ընկերային ծառայութեան, ժողովուրդի կարօտեալ, կարիքաւոր զանգուածներուն օգնելու գործին կազմակերպում, մանաւանդ Լենինականի աղէտէն հարուածեալ շրջանին եւ պատերազմէն վիրաւոր Արցախի շրջաններուն մէջ, գլխաւորաբար ոյժ տալով տնաշինական, գործարանային մարզին, ժողովուրդը մղելով սեփական ճիգի ու արդիւնաբեր գործի:

Ասոնք սոսկ ուրուագծային եւ մասնակի նշումներ են այն տարածուն եւ երկարաշունչ գործին, որուն կոչուած ենք Մեր սպասը բերելու որպէս նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Այս բոլոր պարտաւորութիւնները հայրենիքի վերաշինութեան եւ պետութեան ամրացման, Արցախի ապահովութեան հետ առնչուած այլ պարտաւորութիւններու հետ միասին, կրնան իրականանալ երբ գործենք որպէս մեկ եկեղեցիի, մէկ ազգի, մէկ հայրենիքի ոգիին, գաղափարին, կամքին ոյժովը, եւ զոհողութեան գերագոյն աստիճանովը:

Դէպի գործ:

Ահա այս տեսիլքով ու այս նշանաբանով Մենք կ'ողջունենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն եւ Մեր շնորհակալութիւնները հեղ մը եւս յայտնելով կը ցանկանք որ բոլորս լծուինք ներդաշնակ աշխատանքի, որպէսզի մեր եկեղեցին ու ազգը, հայրենիքն

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMÉNIENS

ու պետութիւնը ըլլան այն ինչ որ կը հաւատանք որ Աստուած կ'ուզէ եւ պատմութիւնը կը պահանջէ որ ըլլան:

Թող Աստուած հարցն մերոց միշտ ըլլայ ձեր կեանքին ու գործին առաջնորդն ու պսակողը:

Ողջ լերուք ի Տէր գօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւետ օրհնեալ ի Մենջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

26 Մայիս 1995

Ս. Էջմիածին

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՒՍ. ԷՉՄԻԱՍԵՆ



THE CATHOLICOSATE
OF ALL ARMENIANS
HOLY SEE OF ETCHMIADZIN

610

18 Յուլիս 1995

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ

Միրելի Ամենապատիւ Եղբայր,

Նկատի ունենալով որ Ազգային Եկեղեցական Ընդհանուր Ժողովի որոշումով Մեզի թողուեցաւ Մայր Աթոռոյ Գերագոյն Հոգևոր Խորհուրդի նոր կազմը առաջացնելու գործը,

Նկատի ունենալով որ յառաջիկայ Ազգային Եկեղեցական Ընդհանուր Ժողովը նախատեսուած է գումարել երկու տարիներ ետք,

Նկատի ունենալով որ իբրև նորընտիր Կաթողիկոս Մենք անձամբ և մօտէն տեղեակ չենք այն բոլոր հարցերուն և ծրագիրներուն, որոնք Մեր նախորդին՝ երջանկայիշատակ Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի շրջանէն կը մնան առկախ և կը սպասեն անմիջական տնօրինութիւններու,

Յետ խորհրդակցութեան, նախորդ Գերագոյն Հոգևոր Խորհուրդի ատենապետներ՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ Երուսաղէմի Պատրիարքին և Ամենապատիւ Տ. Գարեգին Կ. Պոլսոյ Պատրիարքին, յարմար դատեցինք և որոշեցինք.

1. Յառաջիկայ երկու տարուան շրջանին համար վերանշանակել նախորդ Գերագոյն Հոգևոր Խորհուրդի կազմը, Ատենապետութեամբ Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի և Ամենապատիւ Տ. Գարեգին Պատրիարք Գազանենեանի, և բաղկացեալ հետևեալ անդամներէն՝ Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան, Գերշ. Տ. Արսէն Արքեպիսկոպոս Բերբերեան, Գերշ. Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պօզապալեան, Գերշ. Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բունիաթեան, Գերշ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեան, Գերշ. Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան, Գերշ. Տ. Պարզև Եպիսկոպոս Մարտիրոսեան, Տիար Գրիգոր Խանջեան, Տիար Պիոն Յակոբեան, Տիար Յակոբ Փափագեան, Տիար Ռաֆայէլ Պապայեան:

2. Սոյն կազմին վրայ աւելցնել որպէս նոր անդամներ հետևեալ չորս հոգևորականները, ներքին թեմերէն և Մայր Աթոռոյ Միաբանութենէն, և մէկ աշխարհական անդամ յանձինս Գերշ. Տ. Գէորգ Եպիսկոպոս Արայտարեանի, Գերշ. Տ.

Տիրան Արքեպիսկոպոս Կիրեղեանի, Գերշ. Տ. Ասողիկ Եպիսկոպոս Արիստակէսեանի, Հոգշ. Տ. Արրահամ Վարդապետ Մկրտչեանի և Պրոֆ. Վլատիմիր Բարխուտարեանի:

3. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունէութեան ընդհանրական բնոյթ կրող կարևոր հարցերով և այլազան երեսներով առաւել լայնօրէն զբաղելու, և յառաջիկային պատրաստուելիք Սահմանադրութեան առնչուած հարցերու շուրջ աւելի լայն խորհրդակցութեան կարելիութիւններ ստեղծելու առաջադրութեամբ Գերագոյն Հոգևոր Խորհուրդի լիազօր անդամ նշանակել արտասահմանեան չորս երկրամասերէ հետևեալ քեմակալ Առաջնորդները՝ Գերշ. Տ. Զաւէն Արքեպիսկոպոս Չինչինեան (Միջին Արևելք), Գերշ. Տ. Գիւտ Արքեպիսկոպոս Նազգաշեան (Եւրոպա), Գերշ. Տ. Գիսակ Եպիսկոպոս Մուրատեան (Հարաւային Ամերիկա), Գերշ. Տ. Աղան Արքեպիսկոպոս Պալիօզեան (Մայրագոյն Արևելք):


4. Սոյն ընդլայնուած կազմի չորս անդամները ժողովական նիստի հրաւիրել նուազագոյն տարին երկու անգամ:

5. Ուստի, այս տուեալներու հիման վրայ Ձեզ ժողովի կը հրաւիրենք երկուշաբթի, 31 Յուլիսին 1995 թուի, ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին գումարելու համար յաջորդական նիստեր մինչև Օգոստոսի 2-ը:

6. Գերագոյն Հոգևոր Խորհրդի ընդլայնուած կազմի առաջին նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Սեպտեմբեր 20-24-ի միջոցին: Ուստի, այժմէն նկատի ունեցէ՛ք սոյն պարագան և անպայման ներկայ գտնուեցէ՛ք և Ձեր ամբողջական մասնակցութիւնը բերէ՛ք, նկատի ունենալով որ կարևոր հարցեր անմիջական կարիքն ունին քննարկման և ծրագիրներ կը սպասեն գործնական մշակման ու անյապաղ գործադրման: Եւ Մենք կարիքն ունինք Ձեր բոլորի խորհրդակցութեան և սերտ աջակցութեան:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի շնորհէ Իր երկնային իմաստութիւնը, որպէսզի նորանոր սպասաւորութիւններով Ձեր լիազոյն և արդիւնաւորագոյն ծառայութիւնն ու բարիքը ընծայէ՛ք Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին: Թող Ամենաբարին Աստուած ըլլայ մեր բոլորի քայլերուն առաջնորդը մեր կեանքերուն և պարտաւորութիւններուն մէջ:

Մնամք Եղբայրական սիրով
Աղօթակից՝



ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱՇԻՆ



THE CATHOLICOSATE
OF ALL ARMENIANS
HOLY SEE OF ETCHMIADZIN

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԽՕՍՔՆ ՈՒ ԱՂՕԹՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՆՈՐԸՆՏԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՆՒՍԻՆ

(27 ՅՈՒԼԻՍ, 1995)

Վսեմաշուք Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Յարգարժան Նախագահ Ազգային Ժողովի Բացման Նիստի,
Մեծարգոյ անդամներ Ազգային Ժողովի,

Իր տեսակին մէջ իմ այսօրուան ուրախութիւնը եզակի, առանձնայատուկ իմաստ է և նկարագիր ունի: Պատմական նշանակութիւն ունի բացման այս նիստը նորընտիր հայ Ազգային Ժողովին, որովհետև մեր ողջ Հանրապետութիւնը ժողովրդային բուհարկութեամբ այժմ բնդունել է նոր սահմանադրութիւն օրէնսդրական, գործադիր, դատական իշխանութիւններու յստակ բանաձեւումներով և նախագահի, կառավարութեան և այլ կառոյցներու իրաւասութիւններու և պարտաւորութիւններու ճշդունով:

Առաջին հերթին Մենք կը շնորհաւորենք նորընտիր այս կազմը Ազգային Ժողովին և կ'օրհնենք մեր Հանրապետութեան նոր սահմանադրութիւնը այն քաղցր յոյսով, որ ժողովն պիտի առաջնորդուի Սահմանադրութեան սկզբունքներով և զինք ընտրող ժողովրդի գերագոյն և ընդհանրական շահերու հրամայականով:

Երկրորդ, սրտի պարտք կը զգանք մեր շնորհակալութեան խօսքը ուղղելու նախորդ կազմին՝ Գերագոյն խորհուրդ անունին տակ ճանչցուած և գործած, զանաատելով այն իրողութիւնը, որ ան իր ընտրութեան օրէն մինչև իր առաքելութեան կանոնական աւարտը գործեց ամբողջական կազմով, միանուագ

հետևողականութեամբ, հակառակ բոլոր տեսակի դժուարին և Լրբեմն տազնապային կացութիւններու: Պետութեան տոկոսութեան գլխաւոր կողմններէն մէկը եղաւ ան:

*

* *

Սիրելիք,

Որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպէս հոգեւոր հայր ամենեցուն՝ Մեզի համար գերազանց հոգեկան գոհունակութեան առիթ է կանգնիլ ձեր բոլորի առաջ և յանուն մեր Ս. Եկեղեցիին, յանուն մեր Ազգային՝ Եկեղեցիին և յանուն անոր հոգեւոր կեդրոնին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայրախնամ սիրով ողջունել ձեզ ձեր առաքելութեան այս սկզբնական հանգրուանին: Եւ առաջին հերթին Մեր ձայնը կը բարձրացնենք առ Ամենակայն Աստուած եւ կը հայցենք Իր օրհնութիւնը նորընտիր Ազգային Ժողովին և անոր բոլոր անդամներուն՝ յարգարժան պատգամատրներուդ վրայ:-

« Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր, պահեա՛, պահպանեա՛ եւ օրհնեա՛ գերկիրս մեր զՀայաստան աշխարհն, շինեալ քրտամբք զաւակացն ազգիս հայոց, նուիրագործեալ արեամբ հերոսից և նահատակաց, կառուցեալ եւ ստեղծագործեալ շնորհօք, արհեստիք եւ արուեստիք տաղանդաշատ ջանիք հոգւոյ եւ մտաց սպանստորաց որդւոցն հայկազնեան, պահեա՛ զնա ի խաղաղութեան, յապահովութեան եւ ի բարգաւաճութեան:

Օրհնեա՛ Տէր եւ զՆախագահն Հանրապետութեանս մերոյ եւ զամենայն ժողովրդընտիր պատգամատրս՝ զանդամս Ազգային Ժողովոյս: Հեղ ի վերայ նոցա զբազմապատիկ շնորհս քո իմաստութեան: Զօրացո զնոսա պարգևօք եւ առաքինութեամբք արիութեան, նուիրաբերման եւ անձնդիր զոհողութեան: Ողջ եւ առողջ պահեա ի նոսա զսէր եւ գերկիւղ Քո սրբարար եւ զնախանձ եւ զջանս աշխարհաշինութեան հայրենեաց մերոց դարակեաց: Ամբողջ պահեա ի նոսա զհոգս եւ զկամս եւ զտեսիլ շինութեան եւ բարեկարգութեան ժողովրդեանս մերոյ վասն

պայծառութեան վերանորոգեալ անկախութեան Հանրապետութեանս,
վասն յառաջդիմութեան վերածնեալ ազգիս եւ պետութեանս,
ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիդ քո ի խաղաղութեան.
փրկեա, Տէր, յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն, արժանատրեա
գոհութեամբ փառատրել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ
միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն»:

(Վեհափառը այստեղ լուրեան մի բոպէ յայտարարեց
Հայրենիքի համար իրենց կեանքը, գործը եւ արիւնը ընծայած
հանգուցեալ վաստակաւորների եւ հերոսների յիշատակին,
առանձնապէս յիշելով իր երջանկայիշատակ նախորդին՝
Վապգէս Ա. Կաթողիկոսին որ եղել էր առաջին Կաթողիկոսը որ
անկախ պետութեան Գերագոյն Խորհուրդին իր հայրապե-
տական խօսքն է ուղղել: Ապա շարունակեց իր պատգամը)-

*

* *

Սիրելի պրն. Նախագահ եւ անդամներ Ազգային Ժողովոյս,

Մեր հայրենիքի եւ ողջ հայութեան, ներսեալ հայրենիքի սիրով
տոգորուած եւ արտասահմանեան պայմաններու տակ ապրող հայութեան,
աչքերը ձեզի՝ են ուղղուած: Մենք մեր կեանքի մէջ առաջին անգամ ըլլալով է,
որ կը կատարենք այս աղօթքը եւ կ'արտասանենք այս խօսքը մեր մայր
հայրենիքի Ազգային Ժողովին համար: Ո՛չ յաւակնութիւնը, ո՛չ այ
կարողութիւնը եւ ո՛չ ալ փափաքը ունինք խրատ տալու ձեզի: Որպէս հոգւոր
հայր եւ որպէս առաջին սպասաւոր Հայց. Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրտի
պարտք կը զգանք ձեզի հետ կիսելու Մեր նախանձախնդրութիւնը եւ
միանգամայն սպասումը, որ ձեր պաշտօնավարութեան ողջ շրջանին երբէք
մտահան չընէք այն զգացումն ու մտածումը, որ Աստուծոյ Աչքն ու Աչը ի
վերուստ՝ կը հսկեն ձեր վրայ, Արագածի կատարին անպարան կախուած
Լուսաւորչի կանթեղէն եւ Միածնաէջ Մայր Տաճարի լուսաճառագայթ եւ
երկնահամբոյր գմբեթէն:

Մեր Տիրոջ եւ երկնաւոր վարդապետին ամենաճշմարիտ խօսքն է. «Տուր զկայսերն՝ կայսեր, եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ»: Կայսեր բաժինը, աշխարհի ու երկրաւորի բաժինը անջատուած չէ Աստուծոյ բաժինէն, եւ ոչ ալ հակադրուած անոր: Կայսեր տրուածը կ'երթայ Աստուծոյ, երբ տրուածը արդարութիւնը ունի որպէս մղիչ ոյժ եւ որպէս նպատակակէտ: Եւ Աստուծոյ բաժինը օտար եւ հակադիր չէ կայսեր տրուածին, որովհետեւ Աստուած է՝ մարդուն, ազգին եւ հայրենիքին բարիքին համար միայն, որպէս «արարիչ երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից», եւ «խնամող մարդկան»:

Արդար է, որ մեր Հանրապետութիւնը ճանչցած է եւ կը ճանչնայ խղճի եւ կրօնի ազատութիւնը իր բոլոր քաղաքացիներուն համար: Այդ ազատութիւնը եւ կը նկատեմ որպէս աստուածային կամքին արտայայտութիւն: Նոյնքան արդար է, որ մեր Հանրապետութիւնը որպէս հայ ժողովուրդի պետութիւն ճանչցած է եւ կը ճանչնայ Հայց. Առաքելական Եկեղեցին որպէս ազգային Եկեղեցին, որովհետեւ այդ Եկեղեցին անքակտելիօրէն ընդելուզուած է, անբաժանելիօրէն շաղախուած է հայութեան դարաւոր կեանքի հիստուածօրին մէջ:

Մեր սուրբ Եկեղեցին միշտ զօրավիզ է կանգնած հայոց պետութեան, որովհետեւ անոր մէջ ճանչցած է ժողովրդի ինքնիշխան կամքին բնական արտայայտութիւնը, մանաւանդ ներկայ ժամանակներու ժողովրդավարական սկզբունքներու եւ կարգերու պայմաններուն տակ:

Ահա թէ ինչո՞ւ շերմօրէն եւ Հայրապետական հոգածութեան զգացումներով երբ կը շնորհաւորենք ձեզ որպէս օրէնսդիր վերին իշխանութիւնը մեր ժողովրդին, կը մաղթենք, որ մնաք եւ տեսէք այն բարձրութեանը վրայ, որով համայնատեսական, ամբողջատեսական պարագրումով եւ հայրենասիրական ու ժողովրդամուէր ոգիով, արդարամիտ եւ խաղաղասիրական նախանձախնդրութեամբ, հայրենապաշտպան զոհողութեան գիտակցութեամբ ու զերանձնական վերաբերումով ձեր ծառայութիւնները պիտի մատուցէք մեր պաշտելի ժողովրդին եւ հայրենիքին: Ըլլանք ու մնանք մեզ ընտրած ժողովուրդին հետ ի մշտական հաղորդութեան, զգայուն եւ

ընդհանուր առմամբ՝ անոր կարիքներուն, արդար իրաւունքներուն եւ ազգային նուիրական դատին, անոր յառաջդիմական ձգտումներուն եւ գերագոյն շահերուն: Երբէք չմոռնանք, որ մեր բոլորի դատաւորը Աստուած է եւ դատարանը՝ պատմութիւնը, ժողովուրդը եւ հայրենիքը ըլլալով մեր աչքի բիւր, մեր սրտին տրոփը, մեր սիրտին սլաքը եւ մեր հպարտութեան բարձրակէտը:

Քաջ գիտենք, որ ձեր ճանապարհը չէ մարմարապատ կամ ծաղկազարդ: Ոչ ալ հեզասահ եւ դիրազնաց: Թող ձեր ծառայական ճանապարհորդութեան ոճը ըլլայ այնպէս, որ փուշն ու տատասկը բթանան ու չորանան, եւ ծաղիկն ու պտուղը դառնան բուրումնաւէտ եւ քեղմնառատ ի վայելումն մեր տառապահար, բայց պատուախնդիր ժողովուրդին եւ հերոսածին ու հերոսաշէն հայրենիքին եւ ի փառս Աստուծոյ եւ ի քարին համայն մարդկութեան:



ԿԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀՐԵԱՆԵՐՈՒ ԵՒ ՅՈՅՆԵՐՈՒ ԸՆԲՈՒՆՈՒՄԸ ԽԱԶԻ ՄԱՍԻՆ

Ա. դարուն կիսուն, խաչը մեծագոյն խոչընդոտներէն մէկն էր քրիստոնէական հաւատքի ընդունման: Պօղոս Առաքեալ Կորնթացիներուն ուղղած իր առաջին թուղթին մէջ կը նկարագրէ Հրեաներու եւ Յոյներու ժխտական կեցուածքը խաչին նկատմամբ: Հրեաներ նշաններ եւ հրաշքներ կը պահանջէին Քրիստոսի աստուածային առաքելութեան հաւատարմ համար: Բայց նշանը, գոր անոնք ստացան, խաչի նշանն է: Անոնց համար խաչը համագոր էր քանադրանքի:

Միւս կողմէ, Յոյներ խաչը կը համարէին որպէս յիմարութիւն: Նաչի մասին Յոյներու ըմբռնումը կազմուած էր իրենց փիլիսոփայութեան եւ գիտութեան տեսակետներու հիման վրայ: Մինչդեռ Պօղոս Առաքեալ կը շշտէր խաչին նշարիտ պատգամը հաստատելով որ ան կը ներկայացնէ Աստուծոյ ուժն ու իմաստութիւնը: Զարմանալի է որ նախապէս մահապատիժի տգեղ գործիք մը հանդիսացող խաչը հետագային վերածուեցաւ ապրելակերպի մը նուիրական խորհրդանշանին, որ չէր կրնար զանց առնուիլ քրիստոնէական ուսուցումներէն՝ առանց քայքայելու գանձնք: Յիսուս ուժեղօրէն պատուիրեց իր հետեւորդներուն վերցնելու իրենց խաչը: Նաչ վերցնել կը նշանակէ ուրանալ անձը, դարձնել միւս երեսը, պատրաստակամ ըլլալ զոհողութեան եւ սիրելի թշնամիին: Անոնք որոնք կը խուսափին խաչ վերցնելէ, իրենց կապերը խզած կ'ըլլան Քրիստոսի հետ: Եթէ կ'ուզենք Քրիստոսի հետեւիլ, խաչ վերցնելը պայման է:

Հրեաներ խաչը կը համարէին

խոչընդոտ մը: Անոնք դարերով ապրեցան օտար տիրապետութիւններու՝ Ասորիներու, Բաբելոնացիներու, Պարսիկներու եւ Յոյներու ծանր լուծին տակ: Անոնք մեծ յոյս կը սնուցանէին ողջունելու գալուստը Մեսիային, ազատարարին կամ հզօր թագաւորի մը՝ որուն հսկայ բանակը ծունկի պիտի բերէր թշնամիին եւ սկիզբը պիտի դներ յաղթութեան ժամանակաշրջանի մը Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին համար: Բայց Հրեաներու յոյսերը ի դերեւելու համար Քրիստոսի գալուստով, որովհետեւ անոնք տեսան անոր մէջ ստաղծագործ մը, մարդ մը՝ որուն բանակը կը հաշուէր տասներկու աշակերտներ, եւ որուն յաղթանակը մահապատիժի մը ձեւը առաւ այն նոյն թշնամիին կողմէ՝ որուն նուաճելու եկած էր ան:

Զարմանալի չէ որ Հրեաներ խաչը կը համարէին խոչընդոտ մը եւ տարօրինակ պէտք չէ թուի թէ այսօր մեզմէ ոմանք կը բաժնեն անոնց դժուարութիւնը: Ո՞վ դիւրին կը գտնէ սիրելի իր թշնամիները, բարիք ընել անոնց՝ որոնք կ'ատեն զինք եւ աղօթի անոնց համար՝ որոնք կը շահագործեն զինք անգթօրէն: Ո՞վ յօժարութիւն ցոյց կու տայ հրաժարելու իր հպարտութենէն եւ ազնուութեամբ վարուելու երբ ան սովորութեամբ վերածած է խորթ աչքով նայիլ ուրիշներու բարօրութեան՝ որպէս զի փոխանակ նոք ինքնաշարժ մը գնելու՝ փոխարժէքը դրկենք արտասահմանի գաղթականներու ֆունտին եւ կամ մենք մեզ գրկենք համելի ուղեւորութենէ մը եւ փոխարէն անելի մեծ նուիրատուութիւն մը կատարենք թեթեւցնելու համար եկեղեցւոյ նիւթական ծանր բեռը: Ո՞վ դիւրին կը

գտնել գոհողութիւններ ընել եւ իր ժամանակը տրամադրել ուրիշներու եւ գնահատանքի տեղ՝ միամիտ պիտակին արժանանալ աշխարհի կողմէ:

Միւս կողմէ, Յոյներ կը կարծէին թէ խաչը յիմարութիւն է: Անոնք ուսած էին քանակութեան մէջ եւ հպարտ կը զգային իրենց իմաստութեամբ: Յոյներ իրենց վաստակները դրած էին իմացական ուժի վրայ՝ լուծելու մարդ էակի խնդիրները եւ ապահովելու անոր փրկութիւնը: Անոնք հասցուցին հռչակատր փիլիսոփաներ՝ ինչպէս Քաղէս, Հերակլիտես, Զէնօ, Պղատոն եւ Արիստոտէլ, որոնք մեծ յարգանք կը վայելէին: Բայց երբ Յիսուս եկաւ, Յոյներ անոր մէջ տեսան արհամարհուած Հրեայ մը, Քափառական Բարոզիչ մը եւ կրօնական մոլիտանգ մը: Յոյներ տարուած էին իրենց կեղծ աստուածներէն՝ որոնք աղբիւրը կազմեցին ամէն տեսակի նւթական հանոյքներու: Անոնց կրօնքը արգիւնց Քափանցելու հոգեւոր կեանքի նշմարտութեամբ:

Զարմանալի չէ որ Յոյներ խաչը կը համարէին որպէս յիմարութիւն, եւ տարօրինակ չի թուիր իմանալ թէ այսօր նոյն կարծիքը կը տիրէ մեզմէ ոմանց մօտ: Երբ նկատի առնենք անհաւատներու կիրարկած գարտուղի մեթոտները մոլորեցնելու ֆրիստոնեսները՝ միթէ ամբողջովին անտրամաբանակա՞ն է կասկածիլ որ ինքուրացումի սէրը յիմար գէնք մը պիտի ըլլար դիմագրաւելու գանձք: Երբ ամէն միջոցի կը դիմենք օգտակար հանդիսանալու ուրիշ անձի մը՝ ի հեռուկս մեր հանգիստին ու ժամանակին եւ փոխարէնը ան ապերախտ գտնուելով ծիծաղի առարկայ կ'ընէ մեր վեհանձնութիւնը, արդեօք հասկացողութենէ վե՞ր է այն եզրակացութեան յանգիլ որ մենք ուրիշ բան չենք բայց յիմարներ: Երկու հազար տարիներէ ի վեր բազմաթիւ մարդիկ կարծեցին թէ խաչը յիմարութիւն է: Անոնք

տակաւին կը պնդեն իրենց տեսակէտին վրայ, որովհետեւ Յիսուսի հաստատած խաչին կեդրոնականութիւնը ֆրիստոնէական յանձնառութեան մէջ, ամբողջ Աւետարանի ամէնէն դժուարին ու անբարձալի խօսքերէն մէկն է:

Անձը ուրեմալ, ազնիւ ու բարեսիրական նպատակներու օգնութիւն ընծայել, միւս երեսը դարձնել, համերաշխութեան հետամուտ ըլլալ, գոհողութիւն յանձն առնել, այս բոլորը կը ներկայացնեն Աստուծոյ ուժն ու իմաստութիւնը, որովհետեւ ուրիշ միջոց չկայ մարդը ազատելու իր տգիտութենէն, յիմարութենէն եւ մեղքերէն, բացի խաչէն: Մարդը ձեռք ձգեց աշխարհի տիրապետութիւնը վայրի կենդանիներէն՝ որոնք ժամանակ մը անոր կառավարիչներէն էին: Մարդը կռուեցաւ անեղ գազաններու դէմ նուաճեց գանձք: Այժմ կը մնայ իր անձին նուաճումը, որ պիտի իրագործուի անձնուրացութեամբ: Եթէ արդարութիւնը կարենար գալ օրէնքի ճամբով, Քրիստոս երբեք պէտք չուներ մեռնելու. բայց ան չի կատարուիր օրէնքի միջոցաւ՝ այլ միայն խաչով: Ոչինչ այնքան ազդու պիտի ըլլայ՝ որքան գոհողութիւնը. ոչինչ պիտի յարթանակէ բայց խաչը:

ՍՈՒՐԷՆ ՎՐԻ. ԶԻՆԶԻՆՆԱՆ

ՍՏԵՐՋ ԿԵԱՆՔԻՐ

«Մի՛ ես ո՛ք յարիտեան ի քե՛ն պտուղ կերիցէ:»

(Մրկ. ԺԱ. 14)

Մարկոս Աւետարանիչ հետաքրքրական դէպք մը կը պատմէ մեր Տիրոջ կեանքին վերջին օրերէն: Բեթանիոյ մէջ Ղազարոսին յարութիւն տալէ եւ ժողովուրդին մէջ մեծ արթնութիւն մը առաջ բերելէ ետք, իր խումբով կ'ուղղուի դէպի Երուսաղէմ: Կ'անօթեմայ եւ հեռուէն տերեւալից թօզնի մը տեսնելով կը մօտեմայ անոր թուզ քաղցիւ մպատակաւ, բայց չի գտներ, որովհետեւ թուզի ժամանակ չէր: Սակայն կ'անիծէ զայն ըսելով. «Այսուհետեւ ոչ ոք քեզմէ պտուղ ուտէ յարիտեանս» (Մրկ. ԺԱ. 14):

Երբ պտուղի ժամանակ չէ, ի՞նչպէս կարելի է պտուղ ակնկալել: Բայց միւս կողմէ՛ նկատի առնելով որ Յիսուս բնութեան տէրն էր, հետեւաբար գիտէր թէ այդ թօզնի մ պտուղ պիտի չարտադրէր: Անպտուղ ծառ մըն էր եւ արժանի՝ անէծփի:

Թօզնի մ կը խորհրդանշէր հրեայ ժողովուրդը: Այս ժողովուրդը լեցուն էր արտաքին ձեւակերպութիւններով եւ աւանդութիւններով, որոնց վրայ կը գուրգուրային ու անոնցմով իրենց ազգը պահպանել կը ջանային, միշտ այնպէս ինչպէս թօզնի մ պնտուած էր տերեւներով: Ըստ Յիսուս Գրիստոսի մատնանշումներուն՝ հրեայ ժողովուրդին կը պակսէր առաքինութեան եւ սրբութեան պտուղներ: Ինչպէս թօզնիին՝ թուզ:

Հրեական օրէնքին եւ աւանդութիւններուն համեմատ, ամլութիւնը դատապարտելի եւ նախատելի էր: Այդ իսկ պատճառաւ կարծես Յիսուս ալ անիծեց այս ծառը: Յիսուս թօզնի մ անիծեց անոր անպտուղ, այսինքն՝ «ամուլ» վիճակին համար: Արտադրելու կարողութիւն չունեցողը, օգտակար չըլլալէ գատ,

պարզապէս անպէտ է: Իսկ ստերջը ամուլէն կը տարբերի: Ստերջը ժամանակաւոր ամլութիւն է: Ստերջ անհաստ մը կարելի է յուսալ: Պէտք է արթնցնել զայն, գիտակցութեան բերել եւ ուղղութիւն տալ անոր:

Կան մարդիկ որոնք ստերջ են: Ունին խելք եւ միւթական վիճակ, բայց իրենք զիրենք բանտարկած են ստերջութեան շղթայով: Պէտք է փակուի այդ շղթան եւ բացուի բանտին դուռը որպէս զի ենթական լոյս աշխարհ գայ, տեսնէ կեանքի իրականութիւնը, դիտէ զայն Աւետարանի լոյսով եւ սորվի թէ քրիստոնէական փառաբանութիւնը կը սկսի ստերջութիւնը լուծելով եւ պտղաբեր դառնալով: Այլապէս կ'ենթարկուի այն անէծփին, որուն ենթարկուեցաւ թօզնիին:

Ս. Օգոստինոս կ'ըսէ թէ՛ «Ի՞նչպէս մեր Տէրը իր աստուածային բնութեամբ գիտնալով հանդերձ թէ այդ ծառին վրայ պտուղ չկար, պտուղ փնտռելու գնաց եւ աշակերտներուն այն տպաւորութիւնը թողուց թէ կը յուսար պտուղ գտնել»:

Ամէն անհաստ կ'ակնկալուի որ պտուղ ունենայ իրենց շնորհուած կարողութեան տեսակին համեմատ:

Թօզնիին սաղարթը անոր տեսքի երեւոյթն ու գեղեցկութիւնն է: Կան ալ մարդիկ, որոնք պնտուելով՝ արտաքինով գեղեցիկ կ'իյնան, սակայն հոգիներն դատարկ է անպտուղ ըլլալով:

Յիսուս Գրիստոսի Աւետարանը լոյս մըն է: Այդ լոյսին ներքեւ երբ դիտենք կը նշմարենք որ հոգիներն պտուղը համակ բարութիւն, արդարութիւն եւ նշմարտութիւն է: Այս երեք առաքինութիւններով զարդարուած մարդ մը չի

կրմար ամուլ եւ անպտուղ մնալ: Կը հալեցնէ ու կ'ամէացնէ իր ստերջութիւնը եւ կը պողաւորուի մարդկային ընկերութեան օգտակար հանդիսանալու համար:

Մարդկային ֆաղափարքութիւնը իրաբանչիւր անձին պողաքերութեան կախում ունի: Յառաջդիտութիւնը կախում ունի պողումով գարգարութիւն փոխան սաղարթի:

Որքան կարողութիւններ քաճուած են ինքու մեքքի եւ ամլութեան դատապարտուած:

Կրանով գարմանալ, թէ Յիսուս ինչու անիծեց թգննիս եւ կ'անիծէ բոլոր ամուլ հոգիները: Բայց պէտք է անդրադառնանք, թէ ի՞նչն է Դատաւորը: Դատարանին մէջ դատաւորին ձայնը վնասկան է:

Առարկութիւն չկայ անոր դէմ: Մեր կրօնքին մէջ ալ վնասկան է: Առարկութիւն չկայ անոր դէմ: Մեր կրօնքին մէջ ալ վնասկան ձայնը Յիսուս Քրիստոսինն է:

Հոգեկան, իմացական, բարոյական եւ ծառայական ամլութիւնը կը դատապարտեն ենթական: «Մի՛ վախճա՛ք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն, բայց չեն կրմար հոգին սպաննել: Այլ վախճե՛ք անկէ՛ որ կրմայ հոգին ու մարմինը գեհեցնի մէջ կորսնցնել» (Մտք. Ժ. 28):

Կան շատ մարդիկ, որոնք լոկ իրենց համար կ'ապրին: Չեն ուզեր գանգուածին մէջ մտնել, եւ իրենց բաժինը բերել ազգային, կրօնական, մշակութային կամ բարեսիրական մարգերուն մէջ: Կը պահեն իրենց տոլարները եւ կարողութիւնները ծառայելու համար որեւէ նպատակի: Անունով հայ կը մնան լոկ, ճիշդ անպտուղ թգննիին մնան, որ պարզապէս ծառ մըն է:

Անէծքի ենթարկուի ահաւոր բան է: «Ի՞նչ կ'արժէ ամբողջ աշխարհը շահիլ, բայց հոգին կորսնցնել» կ'ըսէ Տէրը:

Կեանք մը երբ կորսուի նպատակի մը հասնելու, Աստուծոյ եւ մարդկութեան ծառայելու համար՝ տարբեր է: Այդ պարագային կեանք մը չէ որ կը կորսուի:

այլ կեանքը իր նպատակին կը ծառայէ եւ անմահութեան տարազը կը հագնի:

Եթէ քննենք մեր համայնային կեանքը, կը տեսնենք որ հազարաւորներ կան որոնք ստերջութեան քանապարհը բռնած կ'ընթանան դէպի անորոշութիւն: Հրապարակներու վրայ նշմարողները միշտ նոյն մարդիկն են, որոնք ամէն տեղ կը հասնին եւ ամէն տեղ կը գոհուին:

Ի՞նչ լաւ կ'ըլլար եթէ հազարաւոր անտարբերներ միանային գործի դաշտին վրայ գտնուողներուն եւ ամէն մէկը իր կարողութեան եւ նախընտրութեան ասպարէզէն ներս մտնելով լծուէր ազգաշէն գործին, ազգին բազմահազար կարիքներէն մին կամ միւսը գոհացնելով:

Մեկուսացեալ կեանքը ստերջ կեանքն է: Յիսուս երբ քառասուն օր մեկուսացաւ անապատ վայր մը, անմիջապէս սատանը մօտեցաւ եւ զինք փորձելու աշխատանքին ձեռնարկեց: Սատանին գորութեան դէմ պայքարիլ շատ անգամ մեր անհատական ոյժն վեր է. պէտք ունիք միութեան գորութեան: Միութեան գորութիւնը համագործակցութեան մէջ կը կայանայ: Այդ գորութեանն օգտուելու համար նախ պիտի տաս քեզմէ, մաս կազմելու համար գանգուածին: Ասոր համար անհրաժեշտ է ստերջութեան սահմանէն դուրս ելլել հոգիով, միտքով եւ գործով:

Մեր ազգայնականման նուիրական գործը կը պահանջէ ամէն հայու դրական օժանդակութիւնը մեր կեղեցիկները կանգուն, մեր լեզուն վառ, մեր զգացումները արթուն, մեր մամուլը կենդանի եւ մեր ոգին եռանդուն պահելու համար:

Այլապէս հոգեւորապէս կայ Քրիստոսի անէծքը եւ բարոյապէս՝ ազգին անէծքը:

Ամէն հայ պարտաւոր է գիտակից մնալ իր արեան զգացումներուն, եւ անոր շրջագայութեան արագութեան համաձայն պողաքեր դառնալ, իրաւ հայ-Քրիստոնեայ կոչուելու համար:

ՏԻՐԱՄԱՅՐՆ ՈՒ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Քրիստոսի Եկեղեցին շատ կանուխէն Ս. Աստուածածնի նկատմամբ ունեցած է երկնազած գերյարգանք (hyperdulio), պաշտելութեան եւ յարգանքի միջառանձան աստիճան մը: Ս. Կոյսը որպէս միջոց փրկագործութեան, իրաւօրէն ընդունուած է իբրեւ Քրիստոսի փրկչական տնօրինութիւններուն անբաժան մասնակիցը: Եփեսոսի տիեզերական ժողովին, 431 թուին, 200 հայրապետներու ներկայութեան, երբ՝ նեստորի մարգարանական ծայրայեղութիւններուն դէմ շրջալսագրծուած պայթարով կարելի եղաւ վերահաստատել «մի Քրիստոս», «մարմնացեալ բան», բայց ոչ «աստուածակիր մարդ», ուղղափառ բանաձեւը, իսկոյն Մարիամ՝ վերահռչակուեցաւ իբրեւ ծնող «մարմնացեալ Աստուծոյ» եւ ոչ լոկ «մարդու»: Ուստի՝ «Աստուածածին», «Տիրածին», «Աստուածամայր» անուանումները:

Իբրեւ հետեւանք դաւանական այսօրինակ ուղղափառ խոստովանութիւններու, քրիստոնէական եկեղեցին, իր ծագումնային՝ շրջաններէն, հասնատեց կրօնական պաշտամունքային առիթներ կամ տներ, որոնց նպատակը եղաւ ոչ միայն պարզ նուիրական հանդէսներ կատարել, այլ այդ հանդէսներով ցուցաբերել հոգեւոր արժէքներ, որոնցմով սուրբեր, մարտիրոսներ, հայրապետներ, այս պարագային՝ Ս. Աստուածածինը, կ'առաջնորդեն քրիստոնեան՝ Աստուծոյ, աղօթական արարողութիւններով:

Մեր եկեղեցին, Ս. Կոյսի անձին ու անոր վերաբերեալ յիշատակներու պաշտամունքը կամ վերակոչումը, կը դասաւորէ «Տէրունի տներ»-ու խմբաւորումի կարգին, ուր արջարեւ, Քրիստոսի անձին, ու Անոր տնօրինական դրուագներու ջրովն ի վեր կը փառաբանուին Ս. Աստուածածինն ու անոր կեանքին առնչակից հանգրուանները, որոնք ըստ մեր տօնացոյցի ցուցմունքին, կը գլխաւորուին հետեւեալ եօթն տօնական անուանակոչումներու ներքեւ:

Մեր օրացոյցով ամսական թուարկումի յաջորդականութեան պիտի չգիմենք. այլ Ս. Կոյսի կեանքի ժամանակագրական բնական ընթացքը ուղեցոյց ասնելով պիտի սկսինք . . .

- ա) «Յղութիւն Ս. Աստուածածնի յիննայէ»: Մենք եւ յոյները Ս. Կոյսի կեանքի այս հանգրուանը կը տօնենք զեկտեմբեր ամսոյ 9-ին, որ այս տարի կը զուգադիպի Հինգշաբթի օրուան: Իսկ շատինները կը պահեն իրենց աւանդական թուականը՝ զեկտեմբեր 8, օր մը առաջ: Մեր եկեղեցւոյ մէջ, տօնին համապատասխան մասնաւոր շարական չէ յօրինուած. անոր փոխարէն կարգադրուած է երգի՝ «Երգեցէք որդիք Միտնի երգ նոր ի ծննդեան մօր Տեառն . . .» օրհնութիւնը (Կանոն Մենդեան Սրբոյ Աստուածածնի ի Մնողաց իւրոց ի Յովակիմայ եւ յիննայէ) որուն առաջին երկու պատկերները բանաստեղծական պատկերներու եւ զուանաբանական ճշգրտացրութիւններու գեղեցիկ համադրութիւն մըն է, ԳԿ. ձայնաշարակով: Օրուան քարոզը «Մայր սուրբ . . .»-իսկ «Ս. Աստուած . . . որ խաչեցար»: Նախորդ օրը, զեկտ. 8-ին երեկոյան ժամերգութեանէն վերջ՝ նախատօնակ «Որ նախիմաց իմաստութեամբ տնօրինեցեր զխորհուրդ սուրբ եկեղեցւոյ . . .» շարականը ԱԿ. ձայնաշարակով (Կանոն Յովակիմայ եւ Աննայի Մնողաց Սրբուհոյ Աստուածածնի):

բ) «Տօն Մենդեան Սրբուհոյ Կուսին Մարիամու յիննայէ»: Այս տարի կը հանդիպի չորեքշաբթի օրուան՝ Սեպտեմբեր 8-ին, ինչպէսզեւ պահեց երրորդ օրը: Արդարեւ կ'երգուի օրուան յատուկ շարականը «Երգեցէք որդիք Միտնի . . .» իւր տարբին: Օրուան քարոզը՝ «Մայր սուրբ . . .»-իսկ «Ս. Աստուած . . . որ

խաչեցար»: Նախորդ երեկ յանձնախառնակ - «Որ նախիմաց իմաստութեամբ . . .»:

դ) «Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամաց ի Տաճարն»: Յոյներն ու լատինները եւ մենք կը տօնենք նոյնմբեր 21-ին: Այս տարի՝ կիրակի, եւ ժԱ. կիրակի զկնի Ս. Խաչի: Հետաքրքրական է կրկնել որ այս տօնին եւս կարգադրուած է երգել նոյն «Երգեցէք որդիք Սիոնի երգ նոր . . .»: Իւր սարօքն: Քարոզը՝ «Մայր սուրբ . . .»: Իսկ «Ս. Աստուած . . . որ յարեար», օրը կիրակի ըլլալուն: Եաքաթ երկոյնան՝ նախատօնակ, նոյն՝ «Որ նախիմաց իմաստութեամբ . . .»: շարականով: Հրէական աւանդութիւն էր մանուկին ծնելէն երեք ամիս վերջը ծնողքը՝ կ'ընծայէր զայն Տաճարին: Յիշել որ, Քրիստոսի ծնողքն ալ նոյն պատճառով ընծայեցին զինքը Տաճարին:

դ) «Աւետուածն Ս. Աստուածածնի»: Այս տարի կը զուգադիպի Աւագ չորեքշաբթի պահոց օրը՝ Ապրիլ 7 անփոփոխ կերպով: Ս. Կոյսի կենսքին տիրական զէպքերէն մին: Ղուկասու աւետարանը երկիւղածութեամբ կը յիշատակէ ողջունաբեր աւետիսի երկխօսութիւնը ընդմէջ Հրեշտակին ու Մարիամին: Տօնին յատուկ օրհնութիւնը՝ «Քրիստոսն անճառ ծածկեալն յազաց եւ յաւիտեանց, յայտնեցաւ իջմամբ Հրեշտակպետին այսօր առ կոյսը Մարիամ . . .»: Իւր սարօքն: Քրիստոսն ընդ նախաքայլերը Քրիստոսի տնօրինական գործունէութեանց: Նախորդ երեկոյնան՝ նախատօնակ նոյն «Քրիստոսն անճառ . . .»: շարականով: Այս տարի Աւագ չորեքշաբթի օրով քարոզը՝ «Մայր սուրբ . . .»: Իսկ «Ս. Աստուած . . . որ եկիր եւ զալոց ես»:

ե) «Վերափոխումն Ս. Աստուածածնի»: Ս. Կոյսի տօներէն ամենէն զունագեղն ու ժողովրդականը: Մին՝ Հինգ տաղաւարներէն որ ոգեկոչումն է Տիրամօր յետ մահուան երկինք փոխադրութեան յիշատակին: Տօնին առնչակցած է «Մարտի օրհնութեան» արարողութիւնը. գեղեցիկ աւանդութիւն մը, թերեւս նախաքրիստոնէական ծագումով: Յոյներն ու լատինները կը տօնեն օգոստոս 15-ին, առանց փոխելու օրուան պատկերը: Մենք՝ օգոստոս 15-ին մերձաւորագոյն կիրակիին: Այսօր ժողովեալ քրտոցն ի միասին . . .»: (Կանոն վերափոխման Ս. Աստուածածնի) գերասքանչ շարականը, Դ2. ձայնեղանակով: Տօնին վերակոչումը կը կրկնուի ինծօրեայ մատուցմամբ, նոյնքան ինքնատիպ շարականներով: Քարոզ՝ «Մայր սուրբ . . .»: Իսկ «Ս. Աստուած . . . որ եկիր ի փոխումն Մօր քո եւ կուսին . . .»: Նախորդ երեկոյնան՝ նաւակատիք: Իսկ երկուշաբթին՝ «Յիշատակ մեռելոց»:

Մեր օրացոյցը, այս բոլորի կարգին, կը յիշատակէ երկու տօներ եւս, որոնք նուիրուած են Ս. Աստուածածնի սեփական իրեղէններու գիւտին:

զ) «Գիւտ Տփոյ Սրբուհոյ Աստուածածնի», յուլիս 4-ին, որ է Հինգերորդ կիրակի զկնի Հոգեպայտեան: Զուեննալով յատուկ շարական, այս տօնին ալ կ'երգուի «Երգեցէք որդիք Սիոնի երգ նոր . . .»: կանոնը, իւր սարօքն: Քարոզ՝ «Մայր սուրբ . . .»: Իսկ «Սուրբ Աստուած . . . որ յարեար . . .», օրը կիրակի ըլլալուն: Նախորդ երեկոյնան՝ նախատօնակ՝ «Որ նախիմաց իմաստութեամբ . . .»: շարականով:

Կը պատմուի թէ տուփը կը պահուէր Գալիլիա՝ Նագարեթ քաղաքը՝ Հրեայ այրի կնոջ մը տան մէջ: Այդ տուփին մէջ կը պահուէր Ս. Կոյսին գլխանոցը, եւ այդ պատճառաւ տունը դարձած էր ուխտավայր մը: Կ. Պոլսէն երկու ազնուական եղբայրներ այդ քաղաքը այցելութեան միջոցին կը սեղեկանան տուփի մասին: Հնարքով մը կը վերցնեն զայն այրի կնոջ տունէն եւ կը փոխադրեն Կ. Պոլիս երկիւղած նախապատկեամբ:

է) «Գիւտ զօտոյ Սրբուհոյ Աստուածածնի»: Թուական՝ օգոստոս 29, որ է երրորդ կիրակի զկնի վերափոխման: Այս տօնին եւս կ'երգուի «Երգեցէք որդիք Սիոնի երգ նոր . . .»: շարականը՝ Քարոզ՝ «Մայր սուրբ . . .»: Իսկ «Ս. Աստուած . . .»:

ու. քարեարձ» օրը կիրակի լլալուն: Նախորդ երեկոյեան՝ նախաժամակ՝ «Որ նախիմաց իմաստութեամբ . . .»:

Ս. Կոյսի զօտին, հաւանաբար մաս կը կազմէր իր զգեստին կամ արդուզարդին: Գօտիին գիւտը տեղի կ'ունենար Երուսաղէմի մէջ հինգերորդ դարուն, աւրկէ կը փոխադրուի Կ. Պոլիս եւ կը զետեղուի Աստուածածնի Նուիրուած տաճարին մէջ: Կ'ըսուի թէ Լեւոն Կայսեր թագուհին՝ Ձոյի՝ իր բժշկութիւնը կը ստանայ Տիրամօր Գօտիին ուխտի երթալով:

Այս երկու տօները Արեւելքի՝ յոյն եկեղեցւոյ կողմէ կը պաշտուին յատուկ տօնախմբութիւններով, եւ մաս կը կազմեն անոր տօնացոյցին: Բայց չուշացաւ այն շրջանը երբ Նոյն երկու տօները փոխադրուեցան Արեւմուտք, ուր լատին եկեղեցին ընծայեց անոնց յատուկ յարգ ու պաշտօն:

Մեր մէջ երկար ատեն, երկու տօները պարագայաբար կ'երեւային մեր տօնացոյցի էջերէն: Միայն 18-րդ դարու վերջին քառորդին Տ. Սիմէոն Ա. Երեւանցի Կաթողիկոսն էր (1763-1780), մեր տօնացոյցին համար կատարած փոփոխութիւններու եւ նոր կարգադրութիւններու ընթացքին, տնօրինեց երկու տօներուն մնայուն մասնակցութիւնը հայ եկեղեցւոյ տօնական պաշտամունքներուն մէջ: Հաւանաբար յոյն եւ լատին եկեղեցիներու հետ համախորհուրդ մնալու նախանձախնդրութեամբ:

ԳԻՒԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ

ԱՐԵՒԱԾԱԳԻ ՍՊԱՍՈՒՄԸ

Մենք քայլում ենք արդիականութեան ստոր լուսափայլի վրայով, փնտրելով յանրաժողովրդական կորցրած աւագահատիկները: Ճանապարհին լուսում են յուսահատութեան ճիւղեր՝ Աստուած մեռել է:

Ոչ, Նիցչեն չէր, որ առաջինը բացայայտեց այս մտածելակերպը: Կային ուրիշները, որոնք ապրեցին այն՝ խաչի մօտ: Եւ հաղորդակից դարձան մէկ այլ ճշմարտութեանը: Քրիստոս Յարեալ ի Մեռելոց:

Հայ ժողովուրդի մանապարհը - խաչի մանապարհն է՝ յուսահատութիւնից դէպի յոյս, խաւարից դէպի լոյս, մահից դէպի անմահութիւն:

Խաչը մեր շնչատութիւնն է, մեզ գորացնող ոյժն ու լոյսն է, մեզ հանգստացնող յոյսն է: Մենք ազգ չենք, մենք Եկեղեցի ենք: Մենք սուրբ հոգւորակարանն ենք: Մեր անցեալը մեր արմատների պահպանն է: Ներկան՝ մեր արմատների գուրգուրուած ծիւն է: Ապագան՝ բացուած ծաղիկի բուրմունքն է: Որպէս զի այդ բուրմունքը ներշնչենք, պէտք է իմանանք ով ենք մենք, որտեղից ենք գալիս, եւ դէպի ուր ենք գնում:

Էջմիածին, Արարատ, Լուսաւորիչ, Գեղարդ, Գանձասար ... Այս բոլորը անուններ չեն, կենդանի իրականութիւններ եւ մարդիկ են: Դա մեր անցեալն է, որը մեզ բնուում է:

Հայաստանը փորձում է այս բոլոր հարցերի պատասխանը գտնել՝ ապրել: Ինչպէս Յիսուսը խաչի վրայ, մեր Հայրենիքը մերկ եւ անպաշտպան, վիրատուած եւ լքուած: Բայց մա ազատ է: Նա ինքն է ընտրել այս մանապարհը՝ միայնակ եւ փրկարար: Դէպի ուր կը տանի այն՝ չգիտեմ: Սակայն գիտեմ դէպի ում՝ դէպի մա, որ Արարատ լեռի գրկում մեզ կեանք պարգեւեց:

Հայաստանը Աւագ Շաբաթ է ապրում՝ Աւագ շաբթուայ Շաբաթ օրը: Օր, որի մասին ոչ մի խօսք չենք գտնում՝ Նոր Կտակարանի մէջ: Ուրբաթ ամէնը արդէն կատարուած էր: Յոյսը, լոյսը սպառուած էր, իսկ Յարութեան լուրը դեռ չէր հնչել այս երկրի վրայ: Ոչ ոք չգիտեր թէ ինչ է կատարուելու Կիրակի լոյս առաւօտը, եւ մինչ այդ առաւօտը դեռ մէկ երկար օր կար, լի անորոշութեամբ եւ վշտով:

Այս լուռ գաղտնիքն է ապրում այսօր Հայաստանը: Յոյսը եւ համբերութիւնը մեզ օգնական: Արեւածագը մօտ է:

ԳՈՂԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Փարիզ, 11 Յունիս 1995

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱԼ

ՀԱՐՈՒՏԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ

- 48) Մնաս բարով, աղուր Ռայն, որքան երկայն՝
Կըրնայ յօժարիլ ճամբորդն յամենալ,
Քուկդ է տեսարան հոգուց միութեան՝
Կամ խոկմունքին որ մոլորիլ կըրնայ տալ.
Կըրնան մըջտորտող անզոները չ'որսալ՝
Ինքնուրաց սըրտեր, հոս է տեղը որ
Բնութին տըխրամած չէ՝ ոչ ալ ուրախ,
Վայրի է, ոչ բիրտ, անեղ ոչ խոժոռ.
Կարծես երկրի հասուն աշունն է բախտաւոր.
- 49) Մնաս բարով նորէն - մի զուր մնաս բարով,
Տեսարան մասալիսի մնաս բարով չուզեր,
Միտքս գոյնատուած ամէն գոյներով
Ապա տըծկամակ աչքերն, կը մերժեն,
Միրուն Ռայն, իրենց գգուանքն վրադ պարզել:
Մեկնողի սիրտն գոհ, գովասանքներով
Թ'ն անելի շքեղ տեսարանք շողան
Բայց պիտ չ'միանան անոնք իրարմով
Ապշեցնող փայլով, փափուկ գեղով, հին օրերու փառքով:
- 50) Անփութօրէն շատ, ծառերը ծաղկած
Հասուննալ շտապող - ճերմակ քաղքին փայլ,
Անտառներու մէջ պատեր զըրկաբաց,
Թաւալող գետակ, խորխորատ մըռայլ,
Վայրի ժայռերը՝ պարիսպի կերպատ
Մարդոց արունեստն հեզնող 'անոր նման
Կարգ մ'ուրիշ ուրախ տեսարաններ նոր
Ամենուն տալու խինդ արգասանդ լման,
Իր եզերքներէն, որպէս յորդող ջուր - թ'ն կայսրութիւնք իյնան:
- 51) Բայց անոնք կ'իյնան: Վեր են Ալպեաններն:
Պալատներ բնութեան, պատերով լայն, պերճ,
Ճաղատ գագաթնին ցցած ամպերէն վեր.
Գլուխնին մըտահոգ՝ սառ սրահներու մէջ
Վըսեմ սառնարանք ուր կ'շինվին անվերջ
Չինամըրրիկներ ու հիպիներ ձին,
Ինչ որ կ'լայնցնէ հոգին, կ'ահաբեկէ ալ,
Հաւաքած շուրջն այս վեհ կատարներուն,
Ցագնելով երկրի մուտք երկնի մէջ-վար թողլով մարդուն:

(շարունակելի)

LORD BYRON

Թրգմն. Մուրատ Մանուկեան

ՈՒ ՆԵՌԱՅԱՐ

Ու դուն նորէն հեռացար:
 Եւ դուն այնքա՛ն հեռացար
 Որ հիմա լոյսը սըրտիդ
 Թէ՛ն հոն է, բայց չունի
 Իր ջերմութիւնը նախկին:
 Կը լըսեմ կանչն հոգիիդ,
 Որ կ'աղօտի, կը մարի
 Մեմին առջեւ ունկերու:
 Բոյրն ըզզըլխիչ էութեանդ
 Երբ կը հասնի ռունգերու
 Միջակ եւ այլ բոյրերու
 Շըփոթին վիշտը կ'ապրիմ:
 Ու հեռացար, հեռացար.
 Մեծ Հըսկուսի գիշերուան
 Ջանգին նըման որ հեռուէն
 Կը կանչէ մեզ խորհուրդիդ
 Գեղեցկութեան, շնորհին,
 Բայց որու ձայնն հովերու
 Մէջ կորսուած՝ հագիւ թէ
 Սըրտիս դըրան կը հասնի:
 Ու դուն այսպէս հեռացած
 Եւ տակաին հեռացող
 Անվերադարձ քայլերով
 Կը հըրես զիս մենութեան
 Թախիծին մէջ ու ցուրտին,
 Կը թողուս զիս անըստիով
 Եւ մոլորեալ, վիրաւոր
 Զիչ մ'աւելի ամէն օր:

ԱՆԵԼ

THE ETERNAL HOMELAND

by
Hovanness Shiraz

Let the world and the stars listen,
If that horrific disaster occurred,
If the rivers reversed their flow and
The sun fell from the sky,
If the seas clashed and dried up,
If the ashen stars fell, and
The awestruck desert spoke,
If the deep, bottomless canyons
Devoured the eternal thrones of proud Massis,
If all the deadly comets
Struck this ancient globe, and
The heart of the universe stopped beating,-
Death shall never visit my homeland,-
For she bore the phoenix,-
Eternity dreamt her, and
She wove eternity's speech.

Translated from the Armenian by
Marzbed Margossian



Ծովն մեր հայ սերնդի դաւար ծիւղին
 Մը կառչած մնան լուճն արմաղներին

ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Թող ձայնս աշխարհն, աստղերն իմանան՝
 Որ թէ պատահեիր աղէտն այն դժնի՝
 Թէ գետերն առնեն յետադարձ հոսանք,
 Թէ արեգակը երկնէն ընկնի,
 Թէ բախուեն ծովերն ու դառնան ցամաք,
 Թէ մոխրանալով աստղերը թափուեն,
 Թէ անապատը զարհուրած՝ խօսի,
 Թէ խոր-վիրապի երախը սուգունն
 Յաւերժ գահերը խրոխտ Մասիսի,
 Թէ ուշ մահաբեր գիսաւորները
 Ջարկուեն հիմաւորց այս հողագնդին,
 Թէ տիեզերքի սիրտն էլ դաղարի,-
 Դարձնալ մահ չի՛ գայ իմ հայրենիքին,-
 Նա մայր թռչունն է փիւնիկեան մոխրի-
 Յաւերժութիւնն է նրան երազել՝
 Նա յաւերժութեան բարբառն է հիւսել...



SONNET 42

That time of year thou mayst in me behold
When yellow leaves, or none, or few, do hang
Upon those boughs which shake against the cold,
Bare ruin'd choirs, where late sweet birds sang.

In me thou see'st the twilight of such day
As after sunset fadeth in the west,
Which by and by black night doth take away,
Death's second self that seals up all in rest.

In me thou see'st the glowing of such fire,
That on the ashes of his youth doth lie,
As the death-bed, whereon it must expire
Consumed with that which it was nourished by.

This thou perceiv'st, which makes thy love more strong,
To love that well, which thou must leave ere long.

William Shakespeare

ՍՕՆԷԹ 42

4+4+4+3

Իմ մէջ կրնաս դուն նշմարել այն եղանակը տարուան
Երբ ցուրտին դեմ դողդողացող ճիւղերէն կախ կը մընան
Միայն դեղին տերեւներէն ոմանք, եւ կամ եւ ոչ մէկն,
Մերկ, աւերակ տաճարներու դասերուն պէս՝ կ'երգէին
Ուր դեռ երէկ, թռչնիկներու քաղցրիկ ձայնով երգչախումբ:

.Ա'յն օրերէն մէկը իմ մէջ դուն կը տեսնես, ուր դանդաղ
Արեւամուտն հորիզոնէն դէպ' Արեւմուտք կ'անհետի,
Ջոր սեւ գիշերն կամաց-կամաց վար կը քաշէ խլելով,
Կարծես իրաւ սահն ինքն ըլլար կնքող ամէնքն ի հանգիստ:
Իմ մէջս դուն բոցավառումն ա'յն կըրակին կը տեսնես՝
Երիտասարդ իր օրերու աճիւններուն վրայ հանգչող,
Կարծես լինէր մահուան մահիճ, ուր ան պէտք էր որ հատներ,
Ըսպառուելով անկէ՝ որով սընուցուեր էր բոցավառ:

Ա'յս է որ դուն կը նշմարես, եւ այս՝ քու սէրն աւելի
Կը զօրացնէ. սիրել ուժգին, ինչ որ շուտով պիտի դուն
Պարտաւորուիս ետիդ թողու, ու հեռանալ ու լքել:

Թրգմն. Շէն Մահ

Ուիլլիլմ Շլքսպիր

ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

Երկիր հայրենի, խոցուած իմ երազ,
Դուն միշտ կը մնաս իմ հոգիիս մէջ
Ինչպէս այրող վիշտ, հոգեղէն տարազ,
Ներշնչումներուս մէն մի խօսքին մէջ:

Երկիր հայրենի, ինչպէ՞ս փարատեմ
Ցաւըդ կոտտացող, կամ ինչպէ՞ս հասնիմ
Կանչիդ սրտադող. պարսպապատեմ
Իմ ափերուս մէջ քեզ ամբողջովին:

Բայց ափերըս ի՞նչ... չեն բաւեր քեզի,
Դուն սիրտըս կ'ուզես, սիրտըս որ կրնայ
Քեզի համար լալ, եւ խնդալ քեզի
Ինչպէս եւ ապրիլ... մեռնիլ քեզ համար...:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԼՈՒՆ ԵՐՈՐԴ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՕՏ

Ջգալի է արեգական լոյս,
որ երեւի ամենեցուն հաւասարապէս.
Իսկ իմանալի լոյս է, որ յոգիս
մաքրեցելոցն ծագէ եւ զիմանալիսն
լուսաւորէ:

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ

Ա. Առարկայի Խորհրդանշական երկակի իմաստը

Բարդ ու բազմաշերտ է Նարեկացու բանաստեղծական աշխարհը: Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ դա կապուած է նրա լեզուի՝ նոյն ու հարուստ գրաբարի հետ: Սակայն լեզուական այդ պատմէշը յաղթահարելուց յետոյ էլ քննիմն չի վերանում դժուարութիւնը: Բանաստեղծական նրա աշխարհը չի դառնում անմիջականօրէն ընկալելի: Դա քիչ է կապուած նաեւ այն բանի հետ, որ մենք գործ ունենք բանաստեղծութեան՝ իբրեւ պատկերաւոր մտածողութեան հետ: Անշուշտ բարդութեան այդ աստիճանները տարբեր բնոյթ ունեն գրական տարբեր ժանրերի գործերի մէջ, բայց էականը դա չէ: Էականն այն է, որ այդ բարդութիւնը միջնադարի կրթուած ընթերցողի համար չէր հասնում այնպիսի չափի, ինչ չափի կարող է լինել այսօրուայ ընթերցողի համար: Ամենից առաջ այդ բարդութիւնը պայմանաւորուած է Նարեկացու աշխարհայեցութեամբ, նրա բարոյափիլիսոփայական ըմբռնումների եւ կրօնա-աստուածաբանական գաղափարների

համակարգով: Եւ այսպէ՛ դա կապուած է իրականութեան արտացոլման, նրա գեղագիտական սկզբունքների, իդէալի եւ այդ իդէալը կենսաճում իրագործելի դարձնելու հետ:

Թէեւ գրականութեան առարկան միշտ էլ եղել է մարդը, եւ գրողի հիմնական մպատակը՝ գեղարուեստական նշանաբանի հասնելու խնդիրը, սակայն ամէն մի դարաշրջան առաջ է քաշել մարդու կերպաւորման տարբեր սկզբունքներ, գեղարուեստական նշանաբանի մարմնաւորման տարբեր եղանակներ, դարաշրջանի ոգուն համապատասխան՝ տարբեր իդէալներ: Քրիստոնէական միջնադարի գրականութիւնը չէր կարող չհարժարուել անտիկ գրականութեան հեթանոսական առասպելութիւնից, նրա աշխարհիկ ոգուց, վերածնութեան դարաշրջանը չէր կարող չմերժել միջնադարի կրօնա-աստուածաբանական գաղափարախօսութիւնը, մարդու՝ աստծուն մնանուելու նրա իդէալը: Իրականութեան արտացոլման եւ մարդու

տիպականացման սկզբունքների տեսանկյունից միջնադարի հեղինակները աւելի շատ ընդհանուր գծեր ունեն իրար հետ, քան նոր ժամանակների հեղինակները՝ սկսած վերածնունդից հետո և շարժումներից: Իրականութեան արտացոլման իր ելակետային սկզբունքների համաձայն Նարեկացին միջնադարի մտածող է, միջնադարի գեղագետ եւ քանաստեղծ: Նա ձգտում է երկրայինի միջոցով պատկերել վերերկրայինը, գգայականի միջոցով՝ վերգգայականը, բնութեան միջոցով՝ աստուածայինը: Նարեկացին ստեղծում է մարդու եւ Աստուծու, երկրայինի եւ երկնայինի, կեանքի ու մահուան, հոգու եւ մարմնի, ժամանակաւորի եւ յաւիտեանկանի հակադրութիւնների ու գուգորդութիւնների մի աշխարհ, որ նրա մտածողութիւնը եւ երեւակայութիւնը դուրս գալով բնութեան ու նիւթական երեւոյթների ոլորտից՝ թեւակոխում է կրօնամիտ իսկական պատկերացումների վերացական մի ոլորտ, որ հոգեբանօրէն ընդունելի եւ բանական էր իր ժամանակի համար: Նա յանալս ոչ միայն ուղղակի դիմում է աստուածաշնչական ու աւետարանական առակների ու կերպարի օգտագործմանը, նմանութիւններին ու գուգահեռներին, Գրիստոսի երկրային կեանքի դրուագների յարասութեանը, ոչ միայն սիրով մէջբերումներ է անում սաղմոսներից, այլեւ այդ բոլորը նա ընդունում է իրրեւ քարճարգոյն հեղինակութիւն: Իսկ սա նշանակում է, որ Նարեկացու ստեղծագործութիւնն ունի կրօնամիտ իսկական պատկերացումների մի ստուար շերտ, որն էլ պայմանաւորում է նրա խօսքի բարդութիւնը: Այդ շերտն անբաժան է նրա ստեղծագործութիւնից:

Մատենի մի էանի քնարական հատուածներ գիշերային մաղթաբանքներ են: Բնկուց առաջ քանաստեղծ պաղատում է քարճրեւելի՛ն տալ «հանգիստ բերկութեան

մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս», իսկ առաւօտեան՝ «Եւ սքափեալ վերստին ի ննջմանէ ծանրութեան» (Բան ժԲ, դ) գոհութիւն է յայտնում ծագող լոյսին, Աստուծու, որ «գիտութիւն իւրոյ բորբոքեացէ ի հոգիս մեր» (1): Գիշերը դրամատիկ խոր ապրումներ է յարուցում բանաստեղծի յուզաշխարհում, խաւարը խտացնում է նրա հոգու տագնապները, մութը երկնում խոյ խռովներ, սիրտը գարիւրում է սասանայի որոգայթներից, կասկածը ծնում է թերահաւատութիւն եւ վերնամարտ խոհեր, ահ ու արհաւիրք, եւ նա, երեւի ծնրադիր ու արտասուահառաչ, պաղատում է Աստուծու, որ նա չլի իրեն:

Տեառնագրեա էո անուամբդ զուսանցոյց երդ հարկիս,
 Պարփակեա էո ձնամբդ զառաստաղ տանրիս,
 Գծագրեա էո արեամբդ զմուտ սննոց սենեկիս,
 Կերպացո գէո նշանդ ի հետս ելից մաղթողիս,
 Ամբացո էո աջովդ զհանգստեանս խշտի,
 Մաքրեցես ի խաղից գծածկարան անկողնոյս,
 Պահեցես էո կամաւդ զտառապեալ անձն ռգոյս ...

(Բան ժԲ, գ)

Առաջին հայացքից հաստուածը պարզ է ու հասկանալի: Թուով է՝ պարզ է եւ «Գծագրեա էո արեամբդ զմուտ սննոց սենեկիս» տողը, որը նշանակում է՝ գծագրիք էո արեամբ սենեակիս մուտքի սննդ, կամ դրոշմիք էո արիւնը իմ սենեակի սննդին: Բայց ինչո՞ւ պետք է արիւնով օծել սենեակի սննդը: Ի՞նչ խորհուրդ ունի դա: Հին հրեաներն ունէին մի տուն, որ կոչւում էր գատիկ: Տունը սահմանուել էր եզրպատկան գերութիւնից հրեայ ժողովրդի պատագրութեան յիշատակը յաւերածացնելու համար: Ժողովուրդը գատ էր

գոհում եւ նրա արիւնով օծում տան սեմը՝ «որպէս զի մի մերձեցնայցէ սատակիչն ի տունն նոցա»:(2) Գառան այս խորհրդանիշն անցնում է Քրիստոսի կերպարին: Զատիկն իմաստաւորում է նրա յարութեան խորհրդով: Ուրեմն՝ քանաստեղծի պաղատանքը՝ արիւնով օծել իր սեմեակի մուտքը գուգահեռում է չարը խափանելու մտքին: Պատկերացումների այս շարքը, անշուշտ, աւելի մատչելի է կրօնական մտածողութեանը: Բայց սա դեռ բոլորը չէ: Տողը գերծ չէ նաեւ փոխաբերական, խորհրդանշական իմաստից: Ըստ Գ. Աւետիքեանի՝ քանաստեղծը խնդրում է աստուածային արեամբ նշանագրել ոչ միայն «գմուտս սեմեկիս, այլեւ եւ գմտացս, զի մի մերձեցնայցէ սատանայ»:(3): Իրաւացի՝ է արդեօք մեկնաբանը: Կարծում եմ՝ այդ: Իրերի աշխարհը տրուած է հոգեւոր եւ աստուածային խորին խորհուրդների մէջ թափանցելու համար: Իրականութեան ընկալման եւ նրանից հոգեւոր պատկերացումների ոլորտը բարձրանալու այս սկզբունքը Նարեկացին տեսականօրէն արտայայտել է Երգ Երգոցի իր մեկնութեան մէջ: Հին մեկնաբանները գտնում էին, որ Աստուածաշնչի մէջ նշարտութիւններն ասուած են սօդուած, շղարշուած ու այլաբանական ձեւերով: Ինչպէս աւետարանական առակները այլաբանութիւններ են եւ ունեն հոգեւոր իմաստ, այնպէս էլ աստուածային յայտնութիւնները Աստուածաշնչի մէջ ներկայացուած են սօդուած, որոնք կարելի է հասկանալ միայն նրանց սրբազան ֆոյի մէջ թափանցելու շնորհիւ: Այս մօտեցմամբ էր Նարեկացու, իսկ Նարեկացուց առաջ Գրիգոր Նիւսացու համար Երգ Երգոցը ոչ թէ սիրահար գոյգի զգայական սիրոյ փառաբանութիւն էր, ինչպէս ընկալել եւ ընկալում էին շատերը, այլ հոգեւոր սիրոյ այլաբանութիւն էր, ուր հարսը խորհրդանշում էր եկեղեցին, փեսան՝

Քրիստոսը: Նկարագրուածը երկակի իմաստով ընկալելու պարագան Նարեկացին բացատրում է այսպէս. «Արդ, զանճանիսն կամեցեալ պատմել Սողոմոնն՝ ի մարմնաւոր իրս առակեաց. այսինքն՝ ի փեսայ եւ ի հարսն, յեղբորդդի եւ յօրիորդ, ի դուստր եւ յաղանի, ի ստինս եւ ի տաշխս, եւ յեղ թափեալ, ի խնձոր, յայծեամն, ի Սողոմոն, ի թագաւոր, ի քաղաքն Նրուսաղէմ, ի պարտեզ եւ որ այսպիսիք ցանկալի աչաց հայելոյ, եւ լսելեաց ախորժելիք, եւ մտաց փափագելիք» (ԳՆՄ, 273):

Այս հատուածից ակներեւ է, որ Երգ Երգոցի հեղինակը, ըստ Նարեկացու, անճանելի, անպատմելի երեւոյթների եւ զգացումների մասին ցանկացել է պատմել «մարմնաւոր իրերի» օրինակներով: Շարունակութեան մէջ նա զարգացնում է այն միտքը, որ իրերը հանդէս են գալիս իրրեւ «քարետեսակ» ամաններ, որոնք սօդուած են մտքերը, ինչպէս սրուակը՝ անուշ հոտը: Սողոմոնը եւս բացայայտ չի ասել այն, ինչ նախաջել է հոգու լոյսով, բայց եւ չի թաքցրել նրանց հոգեւոր իմաստն ու խորհուրդը, մատուցել է այլաբանօրէն, ուստի այդ բոլորն ընկալելու համար պէտք է փակել «զաչս մարմնոյ եւ քանալ զհոգւոյն», որպէս զի կարողանանք «աստուածային խորոցն գծածուկս ըստ կարի յայտ ածել» (ԳՆՄ, 277):

Նշանակում է՝ քանաստեղծի համար բնութեան երեւոյթները, տեսանելի, զգայելի եւ շօշափելի ամէն ինչ մի տեսակ անօրէն են, որոնք կարող են պարունակել մտքեր ու զգացումներ եւ հասկանալի լինել միայն այլաբանօրէն: Նարեկացին միութեան ամէն ինչ վերածում է խորհրդանիշի, ամէն ինչ երկատում, ընկալում է երկակի իմաստով: «Եւ թափեալ է անուն քո» (Երգ., Ա, 3) փոխաբերութիւնը Նարեկացին մեկնաբանում է այսպէս. «Եւ զի որ թափեալ է յամանէ, անգնին է եւ միայն

ամանինն ֆանաչի լեալ ի մա իւրոյն» - օծման իւրի սրուակից ֆանաչելի է նրա հոտը - սա իրական երեւոյթ է, նիւթի ոլորտ, բայց Նարեկացուն այդ իմաստը չի բաւարարում, նրան յուզում է այլ խորհուրդ. «այսպէս աստուածութեանն բնութիւն անգնին եւ անիմանալի եւ անտեսանելի է, իրբն զեղն թափեալ: Այլ զոհիս արդարոց եւ տղայացեղց ի մեղաց՝ անուշահոտէ, որպէս զամանն՝ եւղն պատուական» (ԳՆՄ, 281):

Կրկնակի իմաստ վերագրելով ամեն մի իրի, երեւոյթի, Նարեկացին ընդլայնում է իրականութեան խորհրդանշական ընկալման ի իմաստաւորման տեսագաշտը: Բացի Քրիստոնէական յայտնի խորհրդանշաններից, նա խորհրդանիշ է դարձնում կեանքից ու բնութիւնից վերցրած այնպիսի առարկաներ ու երեւոյթներ, որոնք առաջին հայեացքից կարող են ընկալուել զուտ աշխարհիկ իմաստով, առանց այլաբանական շղարշի: Բայց, ի հարկէ, այդպէս թուում է միայն առաջին տպաւորութիւնից: Խորհրդանշանը ծնում է վերացականից, անմիթականը տեսանելի դարձնելու ստեղծագործական երկունքից: Ընկալման ժամանակ, ընդհակառակը, խորհրդանշանը դառնում է ելակէտը, որից պիտի գնալ դէպի վերացականը, դէպի գաղափարը: «Գեղարուեստական խորհրդանշանը - գրում է Վ. Բիչկովը - ինչպէս յայտնի է, ծագում է այն ժամանակ, երբ զգայական պատկերի մէջ ցանկանում են մարմնաւորել անշոշափելի երեւոյթը, զգայութիւնը, հասկացութիւնը, որի էութիւնը այդ խորհրդանշանի միջոցով պէտք է դառնայ անմիջական ապրում, այսինքն՝ ասոցիատիվ կերպով «ժագի» հոգեբանութեան մէջ եւ ոչ թէ իւրացութի մտահանգման ֆանապարհով» (4):

Խորհրդանշանի բնոյթը կախուած է բանաստեղծի աշխարհընկալումից: Որքան

կարեւոր է, թէ ինչ է խորհրդանշան դարձնում, նոյնքան էլ կարեւոր է, թէ ինչ է ցանկանում արտայայտել: Նարեկացին ոչ թէ հրաժարում է հոգեւոր թէմաներից - նա նոյնպէս գրում է Քրիստոսի ծննդեան ու մկրտութեան, նրա երկրային կեանքի դրուագների, խաչելութեան, համբարձման, յարութեան ու պայծառակերպութեան մասին, գովերգում է աստուածածնին, առաքեալներին, նահատակներին, սրբերին եւ այլն - այլ ձգտում է հոգեւոր գաղափարները մարմնաւորել նշմարիտ բանաստեղծական պատկերների մէջ: Բանաստեղծութիւնը Նարեկացին աստիճանաբար ազատագրում է աստուածաբանական, կրօնական հասկացութիւնների բեռից: Այսպէս. Քրիստոսի յարութեանը Նարեկացին նուիրել է մի քանի տալ: Ըստ էութեան բոլորի մէջ էլ նա արտայայտում է նոյն գաղափարը. Յիսուս եկաւ իր մահով հերքելու մահը եւ իր յարութեամբ ցոյց տալու հոգու փրկութեան եւ կենդանութեան յաւիտենութիւնը: Քրիստոսը կենդանի է յաւիտենապէս, կենդանի է նրա սէրը մարդու հանդէպ: Տաղերից մէկը («Անուն անեղին էին Աստուած է») յարութեան խորհուրդը տալիս է բաւականին խրթին, կրօնական բանաստեղծութեան հին ու յայտնի վերացականութեամբ, անտարանական նիւթի սեղմ յարասութեամբ: Սւ որովհետեւ տաղը գրուած է նաեւ «պատասխանի» կոչուած ձեւով՝ տողավերջի բառն անցնում է յաջորդ տողին, դառնում սկիզբ եւ այսպէս շարունակ, ուստի այն մնում է եկեղեցական բանաստեղծութեան աւանդական մակարդակի վրայ: Ոչ ձեւն է նոր, ոչ բովանդակութիւնը եւ ոչ էլ աչքի է ընկնում յուզականութեամբ: Ահա մի հատուած.

Անուն անեղին էին Աստուած է,

է միշտ յէութեան յանհասութեան նոյն.

Նոյն իմքն է նման, նոյն մի եւ նոյն մի,

Մի ոմն ի յէից անդրէն ի նոյն թիւ. Թիւ միշտ եռակի եզեռակի փառք ... (ԳՆՏԳ, 91)

Տաղն աւարտում է այսպէս.

Տէր յարեալ՝ կանայք գան հանդէս փոյթ,

Փոյթ պատմեալ իմոյ պետրոսեան րամին,

Երամք երամից ձեզ երանեն միշտ,

Միշտ ձեզ երանեն, զի Տէր յարեալ այսաւր.

Այսաւր Տէր յարեալ, փառք յարութեան Տեառն:

(ԳՆՏԳ, 93)

Այս եւ նման քանաստեղծութիւնները չէին կարող ներգործուն ուժ ունենալ: Ժամանակը նոր երգ էր պահանջում՝ պարզ ու յուզական, գեղեցիկ ու անմիջական, ինչպէս ժողովրդական երգը: Ը Նարեկացու որոնումները հանգում են ժողովրդական երգերի ձեւակառուցութեան յայն եւ արտայայտական միջոցներից օգտուելուն: Հոգեւոր քնարերգութեան աւանդական թեմաները նա պատկերում է նոր մօտեցմամբ: Քրիստոսին եւ նրա յարութեանը նուիրած իր մի այլ տաղում Նարեկացին արդէն դիմում է այլաբանութեան հնարամբին: Դա սայլիկի տաղն է: Մանրամասները թողած՝ Նարեկացին նկարագրում է մի սայլ, որն իջնում է Մասիս լեռան աջ լանջից՝ արեւելից, կանգ է առնում ճամապարհին, անիւր չի պտտում, եզները չեն ընթանում, բայց, ահա, ձայն է տալիս նորտ սայլապանը, սայլը շարժում է տեղից, աշխոյժ զլորում է անիւր, եւ տօնական թափօրը հանդիսաւոր մտնում է Երուսաղէմ: Մասիսից՝ Երուսաղէմ: Մ. Մկրեանը գրել է, թէ «Բանաստեղծը գեղեցիկ մանրամասնութիւններով նկարագրում է սովորական գիւղական սայլ»(5): Սայլ՝

սայլ, բայց բնաւ էլ սովորական գիւղական սայլ չէ դա: Նրա լուծը ոսկի է, սամինները՝ արծաթէ, սամոտենները՝ մետաքսից, փոկերը՝ կերպասից, խարազանը՝ փնջած ծաղիկներ: Ոսկի գահ կայ նրա վրայ, գահին քազմած է արքայի որդին, նրա աջ կողմը սերովբէներ են, ձախ կողմը՝ բերրէներ, առջեւում՝ մանուկներ, ձեռքներին սարմուսարման եւ բնար, որոնք նուագում եւ օրհներգում են Քրիստոսի յարութիւնը: Սովորական չեն նաեւ եզները, եղջիրները՝ խաչանման, ամէն մագը՝ մարգարտի հատ, սովորական չէ նաեւ ճամապարհը, շարժման եւ դադարի խորհրդաւորութիւնը, սայլապանը: Այստեղ արդէն իրականում ու հոգեւորը միաեւտուած են այնպէս, որ առանց քացատրութեան տաղի իմաստը մնում է անհասկանալի, թէ եւ տաղը գերում է իր թարմութեամբ եւ յուզական անմիջականութեամբ: Բաւական է ընկալել, որ արքայի որդին աշխարհիկ թագաւորի գաւակ չէ, այլ խորհրդանշում է Յիսուսին, եւ անմիջապէս ամէն ինչ դառնում է բնական. նրա աջ ու ձախ կողմը հրեշտակներ պիտի լինէին, առջեւում՝ բնարաւոր մանուկներ, որոնք օրհներգէին Քրիստոսի յարութիւնը: Մկրեանը գրում է. «Այժմ դժուար է հասկանալ, թէ ինչ կապ ունի այդ տաղը իրրեւ այլաբանութիւն Քրիստոսի յարութեան տօնի հետ» (6): Եթէ դժուար է հասկանալ այլաբանութիւնը, ապա դա չի նշանակում, թէ չկայ այդ կապը: Ը մի՞թէ միշտ էլ դժուար չի եղել թափանցել մեծ քանաստեղծների՝ Հովերոսի, Դանտեի, Շէքսպիրի եւ ուրիշների աշխարհը: Այլաբանութիւնն իսկապէս հասկանալի չէ անմիջականօրէն, եւ Նարեկացին հարկ է համարել գեղարուեստական պատկերը լրացնել մեկնաբանութեամբ: Սայլն իջնում է Սիմաչի եւ խորհրդանշում է Մովսէսի Երկրորդ Օրէնքը, հարիւր քարոյ խորձանը՝ նահապետներին եւ մարգարէներին, վեց

խուրճ կորնգանը՝ արարչի վեցօրեայ գործերը, մէկ մանուշակը՝ Սուրբ Երրորդութիւնը, սայապանը՝ Յովհաննէս Մկրտչին, սայլի չորս գնդերը՝ չորս անտարանները: Ձնայած այս մեկնութեանը, այնուամենայնիւ, ըստ Արեղեանի՝ տաղի «Յօրինուածքի գաղափարը մթնած է» (7): «Քայց այս տաղի արժանիքն այնքան իր նկարագրի մանրամասնութեան, իրականութեան ճշգրիտ պատկերի մէջ չէ - շարունակում է Արեղեանը - որքան արտայայտութեան ձեւի մէջ» (8): Սա նուրբ դիտողութիւն է կրօնական թեման Նարեկացիին մատուցում է գեղարուեստական նոր մօտեցմամբ, այլաբանօրէն, արտայայտչական եւ տաղաչափական նոր միջոցներով: Իրականութեան զգացողութիւնից Նարեկացիին բարձրանում է հոգեւոր պատկերացումների ոլորտը՝ առարկայականն իմաստաւորելով հոգեւոր տեսանկիւնից: Այստեղից էլ ծագում է նրա արտայայտած գաղափարի ընկալման բարդութիւնը: Աս. Մնացականեանը գտնում է, որ «Քրիզոր Նարեկացիին խօսում է վերացական սայլի մասին», որ նրա նկարագրած սայլը «ոչ թէ իրական, երկրային սայլ է, այլ գերբնական, աստուածաշնչային» (9), որով Մովսէս մարգարէի աստուածային պատգամների տապանակը Սինա լեռից տեղափոխուել է Երուսաղէմ: Սա նիշտ է մասամբ՝ իրեն այլաբանութեան հիմքի գուգահետ: Քայց սա չի օգնում տաղի գաղափարը հասկանալուն: Կարելոր է այլ կէտ. ինչո՞ւ է կանգնում սայլը, ի՞նչն է ընթացք տալիս նրա շարժմանը, ի՞նչն է դեր ունի սայլապանը:

Ըստ Նարեկացու մեկնութեան՝ սայլը Սինայից տանում էր մովսիսական Հիմ օրէնքը: Սայլը դադար է առնում, անիւր չի պտտում: Սայլը խորհրդանշում է ժամանակի ու պատմութեան ընթացքը: Մարդկութեանը նոր օրէնք էր պէտք: Այդ օրէնքը արտայայտուած է անտարանների

մէջ: Առաջին մարդը, որ ազդարարում է այդ մասին, Յովհաննէս Մկրտչին է: Նա է, որ ձայն է տալիս, եւ սայլը շարժում է տեղից՝ հանդիսաւոր, շեղ ու յաղթական: Նարեկացիին Յովհաննէս Մկրտչին այլ առիթով կոչել է «Ստուերին լրումն եւ նորոյս սկիզբն» (Քան ՀԱ, դ), իսկ նրան նուիրուած գանձում գրել է այսպէս. «Աւարտ եւ կէտ դադարման ստուերին եւ ճշմարտութեան նորոյս՝ սկիզբն եւ առաջնորդ» (ԳՆՏԳ, 143):

Անկապած է, որ այլաբանութեան իմաստը կապում է Քրիստոսի յարութեան հետ: Սայլը իրեն առարկայ՝ Նարեկացու համար խորհրդանշել է, ժամանակի ու շարժման խորհրդանշել, եւ նրան բնաւ էլ չի մտահոգում սայլի նկարագրութեան ճշգրտութիւնը, այլ գաղափարական այն նշանակութիւնը, որ ինքը ձգտում է արտայայտել տեսանելի պատկերի եւ գեղեցիկ ձեւի մէջ: Ընդունելով, որ տաղը նուիրուած է Քրիստոսի յարութեանը եւ, առհասարակ, յարութեան գաղափարի փառաբանութեանը, Գ. Արգարեանն այն միտքն է յայտնում, որ Նարեկացիին այդ գաղափարը կապել է նաեւ հայ ժողովրդի եւ հայրենի երկրի յարութեան գաղափարի հետ: Ինձ հաւանական է թւում տեղայնացման եւ ազգայնացման այս քաջատրութիւնը եւս: Նարեկացիին իրզանդական «գուգածիրանի» կայսրներին՝ Վասիլ եւ Կոստանդին եղբայրներին, մեծարում է առաջին հերթին այն քանի համար, որ նրանք, «տապալեցին, ընկրկեցին, ընդոտնեցին եւ ի կոր կործանեցին զլեռնակարկառ մոլութիւն հարաւային բռնութեան որդոցն Հագարու» եւ «հաստախարիսխ հիմամբ կառուցին, պատրաստեցին, յօրինեցին, յարմարեցին, յարդարեցին, գեղագեցին ի գարգս պայծառս եւ երբերգելիս գրիստոնէիցս եկեղեցի» (ԳՆՄ, 274): Արարական լծից հայ ժողովրդի ազատագրուելու, նրա

պետական անկախութեան վերականգնման եւ հայոց եկեղեցու հեղինակութեան բարձրացման փաստի մէջ Նարեկացին, անշուշտ, կարող էր տեսնել Քրոսոտոսի՝ իբրեւ միշտ կենդանի Աստու յարութեան խորհուրդը:

Այլաբանութիւն է նաեւ «Ես ձայն գառիծուն ասեմ» սկսուածժով տաղը, որը ձեռագրում խորագրուած է նաեւ մեղեդի յարութեան (ԳՆՏԳ, 129): Առիծը, որ խորհրդանշում է Քրիստոսին, մոնչում է քառաբեի՝ խաչի վրայ, եւ նրա ձայնից սասանում է սանդարմտը, սարսափում, որ նա քանդելու է իր ամրոցը, գազտելու է գերիներին.

- Ահեղ ձայնս, որ ես լըւայ, սա քակե գամուրս, որ ունիմ.

Ջամուրս իմ քակել կամի, գերելոցն առնել գերեղարձ:

(ԳՆՏԳ, 130)

Թէւ սանդարմտ, ամրոց, քանտ ու գերի փոխաբերութիւնները կապում են կրօնական պատկերացումների հետ, սակայն, նախ՝ նրանց միջոցով վերացականը դառնում է առարկայական եւ խորհրդանշական եւ, երկրորդ, անձնաւորութիւն՝ բանաստեղծութիւնը քնարական շունչ է առնում, ուր ակներեւ է բանաստեղծի յուզական վերաբերմունքը: Առիծը իբրեւ ուժի եւ վեհանձնութեան խորհրդանշան կապ ունի ժողովրդական բանահիւտութեան հետ, իսկ սա իրականում խորացնում է բանաստեղծական պատկերի աշխարհիկ երանգը:

Խորհրդանշանը մոյմբան պարզ ընկալելի է նաեւ «Հաւո՛ւն, հաւո՛ւն արթնացեալ» սկսուածժով մեղեդու մէջ, ուր արթնացած հաւը զուգահեռում է աֆղադի հետ եւ խորհրդանշում է Քրիստոսին: Հաւը ձայն է տալիս իր սիրելի հարսնուհուն՝ տատրակին, պատսպարուելու վէժի հովանու տակ, ուր հարսը խորհրդանշում է եկեղեցին, վէժը՝

Քրիստոսին: Նա հարսանիքի է հրաւիրում քոյորին.

Հրաւէ՛ր, հրաւէ՛ր հարսանեաց. եկա՛յք մոր ժողովորդք,

Կերա՛յք, կերա՛յք յիմ հացես եւ արբէք զիմ գինիս ...

(ԳՆՏԳ, 116)

Եթէ հարսանիք, հաց, գինի բառերը հասկանանք իրենց առարկայական իմաստով եւ ոչ թէ խորհրդանշական առումով, ապա մենք չենք հասկանայ ոչ տաղը եւ ոչ էլ նրա գաղափարական բովանդակութիւնը: Նարեկացին ձգտել է քրիստոնէական վարդապետութեան հիմնական գաղափարներին մէկը մարմնաորոն գեղեցիկ ձեւի մէջ եւ մատուցել քնարական յուզիչ անմիջականութեամբ: Հացը խորհրդանշում է Քրիստոսի մարմինը, գինին՝ արիւնը, հարսանիքը՝ քրիստոնեաների քաղմութիւնը: Եւ եթէ պէտք է նշել անտարանական հիմք, ապա պէտք է վկայակոչել Յիսուսի իր իսկ խօսքերը. «Ես եմ հացն կենդանի որ յերկնից իջեալ: Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան. եւ հացն, զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի» (Յովհ., Զ, 52): Անվախճան կեանքով Քրիստոսի մէջ յաւիտեան պարելու այս միտքն էլ, հաւանաբար, յուշել է բանաստեղծութիւնը համարել յարութեան մեղեդի:

Յետադարձ հայեացք գցելով Քրիստոսի յարութեան թեմայի Նարեկացիական վերարտադրմանը, պէտք է ասել, որ Նարեկացին նախ սկսել է անտարանական միութի յարասութիւնից, ուր դաւանաբանական վերացականութիւնը իշխում է մտքի ու դատողութեան վրայ, բանաստեղծութիւնը դեռեւս չունի յուզական յիգիեր, այնուհետեւ նա դիմում է այլաբանութեան՝ սայլի, առիծի, հաւքի խորհրդանշական պատկերներին, բանաստեղծութեանը հարորդելով անմիջական

հնարականութիւն, պատկերաւոր մտ-
ծողութիւն, ձեւակառուցումովային նոր
յատկանիշներ, որոնց ակունքները գալիս
են ժողովրդական երգերից: Դա մի կողմից
տանում է դէպի գրականութեան
աշխարհականացում, միւս կողմից՝
բանաստեղծութիւնը բեռնաթափում է
կրօնադաւանական հասկացութիւններից,
վերացական եւ անյոյգ մտահայեցութիւնից:
Առարկայի երկակի իմաստը, թեւս սփռում
է բովանդակութեան յատկութիւնը,
հնարաւոր է դարձնում մեկնաբանութեանը
մօտեմալ տարբեր հայեցակէտերից, սակայն
մեծապէս նպաստում է բանաստեղծական
պատկերի տպաւորութեան ուժեղացմանը,
արտայայտչամիջոցների հարստացմանն
ու թարմացմանը, հնարականութեան
անհատականացմանը:

«Խորհրդանիշը – գրում է յայտնի
միջնադարագէտ Ա. Յա. Գուրեւիչը –
միջնադարի ըմբռնմամբ պարզ
պայմանականութիւնն է, այլ օժտուած է
վիթխարի նշանակութեամբ եւ լցուած է
ամենախոր իմաստով: Չէ՞ որ առանձին
գործողութիւն եւ առարկայ է, որ
խորհրդանշական է, այլ ողջ այս
կողմնային աշխարհն այլ բան է, իսկ այն
կողմնային աշխարհի խորհրդանիշը. ուստի
ամէն մի իր օժտուած է կրկնակի կամ
բազմակի իմաստներով եւ գործնական
կիրառութեան հետ մէկտեղ ունի նաեւ
խորհրդանշական կիրառութիւն: Աշխարհը
գիրք է՝ գրուած Աստուծո՞ւ ձեռքով, որի մէջ
ամէն էակ իրենից ներկայացնում է
բառ, որը լեցուն է իմաստով» (11):

Միջնադարեան հայ հնարագործեան
գոհարներից է Նարեկացու «Տաղ
Վարդավառին» բանաստեղծութիւնը:
Կարդում ես, եւ յորդ յոյզերի անակնկալ
մի յորձանք համակում է հոգիդ: Թըլուս
է՛ տեսնում ես լեռնային մի հովիտ, ուր
շոյլ ծաղկում են վարդեր ու շուշաններ՝
ոսկէ թերթերը տարածած արեգակի ներքոյ:

Ասես շնչում ես ծաղկած ծառերի բոյրը,
լսում սօսիների ու նոնիների սուսափը,
հրեւում նրանց ընծիւղների գոյնների խաղով:
Շուշանը շողում է վարդերի շուրջպարում,
հովն օրօրում է նրան, գողը մարգարտաշար
հուլունքներ է շարում ծաղկաթերթերին:
Օրը թե՛ւում է դէպի մայրամուտ, ամպերն
օժում են արեւի երդեհով, յուշիկ իջնում
է գիշերը, լուսինը սահում է հանդարտ՝
աստղերը շուրջը բոլորած: Եւ ամէն ինչ՝
ծառ ու ծաղիկ, վարդ ու շուշան, աստղ
ու լուսին՝ լցուած է կենարար մի
թարմութեամբ: Տխրութեան ոչ մի բող,
թախծի ոչ մի ծուէն: Համատարած լոյս ու
արեւ, շող ու շաղ, կեանք ու հրեւումնք:

Ըստ Արեղեանի՝ սա միակ տաղն է,
որ նուիրուած է բնութեանը: «Բանաստեղ-
ծը երգում է բնութիւնը – գրում է
Արեղեանը – թէպէտ դարձեալ կրօնական
նպատակով» (12): Ես ընդհանուր ամ
Արեղեանի դիտողութիւնը՝ Նարեկացին
բնութիւնը երգում է կրօնական նպատակով:
Այլ կերպ ասած՝ նրա համար էականը
բնութիւնը եւ նրա գեղեցկութիւնը է, այլ
նրա արարիչը: Եւ չի կարելի համաձայնել
Մ. Մկրտեանի հետ, որ իբր, Նարեկացու
համար բնութեան բոլոր գեղեցկութիւնների
«աղբիւրն ու սկզբնապատճառը արեւն է,
արեւի կենսատու մեծ գորութիւնը» (13):

Նարեկացու «Տաղ Վարդավառին»
բանաստեղծութիւնը եւս այլաբանութիւն
է՛՝ նուիրուած Քրիստոսի պայծառա-
կերպութեան միաստիկ խորհրդին: Ճիշտ է,
ոմանք այն կարծիքն են յայտնել, թէ «դա
տիրամօր այլաբանական պատկերումն է»
(14), եւ գոհար վարդը խորհրդանշում է
տիրամօրը եւ ոչ թէ Քրիստոսին, բայց
դրանից այլաբանութիւնը չի դադարում
այլաբանութիւն լինելուց: Վարդը
խորհրդանիշ է, եւ սա է կարեւորը: Եւ
որովհետեւ բանաստեղծը իր առջեւ խնդիր
է դրել պատկերելի Պայծառակերպութիւնը,
որը գոտս միաստիկ մտապատկեր է, ուստի

գոհար վարդի նկարագրութիւնն էլ աւելի շուտ պայմանականութիւն է, քան իրական ծաղկի նկարագրութիւն: Պայծառակերպութեան տօնը յոյնըը կոչել են Պսակաց տօն, հայերը՝ Վարդավառ: Վարդավառը հայոց հիմ հեթանոսական տօներէից է՝ Գիցուհու վարդեր են նուիրել, ջուր ցանել իրար վրայ, ինչ յարատեւում է մինչեւ այսօր՝ իբրեւ ժողովրդական տօն: Քրիստոնէական եկեղեցին իմաստափոխեց հեթանոսական տօները: Վարդավառին փոխարինեց Պայծառակերպութիւնը: Այդ տօնը սահմանուել է ըստ աւետարանական այն առասպելի, թէ Քրիստոսը յարութիւն առնելուց յետոյ, Թաբոր լեռան վրայ, երևացել է իր աշակերտներէից ոմանց: Այդ օրը նա «ի դէպ եկեալ արեգակնակերպ փայլման դիմացն իբր վարդ կարմիր, եւ ձիւնատեսիլ երեսման հանդերձից իբր վարդ սպիտակ» (15). դէմքը՝ կարմիր վարդ, զգեստը՝ սպիտակ վարդ, գուցէ եւ սպիտակ շուշան: Ահա այս միջոց է, որ, ըստ իս, այլաբանօրէն մարմնաւորել է Նարեկացին: Վարդավառին նուիրած իր գանձում տեսիլքին ակնատես աշակերտներին մասին Նարեկացին գրում է այսպէս.

Ձոր տեսեալ նոցա գտուկալի տեսիլն
 ահեղահարաշ այլակերպութեանդ,
 Յահէ փայլակնացայտ լուսոյդ եւ
 յաստուածային ճառագայթիցդ
 կիսամահ յերկիր անկանէին:

(ԳՆՏԳ, 194)

Ասուածից հետեւում է, որ Նարեկացին բնութիւնը երգել է ոչ թէ առարկայօրէն, ինքնին, աշխարհիկ ընկալմամբ, այլ այլաբանօրէն: Նոյնիսկ Վարդավառի տաղը, որ թուում է բնութեան անխառն նկարագրութիւն, իրականում Նարեկացին գրել է «դարձեալ կրօնական նպատակով» (16), ինչպէս ասել է Արեղեանը: Տարբարոյք եւ անհաւասարար-

ժէք են Նարեկացու բանաստեղծութիւնները: Գանձերը եւ մի շարք տաղեր պատկանում են կրօնա-եկեղեցական գրականութեանը: Նարեկացու լաւագոյն տաղերը տոգորուած են բնութեան կենդանի զգացողութեամբ: Նարեկացին սակայն բնութիւնը երգում է այլաբանօրէն, իմաստաւորում խորհրդանշաբար՝ մնալով աւանդական թեմաների շրջանակներում:

ԱՂԻՒՄՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Խոսքով Անճեւացի, Մեկնութիւն ժամանակագրութեան, էջ 65
- 2 Նարեկուն, էջ 59, ծմք. 10
- 3 Նոյն տեղում, էջ 60
- 4 Ճ.Ճ.ՅԵՎԿՈՅ, *Будничная семетика*, М., 1977, с.63.
- 5 Մ. Մկրեան, Գրիգոր Նարեկացի, էջ 155
- 6 Նոյն տեղում, էջ 154
- 7 Մ. Արեղեան, Երկեր, հ. Գ, էջ 62,
- 8 Նոյն տեղում, էջ 626
- 9 Ա. Մնացականեան, ԺԶ-ԺԷ դդ. մոռացուած բանաստեղծ Գրիգոր Վանեցին եւ նրա անտիպ տաղերը, «Էջմիածին», 1975, մո. 10, էջ 49
- 10 Գ. Արգարեան, ըզվ. յօդուածը:
- 11 А.Я.Гурбедя. *Календарная поэзия армянского средневековья*, М., 1972, с.248.
- 12 Մ. Արեղեան, հ. Գ, էջ 628
- 13 Մ. Մկրեան, Գրիգոր Նարեկացի, էջ 147
- 14 Վ. Ցա. Բրիւտով, Հայաստանի եւ հայ Կուլտուրայի մասին, էջ 80
- 15 ՆՆԲ, հ. 2, էջ 792
- 16 Մ. Արեղեան, հ. Գ, էջ 628

(շարունակելի) Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ՝ ԱՐԵՒԵԼՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

Թէ կը փափաքիք զայն կարգալ առաջին էջէն, յարգելով հեղինակին յղացքը, կամ թէ բացառութեան կարգով, առանց յարգելու այդ ընթացիկ դասաւորումը, կը հետեւիք Եկեղեցիներու մկատմամբ ձեր նախընտրութեան, ձեր կապերուն կամ շահագրգռութեանց թելադրութեան, կը ստուգէք, քանի որ իւրաքանչիւր գլուխ կը կազմէ ինքնին անջատ գիրք մը, ինքնութիւն մը:

Գրեթէ անդիմադրելի հետաքրքրութեան, շահագրգռութեան այս արարքը, որ կը խանգարէ հեղինակին ցանկացած ու հաստատած դասաւորումը, շատ քնական է ու հասկնալի, մկտի ունենալով պարունակութեան ճշտութիւնը եւ այս ճշտութեան այլազանութիւնը: Միշտ վերանորոգուած այս անյագեանալի ծառայը, - տեսնել, կարդալ, քննելու եւ դժոխիքով: Գիրքը հաղորդակցութեան լաւագոյն գործիքը չէ՞ դատի մը, դատերու ծառայող: Եւ յետոյ ամէն ինչ կարգի կը մտնէ ...: Ի՞նչ արահետով ալ ուղեւորիք հարիւրաւոր էջերու ընդմէջէն, ձեր հոգեկան մտաւոր թափառումները կը յանգնեն միայն ու միայն Եկեղեցիներու միասնական ամբողջութեան: Այս ամբողջութեան միութիւնը խզում պիտի չունենայ: Բոլոր Եկեղեցիները ունին միեւնոյն ծագումը, հաւատքի թէ ժամանակագրութեան տեսակետէն: Եւ վերջաւորութեան, անոնք կը վերագտնեն իւրաքանչիւրը իր տեղը, ընդարձակ համադրութեան մէջ: Հեղինակին ուզած էական կարգը չի խախտիր:

Ժամ-Փիւր Վալմոյը մայի կը գծէ համադրական ընդհանուր պատկերացում

մը Արեւելք կոչուած ընդարձակ շրջագծի մը մէջ: Ասիկա կը կազմէ հէնքը, ուր կը գատորոշուին Արեւելքի Եկեղեցիները, մինչեւ մեր օրերը գոյատեւող: Անգամ մը որ կը յստակացնէ այս ընդհանուր պատկերացումը, հեղինակը կ'անցնի յաջորդ հանգրուանին. - վերակերտել իւրաքանչիւր Եկեղեցի իր յատուկ նկարագրով եւ միւս Եկեղեցիներուն կապակցութեամբ, բայց մասն իրենց շրջապատին մէջ առած:

Հակառակ ազդեցութեանց, գորս փոխադարձաբար անոնք կը ներգործեն իրենց դարաւոր յարաբերութեանց ու հակամարտութեան հետեւանքով, հեղինակը կը յաջողի խուսափիլ կրկնութիւններէ: Այս վախը շուտով կը փարատի: Մէկ միւթէն միւսը ո՛չ մէկ ներթափանցում, ինչ որ անջատաբար թէ միասնաբար առաջ Եկեղեցիներու համապատկերը պղտոր պիտի դարձնէր հաւանական կրկնութիւններու հետեւանքով: Սայթաքում չկայ:

ԱՌԱԿԵԼՈՒԹԻՒՆԸ

Միանչեղի՞ն տակաւին, այս պատճենը ընթերցողին կ'ընծայէ առաւելութիւնը՝ վերանորոգուելու, բայց մասն ինքզինքն քննելու, ո՛չ թէ անջատաբար առած, այլ մասն ուրիշներու հետ կապակցութեամբ, ամէնէն ընդարձակ հաւանականութեան մէջ: Յարաբերականութեան օրէնքով, իրարմէ գամագանուող կամ իրարու հակադրուող տարբերութիւնները աւելի յստակ կը դարձնեն դիմագիծը, նկարագիրը իւրաքանչիւր հաւանականութեան: Անկախութիւն՝ այո՞, բայց միասնականօրէն:

Մարդոց ապագան, ինչպես եկեղեցիներու ապագան, միասնականութիւնն է: Այս իմաստով, Ժամ-Փիլի Վալոնյի գիրքը կը նպաստէ փոխադարձ ճանաչողութեան, հիմը՝ ամէն երկխօսութեան, վերագտնուած միութեան ճամբուն վրայ առնուած առաջին քայլը: Այսպէս, հեղինակը մեծ ծառայութիւն կը մատուցանէ հասարակաց դատին եւ սեփական դատերուն պաշտպանութեան: Հակառակ իրենց բաժանումներու եւ մօտեցումի տարբերութեանց, որոնք յանախ հետեանմք են՝ Քրիստոնէութիւնը ընդունած ժողովուրդներու կեանքը տնօրինող Պատմութեան իրադարձութեանց, անոնք գիրքը կը վերագտնեն դժբախտութեանց ու հալածանքներուն մէջ: Տիրող սպառնալիքները, որ կը քաղուի գրքին ընթերցումէն քրիստոնեայ հաւատքին մէջ մեծ ներդաշնակութեան ու միութեան հանդէպ հեղինակին խոր համոզումն է:

ՀՐԱՅԻՐԸ

Ի յառաջագունէ, հեղինակը աներկբայօրէն կ'ազդարարէ. - «Երբ Արեւելի մէջ քրիստոնեայ ժողովուրդը անհետի, իր սրբավայրերը պիտի վերածուին «Կրօնահոգեւորական Տիգրիսի ստի» տեսարանի» մը, որուն մտապատկերը արդէն կու տայ քրիստոնեայ Երուսաղէմը» (էջ 9): Ու կ'աւելցնէ աւելի հետոյ. - «Թէ Արեւելը, ասեմին քրիստոնեաներով ամէնէն հարուստ հողը, պիտի ըլլայ նոյնպէս առաջինը, ուրկէ պիտի անհետին անոնք, այս իմաստով տխրօրէն յատկանշական է» (էջ 832):

Հեղինակը առաջին հերթին ի մտի ունի Թուրքիոյ արեւելեան ճահանգներուն մէջ հայկական ակերած եկեղեցիներն ու տաճարները. «Արեւելեան Անատոլի մէջ, կը գրէ ան, կրօնական կառոյցներուն քանդումներն ու կողոպտումները ընթացիկ

երեւոյթներ են. մահմետական քանակութեանց քնական թշնամանքը հանդէպ քրիստոնեաներուն կը գուգորդուի Պետութեան վնասակարութեան ջնջելու մարտարապետական ծառանգը, որ կը բացայայտէ հայ ազգաբնակչութեան մատարութիւնը թրքական ներկայութեան հետ համեմատած» (էջ 818): Այս իրատես հաստատումը, որ ամէն տղ ներկայ է եւ այնքան անգամ որ հարկ է զայն ընդգրծելու համար, չի մղեր սակայն հեղինակը կրճու դիրքորոշում մը որդեգրելու, եւ ակնի լաւ, քանի նման կեցուածք մը ի վիճակի պիտի ըլլար պարտելու իր դատումն ու վերլուծումը, ինքնակամ դարձնելով իր պատկէնին առաքելականութիւնը: Ձրանագի հեղինակը չի վարանիր յատկօրէն ընդունելու արեւմտեան տեղութեանց մեծ պատասխանատուութիւնը Օսմանեան Կայսրութեան բնիկ քրիստոնեաներու ողբալի կացութեան մէջ: «Պատասխանատուութիւնը կ'իյնայ արեւմտեան տեղութեանց վրայ, որոնք շատ կանուխ կ'անդրադառնան այն առաւելութեանց, զորս կրնան ձեռք ձգել ներկայութեանէն քրիստոնեայ փոքրամասնութեանց, ասոնց դժուարութիւնները շահագործել փափաքելով» (էջ 804):

Պէտք է հպարտանալ, ի տես իրողութեան մը, որ կը պարզուի գրքին ընթերցման երկայնքին, երբ ցամ է անսահման եւ կը կալանաւորէ ամբողջութիւնը Ազգին, սերունդէ սերունդ: Հեղինակը կը ճշդէ առաջին էջէն. - «Ժողովուրդներուն անուններուն (Փրանսերէնի մէջ) ուղագրութիւնը պահանջելով գլխադիր մը, իսկ կրօնական համայնքներուն անունները՝ մանրատառ մը, ընթերցողը այս ձեւով պիտի գիտնայ, երբ կը խօսինք Յոյներու մասին ազգագրական իմաստով, կամ յոյներու մասին կրօնական իմաստով (այս վերջինները ազգագրականօրէն ըլլաով

Արաբներ, որոնք իբր յունական միայն իրենց ծեսը ունին): (...). Ընդհակառակն, Հայերու և Եթովպացիներու համար, ազգային և կրօնական համեմատութիւնները դժուարաւ կը զանազանուին ուստի, ընդհանրացուցիմք գլխագիրին գործածութիւնը» (այս երկուքին պարագային): Ըսել կ'ուզէ՝ Հայը հումանիշ է եւ ազգութեան և հաւատքի: Հայոց կրած ցեղասպանութիւնը պատշաճ ու անառարկելի ձեւով ներկայացուած է. «Արեւելի քրիստոնեաներուն վրայ օսմանեան տիրապետութիւնը հաստատուած էր զէմներու շաչիւնին մէջ. ան կ'աւարտի Հայոց ջարդովը, 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը: Ողբերգութիւնը տեղի ունեցաւ: Բայց ազատութիւնը կը քացակայէր ժամադրութեան» (էջ 87), և կը փաստէ ջարդերուն կանխատեսեալ բնոյթը, այս մասին ամէն կասկած փարատելով: Եթէ նախաձեռնութիւնը կը պատկանէր Սուլթան Ապտիւլ-Համիտ Բ-ին (1894, 1895, 1896, և 1909), Երիտասարդ-Քուրդները յանձն առին շարունակել (1915-1916) համըտեան ջարդերը, որոնց վերջինները գործադրուեցան Մուսթաֆա Քեմալի ուժերուն կողմէ, 20ական թուականներուն սկիզբը: Լօզանի դաշնագիրը (24 Յուլիս 1923) կը նուիրագործէր Հայոց գրեթէ ամբողջական բնաջնջումը ներկայ թուրքոյ արեւելեան նահանգներուն մէջ:

Գրքին մէջ խտացեալ գիրք մը ինքնին, Հայոց յատկացեալ մանրամասնեալ ուսումնասիրութիւնը, ուր վիճակագրուած են, ինչպէս արդէն միւս համայնքներուն պարագային ալ, բոլոր տուեալները: Եթէ տուեալները ու թուականները, որոնք կը սահմանեն պատմութեան հանգրուանները, բաւարար չեն, կայ գրքին վերջաւորութեան դրուած բնագաղտական գործիքը, հարիւրեակ մը էջերէ կազմուած, որ կու գայ ստուգելու և հաստատելու հեղինակին

պարգած տեսակէտներն ու իրողութիւնները:

Ստուեր մը սակայն՝ ընդհանուր պատկերացումին վրայ. երբ կը խօսուի Հայաստանեայց Եկեղեցւոյ մասին, ժամ-Փիէր Վալոնը կ'անդրադառնայ նաեւ 50-60ական թուականներու միջ-եկեղեցական ծանր տագնապին, որ ընթացիկ գործածութեան առարկայ դարձուց Երկնեկում և Խորուած բառերը: Պատասխանատուութեանց մեծագոյն բաժինը ան կը վերագրէ Էմիլիանին, առանց ճշդելու ալ ժամանակին քաղաքական իրադրութիւնը, որ հետեւանք էր տիրա-հռչակ Պաղ Պատերազմին, Արեւելք-Արեւմտք բուռն հակամարտութեան, այսինքն մէկ կողմէ Գրեմլինի և միւս կողմէ Ուաշինկըթնի միջամտութեանց:

ՀԻՍՏՈՒՄ, ԿԱՐԵՎՏՈՒԹԻՒՆ

Երկար նամակով մը դիմեցիմք հեղինակին (պատմութեան փրոֆեսոր, ասպարէզով դիւանագետ, որ երկար առեմ Միջին Արեւելք գտնուած է) լուսաբանելու համար այս կէտը. ժամ-Փիէր Վալոնը հետեւեալ գրաւոր պատասխանը տուաւ. - «Ինչ կը վերաբերի Հայ Եկեղեցիին, կը հասկնամ թէ խօսելու անց վիրաւորած են քիչ մը: Արդարեւ, կրնայ ըլլալ որ սովետական ռեժիմի շրջանին Էմիլիանի կաթողիկոսին կեցուածքին շուրջ արծարծումներս չափազանցօրէն խիստ եղած ըլլան, և բաւարար չափով նկատի առած ըլլան Պաղ Պատերազմի հետեւանքով ստեղծուած կացութիւնը: Հաստատապէս հաստատեցէ որ միայն ու միայն հիացում ու կարեկցութիւն ունիմ հանդէպ հայ ժողովուրդին, որուն հանճարն ու տառապանքները ծանօթ են ինձի»:

Այս հարեւանքի մատնանշումը ո՛չ մէկ ձեւով կը վնասէ արժէքին այս գրքին, որ կը կազմէ քրիստոնեաներու ընդարձակ ընտանիքին վերաբերեալ առարկայական

վիճակագրութեանց բժախնդիր համադրութիւն մը, համայնագիտարանի ձեռով, անկարելի նկատուած արտակարգ մարդահամար մը, որ նկատի կ'առնէ կարելի եղածին չափ ժամանակակից բոլոր տուեալները: Հոն տեղ գտած են անջատ գլուխի տակ, Լիբանանի նորագոյն մեծ տագնապը, քաղաքացիական պատերազմի շուրջ, եւ անոր երկարաձգումները ներկայ ժամանակներու մէջ: Լիբանանեան շրջագծին մէջ, մեր եկեղեցագիտական տագնապին կապակցութեամբ խորաքափանց լոյսի տակ կը վերլուծուին հայ կուսակցութեանց դերն ու յարաբերութիւնները՝ մեր համայնքը յուզող բոլոր հարցերուն կապակցութեամբ:

Քիչ անգամ գիրք մը արդարացուցած է կոթողական բառին անվերապահ գործածութիւնը, ուր ծաւալը, նոյնութիւնն ու առարկայականութիւնը ա՛յսփան ներդաշնակօրէն գիրար ամբողջացուցած են: Երախտաշատ գործ մը՝ որ կը հարստացնէ մարդկութեան պատմական տուեալներուն գանձարանը, գրանցելով հեղինակին համոզեալ վկայութիւնը ի միջի այլոց Հայոց կրած նահատակութեան վերաբերեալ:

ՆԱԶԱՐԷԹ ԹՕՓԱՆԵԱՆ

Փարիզ

«ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ՝ ԱՐՆԻԵԼՔԻ ԳՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ» - Հեղինակ՝ Ժան-Փիէր Վալուրը, 974 մեծադիր էջ, ծանօթագրութիւններ, մատենագիտութիւն, նիւթերու եւ տեղանուններու ցանկ: Հրատարակութիւն՝ Գրատուն Արտսմ Ֆայեարի, Փարիզ, 1994

ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԻՌՆԻ 1995 Ցունուար-Փետրուար-Մարտ թիւին մէջ, «Ժառանգաւորացը Մեր Օրերուն» յօդուածին ակնարկելով, Գեր. Տ. Հմայեակ Սպ. Ինթոյեան իրաւացիօրէն հետեւեալ դիտողութիւնը եւ սրբագրութիւնը կը կատարէ, էջ 80ի մէջ ակնարկուած Վարդանանց Թատրերգութեան կապակցութեամբ յիշուած «Զլյթունի հերոս Յունուցցի Բարդուղիմէոս Մ. Վրդ. Թագագնեանի» եւ Վասակի դերը կատարողին (ապա Հայր Հմայեակին) միջեւ տեղի ունեցած միջադէպի մասին.- «Ազատ Ինթոյեան ժառանգաւորը 1930ին Վարդանանց Տօնին Թատրերգութեան մէջ խաղարկած է Ներշապուհի դերը եւ ոչ թէ Վասակի դերը:»

ՆՍԲ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍ. ՆՈՐԱՇԷՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Պատմական Տեղեկանք

Նորաշենի Սուրբ Աստուածածին Եկեղեցին գտնուում է Թիֆլիսի կենտրոնական մասում, Մեյտանի այժմ էլ գործող Սուրբ Գեորգ Եկեղեցուց ոչ հեռու, Լեւիծէ փողոցի եզրին: Այն հիմնադրուել է 1467ին, ումն Սատաթի կողմից իր հոր՝ Պրն. Սուլթանի, պապի Պրն. Թաւաֆալի, կողակից՝ Վիշելի եւ այլոց յիշատակին: 1650ին Խոջա Նազարը վերակառուցել է քայքայուած հին եկեղեցին: Գրեթէ կառուցել է «Ուստա» Պետրոսը: 1672ին Տփղիս այցելած Ժան Շարդենը հիկեղեցին յիշատակում է միեւնոյն անուամբ: Հերթական նորագութիւնը կատարուել է 1795ին, Բեհրուդեան Մելիք-Աւետիքի հրամանով եւ Գրիգոր Քահանայի նախաձեռնութեամբ (մէկ այլ աղբիւր նշում է 1793ը): 1808ին դարձեալ նորագուել է գործակալ Տէր-Ղազարի եւ Պրն. Մունթոյեանի գլխավորութեամբ: Պատճառը՝ 1795ի Աղա-Մահմատ Խանի անբիշարշաւանքն էր, որից տուժել էր նաեւ Նորաշենի Ս. Աստուածածին Եկեղեցին: 1875ին, Ներսէս Կաթողիկոսի բոյլոսութեամբ նորագուել է եկեղեցու Կղմիները տանիքը: Շէմքի ներսում նորագումներ են կատարուել նաեւ 1897-1900 թուականներում: Բակում հանգչում են Տիկ. Լիտա Թամաշեանի, Վարդանովներից մի քանիսի, Տիկ. Կատարինէ Փրիդոնեանի եւ այլոց ահիւնները: «Արմեանակի Պազար» փողոցի

վերակառուցման կապակցութեամբ, 1924-25 թուականներում կազմուած մասնագէտներու խորհուրդը (Յուշարձանների Պահպանութեան Բաժնի վարիչ Ս. Կակարաճէ, Գ. Չուրիանշուիլի, Գ. Զիտայա, Ա. Սեւերով, Մ. Զըխեմկելի, Քաղաքի Բարեկարգման Բաժնի պետ՝ Ս. Գուրգիանի, վերահսկիչ՝ Աքաշիճէ եւ Ալլաճէ) ճայների մեծամասնութեամբ որոշում են քանդել Նորաշենի Սուրբ Աստուածածին եկեղեցին, բայց Ն. Սեւերովի աննկուն դիմադրութեամբ որոշումը չի հաստատուում: Նիստը գումարուել էր 1925ի Յուլիսի 2ին:

Հարիւրամեակներ շարունակ Նորաշենի Սուրբ Աստուածածին Եկեղեցին հայ եւ օտար հեղինակներն ու այցելուները իրենց բողոքած գրաւոր աղբիւրներում յիշում են որպէս Տփղիսի գլխավոր հայկական եկեղեցիներից մէկը: Այդ փաստը չեն թաքցրել նաեւ վրաց ուսումնասիրողները, բայց 1989ից սկսած՝ եկեղեցին սեփականացելու կամ իւրացնելու նպատակով վերջիններիս կողմից չդադրող ոտնձգութիւններն առանձնապէս սուր բնոյթ ստացան 1994ի վերջերին:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՎԱՆԻ
ՎԵՐԱՇԵՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱԳՈՐԾԻՒՆ

29 Դեկտեմբեր 1994.- Երեսնում լոյս տեսնող «Ազգ» օրաթերթի (#250) առաջնորդող՝ «Թիֆլիսի Սուրբ Նորաշենի Հայկական Եկեղեցին Վտանգուած է»

յօդուածն ահազանգում է, որ եկեղեցու ներսում պահուող գրքերը սկսել են դուրս բերուել, իսկ յաջորդ ֆայլերը լինելու են եկեղեցու նորոգումն ու վերանուանումը:

29 Դեկտեմբերի.— Երեւանից ժամանած նկարիչ Նաչատուր Գեորգեանին եւ լրագրող Եկատերինա Ղազարեանին ընդունում է Վրաստանի Պատրիարք Իլիա Չրդի ֆարտուղարը՝ Հայր Թեոդորոս Ջոխաձէն: Հիւրերի Ապատակը մէկն էր՝ իմանայ, թէ վերջապէս ի՞նչ է սպասում Նորաշէնի Եկեղեցուն: Կարճ գրոյցը ցաւօժ վերածուեց վիճարանութեան եւ անցաւ ուրի վրայ, քանի որ ֆարտուղարը հիւրերին անգամ չէր առաջարկել նստել: Վէճի ընթացքում Ջոխաձէն նշել է, որ վրացական Սիւնի հարեւանութեամբ անթոյլատրելի է որ լինի հայոց եկեղեցի.— «Մենք այն պէտք է դարձնենք վրացական»: Ապա անելացրել է, թէ «վրացիները շինել են եւ ծախել հայերին», իսկ Ն. Գեորգեանի «Դա ի՞նչ արտայայտութիւն է, եկեղեցին առ ու ծախի առարկայ չէ, եւ բացի այդ ո՛չ հայը, ո՛չ ռուսը եւ ո՛չ էլ արեւմտաեւրոպացին, այլ ձեր վրացին է գրել» Թ. Կլիրկվիլիան, որ այդ եկեղեցին հայկական է» պատասխանեց յետոյ առանց ցտեսութիւն ասելու Հայր Ջոխաձէն թողոց հիւրերին ու շտապով հեռացաւ:

29 Յունուար 1995.— Շրջակայ հայ քնակիչները նկատել էին, որ արդէն մի քանի օր եկեղեցու ներսում ինչ որ աշխատանքներ էին կատարուում: Հետաքրքրուողներին հարցմանը պատասխան է տրուում, թէ բնիւր մեղքուածք ունի եւ ընթացում են վերականգնման աշխատանքներ:

2 Փետրուար.— Քանդում—ձեւափոխումների լուրը առնելով, Նորաշէնում հաստատուած վրաց Տարիէլ Քահանային իրենց բողոքն են յայտնում Վիրահայոց Մշակութա—Ֆարեգործական Ընկերութեան նախագահ Գ. Մուրատեանը

եւ Վրաստանում ՀՀ դեսպան Լ. Նաչատրեանը, սակայն Հայր Տարիէլը արհամարհանքով է վերաբերում վերջիններին եւ շարունակում դեկալարել ներսի ֆանդման աշխատանքները:

5 Փետրուար.— Արդէն հիմնաւեր բնի (հայոց եկեղեցիներում բնիւր քաւական քարձր է եւ այնտեղ հասնում են ֆարէ սանդուղիներով) մէջտեղում կանգնուում է վրացական ռճով մի մարմարակերտ խաչ, իսկ բնառաջում վրաց եկեղեցիներին բնորոշ կամարակապ պատմէ:

8 Փետրուար.— Ոչնչացւում են եկեղեցում՝ խորանի մօտ, պատի մէջ ագուցուած երկու գեղաճանդակ խաչքարերը, որոնք կրում էին 1650ի ընդարձակ արձանագրութիւններ՝ ջուղայեցի «Ռասա» Պետրոսի ձեռքով եկեղեցու գմբէթի կառուցման կարեւոր յիշատակութեամբ: Քանդում են նաեւ պատի սուղիի այն մասը, որի երեսին պահպանուել էին Յովնաթանեան դպրոցից՝ Միրզայեանի երկու որմնանկարները (19րդ դարի սկիզբ):

12 Փետրուար.— Մի խումբ տեղացի հայեր, որոնց թւում եւ մի երիտասարդ լուսանկարիչ, ցանկանալով ներս մտնել եկեղեցի, հանդիպում են Հայր Տարիէլի եւ նրա շուրջ համախմբուած մի խումբ վրացի երիտասարդների դիմադրութեան: Վերջիններս, հայերի երեսին շարտելով «հետացէ՛ք այստեղից, գնացէ՛ք ձեր Երեւանը, դուք խղճուելի աշխարհով մէկ ցրուած ժողովուրդ էք, հերիք չէ՛ երկու ժամ ենք նուիրել (նկատի ունենանք Սուրբ Գեորգ եւ Էջմիածնեցոց եկեղեցիները Մէլտանում եւ Հաւաքարում): Սա մերն էր, դուք գնել էք մեզանից, մեր Իլիան մեծ հայրենասէր է եւ ուզում է Մէլտանը վերածել ուղղափառութեան կենտրոնի» ու այլ այսպիսի խօսքեր, ծածի ենթարկեցին նաեւ հայերից մէկին, որը ցանկանում էր լուսանկարել եկեղեցում կատարուած աւերածութիւնները:

15 Փետրուար.— Վրաց ծեսով կատարուեց եկեղեցու օծումը: Հանդերձ կատարողն էր Արխագիայից փախստական Բահանայ Դանիէլը: Նորաշէնի Սուրբ Աստուածածին եկեղեցին կոչուեց Խարեքա (Աւետեաց):

17 Փետրուար.— Օրթօնացի (Թաղամաս Թրիլիսում) մի խումբ գայրացած հայ կանայք եկեղեցի մտնելով յարձակոււմ են Հայր Տարիէի վրայ փետտելով վերջինիս մօրուէր: Սա մի կերպ իրեն ազատելով կանանց ձեռքից, գոռում է. «Ի՞նչ ո՛ր էք, սուրբ Գեորգն ու էջմիածնեցոցն էլ կը վերցնենք»:

20 Փետրուար.— Թիֆլիսահայ համայնքի մի խումբ անդամներ բողոքով դիմում են վրացական Խորհրդարանի խօսնակ Վախտանգ Գոգուածին, որի միջնորդութեամբ ժամանակաւորապէս դադարեցում են դեռեւս շարունակուող քանդման-ձեւափոխման աշխատանքները:

22 Փետրուար.— Տարիէ Բահանան ինքնագլուխ շարունակում է եկեղեցու հայկական նշանների քանդումը, փակում են արեւմտեան ճակատից բացուած լուսամուտները:

23 Փետրուար.— Հաւատացեալ Վարդանոյշ Միքայէլեանը եկեղեցի մտնելով նկատում է, որ խորանի անբումից յետոյ դրա առջեւ գոյացրել են մէկուկէ մեքէր խորութեամբ մի փոս, իսկ նրա մօտ ոսկորներ էին ցրի տրուած: Հայր Տարիէլը մտնելով կնոջը, ռոտով հրում է ոսկորները դէպի փոսը եւ մի տախտակով ծածկում այն, իսկ Վարդանոյշ մայրիկին կոպտօրէն հրելով դուրս է հանում եկեղեցուց:

24 Փետրուար.— Մեյտանի Սուրբ Գեորգ եկեղեցու աւագ Բահանայ Նդիշէ Յարութիւնեանը եւ էջմիածնից ժամանած մի սարկուազ եկեղեցի են մտնում այն պահին, երբ Հայր Տարիէլը սանդուղքի աստիճաններին կանգնած, մի ձեռքում երկաթէ բուրջ գործիք, իսկ միւսում զօղոզ սարք (նա նախկինում մոմագործ արհեստաւոր է եղել), ինչ-որ բան էր քանդում պատի մէջ: Տէր Նդիշէի խնդրանքին, թէ մի պահ իջէք, խօսելիք կայ՝ վրացի հոգեւորականը պատասխանում է. «Մի քահանայ էլ ես եմ, ինչպէս որ դու, եւ ես կարգադրութիւն ունեմ եւ իմ աշխատանքն եմ կատարում» ու շարունակում է իր «աշխատանքը»:

28 Փետրուար.— Կոպտօրէն եկեղեցուց դուրս են հանում գրադարանավարուհի Օֆէլիա Սամանեանին, որը եւս վրդովուած էր անբումների լուրից եւ ցանկացել էր տեսնել կատարուածը: Այդպէս՝ շատ հայերի արգելում են մուտք գործել եկեղեցի:

13 Մարտ.— Վրացահայ համայնքի հրաւերով Թիֆլիս են ժամանում Գարեգին եւ Գրիգորիս արքեպիսկոպոսները, եզրաս Վարդապետը եւ ՀՀ ԳԽ Մարզու Իրաւունքների Ցանձնաժողովի Նախագահ Ռ. Պապայեանը: ** Նրկու օր անց վերջիններս ընդունում է Իլիա Չրդ Պատրիարքը: Զրոյցի ընթացքում որոշում է փակել եկեղեցին մինչեւ Հայաստանից մասնագետների մի խմբի հրաւիրումը, որոնք կը հանդիպեն վրաց մասնագետների հետ եւ կ'որոշեն եկեղեցու ճակատագիրը: Իսկ եկեղեցի այցելել՝ Պատրիարքը մերժում է՝ պատճառաբանելով, թէ վրաց ժողովուրդը քնած չէ, ուստի պէտք չէ յուզումներ առաջացնել:

** Այս յանձնախումբը նշանակուած եւ դրկուած էր Թիֆլիս Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկեանի եւ Գեորգայն Հոգեւոր Խորհուրդի որոշումով:

17 Մարտ.— Եկեղեցու հարստային պատին է մտնելով մի էֆուկավատոր ե պատից ընդամենը մէկ մեքր հեռուորութեամբ ընդգրկում տարածքի վրայ երկու մեքր խորութեամբ փոս է փորում: Շրջակայ հայերի հարցին պատասխանում են, թէ եկեղեցու համար խանութ ե կարի արհեստանոց պիտի կառուցեն:

Շրջակայ հայերը վկայում են, որ եկեղեցու դուռը վրացիները յաճախ են բաց անում:

19 Մարտ.— Համապատասխան շինանիւթի փոխարէն եկեղեցու բակ են փոխադրում պեթոնէ հսկայական խողովակներ, որոնք ակնյայտօրէն հարկաւոր էին կոյուղու նորոգման համար:

20 Մարտ.— Եկեղեցու հիւսիսային լուսամտի գոգին տեղադրում են վրաց սրբապատկերներ, որպէս զի վրացի հաւատացեալները այդտեղ մոմ վառեն:

28 Մարտ.— «Ախալ Թառա» («Նոր Սերունդ») թերթում (#20) լոյս տեսաւ «Ռ՛ւմ Համար է Ղօղանջում Զանգը» վերնագրով ե «Փակեցին Վրացական Եկեղեցին» ենթավերնագրով յօդուածը, որտեղ Կիւրկի Շալուսաշլիլին ցաւ էր յայտնում, որ Վրաստանի մէջ հայերին յաջողուել է փակել տալ արդէն օծուած ե գործող վրաց եկեղեցին: Յօդուածագիրը, որը դժգոհ էր Վիրահայ համայնքի դրսեւորած գործունէութեան, իր նիւթն աւարտում է հետեւեալ անտեղի լրատուութեամբ. «Թիֆլիսի Գլղան արուարձանում, նորակառոյց վրաց եկեղեցու աւագ Քահանայ Վասիլիի վրայ յարձակուել է ուն հայ՝ Գեորգեան, որը յանցագործութեան համար, սակայն, իրաւապահ մարմինների կողմից պահուել է միայն 1 օր»:

29 Մարտ.— Թիֆլիսում լոյս տեսաւ «Մարջի» («Հմուտ») գլխադակն թերթի 4րդ համարը՝ «Թիֆլիսում Վրացիների

առջեւ Փակեցին Եկեղեցին» վերնագրով անհեղինակ յօդուածով: Այստեղ եւս արտասան է յայտնում, որ նորարաց վրաց եկեղեցին հայերի ճնշմամբ փակուել է, եւ ճնշողատու են վրաց իշխանութիւնները, որ տեղի են տուել հայերին: Այս յօդուածի վերջում էլ անտեղի գուգահեռներ են արւում Արիսագիայի «Բաղրամեանի» անուան գումարտակի ե Ջաւախի հայերի իրր հակավրացական գործունէութեան միջեւ ե շեշտում է, որ վրաց իշխանութիւնները հերթական անգամ մեղմ են հայերի հանդէպ:

18 Ապրիլ.— Թիֆլիսում լոյս տեսնող «Զաւալֆազկաւի Վայեննի Վտեմօս»-ի #73ում տպագրուած յօդուածում, հեղինակ Միքայէ Այդինովը Հայր Տարիէի կատարածը կոչում է Վանալիզմ, քանի որ եկեղեցին սեփականացնելու նպատակով ոչնչացուել էին խորանը ե 19րդ դարի սկզբների որմնականները (ոչնչացուած խաչքարերի մասին ոչինչ չի նշել): Այդինովը գրում է, որ Նորշէնի Սուրբ Աստուածածինը արդէն 7րդ հայոց եկեղեցին է, որ վերջին տարիներին վրացացուել է Թիֆլիսում, իսկ Սուրբ Աստուածածնից յետոյ հերթը Սուրբ Նշանինն է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Խորին ցաւով պիտի արձանագրենք, որ հայ մշակոյթի յուշարձանների միտումնաւոր ոչնչացման կամ իւրացման երեւոյթը Վրաստանում արդէն տասնամեակների վաղեմութիւն ունի, բայց այն, ինչ կատարուում է 1988 ի երկրաշարժից անմիջապէս յետոյ ու առ այսօր, կարելի է թերեւս համեմատել միայն 1930ական թուականների վերջերին ու 40ականների կատարածի հետ: Վերջին 5-6 տարիների ընթացում միայն Թիֆլիսում անհետացել ու ոչնչացուել է շուրջ 210 հայերէն վիմագիր արձանագրութիւն: Նորոգման

անուան տակ բարբարոսաբար ֆանդու-աւերում են հայոց եկեղեցիներին բնորոշ բարձր քեմերը, մկրտարանի աւազանները, խաչկալներն ու մինչեւ անգամ զանգակատները: Էլ չենք խօսում յաջֆարերի ու տապանաքարերի մասին: Այդ կերպ Տփղիսի երբեմնի 41 հայկական եկեղեցիներից մինչեւ վերջերս կանգուն մնացած 16 եկեղեցիների մեծ մասը այլափոխուեց ու վերացացուեց վերջին 5-6 տարիների ընթացքում: Միայն այս տարուայ Յունուարին գրեթէ ամբողջապէս աւերուեց Ձորաբաշի Սուրբ Գեորգ եկեղեցին (Հաւաքարում), որի մասին որեւէ տեղ չյիշուեց կամ չգրուեց, կարծես 1600ի գանձակեցի հայ գաղթականները երբեւէ չէին էլ կառուցել այս եկեղեցին: Եւ ահա հերթը հասաւ Նորաշէնին:

Հայ մասնագէտները պիտի հանդիպեն վրացի մասնագէտների հետ: Մեծ բան: Պայթեցուած Շամֆորեցոց Կարմիր Աւետարան եկեղեցու ֆանդաման պատճառով էլ հանդիպեցին, բայց եկեղեցու կանգուն մնացած մասերն էլ ամրացնելու փոխարէն ֆանդեցին, իսկ փլուածքները որպէս շինադր հետաքրքին: Ի՞նչ արդիւնք կարող ենք ակնկալել այդ հանդիպումից, երբ գործ պիտի ունենանք Յովնաթանեան նկարչական դպրոցից 4 անկրկնելի որմնանկարներին առանց խղճի խայթի քերող-թափող Հայր Տարիէլի ու նրա մամաների հետ: Այսօր Վրաստանում ջնջում են հայ միտքը, մեր պատմութիւնը, կործանում են մշակոյթի ու արուեստի եզակի գործերը միայն նրա համար, որ վրացական չեն: Անկասկած, եթէ ձեւափոխութիւնների միջոցով եկեղեցիները իւրացնել չյաջողուէր, դրանք եւս պիտի հիմքից աւերուին:

Ցաւ է, մեծ ցաւ, որ ֆաղափակութեան համաշխարհային գանձարանում իրենց ուրոյն տեղն ունեցող վրացիների մերկայ սերնդի որոշ պատասխանատուներ, ընտրել են դրացի

ժողովրդի մշակոյթի ոչնչացման կամ իւրացման յանցաւոր ու ամօթաբեր ճանապարհը: Առաւել ցաւալի է, որ մեր մշակութային ժառանգութեանը տիրանալու անպատուարք գործողութիւնները ղեկավարում ու իրականացնում է բարձրաստիճան մի հոգեւորական: Այո՛, Վրաստանի Պատրիարքը (երբեմն յորորչում է կաթողիկոս) Յուշարձանների Պահպանման եւ Վերականգնման Պետական Վարչութեան լուռ համաձայնութեան գլուխ է կանգնել ծաւալուած վանտալիզմին: Բաւական է միայն նշել 1992ի նրա կատարած մի յայտարարութիւնը. «Վրաստանի տարածքում գտնուող բոլոր յուշարձանները, առաւել եւս կրօնական բնոյթ ունեցողները, Վրաստանի Պետութեան եւ Վրաց եկեղեցու սեփականութիւնն են»: Մեղմ ասած, մոլորութեան մէջ են նաեւ վրացի այն մտաւորականները, որոնք հայոց եկեղեցի ֆանդող կամ իւրացնող Պատրիարքին համարում են «մեծ հայրենասէր»: Մեղք, մեղք այն ժողովուրդին, որի մտաւորականը կարող է վանտալիզմը հայրենասիրութեան հետ շփոթել: Բայց բնութեան մէջ չարն ու կեղծիքը երկար ճանապարհ չունեն: Եւ ի վերջոյ անկասկած գալու է հատուցման պահը:

ՍԱՄՈՒԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



ՊԱՏՐԻԱՐԻԱՐԿԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

Թուական
Date

19

11 August 1995

*His Majesty King Hussein
The Royal Palace
The Hashemite Kingdom of Jordan
Amman
Jordan*

Your Majesty,

On the blessed occasion of the Birth of the Prophet (may he be blessed), members of the Armenian community of Jerusalem join with their brothers across the River Jordan, to wish Your Majesty and the people of Jordan, many happy returns of the day.

May this auspicious occasion herald a further era of peace and understanding in our region. And may coming generations recall these days of jubilation with gratitude for the glorious path of peace Your Majesty has charted.

We pray for the prosperity of the people of Jordan and for continued good health for its wise and able ruler.



Եպիսկոպոս Թորկոմ Մանուգիան
Bishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem



ՊԱՏՐԻԱՐԻԱՐԿԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

Բռնակալի
Date

11 August 1995

*His Majesty King Hussein
The Royal Palace
The Hashemite Kingdom of Jordan
Amman
Jordan*

Your Majesty,

The Armenian communities of the Holy Land, on both sides of the River Jordan, would like to extend to Your Majesty their heartiest congratulations and sincere best wishes on the happy occasion of Your Majesty's ascendancy to the throne of the Hashemite Kingdom of Jordan.

Our priestly Brotherhood of St James and our lay community seize this opportunity to reaffirm our allegiance to the bonds of fraternal affection that bind us, and to renew our commitment to the cause of peace and friendship among the nations of the world.

We ask the Lord grant Your Majesty continued strength, power and good health to enable you to proceed with greater triumph along the glorious chart of peace you have embarked on, for the ultimate glory of God.

Abp. Torkom Manoogian
Archbishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem





**EMBASSY OF
THE HASHEMITE KINGDOM
OF JORDAN
TEL-AVIV**

**ARCHBISHOP TORKOM MANOOGIAN
ARMENIAN PATRIARCH OF JERUSALEM**

**I HAVE BEEN COMMANDED BY HIS MAJESTY KING
HUSSEIN TO CONVEY TO YOU HIS MAJESTY'S THANKS
AND APPRECIATION FOR THE KIND MESSAGE OF
CONGRATULATIONS YOU HAVE SENT ON THE OCCASION
OF THE 43RD ANNIVERSARY OF HIS MAJESTY'S
ACCESSION TO THE THRONE.
BEST WISHES AND REGARDS.**

**CHIEF OF ROYAL PROTOCOL
AYMAN ALMAJALI**

26.8.1995

Ս. ՅԱԿՈԲԻ ԼԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆԹ-ԲԵՄԱԿԱՆԹ

Եր. 10 Յունիս.- Ս. Պատրագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Երպէթեան:

- Հոգեգալտեան նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

- Գիշերակերպին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Սկեսեղ»ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Կիր 11 Յունիս.- Հոգեգալտուտ (Բարեկենդան Շրիակն Պահոց):

Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Օրում հանդիսարար Ս. Պատրագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ բարեգեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Սպասարկութեան էին Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան եւ Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Երպէթեան:

- Կեսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք.ի գլխաւորութեամբ Միաբան հայեր մեկնեցան Սիոն լեռ, նախ այցելեցին վերջին ընթրեաց վերնատունը - օրում ղեպփին պատմական վայրը - կատարուեցաւ ժամերգութիւն, ապա Ս. Փրնչի գաւթին մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, համգուցեցաւ Ս. Պատրիարքաց, լուսարարապետաց եւ միաբանից հոգեմեծում ի հանգիստ:

Եր. 17 Յունիս.- Ս. Պատրագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղոր. ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

Կիր. 18 Յունիս.- Սկեզըն Յարութեան Վերակէց եւ յիշատակ Շրիայի մարգարէին: Ս. Պատրագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ. հաղիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Սպա. Պարտաւան. ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

- Նախատեսակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Գերշ. Տ. Սեւան Սպա. Դարիպեան:

Բշ. 19 Յունիս.- Սուրբ Կուսմանցն Հոռիփսիմեանց:

Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, իսկ Ս. Պատրագը

մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան Ս. Հռիփսիմէի մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Որ. 23 Յունիս.- Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Սեւան Սպա. Դարիպեան:

Եր. 24 Յունիս.- Գրիգորի Լուսաւորչին (Սլն ի վերապէն): Ս. Պատրագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աւետիս Արք. Իփրանեան:

- Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Ապա ծնրաղորի «Տէր Ռդարմեա» երգուեցաւ ըստ սովորութեան:

Ամենապատիւ պատրիարք Հօր ձեռամբ, երեք Սարկաւանք (Արմէն Սրկ. Աքաճանեան, Գեորգ Սրկ. Պապախանեան, եւ Նորայր Սրկ. Ջաֆարեան) ստացան քահանայական կոչում: Ընծայեալները ծնրագեաց յառաջացան մինչեւ դարը, յարարողութեան աւարտին արտասանեցին մեր եկեղեցւոյ ուղղափառ դասեմութեան հանգանակը:

Խարտաւիակն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, առընթերակներն էին Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Երպէթեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Կիր. 25 Յունիս.- Օրում Սուրբ Պատրագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արք. Պորթեկեան:

Ի ժամ Պատրագին կատարուեցաւ երեք Սարկաւանքներուն կուսակրօն քահանայի ձեռնադրութիւնը:

Ընծայեալները, ի մշան աշխարհի երաժարման, ձեռքեր վեր բարձած ժողովուրդին դառնալէ ետք, ձեռնադրութեան երկրորդ բաժնին մէջ ընդունեցին քահանայական գեներալտրման օրհնութիւնը, տըւութեան ուրոյն աղօթքներով:

Օժման խորհրդատու ու նախագահ պատեան, Ձեռնադրչի Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը Արմէն Սրկ. Աքաճանեանին անուանեց «Հայր Էմամուէլ»: Գեորգ Սրկ. Պապախանեանին «Հայր Ընծանուէր», իսկ Նորայր Սրկ. Ջաֆարեանին «Հայր Թողորոս»: Ընծայեալները ստանալէ ետք իշխանութիւն՝ մատուցանելու Սուրբ Պատրագ, իրենց անդամիկ օրհնութիւնը տուին ժողովուրդին:

Պատրիարք Արքայազան Հայրը խօսեցաւ բովանդակալից քարոզ մը: «Ընդունքի պահուն բովանդակ Միաբանութիւնը բնւ բարձրանալով ողջագնաւուցեալ, համարուելով անոնց նորածնակատն ու աջը: Նոյնը ըրին դիպիներն եւ ժողովուրդը Պատարագը աւարտին, եկեղեցիին դասին մէջ: «Հայրապետական Մաղթամբի» արարողութեան նախագահեց Պատրիարք Արքայազան Հայրը:

- Կէտել ետք տեղի ունեցաւ «Անդաստան»ի արարողութիւն. Հանդիսապետն էր Լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Ապա տեղի ունեցաւ վերաբի Տըւտութիւնը ժամերգութեան աւարտին: Նորընծաներ իրենց առանձնացման բառատունքի համար Ս. Փրկիչ Վանք փոխադրուցեան:

Եր. 1 Յուլիս.- Ս. Մեծին Ներսիսի եւ Խաղայ Ըպիսկեպոսի: Ս Պատարագը մատուցուցեալ ի Ս. Գլխադիր. ժամարարն էր Տէր Դանիէ Բահանայ Գարանեան:

Կիր. 2 Յուլիս.- Բարեկենդան Ս. Լուսաւորչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուցեալ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Գեորգ. Տ. Յուսիկ Եպ. Պաղտասեան: Ժամարարն էր Տէր Զաքարիա Բահանայ Սարիէկեան:

Ուր. 7 Յուլիս.- Նախատեմակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեորգ. Տ. Սեւան Եպ. Լարիպեան:

Եր. 8 Յուլիս.- Ս. Գրիգորի Լուսաւորչին (Գլխու Նշխարաց): Ս. Պատարագը մատուցուցեալ Մայր Տաճարի Ս. Վակարայ մատարան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 9 Յուլիս.- Երեկուան Սուրբ Գրիգոր լուսաւորչի տունին առթիւ, Ս. Պատարագը մատուցուցեալ Երուսաղէմի Հրեական բաժնին մէջ գտնուող եւ այդ մեծ տարրին անուրը կրող եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Անուշուան Մ. Վրդ. Զոյրանեան, որ նաեւ քարոզեց:

Դշ. 12 Յուլիս.- Նախատեմակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեորգ. Տ. Սեւան Եպ. Լարիպեան:

Եշ. 13 Յուլիս.- Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեքորայայ (Տօն Ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Հոգ. Տ. Անուշուան Մ. Վրդ. Մոյանեան:

Եր. 15 Յուլիս.- Ս. Տրդատայ քաղաքին մերոյ եւ Աշխեն տիկնոցն եւ Խարովիդխտոյն. ժամարարն էր Հոգ. Տ. Սահակ Արք. Մաշայեան:

- Նախատեմակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեորգ. Տ. Սեւան Լարիպեան:

Կիր. 16 Յուլիս.- Գլխու Տիոյ Ս. Աստուա-

ծածնի: Սուրբ Պատարագը մատուցուցեալ Գեթսեմանիի Սուրբ Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Սուրբ Գեթսեմանիին վրայ: Երջուարձի թափօրնեղուն գլխաւորեց Գեորգ. Տ. Սեւան Եպ. Լարիպեան: Ժամարարն էր Տէր Եղբայր Բահանայ Պոկտան:

Ուր. 21 Յուլիս.- Նախատեմակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեորգ. Տ. Սեւան Եպ. Լարիպեան:

Եր. 22 Յուլիս.- Երկրտասան առաքելոցն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուցեալ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերնամատարան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 23 Յուլիս.- Բարեկենդան Վարդավառի պահոց. Ս. Պատարագը մատուցուցեալ ի Ս. Յարութիւն մեր վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Գեորգ. Տ. Կիրեղ Եպ. Գարիկեան: Ժամարարն էր Հոգ. Տ. Բագրատ Արք. Պարեմէեան:

Եշ. 27 Յուլիս.- Անցնալ տարի Աշխնունում գոհուած ժառանգաւոր Արշակ Մարկոսեանի տարիցիցին առթիւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, յետ երկելոյեան ժամերգութեան տեղի ունեցաւ ինքեհեանգստեան պաշտօն նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Արքայազան Հօր:

Արարողութենէ վերջ, ժառ. Վարժարանի փոքր սրահին մէջ տեղի ունեցաւ Սաչաբի Օրինութիւն, եւ աշակերտներու կողմէ արտասանութեամբ, շարադրութեամբ եւ երգով յայտագիր մը:

Ուր 28 Յուլիս.- Նախատեմակը պաշտուցեալ Մայր Տաճարին կից Ս. Էլմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Գեորգ. Տ. Յուսիկ Եպ. Պաղտասեան:

Եր. 29 Յուլիս.- Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուցեալ ի Ս. Էլմիածին: Ժամարարն էր Հոգ. Տ. Կոմիտաս Վրդ. Մերպէեան:

- Մայր Տաճարին մէջ պաշտուած Այլակերպութեան մեծահանդէս նախատեմակին եւ Տեանեղբայր Յակոբոս Առաքելի յիշատակի հանդէսին նախագահեց Պատրիարք Արքայազան Հայրը:

Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեղեցի» եւ Հսկման կարգերուն հանդիսապետն էր Հոգ. Տ. Անուշուան Մ. Վրդ. Զոյրանեան:

Կիր. 30 Յուլիս.- Վարդավառ (Տօն Այլակերպութեան Տեան): Ժամերգութեան աւարտին կատարուցեալ «Անդաստան»: Հանդիսապետն էր Գեորգ. Տ. Յուսիկ Եպ. Պաղտասեան: Օրուան

հանդիսաւոր Սուրբ Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պարտասեան: Հէլայր Մերձէն առաջ, Հոգշ. Տ. Բագրատ Արղ. Պարճէքեան կարդաց Ն. Ս. Օծուրիւն Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Կարողիկոսին անդրանիկ կոնդակը:

Բշ. 31 Յուլիս-- Յիշատակ Մեծիկոց: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մէջ պատարագեց Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Ապա կատարուեցաւ համագետեան կարգ մնջեցեալներու հոգիներուն համար: Հանդիսացան էր Հոգշ. Տ. Անուշահան Մ. Վրդ. Ջըշմեան:

Դշ. 2 Օգոստ-- Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Սուրբ Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Էմմանուէլ Արղ. Արաքանեան:

Եշ. 3 Օգոստ-- Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Սուրբ Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Ընծանուէր Արղ. Բարսիսեան:

Ուր. 4 Օգոստ-- Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Սուրբ Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Թէոդորոս Արղ. Ջաֆարեան:

- Նախատեսակին ի Ս. Յակոբ մախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

Եր. 5 Օգոստ-- Թաղեաք Առաքելոյն եւ Սանդիտոյ կուսին: Աւագ Սեղանին վրայ Սուրբ Պատարագը մատոյց մարմնծայ երեք Արեղաներուն ռուսոցիւն ու վարժիչը՝ Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

- Նոյն երկուշիին, Պատրիարք Սրբազան Հայրը Միաբանութեան 16 հոգեւորական անդամներուն եւ նորընծայ արդաններուն հետ ընթրիք՝ ռանցաւ բացօթեայ, Պատրիարքարանի պարտեզին մէջ:

Կիր. 6 Օգոստ-- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերամատրան մէջ: Հանդիսացան էր Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան: Ժամարարն էր Հոգշ. Գուսան Վրդ. Այնանեան:

Եր. 12 Օգոստ-- Արքայն Որդոց եւ Թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի:

Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր ժամարարն էր Հոգշ. Տ. ՇՈՐԻԲ՝ Մ. Վրդ. Գասպարեան, հոգեւոր հովիւ Ս. Շողակաթ եկեղեցիին, Սէյմթ Լուիզի մէջ:

Կիր. 13 Օգոստ-- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ ժամարարն էր Հոգշ. Տ. Աւետիս Արղ. Իփրանեան:

Պատրիարք Սրբազան Հայրը Հէլայր Մերձէն առաջ մախագահեց շխաղոթորինէ՛քի

արարողութեան:

Բշ. 14 Օգոստ-- Այսօր սկսաւ Ս. Կոյսի Վերափոխումն տօնը կանխող հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը՝ Գեթսեմանիի Ա. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

Եր. 19 Օգոստ-- Սփեսոսի Ս. Ժողովոյն (431): Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Աստուածածին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սահակ Արղ. Մաշայեան:

Կիր. 20 Օգոստ-- Բարեկենդան Ս. Աստուածածնի Պահոց: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Աստուածածին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Ուր. 25 Օգոստ-- Նախատեսակը պաշտուեցաւ Սուրբ Էջիմիւն. հանդիսացան էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Եր. 26 Օգոստ-- Տօն Շողակաթի Ս. Էջիմածնի: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Էջիմածն: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

- Կեսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու Հէրաշփառ»ով մուտք գործեցին Սուրբ Աստուածածնայ Տաճար ուր պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատեսակ:

Գիշերակցիցքին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Նկեսցէ՛ք ի եւ Հսկման ժամերգութիւնները: Հանդիսացան էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Կիր. 27 Օգոստ-- Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու Հէրաշփառ»ով մուտք գործեցին Սուրբ Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Սուրբ Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Սուրբ Պատարագը մատոյց եւ քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Պատարագիչ Սրբազանը մախագահեց «Աղայաստան»ին:

- Կեսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած նախատեսակին մախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Բշ. 28 Օգոստ-- Յիշատակ Մեծիկոց: Օրուան Սուրբ Պատարագը Ս. Գլխադրի մատրան մէջ մատոյց Հոգշ. Տ. Հայկազուն Մ. Վրդ. Մելիքնեան: Հոգեհանգստեան կարգին մախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

ՊԼԱՏՏՈՆԱԿԱՆՆԻՐ

Ուր. 30 Յունիս.— Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարդպետ Գերշ. Տ. Դանիթ Արք. Սահակեանի, Եւսեւտից Տեսուչ Գերշ. Տ. Սեւան Ծպս. Դարիպեանի, եւ Հոգշ. Տ. Աւետիս Արդ. Իփրանեանի (գաւազանակիր), առաւօտեան ժամը 1 իմ Թէլ Ալիլիէն թոռնիք առին, Կիպրոսի վրայով մեկնելու համար Պէյրութ, մասնակցելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ ընտրեալ Կաթողիկոսի, Լիբանանի թեմի բազմամեայ Առաջնորդ, Գերշ. Տ. Սրբմ. Գէշիշեանի, Հայրապետական օծման եւ գահակալութեան արարողութեանց, որոնք տեղի ունեցան, 1 Յունիս, Շարքթ օր, Ամբիլիսահի Մայր Տաճարի շրջափակին մէջ:

Պատրիարք Սրբազան Հայրը եւ միաբանակից հոգեւորական հայրերը Ս. Աթոռ վերադարձան նոյն ճամբով, 6 Յունիս, Հինգշաբթի կէս գիշերին: (Այս մասին Սիմոն յաջորդ թիւին մէջ աւելի մանրամասնութեամբ պիտի անդրադարձանք. ԽՄԲ.) Եր. 8 Յունիս.— Սպանիոյ ընդհանուր հիւպատոսին մեկնումին առթիւ տրուած ընդունելութեան, ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սեւան Ծպս. Դարիպեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

– Երեկոյեան, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Սահակ Արդ. Մաշայեանի եւ Տ. Դանիթ Գահանայ Գարանեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի առեմնապետ Պր. Յակոբ Տէմիրեանի, այցելեց Լաթրուս, ուր Հ.Մ.Ը.Մ.ի սկստուները կազմակերպած էին իրենց ամառային տասնօրեայ քանակումը: Սկստուներու եւ գայլիկներու խաղերու եւ խմբային երգերու յայտագիրէն յետոյ, Պր. Յակոբ Տէմիրեան եւ Պատրիարք Սրբազան Հայրը քաջալերանքի խօսքեր ըրին, շնչուելով կարեւորութիւնը քանակումի փորձառութեան եւ հայրենասիրական գզգզումներու զօրացման:

Նոյն օրը, առաւօտեան, Տ. Դանիթ Գահանայ Գարանեան Լաթրուսի թրափիտ վանքի մատուռին մէջ Սուրբ Պատարագ մատուց, որուն մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի սկստուները:

Եւ. 13 Յունիս.— Ֆրանսական Ազգային Տօմին առթիւ տրուած ընդունելութեան, ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Գերշ. Տ. Սեւան Ծպս. Դարիպեան եւ Գերշ. Տ. Յունիկ Ծպս. Պօղոսեան:

Ուր. 14 Յունիս.— Ֆրանսական Ազգային Տօմին առթիւ տրուած ընդունելութեան Սր. Աննայի վանքին մէջ, ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սեւան Ծպս. Դարիպեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Եր. 15 Յունիս.— Աւստրիա-արքայական համայնձային դարմամատան քացման առթիւ տրուած ընդունելութեան, Երուսաղէմի Աւստրիական հիւրավանքին (Հասփիս) մէջ, ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէճեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Եւ. 20 Յունիս.— Պեհլիական ազգային տօմի առթիւ սարժուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Գերշ. Տ. Սեւան Ծպս. Դարիպեան եւ Գերշ. Տ. Յունիկ Ծպս. Պօղոսեան:

Եր. 22 Յունիս.— Երեկոյեան, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Բազրաս Արդ. Պարմէճեանի եւ Հ.Ս.Մ.ի վարչութեան ատենապետ Պր. Յակոբ Շեփերեանի, այցելեց Հ.Ս.Մ.ի սկստուներու քանակումի վայրը Լաթրուս: Սկստուներու անունով Պեհլի Շեփերեանի քարի գալուստի խօսքէն եւ քանակումի մասնակցողներու փորձառութիւններէն ումանց յիշատակումէն յետոյ, սկստուները յայտագիր մը ներկայացուցին, երգի, պարի եւ այլ մրցումներու:

Պատրիարք Սրբազան Հայրը, մատնանշեց կարեւորութիւնը քննութեան մէջ կազմակերպուած խումբով այդպիսի եւ կարգապահութեան, եւ իրար օգնութեան ծառայութիւններով գոհունակութիւն զգալուն:

Բշ. 24 Յունիս.— Երուսաղէմի Սուրբ Յարութեան Տաճարի նոր զինուորական հրամանատար նշանակուելուն առթիւ տրուած ընդունելութեան, ներկայ գտնուեցան Սուրբ Յարութեան Տաճարի Տեսուչ Գերշ. Տ. Վաղարշ Ծպս. Խաչատուրեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Եր. 29 Յունիս.— Արեւիկեան Տան (Օրիէնթ Հաւուսի) մէջ, Արարներու եւ Հրեաներու միջեւ տեղի ունեցած խաղաղութեան ի սարսափաւորութիւն ներկայ գտնուեցաւ Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Ջոյանեան:

Եւ. 3 Օգոստ.— Առաւօտեան ժամը 10:30ին, երբք երիտասարդներ Գեքսեմուքիի Ս. Աստուածածնայ Գերեզմանի Տաճարը կը մտնեն եւ կը փորձեն այդի հայկական խորանը: Տաճարին հերթապահութեան կարգը Յունաց ըլլալով, Յուն միաբանը կու գայ եւ կը մարէ կրակը: Երբք երիտասարդները խոյս կու տան անելով իրենց հետ մահ. Յունաց քանկալը: Արդէն, մասամբ այրուած էր խորանին ծածկոցը եւ «վերջին ընթրեսաց» զոգմոցը, եւ խորանի տախտակէ շինուած քիմ մէկ մասը սեցած էր: Սր. Աստուածածնայ Տաճարի հայոց Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ

Վրդ. Գալյանեան, անմիջապէս կը ստուգէ իրողութիւնը եւ պատահածը կ'իմացնէ վանական իշխանութեան: Հայոց եւ Յունաց տնտւյններու բողոքները մերկայացուցեցան պատկան իշխանութեանց, պահանջելով յիսկատար հսկողութիւն եւ ապահովութիւն Սուրբ Տեղեաց:

Բշ. 7 Օգոստ.— Էյն-էլ Սուլթանի Աւագանին շրջափակին մէջ տեղի ունեցող Միջազգային Տօնավաճառին քացման արարողութեան, մերկայ գտնուեցան Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Այնանեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան: Բացումը կատարեց զրօսաշրջիկութեան մախարար Ռզի Պարաւ, առընթերակից ունեմալով Երուսաղէմի ֆաղափապետ Ենուտ Օլմերթ եւ մախլին ֆաղափապետ Թետտի Գուլնէ:

Դշ. 16 Օգոստ.— Պոզնիա-Հերձեկովիմայի ադէտեայններուն մասին տեղի ունեցած դասախօսական հաւաքոյթին, ուր արտայայտուեցան կրօնական համայնքներու՝ քրիստոնեայ, իսլամ, տիրգի եւ հրեայ մերկայացուցիչներ, մախագահութեամբ Լատինաց Ամն. Պատրիարք՝ Տ. Մըշէ Մապպահի, Նօթր Տամ Պանդուկին մէջ, մերկայ գտնուեցան Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Ջղջանեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Կիր. 21 Օգոստ.— Հայ ուխտաւորներու խումբ մը Ֆիլատելֆիայէն, իրենց հոգեւոր Հովիւին՝ Հոգշ. Տ. Հայկազուն Մ. Վրդ. Մելքոնեանի գլխաւորութեամբ ժամանեցին Երուսաղէմ եւ իջեւանեցան Նօթր Տամի պանդոկը:

Նոյն երեկոյ, միաբանութեան Հոգեւորական Հայերուն հետ ընթրիչ յետոյ, ժառանգաւոր սաներ համերգային յայտագիր մը մերկայացուցին ի պատիւ հիւրերուն, մախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Ռիտաւորները իրենց կեցութեան շրջանին հանդիպումներ աւնեցան Պատրիարք Սրբազան Հօր հետ, եւ այցելեցին բոլոր սրբատեղիները, եւ Եսֆայի Ս. Նիկողայոս վանքը: Վերափոխման յաջորդ օրը, Մեծերցին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պատարագեց Հոգշ. Տ. Հայկազուն Մ. Վրդ. Մելքոնեան:

Ռիտաւորները 29 Օգոստոսին մեկնեցան դէպի Յունաստան եւ Աւերիկա: Կը մաղթենք որ, հայ ուխտաւորութիւնը աւելի յամախակի դառնայ Երուսաղէմ, հաղորդակից դառնալու համար Սուրբ Յակոբեանց վանքի հոգեւոր ժառանգութեանց եւ պատմական դերին:

ԱՐՄԷՆ ՄՐԿ. ԱԹԱՋԱՆՆԱՆ
(Տ. Էմմանուէլ Արեղայ, 25 Յունիս 1995)

Ես՝ Արմէն Գարեհի Աթաջաննան, ծնունդով եմ 1967թ. Դեկտեմբերի 14ին Երեւանում: Հայրս՝ Գարեհ Աթաջաննան, մասնագիտութեամբ հարտարագէտ: Մայրս՝ Լուսինէ Աթաջաննան, մասնագիտութեամբ մաթեմատիկայի ուսուցիչ:

Վեց տարեկանից յաճախել եմ միջնակարգ դպրոց, 10 տարի յետոյ 1986թ. մեկնել եմ քանակ եւ ծառայել իրրեւ կրտսեր հրամանատար: 1988թ. վերադարձել եմ Հայրենիք եւ ուսումնա շարունակելով ստացել եմ բարձրագոյն կրթութիւն աւարտելով վերոյիշեալ ԲՈՒՀ-ի Մեքենաշինական բաժինը: Զուգընթաց ուսանել եմ մաեւ «Ռազմական Գործ», ստանալով սպայի աստիճան: Բանակից յետոյ, երկու տարիներ շարունակ, մասնակցել եմ կրօնի Ռուսոցիչների պատրաստման դասընթացներին (կազմակերպուած Արարատեան թեմում, Երեւանի Ս. Սարգիս եկեղեցուն կից) եւ ստացել դասաւանդման իրաւունք: Այդ ընթացքում, ռեկտոր՝ արոճ. Սարգսեանի թոյլտուութեամբ, կազմակերպել էի Հայ Եկեղեցու Պատմութեան դասընթացներ մեր Համալսարանում՝ Ս. Էջմիածնից վարդապետ հրաւիրելով:

Դպրոցական եւ համալսարանական տարիներին զբաղուել եմ սպորտով եւ երաժշտութեամբ:

1992ից սովորել եմ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքի Ընծայարանում եւ 1995թ. աւարտել: 1992ի Դեկտեմբերի 5ին Ս. Յակոբ Մայր Տաճարում, ձեռամբ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի, ձեռնադրուել եմ սարկաւազ:

Ունեմ կրտսեր եղբայր մասնագիտութեամբ հարտարագէտ:

ԳԷՈՐԳ ՄՐԿ. ԲԱՐԱՆՆԱՆ
(Տ. Ընծանուէր Արեղայ, 25 Յունիս 1995)

Ես Գեորգ Ալւարոյի Բաբախաննան, ծնունդով եմ 1968թ. Յունիս 21ին, Հայաստանի Հանրապետութեան Էջմիածնի շրջանի Գայ գիւղում: Հայրս «իջններ» է, մայրս՝ ուսուցչուհի: Ունեմ երկու եղբայր: 1975թ. ընդունուել եմ գիւղի միջնակարգ դպրոցը: 1985թ. աւարտել եմ այն ոսկէ մետալով: Նոյն տարուայ Սեպտեմբերին ընդունուել եմ Երեւանի Ս. Արովեանի անուան մանկավարժական ինստիտուտի մշակոյթի բաժինը:

1986-88 թուականներին ծառայել եմ Սովետական միութեան զինուած ուժերում: Զօրացրուելով, շարունակել եմ ուսումնա եւ ինստիտուտն աւարտել 1991 թուականին, կիներեմադրիչ մասնագիտութեամբ:

Ուսումնառութեանս շրջանին աշխատել եմ Երեւանի «Նօրէ» թատրոնում, որպէս դերասան:

1991 թուականից «Հայ Միասնութեան Նայ» (ՀՄՆ) քարեգործական կազմակերպութեան փոխմասնագահն եմ, միաժամանակ ՀԵՄԻՆ կից ընտանիք-մանկատան տնօրէնը:

1992 թուականին ընդունուել եմ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը եւ Ընծայարանը: Այն աւարտել եմ 1995թ. Մայիսին: 1993թ. Օգոստոսի 14ին, ձեռամբ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի, ձեռնադրուել եմ սարկաւազ:

ՆՈՐԱՅՐ ՄԻԿ. ԶԱՔԱՐԵԱՆ
(Տ. Թեոդորոս Արեղայ, 25 Յունիս 1995)

Ես՝ Նորայր Վազգէնի Զաքարեանս ծնուել եմ 1969ի Դեկտեմբեր 14ին, Հայաստանի Հանրապետութեան Մայրաքաղաք Երեւանում: Հայրս Վազգէն Զաքարեանը ատոռհաւաճող է, մայրս Ասյա Հայրապետեանը ջուլիակուհի է, այժմ կոչուած է հանգստի: 1976-1987թթ. սովորել եմ Երեւանի թիւ 11 միջնակարգ դպրոցում: Միջնակարգ կրթութիւն ստանալուց յետոյ ընդունուել եմ Երեւանի Ճարտարագիտական Համալսարանի «Ռադիոտեխնիկայ»-ի բաժինը: Նոյն տարուայ դեկտեմբեր ամսին գորակոչուել եմ զինուորական ծառայութեան, ծառայութեան ընթացքում ստացել եմ սերժանտի կոչում, 1989ին գորացրուել եմ: 1990ի Յունուարից շարունակել եմ ուսումս եւ համընթաց աշխատել եմ Երեւանի «Հայաւիտեամալիք» գորածարանում, որպէս ռադիոսարքերի փականագործ-հաւաճող: Որպէս դպիր ծառայել եմ Երեւանի Ս. Սարգիս եկեղեցում, ապա Էջմիածնի Ս. Գայանէ վանքում: 1992ին ընդունուել եմ Երոսաղէմի Ժառանգաւորաց Վարժարան եւ Ընծայարան: 1993ի Օգոստոսի 14ին, ձեռամբ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի ձեռնադրուեցի սարկաւազ: 1995ի Մայիսին աւարտել եմ Ընծայարանի Դ. տարին: Ունեմ երկու եղբայր եւ քույր: Մեծ եղբայրս ճարտարապետ-շինարար է, ամուսնացած է ունի երեք զաւակ, փոքր եղբայրս երեւանի Ճարտարագիտական Համալսարանի ուսանող, քույրս տնտեսագէտ է, ամուսնացած է ունի երեք զաւակ:

ՈՒՅՏԱԳԻՐ

Ես, _____ իմ ազատ կամքով և գիտակցաբար որոշած եմ իմ կեանքս նուիրել Աստուծոյ ծառայութեան, դառնալով ծառայ Բրիտանի, և անդամ Նրուսադէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան:

Կ'ուխտեմ հաւատարիմ մնալ իմ կոչումիս, հնազանդելով Նրուսադէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Ուխտի և Կանոնադրութեան օրէնքներուն, կատարելով Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր և վանական իշխանութեան հրահանգները և որոշումները, կատարելով իմ պարտականութիւններս Տնօրինական Սուրբ Տեղեաց և ամենօրեայ պաշտամունքներու մէջ, հետամուտ լինելով կրթութեան, մշակելով հոգեւորականէն ակնկալուած և հոգեւոր ու բարոյական դաստիարակութեամբ սնած անձի մը նկարագիրը, բարի օրինակ դառնալով այլոց, և Բրիտանի Ա. Խաչատրեանը քանի և գործով, որպէս զի արժանի լինիմ Տիրոջմէ վարձատրուելու իրրեւ "մշակ առանց ամօքոյ":

Նկատի առնելով միայն երկու և կէս տարուան անբաւարար իմ կրթութիւնը Նրուսադէմի մէջ, համաձայն եմ ինձի առաջարկուած հետեւեալ պայմաններուն և պահանջներուն.-

1- Քահանայական ձեռնադրութիւնը և օծումը կը տրուի ինձի, պայմանաւ որ ինքզինքս նկատեմ կանոնաւոր ուսանող, ըստ Պատրիարք Սրբազան Հօր կատարելիք կարգադրութեանց:

2- Պարտաւոր եմ հետեւիլ Համակարգիչի և Հաշուապահութեան դասընթացներու, մինչև որ գոհացուցիչ արդիւնքի հաստատագիր ներկայացուի ուսուցիչին կողմէ Պատրիարք Սրբազան Հօր:

3- Պարտաւոր եմ Անգլերէն լեզուի դասընթացքի հետեւիլ պատրաստուելու համար Ordinary Level GCE քննութեան, մինչև որ գոհացուցիչ արդիւնքի վկայական ստանամ:

4- Նոյն ժամանակ կամ ըստ Պատրիարք Սրբազան Հօր կարգադրութեան, պարտաւոր եմ Ներայնրէն լեզուի դասընթացքի հետեւիլ, մինչև որ գոհացուցիչ արդիւնք ձեռք բերեմ:

5- Նոյն ժամանակ կամ ըստ Պատրիարք Սրբազան Հօր կարգադրութեան, պարտաւոր եմ Արաբերէն լեզուի դասընթացքի հետեւիլ, մինչև որ գոհացուցիչ արդիւնք ձեռք բերեմ:

6- Պատրիարք Սրբազան Հօր կարգադրութեամբ, ինձի առիթ պիտի տրուի, մասնագիտանալու նպատակով ինձի թելադրուած կամ իմ նախախրած մէկ նիւթը ընտրելու և անով զբաղուելու:

7- Որեւէ զանցառութեան պարագային, Պատրիարք Սրբազան Հայրը իրաւունք ունի ազդարարելու և ի հարկին պատիժ սահմանելու:

Տէրը թող օգնէ ինձ իմ ուխտիս կատարման մէջ:

On The Occasion Of The
Newly Ordained Priests

The ordination last month of three young, energetic priests by His Beatitude, Patriarch Torkom Manoogian, is indeed a most significant event in the history of the Armenian Community in Jerusalem; three new ministers who have chosen to dedicate their lives for the service of the Armenian church and nation by taking a blinding vow.

Taking the vow of priesthood is by no means an easy decision. First and foremost, there should be that inner urge, that call from within, the vocation without which all that anybody tries to do ends up in failure; it is that basic ingredient that crowns any undertaking with success. Priesthood is the loftiest, the most highly sensitive calling, it embraces a host of qualities, courage, tenacity, eloquence, selflessness, self sacrifice and self denial. The best qualities of a soldier, a leader, states man, a teacher, an orator combine to make the ideal church minister. A priest's primary duty is to lead and shepherd a flock entrusted to his care; He will then need all the qualities that were so painstakingly inculcated in him throughout the period that he was preparing to don the robe of priesthood.

Experienced teachers were entrusted with the highly responsible task of instilling in our young priests the best possible education and the noblest virtues that go to make the ideal priest; yes, the education that they received, will stand them in good stead as they now embark on their new calling.

Education is of paramount importance for a priest. Woe be to that community whose clergymen are ignorant; the thirst for the acquisition of education should remain an unquenchable thirst in them, the well known chinese proverb goes: "Seek education from the cradle to the grave." Every human being earns his livelihood by selling something; thus, the baker sells bread, the green-grocer fruits and vegetables, the doctor his skill, the teacher his knowledge and the priest solace, consolation, advice, guidance, spiritual comfort; imparting these abstract needs is of course, much more sensitive than catering people with concrete or palpable commodities.

Education for a priest is not enough, but he should possess at the same time the noblest traits of a virtuous character; a magnanimity and nobility of spirit is the loftiest adornment a priest can boast of, only thus, can he set the good example to his flock. A priest should always bear in mind that whatever heights he can achieve, no matter how sublime his aspirations might be, humility is the cornerstone and groundwork of all christian virtues. Heartiest felicitations to our three young priests. Soon, their novitiate period will be over, and they will celebrate their maiden mass (Antranig Badarak) and then embark on a new life.

May the almighty guide their footsteps along the right path, and may they remain for ever faithful to that sublime, sacred vow to which they have pledged to dedicate all their life.

Yeghia H. Dickranian

ՄԻՕՐԵԱՑ ՊՏՈՑՏ ԴԷՊԻ ԱՇՔԵԼՈՒԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՅՐԸ
24 ՅՈՒՆԻՍ 1995

ինչպես ամեն տարի այս տարի եւս, ժառ. Վարժարանի սաները իրենց ամառնային ծրագրին համաձայն, ուղղուեցան դէպի Աշգեղոնի հնագիտական վայրը, այնտեղ իրենց մասնակցութիւնը քերելու պետումներու աշխատանքներուն:

Այս տարուանը սակայն աշխատանքային ձեռնարկ մը չէր միայն, այլ նաեւ հոգեհանգիստ պիտի կատարուէր անցեալ տարի արկածով մահացած 15ամեայ Արշակ Մարկոսեանի հոգիին:

Նախօրօք արդէն պեղումներու պատասխանատու անդամներէն մի քանիսն իրենց սովորական քացատութիւնները տուին, ծանօթացնելով նաեւ անոնց վերջին երեսնահանումներուն մասին:

Այս տարի եւս Պատրիարք Սրբազան Հայրը միաբան եղբայրներով ընկերացաւ ժառ. Վարժարանի այս միօրեայ պտոյտին:

Օրուան աշխատանքային ծրագիրը յստակ էր: Սաները պիտի աշխատէին մինչեւ կէսօր, եւ կէսօրուան 12:30ին պիտի կատարուէր հոգեհանգիստ այն տեղւոյն վրայ ուր արկածը պատահած էր:

Հոգեհանգիստի արարողութենէն վերջ խօսք առաւ պեղումներու պատասխանատու Պրոֆ. Լարրի Սթակլըը, ուրտեղ անգամ մը եւս իր ցաւակցութիւնները յայտնեց Պատրիարք Սրբազան Հօր ու Արշակին ընկերներուն:

Հոգեհանգիստէն վերջ, սաները ճաշեցին այնտեղի հանրային պարտէզներէն մէկուն մէջ, եւ վերադարձան Մայրավանք երեկոյեան ժամը 6:00ին:

ՏԱՐԵԼԻՑԻ ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ՊԱՇՏՕՆ

Անցեալ տարի Յուլիսի 25ին Աշգեղոնի մէջ, պեղումներու ընթացքին արկածով մահացաւ 15ամեայ Արշակ Մարկոսեանը:

Իր ընկերները իր յիշատակին մարմարի վրայ պատրաստել տուին գեղակերտ խաչքար մը որ պիտի օրհնուէր իր մահուան տարեկիցին օրը: Հետեւաբար, Յուլիսի 27ին Հինգշաբթի, իր մահուան տարեկիցին, հոգեհանգիստ կատարուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, յետ երեկոյեան ժամերգութեան, նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Հօր:

Հոգեհանգստեան արարողութենէն վերջ, միաբանութիւն եւ ժողովուրդ ուղղուեցան դէպի ժառ. Վարժարանի փոքր սրահը այնտեղ հոգեաւորը առնելու համար: Վարժարանի սաները պատրաստած էին կոկիկ յայտագիր մը նուիրուած իրենց ընկերոջ՝ Արշակին հոգիին: Պատրիարք Սրբազան Հայրը օրհնեց խաչքարը որ պիտի ագուցուի Եկեղեցւոյ գաւթին պատերէն մէկուն մէջ:

Խաչքարի օրհնութենէն ետք, խօսք առաւ Աշգեղոնի պեղումներուն պատասխանատու՝ Պրոֆ. Լարրի Սթակլըը, որ արտայայտեց իր

մեծ ցաւը Արշակ Մարկոսեանի կորուստին համար:

Բացման խօսքը ըրաւ Հոգշ. Տ. Բագրատ Արք. Պուրեւեան, որ անդրադարձաւ Արշակի աշակերտական տարիներուն, ուրտեղ ան սիրուած էր բոլորէն, եւ թէ ան՝ այս ամբ ընտանիքին մէկ անդամ էր ... «բայց ըլլալով ու հաւատալով հոգեկանին՝ մեզի համար մեռած չէ Արշակը: Ան մեր կեանքին մէկ մասն է, յիշատակ է, խաչքար է»:

Բացման խօսքէն ետք, սաները իրենց յայտագիրը ներկայացուցին արտասանելով Անուշ Նագաշեանի «Սպիտակ դագաղ», Բագրատունիի «Արշակին», Պարոյր Սեւակի «Մեռնելի» քանատեղծական կտորներէն: Աթանաս Մարգարեանն ու Մանուկ Կալաչեանը արտասանեցին «Արշակին» նուիրուած քերթածներ, ինչ որ իրենց ցաւին արտայայտութիւնն էր:

Երգուեցան Եկմպեանի «Ամեն Հայր Սուրբ»ը եւ Իսահակեանի «Միայն թէ մայրս մահս չիմանայ» (Երժշտ. Յովհաննէս Պատպեանի) երգերը: Պատրիարք Սրբազան Հօր Օրհնութեամբ փակուեցաւ յայտագիրը:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՍ

Ս. ԱՌՈՈՒՈՅՍ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱԾ Է ՀԵՏԵԻԵԱԼ ԳԻՐԲԵՐԸ

1. ՔԱՌԵԱԿՆԵՐ
Յոզիաննե Թումանյան: Երևան, Տպրթմ. Հայաստան, 1969 էջ 99
2. ՅԱԻՆԲՐԺՈՒԹԻԻՆ
Արտեմիս Գլընյան: Լոս Անճեյլոս, Տպ. Շիրակ, 1992 էջ 73
3. ՎԱՐԴԱՆԱՆՔ ԵՒ ՄԱՅԻՍ 28
Յ. Գեղարդ: Պատմական Երկու Թուական: Ֆրեզնո, Տպ. Մշակ, 1991 էջ 51
4. ՅԻՍՈՒՍ ՈՐԻԻ ՄԱՐԴՈՅ
Խալիլ ձիպրան: Հայացուց Գարեգին Արք. Գազաննեան: Իրթամպուլ, Պաքիստան, 1991 էջ 169
5. ՏԵՐ ԱՂ
Տեր Աղգարեան Եղիազար - 1879-1928
6. ԿՏԱԿԸ
Վեպ՝ Հայ Ընտանեկան Կեանքի Առնուած Բ. Տպագրութիւն: Աղգարեանց Գրական Մատենադար թիւ 2 Պէյրուս, 1992 էջ 223
7. ՄԵՆՆԻԼԸ ՈՐԲԱՆ ԴՅՈՒՄԱՐ Է
Մ. Իշխան: Թատերախաղ 3 Արար: Պէյրուս, Տպ. Համագգային, 1971 էջ 67
8. ՄԱՌՆԱՐԱՆԷՆ ԵՆԱԾ ՄԱՐԴԸ
Մ. Իշխան: Թատերախաղ 4 Արար: Պէյրուս, Տպ. Համագգային Սէթեան Տպարանի, 1979 էջ 64
9. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՊԵՐԼԻՆ
Վարդգէս Շամբան: Ֆրեզնո, Տպ. Մշակ, 1991 էջ 205
10. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՄԱՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷՆ ՄԻՆԶԵԻ ԻՐԱՔ
Գեղամ Վարդաննեան: Լոս Անճեյլոս, 1992 էջ 186
11. ՅՈՒՇԵՐ ՀԱՅՅԱՅԷՆ ԵՒ ԱՆՑԵԱԼԷՆ
Լիտիա Պոյաննեան: Լոս Անճեյլոս, Տպ. Շիրակ, 1991 էջ 182
12. ՅՈՒՇԵՐ ԿԵՒՐՆԱԿԱՆԷՆ
Տիրան Քրոնիան: Մոնթրէալ, 1992 էջ 68
13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՐԱՆՆԵՐԻ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ
Գ. Վարդաննեան: Երևան, 1991 էջ 15
14. ՄԱՀԱՐԶԱՆ ՎԱՂԱՄԵՆԻԿ ՌՈՄԻԼԴՍ ԱՂԱՄԱԼԵԱՆԻ
Ռոմիլդա Աղամալեան: Երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, 1951 էջ 66
15. ՀԱՅ ԳՐԻՉՆԵՐ Թ.-ԺԷ. Դար
Նորայր Արք. Մովսէս: Երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, 1992 էջ 426
16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻՆԵՐԻ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ
Գեորգ Պոլոսնեան: Երևան, 1991 էջ 11
17. ԳԻՄԱՆԿԱՐ ՀԱՐԻՐԱՄԵՆՅ Հ.Յ.Դ.Ի
Յ. գեղարդ: Ֆրեզնո, տպ. Մշակ, 1991 էջ 48

(Շարունակելի)

Նախապէս պատրաստուած
Սահակ Գալայնեանի կողմէ
Քարտուղար Կիւլպէնկեան Մատենադարանի

ՏԻՐՈՒՆԻ

ՓՐՈՑ. - ԴՈՎՏ. ԱԻԵՏԻՍ Գ. ՍԱՆՃԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՄԵՐ
1921-1995

Ծնած է Կիլիկիոյ Մարաշ քաղաքը՝ 1921 թուի Փետրուարի 24ին: Անդրանիկ զաւակն է իր ծնողաց՝ Գրիգորի եւ Նազելիի: 1922 թուին, երբ ֆրանսական հոգատար (մանդատ) իշխանութիւնները Կիլիկիան կը յանձնեն քեմալական թուրք կառավարութեան, ուրիշ հայ ընտանիքներու մտան՝ Սաննեան ընտանիքն ալ կը տեղահանուի, եւ եօթը տարի Սուրիոյ, Լիբանանի եւ հիւսիսային Պաղեստինի զանազան գաղթակայաններու մէջ ապրել ետք՝ 1929 թուին վերջնականապէս կը հաստատուին Երուսաղէմ քաղաքը:

Երուսաղէմի մէջ՝ Աւետիս Սաննեանը կը յաճախէ Հայոց Պատրիարքութեան հովանաւորութեամբ հաստատուած Ս. Թարգմանչաց մայրապետութեանը, եւ ապա Պիշոպ Կորաստ անգլիական միջնակարգ վարժարանը, որուն աւարտական վկայականը կը ստանայ 1939 թուին: Իր ծնողաց միւթական անձուկ վիճակին բերումով, ան չի կրնար իր ուսումը շարունակել ու կը հարկադրուի եօթը տարի պաշտօնավարել, երկու տարի Պաղեստինի Բրիտանական Հոգատար կառավարութեան պաշտօնատուներէն մէկուն մէջ, եւ հինգ տարի Բրիտանական Պարսիզ դրամատան մէջ:

1946 թուին, Գահիրէի Հայ Հիմնադրամին տրամադրած մասնակի կրթաթոշակը հնարաւորութիւն կը ստեղծէ, որ ան յաճախ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը: Տրուած ըլլալով, որ միջնակարգ վարժարան աւարտելէ ետք Պաղեստինի պետական ճեմարանները անցուցած էր գերազանցիկ արդիւնքներով, ան կ'ընդունուի համալսարանի երկրորդ կուրսը: Համալսարանական վերջին երկու

տարիներուն՝ ան կը պարգեւատրուի Պէյրութի Պրիթիշ Գաւառացի կրթաթոշակներով, եւ 1949 թուին կը ստանայ անգլիական գրականութեան բնագաւառին մէջ Պսակաւոր Արուեստից կոչումը՝ գերազանցիկ գնահատումով:

1949 թուին՝ Սաննեանը կը մեկնի Ամերիկայի Միացեալ Նահանգներ Միշիկընի Համալսարանին մէջ իր ուսումը շարունակելու նպատակով: Տարի մը վերջ՝ 1950թ. ան յիշեալ համալսարանէն կը ստանայ, դարձեալ անգլիական գրականութեան մէջ, Մագիստրոս Արուեստից կոչումը:

1950 թուի աշնան՝ ան կը սկսի իր դոկտորական ուսումները հետապնդել Միշիկընի Համալսարանի Արեւելագիտութեան Ֆակուլտետին մէջ: Սակայն, միւթական դժուար պարագաներու բերումով՝ ան կը հարկադրուի երկու տարիով (1953-54 թթ.) ընդհատել իր ուսումնական աշխատանքները, եւ Նիւ Եորք քաղաքին մէջ կը պաշտօնավարէ որպէս Ամերիկահայոց Առաջնորդարանի դիւանապետ:

1956 թուին՝ Սաննեանը կը պաշտպանէ իր դոկտորական դիսերտացիան՝ «Ալէքսանդրէի Սաննեանը (Հաթայ) - Ուսումնասիրութիւն Ֆրանսա - Թուրքա - Սուրիական Յարաբերութիւններուն» թեմայով: Ի դէպ պէտք է յիշել, թէ տոյն թէզը պաշտպանելով՝ Սաննեանը կը ստանայ Միշիկընի Համալսարանի Արեւելագիտութեան Ֆակուլտետին կողմէ տրուած առաջին դոկտորական կոչումը:

Դոկտ. Սաննեանի հայագիտական գործունէութիւնը կը սկսի 1957 թուին՝

երբ ան Պոսթընի Հարվըրտ Համալսարանի Մերձատար Արեւելեան Ուսմանց Կեդրոնին մէջ կը կոչուի յետ-դոկտորական գիտաշխատողի պաշտօնին: Այս նշանակումը կը գուգադիպի Հայագիտական Ուսմանց Ընկերակցութեան Հարվըրտ Համալսարանի մէջ հայագիտական ամպիոն մը հաստատելու նպատակով հիմնադրամը գոյացնելու գիգերուն:

Ան որպէս գիտաշխատող կը պաշտօնավարէ չորս տարի (1957-1961 թթ.) որուն ընթացքին անոր գլխաւոր պարտականութիւնը կ'ըլլայ պատրաստել իր առաջին գիրքը, «Պատմական Սուրիոյ հայկական գաղութները օսմանեան տիրապետութեան տակ» (անգլիական լեզուով), որ 1965 թուին լոյս կ'ընծայուի Հարվըրտ Համալսարանի Հրատարակչութեան կողմէ: Ի դէպ պէտք է յիշել, որ նոյն համալսարանի Արեւելագիտական Ուսմանց Կեդրոնի տնօրէն՝ Սըր Համիլթըն Քիրքի ընձեռած նիւթական միջոցներով՝ 1958 թուին Սաննեանը, իր գրքին համար նիւթեր պակասեցնելու նպատակով, վեցամսեայ գիտահետազոտական ուղեւորութիւն մը կ'ընէ արտասահման քաղաքիւ երկիրներու մէջ, եւ այս առիթով առաջին անգամ կ'այցելէ Լանս Հայաստան:

Գիտաշխատողի պաշտօնին գուգընթացաբար, 1958 թուականէն սկսեալ՝ Սաննեանը Հարվըրտ Համալսարանի մէջ կը դասաւանդէ գրաբար լեզուն: 1961 թուին նոյն համալսարանին մէջ կը նշանակուի որպէս հայագիտութեան օգնական փրօֆեսոր: Այս նշանակումը նախընթաց չունեցող իրադարձութիւն մըն էր, տրուած ըլլալով, որ ԱՄՆ-ի պատմութեան մէջ առաջին անգամ ռեւ գիտնական հայագիտութիւն դասաւանդելու նպատակով պաշտօնի կը կոչուէր: Իր այս նոր հանգամանքով՝ Փրոֆ. Սաննեանը, Արեւելագիտութեան կեդրոնի տնօրէն Սըր

Համիլթըն Քիրքի թելադրութիւններով, կը հիմնադրէ ԱՄՆ-ի առաջին հայագիտական ուսմանց ծրագիրը, որ կ'ընդգրկէր հայերէն լեզուն, գրականութիւնը եւ մշակութի պատմութիւնը:

Հարվըրտ Համալսարանի մէջ ութը տարի (1957-1965) պաշտօնավարելէ ետք, 1965 թուին Գոկտ. Սաննեանը մասնաւոր հրաւերով կը տեղափոխուի Քալիֆորնիայի Համալսարանի (Լոս Անջելես) Մերձատար Արեւելեան Լեզուններու եւ Մշակոյթներու Ֆակուլտետը՝ իրրեւ հայագիտական ուսմանց օժանդակ փրոֆեսոր, եւ երեք տարի վերջ, 1968ին, անոր կը շնորհուի լիիրաւ փրոֆեսորի կոչում: 1969 թուին՝ նոյն համալսարանին մէջ փրոֆ. Սաննեանը կը կոչուի Գրիգոր Նարեկացիի անուան հաստատուած հայագիտական ամպիոնի վարիչի պաշտօնին: Կարեւոր է շեշտել այն պարագան՝ թէ այս ամպիոնին հաստատումը Քալիֆորնիայի Համալսարանի պատմութեան մէջ աննախընթաց երեւոյթ մըն էր, որովհետեւ այդ նպատակին համար հայթայթուած մնայուն հիմնադրամին շնորհիւ՝ այսուհետեւ հայագիտութիւնը կը դրուէր մշտնջենական գետնի վրայ: Դարձեալ, 1969 թուին Փրոֆ. Սաննեանը յիշեալ Արեւելագիտութեան Ֆակուլտետին մէջ կը հիմնադրէ դոկտորական ուսմանց ծրագիրը՝ հայագիտական ամպիոնի ծիրին մէջ: 1985թ. վեց ուսանողներ Փրոֆ. Սաննեանի ղեկավարութեամբ կը պատրաստեն իրենց դոկտորական դիսերտացիաները հայ գրականութեան վերաբերեալ զանազան թեմաներու շուրջ:

1970-74թթ. Փրոֆ. Սաննեանը վարած է Քալիֆորնիայի Համալսարանի Մերձատար Արեւելեան Լեզուններու եւ Մշակոյթներու Ֆակուլտետին տնօրէնի պաշտօնը: Այս Ֆակուլտետին մաս կը կազմեն Հնադարեան Մերձատար Արեւելի ուսումները, արաբագիտութիւնը,

հայագիտութիւնը, եբրայագիտութիւնը, իրանագիտութիւնը, սեմագիտութիւնը եւ քրեագիտութիւնը:

Փրոֆ. Սաննեանը հեղինակն է ութը գրքերու եւ մօտաւորապէս քառասուն գիտական յօդուածներու եւ գրախօսութիւններու: Անոր գիրքերէն երկուքը հրատարակուած են Հարվըրտ Համալսարանի, ուրիշ երկու գրքեր Բալիֆօրնիայի, եւ ուրիշ հատոր մըն ալ Հունգարական Ակադեմիայի հրատարակչութիւններուն կողմէ: Վերջապէս, փրոֆեսէտօրէն «Վահան Թէֆեան, Նամականի» ստուարածաւալ հատորը, որ հրատարակուած է Թէֆեան Մշակութային Միութեան նախաձեռնութեամբ, 1984 թուին արժանացած է Հայկաշէն Ուզունեան գրական մրցանակին:

Փրոֆ. Սաննեանը հիմնադիրներէն մին է ԱՄՆ-ի մէջ հաստատուած «Սոսայըթի Ֆոր Արմինիըն Սթատիզ» (Հայագիտական Ընկերակցութիւն) կազմակերպութեան, որուն կ'անդամակցին հայագիտութեամբ զբաղուող հայ թէ օտար գիտնականներ: Փրոֆ. Սաննեանը քանիցս ընտրուած է որպէս այս կազմակերպութեան նախագահ, եւ եղած է խմբագիրը անոր անգլերէն լեզուով հրատարակուող «Ճըրնըլ Օվ Տը Սոսայըթի Ֆոր Արմինիըն Սթատիզ» պարբերականին:

Փրոֆ. Սաննեանը սերտ կապեր ունէր նաեւ հայկական երկու կրթական հաստատութիւններու հետ: 1974 թուականէն ի վեր՝ ան եղած էր անդամ Լա Վըրնի (Բալիֆօրնիա) Ամերիկահայ Միջազգային Գոլէճի հոգաբարձութեան եւ վարչական մարմնին եւ նախագահն էր Գոլէճին ակադեմիական յանձնախումբին: Իսկ 1981 թուականէն ի վեր՝ ան եղած էր նախագահը Լոս Անճելըսի Թէֆեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան վարժարանի հոգաբարձութեան:

1986 թուականի Սեպտեմբեր 22ին,

Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Ա. կոնդակով մը «Ս. Սահակ- Ս. Մեսրոպ» շքանշանով պարգեւատրեց Փրոֆ. Սաննեանը:

Մարտ 7, 1987ին մեծ շուքով տօնուեցաւ Փրոֆ. Սաննեանի Հայագիտական գործունէութեան 30 ամեակը, Լոս Անճելըսի Շերաթըն-Նունիվըրսըլ պանդակին մէջ:

Փրոֆ. Սաննեանը ամուսնացած է 1950 թուին՝ Հելէն Գարակեօզեանի հետ: Ունին մանչ զաւակ մը Գրիգոր անունով, որ ստացած է դոկտորական կոչում Ինտիանա Համալսարանէն՝ բաղաժանան գիտութիւններ բնագաւառին մէջ: Գրիգորն ու իր կինը՝ Անտրէան, որ նոյնպէս դոկտորական կոչում ստացած է միենւոյն համալսարանէն, կը պաշտօնավարեն որպէս բաղաժանան գիտութիւններու փրոֆեսէտօրներ Փենսիլվանիա նահանգի Բաֆնի Համալսարանին մէջ:

1995 Յուլիս 22ին, Փրոֆ. Աւետիս Սաննեան իր մահկանացուն կնքեց, եւ Յուլիս 27ին ազգային յուղարկարարութիւնը տեղի ունեցաւ Լոս Անճելըսի Ֆորէսթ Լօն գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝

Այրին՝ Հէլէն Սաննեան

Մայրը՝ Նագելի Սաննեան

(Տիբրոյթ-Միշիկըն)

Որդին եւ հարսը՝ Փրոֆէսէտօրներ Կրէկըրի եւ Անտրէա Սաննեան

Թոռնիկը՝ Ալեքս Սաննեան

Ներայրները՝ Արսէն Գ. Սաննեան եւ ընտանիք (Տիբրոյթ-Միշիկըն)

Տէր եւ Տիկին Կարապետ Գ. Սաննեան եւ ընտանիք (Պէլորոս-Լիբանան)

Տէր եւ Տիկին Յարութ Գ. Սաննեան եւ ընտանիք (Տիբրոյթ-Միշիկըն)

«ՆՈՐ ՕՐ»

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ԱՒԵՏԻՍ ՍԱՆՃԵԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Միրելի Աւետիս Սանճեանի ընտանիքին,
Տիկին Հէլեն Սանճեանին եւ գաւակին Կրէկըրիին,
Մայր Նագիլիին եւ իր գաւակներուն, Արսէնին,
Կարապետին եւ Յարութեանին:

Աւետիս Սանճեանի սերունդը յետ Եղեռնի սերունդն է: Անապատի ծաղիկներ, եւ անապատը ծաղկողներ: Սուրիոյ եւ Լիբանանի գաղթակայաններէն յետոյ, մանուկ Աւետիսը, Սուրբ Երկրի եւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայրավանքի ծաղկոցին մէջ, հասակ կը նետէ՝ ճիշտ, բարձեւ, ուսումնասէն, ու մարզախաղերու մէջ նկուն, հանդարտաբարոյ եւ բարեկիրթ: Եւ այդպէս ապրեցաւ եւ աճեցաւ մինչեւ իր կեանքին արեւմուտը: Եւ ծառի բարի պտուղը հետոյ չի նկատուիր իր արմատներէն: Որովհետեւ այդ արմատներուն հողէն, իր ժողովուրդին պատմութեան, մշակոյթին, ստեղծագործ հոգիին ու գաւակներուն արգասիքովը սընձաւ, դաստիարակուեցաւ, եւ անոնցմէ աւանդ թողուած հոգեւոր, իմացական եւ ազգային ժառանգութեանց անդաստանին մէջ, գտավայելք ի՞ր իսկ անձնական կեանքին եւ աճումին, ինչպէս նաեւ իր ընկերային եւ միջազգային յարաբերութեանց եւ ծառայութեանց երախտիքը եւ գոհունակութիւնը:

Իր անունով հրատարակուած գործերը երաշխիքն են այս իրողութեան:

Սանճեան ընտանիքին հետ, հայ մշակոյթի անդամատանին մէջ ծառայող բոլոր կրթամուտը սպասաւորները եւ տաղանդաշատ գաւակները, իրենց կակիծը եւ մահուան պատճառած ցաւը կ'ամոճեն, շնորհակալութիւն յայտնելով Աստուծոյ՝ իր պարգեւած այս գաւակին, եւ ընտանիքի հայր, եղբայր, գրչեղբայր եւ հայրենամուտը բարեկամ Աւետիս Սանճեանին կեանքին եւ օրինակելի տիպարին համար:

Ան արդարեւ եղաւ անապատի ծաղիկներէն եւ անապատը ծաղկողներէն:

Օրհնեալ լինի իր յիշատակը:

26 Յուլիս 1995

Թորգոմ Պատրիարք Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի



ԱՐՄՄԻՆԷ ՔԱՑԱՆԻԱՆ
(1921-1995)

Ծնած է 1921 Ռեթնիքեմի մէջ (Պաղեստին): Վախճանած է Լոս Անճելոսի մէջ, Մայիս 6, 1995:

Տանկարգի արարողութիւնը տեղի ունեցաւ Մայիս 8, 1995ին նախագահութեամբ Գեր. Վաչէ Արք. Յովսէփեանի, Առաջնորդ Ամերիկայի Արեւմտեան թեմին, եւ ի ներկայութեան չորս Սաղիմահայ եկեղեցականներու. Հայր Ասպետ Պալեանի, Տէր Արշակ Խաչատուրեանի, Տէր Սիփան Մխսեանի եւ Տէր Մուշեղ Քաշեանի: Իսկ յուղարկւորութիւնը Մայիս 9ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաքելական եկեղեցւոյ մէջ նախագահութեամբ եւ ի ներկայութեան վերոյիշեալ Սաղիմահայ կղերականներուն, եւ մարմնը ամփոփուեցաւ HOLLYWOOD HILLS Forest Lawn գերեզմանատան մէջ:

Արսիմէ Քացախեան աղջիկ զաւակն էր դեղագործ Յակոբ Արսէնեանի եւ տիկնոջ Հուսիքի, որոնք հրաշքով ողջ մնացեր էին 1915ի ջարդերու ընթացքին: Երուսաղէմի Ս. Թարգմանչաց Վարժարանէն շրջանաւարտ ըլլալէ վերջ յաճախած է Երուսաղէմի Անգլիական Աղջկանց Գոլէնը եւ ստացած Պատուոյ վկայական, եւ Թարգմանչաց վարժարանի Աշխարհագրութեան ռուսացուիի պաշտօնը ստանձնած է մէկ տարուայ համար:

1943ին ամուսնացած է ճարտարապետ Յարութիւն Քացախեանի հետ: 1944ին Երուսաղէմացի տասնմէկ երիտասարդներու հետ հիմնադրած են Երուսաղէմի Էօթէն Բարագեան առաջին ակումբը:

Արսիմէին ամուսնական երջանիկ կեանքը տեսած է միայն հիմնգ տարի, երբ ան կորսնցուցած է իր ամուսինը անողոք հիւանդութեան մը պատճառաւ, զինքը ձգելով 27 տարեկան այրի մը երկու

զաւակներով - Կարապետի եւ Իսկուհիի հետ:

Արսիմէին անձնական դժբախտութիւնը անլի դժուարացաւ երբ 1948ին Արաբ-Իսրայէլեան դէպքերը սկսան: Այդ շրջանէն սկսեալ անկիս իր կեանքը նուիրեց Պաղեստինեան Գաղթականներուն: Նախ Augusta Victoria հիւանդանոցին մէջ իբր Սննդաբան ծառայեց տասը տարի, եւ 18 տարի ալ Ռամալլայի UNRWAի Գոլէնէն մէջ նոյն պաշտօնով: 1981ին Արսիմէն գաղթեց դէպի Ամերիկա իր զաւակներուն միանալու համար: Ան ապրեցաւ իր աղջկան Իսկուհիի հետ մինչեւ իր մահը:

Արսիմէն երկար տարիներ ծառայեց Լոս Անճելլոսի UCLA հիւանդանոցին մէջ իբր կամուրջ-բարգման Անգլիէն-Հայերէն-Արաբերէն լեզուներու: Իր գաղութային գործունէութեանց շրջանակն էր Հայ Առաքելական Ս. Եկեղեցին, Երուսաղէմի Սուրբ Յակոբը, Հ.Ե.Մ-ը, Ռ.Ա.Հ-ը եւ թարգմանչաց Վարժարանի Սանուց Միութիւնը:

Արսիմէն իր ուսումնասիրութեան փափաքը փոխանցեց ոչ միայն իր տղուն ու աղջկան, այլ նաեւ իր երեք սիրելի թոռնիկներուն, Յարութիւնին, Արտաշէսին եւ Վագգէնին, որոնց երկուքը արդէն համալսարան կը յաճախեն: Իսկ իր զաւակը Կարապետը իր քիմիաբանութեան մագիստրոսի տիտղոսը ստացաւ Երեւանի պետական համալսարանէն, իսկ Ph.D.ի տիտղոսը Ամերիկեան Harvard համալսարանէն հիւլէական գիտութեան մէջ իբր մասնագետ: 1982ին Ամերիկեան կառավարութեանէն Ոսկեայ մետալով պարգեւատրուեցաւ հիւլէական եւ pollutionի ասպարէզներուն մէջ կատարած իր ծառայութեան

համար: Իսկ աղջիկը՝ Իսկուհին, UCLA համալսարանին շքանամարտ եղաւ Մ.Ա. Միտլոֆով - հայագիտութեան միւլիմ մէջ, եւ մինչեւ այսօր կը պաշտօնավարէ նոյն համալսարանի Alumni Center-ին մէջ: Արսիմէն տիպար հայտւհիի մը իսկական մերկայացուցիչն էր ազնուութեամբ, սիրով, առատաձեռնութեամբ, եւ հիւրասիրութեամբ: Ինչպէս նաեւ

ազգանուէր, հայրենասէր, բայց մանաւանդ հաւատացեալ եւ եկեղեցասէր տիկին մըն էր: Անիկա իր գեղարուեստական ձեռքի գործերով կը գրաւէր իր շուրջիմները: Արսիմէի սգակիր հարազատներն են՝ դիդագործ Տէր եւ Տիկին Նուպար Արսէնեան եւ ընտանիք (Նրուսաղէմ) եւ Տէք. եւ Տիկին Ժիրայր Արսէնեան եւ ընտանիք (Գանատա):

ԱՐՄԻՆԷ ՔԱՑԱՆԵԱՆԻ ՄԱՀՈՒՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԹԻԻ

«Կան մեռեալներ, որոնց մէջ աւելի շատ կեանք կայ քան ապրողներու մէջ: Բայց կան նաեւ ապրողներ որոնք աւելի մեռած են ամէն տեսակ մեռածներէ»: Ֆրանսացի գրող Ռոմէն Ռոլանի այս հաստատումը որքա՞ն կը համընկնի քառասուն օրեր առաջ, մեզմէ առ յաւելո՞ր քա՞մուած Արսիմէ Արսէնեան-Քացախեանի կեանքին հետ: Մէկը՝ որ հաւատաց կեանքին, հակառակ իսկ ըմպելով անոր դառն քաժակէն:

Մէկը՝ որ փարեցաւ կեանքին իր հոգւոյն մէջ կրելով այնքա՞ն եռանդ ու կորով որ ծառայութեան մէջ գտաւ հաճոյքը կեանքի:

Որպէս դաստիարակ եւ ազգային հասարակական գործիչ, մեծ եղած էր իր դերը Սաղիմահայ մշակութային, կուսակցական, ընկերային կեանքին մէջ: Որպէս հիմնադիր անդամներէն մէկը՝ Պաղեստինի Ռամկավար Ազատական Կուսակցութեան էօժէն Բարազեան ակումբին, ան տեղագրին աշխատած եւ գործակցած էր էօժէն Բարազեանի, Մեթր Շաւարշ Սեյօմեանի եւ բաժնատեղծ Վահան Թէֆեանի հետ: Իր ամուսնոյն վաղաժամ մահը 1948ին, կու գայ խորասկելու հէգ Արսիմէի երջանկութիւնը, եւ ան կ'այրիւմանայ երկու դեռատի զաւակներուն Կարոյի եւ Իսկուհիի հետ: Ընտանեկան այս դժբախտութիւնը համընկնելով Պաղեստինի պատերազմին՝

Քացախեան ընտանիքը, ժամանակաւորապէս կ'ապաստանի Պէրթոք, Լիբանան: Սակայն ան շուտով կը վերադառնայ իր ծննդավայրը եւ անընկճելի կամքով կը նուիրուի Պաղեստինի գաղթականներու տեղաւորման գործին:

Որպէս անդաբան, 10 տարի կ'աշխատի Նրուսաղէմի Augusta Victoria հիւանդանոցին մէջ, ապա United Nations Relief & Works Agency (UNRWA)ի պատկանող աղջկանց վարժարանը, մինչեւ Միացեալ Նահանգներ գաղթելը 1981ին: Այստեղ եւս ան կամաւոր կերպով իր ծառայութիւնը բերած էր UCLAի հիւանդանոցին մէջ: Իր բովանդակ կեանքի ընթացքին, Հայաստանեայց եկեղեցին, յատկապէս Նրուսաղէմի Ս. Յակոբայ վանքը եւ հայրենիքը կ'ըլլան իր ազգային գործունէութեան կիզակէտերը:

Թունդ ընթերցասէր ըլլալով, ուսման ծարաւի իր սէրը ան փոխանցած էր ոչ միայն իր երկու զաւակներուն՝ այժմ Տոքթ. Կարոյի եւ Իսկուհիին, այլ նաեւ իր թոռներուն:

Մեկ անձնապէս աւելի քան քսան տարիէ ի վեր կը ճանչնայինք հանգուցեալը, որպէս տիպար հայ մայր մը, ազգանուէր, հայրենասէր բայց մանաւանդ հաւատացեալ ու եկեղեցասէր: Թէպէտ ապրելով Խաղաղական այս փերտուն, իր հոգին միշտ կապուած էր Ս. Նրուսաղէմի հետ, Ս. Յակոբայ վանքի խնկաբայր

կամարներուն, իր պաշտած Ս. Գլխադիրին, որուն քանիցս իր ուխտը կատարած էր, եւ վերջապէս Երուսաղէմի միակ հայկական մտքի տաճարին, Ս. Թարգմանչաց վարժարանին, ուր եւ պաշտօնավարած էր շրջան մը:

Ամէն անգամ երբ հեռաձայնով իր առողջութեան մասին հարցնէի,

- «Ի՞նչ պիտի ըլլայ տղաս, օր մըն է կ'անցընեն ... ասկէ գէշ չըլլանք, լաւ ենք» կ'ըսէր: Գանգատ չունէր երբեք:

Ու յանկարծ ... իր հայրենակարօտ հոգին խապրիկ մը կ'ուզէր հայրենիքէն եւ Երուսաղէմէն:

- «Ըսէ մայիւմ, ի՞նչ նորութիւններ ունիս Հայաստանէն կամ մեր Երուսաղէմէն. վաճառք ի՞նչպէս է ...» կը հարցնէր:

Օրը օրին կը հետեւէր հայրենիքի եւ Արցախի իրադարձութիւններուն:

Թունդ ընթերցող էր, կը ստանար բոլոր հայկական թերթերը եւ կը կարդար զանոնք յափշտակութեամբ:

Կ'ուրախանար հայրենիքի նուանումներով, բայց նոյն ատեն իր հոգին կը տառապէր իր ժողովուրդին կրած գրկանքներուն ու տառապանքներուն համար եւ անպայման իր բաժինը, իր լուսնն կը բերէր միշտ ազգանուէր եւ աստուածահաճոյ ձեռնարկներուն:

Իր ազնիւ հոգին որքա՛ն կ'ուրախանար, երբ լուր կուտայինք իրեն թէ Երուսաղէմահայերը ձեռնարկ մը ունին. կ'ուրախանար ջրովհետեւ այդ օր պիտի հանդիպէր իր բոլոր սիրելիներուն ... Երուսաղէմահայերուն: Օրինակելի մայր մը եղաւ ան եւ տիպար հայ կին մը իր կեանքի րովանդակ ընթացքին:

Քառասուն օրեր առաջ, ան իր հանգիստը գտաւ խաղաղութեան մէջ: Որովհետեւ ան հաւատացած էր իր ա՛յնքան սիրած բանաստեղծ՝ Վահան Թէլեհանի «Հաշուեյարդար»ին.-

«Կեանքէն ինծի ի՞նչ մնաց, ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ, այն միայն...»:

Ամենայն Հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեան հետեւեալ տողերով կը պատգամէ. «Հերթով գալիս անց ենք կենում. էս անցատըր աշխարհից. մահը մերն է, մենք մահինը, մարդուս գործն է միշտ անմահ»:

Այսօր Արսիների կեանքէն մեզի մնաց իր բոլոր բարի ու ազնիւ արարքները, իր ծառայութեան, նուիրումի ոգին, օրինակելի տիպար հայ մօր կեանքը, իր բարեհամբոյր հոգին, եւ իր ժպիտը ... այն անտեսանելի արեւը որ կը կրէր իր հոգւոյն մէջ, յիշատակներ որոնք վառ պիտի մնան բոլոր անոնց հոգւոյն մէջ, որոնք ճանչցած են հանգուցեալը:

Լո՛յս մշտնջենի իր բարի հոգւոյն:

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Անդրանիկ Կոնդակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի	203-206
- Քարոզ Կաթողիկոսական Գահակալության Առթիւ	208-214
- Զեկոյց Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկեանի	215-298
- Արճառագրութիւն Ազգային Եկեղեցական Ժողովի Ա.-Դ նիստեր, 3-5 Ապրիլ 1995	299-311
- Ազգային Եկեղեցական Ժողովին Բացման խօսք Վաչէ Արք. Յովսէփեանի	312-313
- Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկեանի նամակը Երուսաղէմ Տ. Դաւիթ Արք. Սահակեանին, Ժամուցանելով Կաթողիկոսի ընտրութիւնը	313
- Catholicical Locum Tenens Patriarch Torkom Manoogian's Report to the National Ecclesiastical Assembly	314-319
- Կենսագրական Գարեգին Ա. Հայրապետի	320-322
- Հայրապետական խօսք Շնորհակալութեան	323-326
* Եւ Գնահատանքի	327-328
- Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Նշանակում	327-328
- Վեհափառ Հայրապետի խօսքը	329-333
Հ. Հ. Ազգային Ժողովին	329-333

ԿՐՕՆԱԿԱՆ

- Հրեաներուն եւ Յոյներու Ընթրումները Խաչի մասին	Սուրեն Վրդ. Զինչինեան	334-335
- Ստերջ Կեանքեր	Բարգէն Ա. Քեմյ. Մազաւտեան	336-337
- Տիրամայրն ու Մեր եկեղեցին	Գրիգոր Ոսկանեան	338-340
- Արեւածագի Սպասումը	Գոհար Յարութիւնեան	341

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

- Հարութի Որդոյն Պանդխտութիւնը	Լորտ Պայրըն Թրգմն. Մուրատ Մանուկեան	342
- Ու Հեռացար	Անիլ	343
- The Eternal Homeland	Hovhannes Shiraz	344
- Յաւերժական Հայրենիքը	Translated by Marzbed Margossian	344
- Sonnet 42	Յովհաննէս Շիրազ William Shakespeare	345
- Սօնէթ 42	Թրգմն. Շէն Մահ	346
- Երկիր Հայրենի	Բագրատունի	347

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- Նարեկացիներ.- Անհատական
Քնարերգութիւն Ա. Ղազինեան 349-357

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

- Կեանք եւ Մահ՝ Արեւելքի
Քրիստոնեաներու Նագարէք Թփալեան 358-361
- Սրբագրութիւն Հմայեակ Եսայ. Ինթոյեան 361

ՊԱՏՄԱԿԱՆ

- Թիֆլիս, Նորաշէնի եկեղեցին Սամուէլ Կարապետեան 362-366
- Յորդանանի Հիւսէյն Թագաւորին Մնորհաւորագիր 367-369

Ս. ՅԱԿՈՒԹԻ ՆԵՐՍԷՆ

- Եկեղեցականք-Պաշտօնականք 370-374
- Ինքնակենսագրականք
Տ. Էմմանուէլ Արղ. Աթաբանեան 375
Տ. Ընծանուէր Արղ. Բարախանեան 375
Տ. Թեոդորոս Արղ. Ջաֆարեան 376
Ուխտագիր 377

- On the Occasion of the
Newly Ordained Priests Yeghia Dickranian 378-379
- Դէպի Աշգեղուն եւ Հոգեհանգիստ Բագրատունի 380
- Ցանկ ստացուած Գիրքերու Սահակ Գալայեան 381


ՏԻՐՈՒՆԻ

- Փրօֆ. Աւետիս Սաննեան 382-385
- Արսիմէ Արսէնեան-Քացախեան 386
Քառասունքի Առիթով Նահապետ Մելքոնեան 387-388


ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՆՆԵՅԱԿԱՆ ԺՈՂՈՎ

NATIONAL ECCLESIASTICAL ASSEMBLY


ԱՄՈՒՆ ԷԿԵՄԵՆՆՈՒՆ, ԱՄՈՒՆ 3-9 1995 HOLY ECTHIMADZON, APRIL 3-9 1995



1995 Ապրիլ 3-9 Ազգային Եկեղեցական Ժողովին մասնակցող հոգևորական դասը եւ ժողովին Ա. Ատենապետ Տիար Տարիել Բարսեղեան, Էջմիածնի մէջ



1995 Նապրի 8-9 Ազգային Եկեղեցական Ժողովին Մասնակցող 398
պատգամատուրներու խորամակար, ԵՋՄԻԱԾՈՒՆԻ ՄԷՋ



1995 Ապրիլ 8, Շարաբ ատաւօ Ազգային Նկերեցական ժողովի
պատգամատուրներու եւ եկեղ եղգեւորականներու այցը Միծեռնակաբերդի
Ապրիլեան Նդիմնի Ցուշարձանին



1995 Ապրիլ 9, Կիրակի առաւօտ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. նորմուրի
 Հայրապետի մուտքը Էջմիածնի Մայր Տաճար, ուխտատուքնան Եւ
 գանակալութեան Ս. Պատարագի մատուցման համար: Զախէն Աջ՝ Տ. Խաժակ
 Արք Պարսամբան, Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեան, ամպիովանիի ներքեւ,
 վեհափառ Հայրապետը, Տ. Գարեգին Պատրիարք Կազմանեան, Տ. Գարեգին Արք.
 Ներսէսեան



1995 Ապրիլ 9, Կիրակի երեկոյեան ընդունելութիւնը Երեւանի Համալիրին մէջ, ի պատիւ նորընտիր Ամենայն Հայոց Հայրապետին, Չախէն Աջ՝ Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեան, Հայաստանի Նախագահ՝ Տիար Լեւոն Տէր Պետրոսեան, Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս, Տ. Գարեգին Պատրիարք Գազանեան, Ասորի ուղղափառ եկեղեցւոյ Պատրիարքի ներկայացուցիչ Նպիսկոպոս



25 Յունիս 1995, նորած ֆահանաներ Սրբոց Յակոբեանց մայր Տանարին ատեանին մէջ, պատարագի վերջաւորութեան: Աջէն Չախ.- Տ. Էմմանուէլ Աքաջանեան, Տ. Ընծանուէր Բարախանեան, Տ. Թէոդորոս Ջափարեան, լոկելայն Աւետարան կ'ընթեռնուն մինչ հաւատացեալներ կը մօտեանան աջահամրոյրի



25 Յունիս 1995, Սրբոց Յակոբեանց Մայր Տանարին մէջ, Չեռնադրութեան եւ Ս. Պատարագի աւարտին, Աջէն Չախ.- Տ. Էմմանուէլ Արդ. Աքաջանեան, Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան, Տ. Թէոդորոս Արդ. Ջափարեան



25 Յունիս 1995, Կիրակի երեկոյեան ժամերգութեան աւարտին վեղարի տրչութենէ յետոյ: Աջէն Ձախ.- Տ. Էմմանուէլ Արղ. Աբաջանեան, Տ. Ընծանուէր Արղ. Բարախանեան, Թորգոմ Պատրիարք, լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեան, Տ. Թեոդորոս Արղ. Ջախարեան



5 Օգոստոս 1995, երբք նորընծայ արեղաներ իրենց քառասունքէն եւ անդրանիկ պատարագները ժատուցելն յետոյ, Պատրիարքարանի դահլիհին մէջ: Աջէն Ձախ.- Տ. Թեոդորոս Արղ. Ջախարեան, Տ. Էմմանուէլ Արղ. Աբաջանեան, Թորգոմ Պատրիարք, Տ. Դուսան Վրղ. Ալեանեան (ուսուցիչ նորընծայից), Տ. Ընծանուէր Արղ. Բարախանեան



24 Յուլիս 1995 Ժառանգաւորաց Վարժարանի աշակերտները Աշգըլումի պեղումներուն կը մասնակցին



24 Յուլիս 1995 Թորգոմ Պատրիարք եւ Ժառանգաւորաց Վարժարանի աշակերտներ հոգեհանգստեան կարգ կը կատարեն Աշգըլումի պեղումներու Վայրին մէջ, Արշակ Մարկոսեանի մահուան տարելիցին առիթով: Ներկայ է պեղումներու Վարիչ եւ Հարվըրտ Համալսարանի Հնագիտութեան բաժնի դասախօս Լարի Սքէյլըր:



27 Յուլիս 1995 ժառանգատը Արշակ Մարկոսեանի յիշատակին Հոգեհանգիստ,
Յայտագիր եւ Թագարի օրինութիւն ժառանգատրաց վարժարանի արտիկն մէջ:
Աջէն Ջախո-- վանիկ վրդ. Մանկատարեան, Կոմիտաս վրդ. Շերադեան, Ռուբէն
վրդ. Յովակիմեան, Թորգոմ Պատրիարք, Անուշաւան Մ. վրդ. Զոյանեան,
Համբարձում վրդ. Քէշիշեան: